Հրատարակչական Գրադարան № 6

ՍՏ. ՏԷՐ-ԱՌԵՏԻՔԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ



Թիֆլիս
Գ «ՀԵՐՄԷՍ»
1912

12 MAR 2011

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերություն № 6

891.99
S-37

ՍՏ. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Դ. № 140 (2)
10015
292550

Թիֆլիս
Տպարան «ՀԵՐՄԷՍ»
1912

ՀԱՅԿ — ՍՍՌՄ
Գրք. ինստ. գրադարան
им. А. Масникяна
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

58199

14 .08. 2013

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՉՈՐՍՀԱՐԻՒՐ ԱՄԵԱՅ

ՅՕԲԷԼԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿ

(1512—1912)

ՋԱԿԱՏԻՆ ԷՆ ԷՐ ԳՐԱԾ

I

—Նրա գլուխը հողեմ, գնում չեմ. նա փիս ա. ես ուզում եմ մեր տանը կենամ. էլ նրանց տունը չեմ գնում,—ասում էր Զորթանանց Բարսեղի աղջիկ Վարդին իր մայր Ռեհանին, որը հարկադրաբար պահանջում էր նրանից մի ինչ-որ տեղ գնալ։

—Աղջի, դու մեզ խայտառակում ես, ա՛ քո ծնված օրը սև ըլի. մեզ թշնամու սրտով ես անում. քո խեղճ հէրը ամաչում ա, թա շէնամէջ դուրս գայ,—ասում էր Ռեհան աքիրը,—էսօր տասն օր ա, ինչ սարից տուն չի գալիս. ի՞նչ ա, ամաչում ա, լօխն էլ ծածուկ-աշկարայ վրէն ծիծաղում են։ Բա ե՞ս, ես. գետն ինձ տանի. աչքերս տափին գցած եմ շէնամիջով անցնում։ Ժամից ընկել եմ քո պատճառով. ամաչում եմ ժամ գնալ. հարիւրը հարիւր բան ա ասում. վախվախելով եմ ջուրը գնում. հէնց եմ գիտում, թա քարերն էլ ինձ վրայ ծիծաղում են, ինձնով տնազ են անում. մի մարդ տեսնալիս փշուր-փշուր եմ ըլում ամաչելուց, միսս վէր ա թափւում թամամ. ճարս կտրած ուշս դարձնում եմ տափին ու ասում՝ ա՛ տափ, դու ճղի, ես մէջդ ընկնեմ, փրկւեմ... Ասա՛ ահը՝ ի՞նչ անենք մենք, ո՞ր ջուրը, ո՞ր հողն ընկնենք, ի՞նչ հողն ու ցեխը գլխներիս տանք էս խայտառակութիւնից ազատւելու համար... Ինչո՞ւ ես ահը մեզ սաղ թաղում. ինչո՞ւ չես ահը խեղճ գալիս մեզ, քո անճար ծնողներին։

Վարդին գլուխը կախած լուռ լսում էր։

—Ի՞նչ ես տազ արել, ի՞նչ. սիրտս տրաքւում ա, մի բան ասա։

—Էն ա ասում եմ, որ գնում չեմ...

—Խի, նա աչքդ հանել ա. ինչու՞ չես գնում։

Վարդին ոչինչ չէ պատասխանում. նա լուռ լաց է լինում. նա հասկանում է ծնողների անտանելի դրութիւնը, բայց անզօր է նրանց օգնել, նրանց այդ դրութիւնից հանել։ Արտասուքը հեղեղի պէս թափւում է նրա աչքերից։

—Ի՞նչ ես լաց ըլում, ի՞նչ. օրօրոցի բախայ ես. քեզ բան եմ ասում, պատասխան տուր, արինը սրտիցս կաթում ա ահր,—ասում էր բարկացած Ռեհան աքիրը,—էսօր երկու շաբաթ ա տանը նստած ամեն օր լաց ես լինում, երբ հետդ խօսում եմ, երբ ասում եմ, որ գնաս... Բաւական ա, բօլ ա, հերիք, ա. լաւ բօլ խաթրդ պահել եմ, լաւ բօլ կակոդ, քաղցր եմ խօսացել հետդ... Աբուռդ երեսիդ գնա էսօր քո մարդի տուրը, թէ չէ քեզ կապած, շէնամիջով քարշ տալով կը տանեմ... Դու մեզ խայտառակել ես, պրծել. էդ խայտառակութիւնն էլ վիզ կունենք հէր ու մէր ու քո գլխին շան օյին կը դնենք, թամամ շան օյին... Ես դեռ քեզ խնդրում, աղաչում, պաղատում եմ, որ քո կամքով սուս ու փուս գնաս քո սկեսօր ձեռքը պաչես, նրա ոտներն ընկնես, մեղայ գաս, նրան հլու-հնազանդ հարսնութիւն անես, քո մարդին էլ ընդունես, մարդի տեղ դնես նրան... Լսում ես. համաձայնւում ես գնալ, ասա. լալկւել չես հու, խօսա. տուն ես քանդում է, տազ անիլի վախտը չի. գնում ես։

—Չէ, ես նրա կուշտը չեմ գնում,—պատասխանում է հեկեկալով Վարդին։

— Չո՛ռ, չո՛ռ. գլուխդ հողեմ, չո՛ռ,— ասում է զայ-

բոյթով Ռեհան աքիրն ու մի քանի անգամ իրար հետևից երկու ձեռքով բամփում խեղճ Վարդիի գլխին,— ինձ մի գնդակ, մի շիլ ընկած գիւլլա դիպած պտէր, բալքի ես չոքած չը լինէի ու քեզ ծնած։ Աստուած քեզ ինձ համար, իմ մարդի, իմ որդկերանց ու իմ օջախի համար պատիժ ա ուղարկել, ա օձի ճուտ... Ամօթ ու աբուռ չի կայ քեզանում. ուզում ես մեզ էլ աբուռից գցի՞ լ... Ի՞նչ անեմ, ի՞նչ ասեմ քեզ, որ սիրտս հովանայ. կսկծաս դու, կսկծաս ինձ պէս. քո հոգին էն դնելումը ոչ հանգիստ ու դաղար գտնի... Տէր Աստուած, մարդ իրանից ծնւածին էս կասի, որ ես ասում եմ. ահր էս լսւած ու տեսւած բան ա... Քո հոգին հուրը մաշի է, հուրը, ա սաթայել, ա կուճուր սատանայ, ա դև։ Ո՞ւր ա, էն որ խաչից կըլի, որ մեռնես տանենք թաղենք ու պրծնենք քեզանից. խեղճ ենք մենք քո ձեռիցը, խեղճ են իմ մարդն ու իմ որդիքը. կազատւենք խայտառակւելուց... Էդ հասակում որ դու էդ էն մեզ քարքար ես բերում, մեր տունն ուղղակի քանդելու ես մեր գլխին, երբ մեծանաս... Գետը քո տէրոջը տանի, գետը։ Էն խեղճ, էն գառան նման տղէն էն որտեղից եկաւ քեզանով ընկաւ։ Ասենք նա չի եկաւ, նա. վա՛յ մեզ. մեր մեղքին թողութիւն չի լինելու. մենք նրան բերանք, մենք, մենք նրան հորսեցինք, ազգական ու բարեկամ նրա ետևից գցելով. ասեցինք՝ լաւ տղայ ա, փսում-փսում անենք, դէպի մեզ բերենք էդ կերպաւ ու քեզ, գլուխդ հողեմ, պսակենք նրա հետ ու բախտաւորացնենք... Նրան հազար տեղից աղջիկ էին տալիս. նա քեզանից շատ լաւը, շատ աբուռինը կը գտնէր, եթէ մեզ չը պատահէր, եթէ քեզ պէս անիծւածի համար մենք նրան ճանկ չի գցէինք։ Ես, քո հէրը, քո աղպէրքը, տէրտէրի, բարեկամների խնդրելով, հազար ու մի սուտ խոստումներ տալով, քեզ գո-

վելով, ծաղկացնելով, նրան խաբեցինք ու քեզ պէս սև օձին նրա ճտովը փաթաթեցինք։ Մի սաղ տարի խեղճ տղէն գալիս էր գնում. ամեն գալով երկու ջիր կանփեռ ու չամիչ էր բերում քեզ համար։ Էն լաւ էր, որ ուտում էիր. էն վախտը նա լաւ տղայ էր, չէ... Ամեն օր եախէս բռնած ասում էիր՝ ա նան, չամիչ տուր, ա նան, կանփեռ տուր։ Էն չամիչն ու կանփեռը Գրիգորն էր բերում է, քո մարդը, էն որ հիմի գլուխը հողում ես, ուզում չես երեսը տեսնել։ Էդ ինց ա, որ երբ նրա չամիչն ու կանփեռն ուտում էիր, նա լաւ էր, ուզում էիր, որ ամեն օր գայ, ամեն օր լաւ-լաւ զատեր բերի քեզ համար, իսկ պսակուեցիր հետը թէ չէ, փիսացաւ, կշտիցը փախար, բէյմուրազ արիր խեղճ տղին. մի օր գոնէ չը մնացիր նրանց տանը, մի կէնտ օր. գոնէ մի օր նրա մօրը հարսնութիւն չարիր, անանամուս. առաջին գիշերը փախար նրանց տանից, հարա-հրոցը շէնի մէջ գցելով, մեզ ու նրանց, մեր նոր խնամունց, տանով-տեղով խայտառակելով, մեր էնքան ծախսերը ոտի տակ տալով, մեր ամակը, մեր աշխատանքը բանի տեղ չը դնելով... Երեք օր, երեք գիշեր մենք ու խեղճ խնամունք սաղ դեղը գլխներիս հաւաքած քեզ հարսանիք արինք. ամեն բան դու ոտի տակ տուար. համ արած ծախսերը զուր կորան, համ մեր ու նրանց աբուռը, մեր թամուզ անունը, մեր պատիւը... Ը՛հ, քո հոգին ոչ դինջանայ, ոչ, ա դև, ա քաչքը... Հասկանում ես ինչ եմ ասում. ծծկեր մանուկ չես հու. մարդի գնացած կնիկ ես. խելքդ գլուխդ հաւաքի ու գնա քո հարսնութիւնն արա... Լսում ես. ինչ ես տաղ արել. լեզուդ լալկեցել հու չի. էս իրիկու կը գնաս, ասա։ Քո մօրաքիրը որ գայ քեզ տանելու, հետը կը գնաս քո սկեսրանց տունը։ Քո մօրաքօրն ասել եմ, որ էս իրիկու գայ քեզ տանի. լսում ես. պէտք ա

գնաս. ուրիշ ճար չի կայ. դու տանը պահելու զատ չես... Ի՞նչ ես ձայնդ կտրել, լեզուդ չլղանը տարել չի՞ հու. ասա՝ աբուռդ երեսիդ գնալու ես. հը՛, ասա, թէ չէ ծամերդ պոկում եմ էս սհաթիս։

—Չէ, մեր տունը լաւ ա, ես ուզում եմ մեր տանը կենամ. ա նան, քեզ մատաղ, ես քո ցաւը տանեմ, թող մեր տանը կենամ. էնտեղ լաւ չի, էնտեղ փիս ա,—ասում էր աղիողորմ ձայնով Վարդին։

—Չէնդ կտրի՛ ու պատրաստուի՛, որ իրիկունը գնաս։

—Վոյ, քեզ մատաղ, ա նան, եանի թող արա մեր տանը կենամ էլի։

—Թող չեմ անիլ. լաւ բոլ կացել ես. դու մարդի գնացած կնիկ ես. գնա քո մարդի կուշտը. օրէս եաը քո տէրը նա ա. նրա կշտին պէտք ա կենաս. գնա տաղ արած։

—Չէ, ա նան, գնում չեմ, գնում չեմ. վոյ, ես նրանից վախում եմ. նա փիս ա...

—Պէտք ա գնաս, գլուխդ հողեմ. փիսը, անիծուածն ու բեղասիլը դու ես. քո մարդի պէս լաւ տղայ չի կայ մեր շինումը. սաղ գեղումը նա մի հատ ա։

—Գնում չեմ, ուզում չեմ. նա փիս ա, ա նան. նա ինձ հետ փիս-փիս բաներ ա անում...

—Ի՞նչ, ի՞նչ. գլուխդ հողեմ, էդ ինչ ասեցի՞ր։

—Էն ա նա ինձ հետ փիս-փիս բաներ ա անում էլի... Էլ գնում չեմ. նրա գլուխը հողեմ, նա փիս ա...

—Ատա քո գլուխը հողի, քո. փիսն էլ ես դու, լիրբ-անզգամն էլ,—ասաց խիստ բարկացած Ռեհան աքիրը ու վերցնելով օջաղից հրկաթէ մաշան սկսեց նրանով անխնայ ծեծել խեղճ Վարդին, ասելով՝—նա ինց ա փիս-փիս բաներ անում. էդ ի՞նչ ես ասում. ասել եմ, որ քո բերանից էդ խօսքերը լսեմ ոչ, ա լիրբ, ա անամօթ. դու էլի ասում ես. ով քեզ խօսա-

ցնում ա, հէնց էդ ես ասում. էս երկու շաբթումն էն-
քան ասել ես, որ սաղ գեղումը տարածել են էդ խոս-
քերը, ամեն քիւնջ ու պուճախում հէնց էդ ա լսւում.
էլ ջահիլ-ջհուլ, լոթի-լաքեաթայ, շուն-գիլ չը կայ, որ
իրենց-իրենց չասեն էդ խոսքերը ու հոհռալի մեզ վը-
րայ ծիծաղեն... Ի՞նչ ա. անքէթ, անմեղ մանուկ ի՞ս.
խելքդ բան չի կտրում հը՞. տասնմին տարեկան զըր-
փի զատ ես. բոյդ բոյիս ա հասնում. ի՞նչ ա, կանոխ
եմ քեզ մարդի տւե՞լ. ուզում էիր տանը նստել, պա-
ռաւել ու պատիժ դառնալ վրա՞ս... Ափսոս, ափսոս,
որ մի երկու տարի առաջ չի քեզ մարդի տւայ. ինը,
տասը տարեկան հասակում եթէ գնայիր, շատ խոնար,
շատ հնազանդ հարսը կըլէիր, միսդ էլ որ կտրէին,
սուս կը կենայիր։ Մեծացել ես, բոյդ քշել, լեզուդ էլ
երկարացրել, շատ երկարացրել։ Ես տասը տարեկան
եմ մարդի գնացել. աբուռին, խոնարհ հարս եմ ըլել.
ինձանից ոչ ոք ձէն ու ծպտուն չի լսել. ինչ տեսել
եմ, տաղ եմ արել. իմ ցաւը, իմ դարդը ես, մենակ
ես եմ գիտացել. միշտ աբուռս երեսիս հարսնութիւն
եմ արել։ Հիմի քեզ էդ ի՞նչ ա ըլել, որ դու համ էն
խեղճ տղին ես խայտառակում. համ մեզ. համ նրանց
տունն ես սաղ գեղումը տնաղատեղ շինում, համ մե-
րը։ Բաւական չի, որ գիշերւայ միջին մարդիդ տեղիցը
դուրս ես թռել ու սուդ ու շիւանով, հարա-հրոցով,
գեղը տակն ու վրայ անելով փախել, եկել հէրանց
տուն, հիմի էլ ում հետ խօսում ես, ասում ես, թէ
նա փիս փիս բաներ էր անում քեզ հետ... Էդ ի՞նչ ա.
էնքան անքէթ ես, որ հասկանում չես ասածդ։ Ասել
չեմ, որ եթէ քեզ մորթելիս էլ որ լինեն, էլի դու էդ
խոսքերը չասի՞ս. հը՞, հը՞. էդ ինչո՞ւ չես հասկանում,
դժոխքի ծնունդ,—ասում էր Ռեհան աքիրն ու երկա-

թէ մաշան բոլոր ոյժով իջեցնում խեղճ Վարդիի գլխի,
ուսերի, մէջքի ու կողքերի վրայ։

Վարդին կծկւեց, արիւնլիկ ու ուժասպառ ընկաւ
մօր առաջին, շարունակելով աղաչել նրան՝ թողնել
իրան հօր տանը, չուղարկել այն ատելի մարդի մօտ,
որը նրա հետ այնպիսի քստմնելի, այնպիսի «փիս-
փիս» բաներ էր անում...

Ռեհան աքիրը յոգնեց ծեծելուց, թողեց իր զո-
հին ու գնաց իր քրոջ մօտ, որն այդ երեկոյ պէտք է
գար ու տանէր Վարդիին նրա սկեսրանց տունը։

II

Վարդիի տասը տարին դեռ նոր էր լրացել, երբ
նրան մարդի տւեցին. ոտը տասնմէկում դնելուն
պէս նրան ուղիղ տասնմէկ տարեկան յայտարարե-
ցին ու պսակեցին։

Հոգևոր կառավարութիւնից թոյլտւութիւն ըս-
տանալու համար տէր-տէրը, Զորթանանց տանը տա-
նուտէրի ու երէցփոխի հետ միասին լաւ կոնծելուց
յետոյ, իր յայտարարութեան մէջ Վարդիի տարիքը
հասցրեց 15-ի, իսկ նրա փեսացու Գրիգորինը 25-ի.
առաջինին աւելացրեց մօտ հինգ տարի, իսկ երկրոր-
դից պակասացրեց երեք տարի, ասելով՝ «աղջկայ 15-ն
ու տղի 25-ը իրար շատ սազում են»։

Երբ մօտենում էին հարսանիքի օրերը, Վարդին
աւելի ու աւելի ուրախանում էր. նրան շատ հետա-
քրքրում էին հարսանիքի իրարանցումը, զուռնան,
դաւալի առաջին պարող երիտասարդների ու երեխա-
ների ժխորն ու պարերը. ևս առաւել նրան հե-
տաքրքրում էին նորահարսի շորերը, զարդարան-
քը, ոսկեթել թագը, որը դնելու էին նրա գլխ-

խին. անչափ, ամենից շատ նա հետաքրքրվում էր այն գեղեցիկ զգեստով ու ընծաներով, որը բերելու էր նրա համար պսակի օրը նորափեսան։ Խնամունց տանից ամեն օր, նրանց հարևանների միջոցով, լուրեր էին գալիս պատրաստվող զգեստի ու ընծաների մասին. ասում էին, որ Գրիգորը պէտք է այնպիսի շորեր բերի իր հարսնացուի համար, որ գիւղումը դեռ ոչ ոք տեսած չը լինի, որ ամբողջ գիւղը հիացած ու բերանբաց մնայ։ Այդ լուրերի ազդեցութեան տակ Վարդիի հետաքրքրութիւնը վառվում էր ու վառվում. նա անհամբեր սպասում էր հարսանիքին. նա առաջուց պարծենում էր արդէն իր ընկերուհիների, իր նման փոքրահասակ աղջիկների մօտ, իրեն սպասող բարիքներով, ասելով, որ իրենց խնամունց տանէն իր հարսանիքով պէտք է իր համար «թազա շորեր ու շատ լաւ-լաւ զատեր» բերեն։ Բայց ամեն բանից շատ Վարդիին հետաքրքրում էին չամիչը, կանփետն ու «շաքարով շինած զատերը», ինչպէս նա ու մայրն անուանում էին այն քաղցրաւէնիքը, որն այնպիսի առատութեամբ բերում էր նրանց տունը նրա փեսացու Գրիգորը։

Մի ամբողջ տարի նա նշանուած մնաց։ Շաբաթը մի կամ երկու անգամ Գրիգորը գալիս էր նրանց տունը ու միշտ չամիչ, կանփետ, խուրմա ու «շաքարով շինած զատեր» էր բերում։ Վարդին նրա երեսը չէր տեսնում, նրա հետ չէր խօսում։ Խեղճին ստիպում էին ամբողջ ժամերով թաքնուել. նա կծկուում, կուչ էր գալիս տան ամենամութ պուճախում, ցորենի ամբարի ետևում։ Երբ Գրիգորը գնում էր, նրա բերած քաղցրաւէնիքից Ռեհան աքիրն առատութեամբ տալիս էր Վարդիին ու ասում՝ «Ա՛ռ, քեզ մատաղ, իմ ազիզ բալա. էս բաները, էս շաքարով շինած զատերը, քեզ հա-

մար խնամունց տղէն ա բերել»։ Գրիգորը յայտնի էր Վարդիին «խնամունց տղայ» անունով։ Նա ուտում էր քաղցրաւէնիքը, ու «խնամունց տղէն» թուում էր նրան մի շատ լաւ, շատ բարի ու հրաշալի մարդ. նա կարծում էր, թէ խնամունց տունը կանփետով ու չամիչով միշտ լիքն է. կարծում էր, թէ «խնամունց տղէն», երբ նրան տանի իրենց տունը, երբ հետը պսակուի, պէտք է նրան միշտ լաւ-լաւ շորեր հագցնի ու միշտ չամիչ, խուրմա ու «շաքարով շինած զատեր» ուտացնի. իսկ ինքը, Վարդին, դորա փոխարէն պէտք է նրանց նանի ոտները լւանայ, մէջքը քորի, գլուխը քթուի ու նրանց համար առաւօտ-երեկոյ ջուր բերի աղբիւրից։ Իր ապագայ կոչման ու իսկական պարտաւորութիւնների մասին նա ոչ մի գաղափար չունէր։ Մայրը նրան միշտ ասում էր, միշտ յիշեցնում էր, որ նա պէտք է խոնարհ, շատ խոնարհ հարսը լինի, պէտք է իր սկեսօր ոտները լւանայ, նրա մէջքը քորի, տան ճրագ-կրակը տեղը պահի, ջուրը գնայ, տներն ու դրուները սրբի և այլն. «խնամունց տղէն» էլ դրա համար սիրուն, գեղեցիկ շորեր կառնի, նրա ջրերը չամիչով ու կանփետով միշտ լիքը կը պահի։ Այդ պատճառով Վարդին գիշեր-ցերեկ մտածում էր «խնամունց տան» մասին. քիչ էր մնում, թէ առանց պսակուելու փախչի, գնայ նրանց տունը։

Հարսանիքի օրերում Վարդիի ուրախութեան չափ չը կար. պսակի շորերն ու ընծաները նրան խելքահան արին։ Երբ պսակ տանելուց առաջ նրան հագցրին ու գլուխն էլ նորահարսի գլխի պէս շինեցին, զարդարեցին, նա այնքան ուրախացաւ, որ քիչ մնաց, թէ դուրս վազի տնից ու իր սովորական մանկական պարծենկոտութեամբ ցոյց տայ իր զարդերը իրենց հարևաններին, իր խաղընկեր, իր հասակակից երեխաներին.

նրան զօռով պահեցին տանը, վարագոյրի ետևում, ասելով՝ «Հիմի դու հարսն ես, ա՛ Վարդ, էլ ըսխայ չես, կուճուր աղջիկ չես. ամօթ ա, չի կարելի դուրս վազել, չի կարելի խօսալ. պէտք ա անխօս կենաս»։

Վարդին ուրախ-զուարթ գնաց պսակ։ Նա գնում էր եկեղեցի աչքերը գետնին յառած, բայց երբեմնակի, շրջապատողներից աննկատելի կերպով, մտիկ էր տալիս իր առաջից քայլող «խնամունց տղին», որին նա առաջին անգամն էր տեսնում, որը նրա համար այնքան լաւ բաներ էր բերել ու պէտք է դեռ այդպիսի բաներ, նրանց տունը գնալուց ու նրանց հարսը դառնալուց յետոյ, շատ տար նրան, տար իր ձեռքով, տար ամեն օր...

Պսակի երկրորդ օրը, իրիկնադէմին, Վարդին տարան խնամունց տունը։ Երբ զաւալն ածեց մելամաղձ «տարան հայ» ու «կուռդ կոտրի, հարսնամէր» եղանակը, Վարդին զգաց, որ հօր տնից յաւիտեան բաժանւում է. նա լաց եղաւ, հեկեկաց, բայց շուտով հանգստացաւ ու սովորական կենսաթրթիռ տրամադրութեան եկաւ, քանի որ մերձաւորները յիշեցրին նրան խնամունց տունը ու այն անսպառ բարիքները, որոնք սպասում էին նրան այնտեղ։ Վարդին առանց տատանուելու հաստատ քայլերով առաջ ընթացաւ «խնամունց տղի» ետևից։

III

Հարսանիքի նախընթաց օրը Վարդիի մայրն ու նրա մօրաքոյր Զառին քաշուեցին մի անկիւն ու երկար փսփսացին իրար ականջի։ Նրանք երկար ու ձիգ խորհրդակցեցին այն բանի մասին՝ հարկաւոր է արդեօք բացատրել Վարդիին իր ապագայ ամուսնական պար-

տաւորութիւնները, թէ ոչ. հարկաւոր է նրան նախապատրաստել այդպիսով։ Շատ մտածեցին, շատ դէս ու դէն ընկան քոյրերը. վերջապէս որոշեցին բացատրել Վարդիին ամեն բան։ Յանձն առաւ այդ նրա մօրաքոյրը։ Մօտ կանչեցին հարսնացուին. նայեցին նրա անմեղ մանկական երեսին... Մայրը բան չասեց, հեռացաւ. ամաչեց, կարմրեց, իր անմեղ պսակուող մանուկին տեսնելով։ Մօրաքոյրը գրկեց նրան, համբուրեց. «ա՛ Վարդ, գիտում ես ի՞նչ կայ, քեզ մատաղ»,—ասաց նա ու էլ բան չը կարողացաւ ասել. ծմրաց, ծմրաց. ամաչեց, կարմրեց. Վարդիի մանկական անմեղութիւնը նրա լեզուն կապեց, կաշկանդեց իսպառ. նա իր գժւար դրութիւնից դուրս եկաւ, ասելով Վարդիին՝ «Դէ՛ քեզ մատաղ, լաւ հարսնութին արա՛, քո սկեսօրը միշտ լսի, խոնարհ ու հնազանդ կաց»։ Մօրաքոյրը մի անգամ էլ համբուրեց Վարդիին ու բաց թողեց։

Ռեհան աքիրը, Վարդիի մայրը, իսկոյն մօտեցաւ իր քրոջը։ Խօսակցութիւնն սկսելուց առաջ նրանք Վարդիին ուղարկեցին դուրս խաղալու։

—Հը՞, աղջի, ա՛ Զառ, ի՞նչ դառաւ, մի բան շինեցի՞ր,—հարցրեց նա քրոջը։

—Չէ, քեզ մատաղ, Ռեհան. լեզուս կապւեց. ես էլ քեզ պէս ամաչեցի. Վարդին հէնց ա անմեղ գառն ըլի. մեղք ա նրա հետ էնհէնց բաների մասին խօսելը։

—Աղջի, բա էս ո՞նց անենք. էնհէնց անմեղ համբայ դնելով խէր չենք անիլ, ա՛ իմ քիր։

—Բան չի կայ. թող էնհէնց անմեղ գնայ. Աստուած ինքը նրա միտքը կը բանայ,—ասաց Զառին։

—Աղջի, գնամ Թեօխւայ Հերիքին կանչեմ. նա լեզուանիկ ա, նա ամեն բան պարզ կասի, կը հասկացնի, քաշւիլ, ամաչիլ չի մեզ պէս,—ասաց Ռեհան աքիրը, ակնարկելով գիւղի ազդեցիկ կանանցից մէ-

կին, որը յայտնի էր Քեօխւայ Հերիք-աքիր անունով, որը մեծ յարգանք, դիրք ու պատիւ ունէր գիւղում, որից բոլոր կանայք, մանաւանդ Ջահիլ աղջիկներն ու հարսները, սաստիկ վախենում էին։

—Ձէ, հողեմ Քեօխւայ Հերիքի գլուխը,—ասաց Զառին,—նա ամեն բան կասի, կը վախեցնի Վարդիին. ահը խեղճ բախէն, Վարդին, Ջահիլ ա, շատ ա Ջահիլ. կը վախի ու էլ ուղիլ չի պսակ գնալ, լաց կըլի, կը խայտառակի, բէյարուս կանի մեզ... Լաւն է ա, թող անմեղ գնայ, ա իմ քիր. թող ուրախ, թոթռալի գընայ. նրա միտքն իրան-իրան բաց կըլի. էն տղին կը տեսնի, սիրտը կը բռնի նրան... Մի խօսքաւ, Աստուած ողորմած ա. շատ մի դարդ անիլ։

Քոյրերը որոշեցին Վարդիին անմեղ ճանապարհել։

Նա գնաց խնամունց տունը բոլորովին անմեղ, մանկական ուրախութեամբ բռնկւած, չամիչ, կանփետ, «շաքարով շինած զատեր» ուտելու ու լաւ-լաւ շորեր հագնելու յուսով։

Հարսանիքից յետոյ նրան իր սկեսուրը երեք գիշեր քնեցրեց իր ծոցում. նա այդ արաւ՝ ընտելացնելու համար նորահարսին իրենց տանը։

Զորրորդ գիշերը Վարդիին տարան մի փոքրիկ սենեակ, որի յատակը ծածկւած էր կապերտներով, ուր պատրաստած էր անկողին։ Այնտեղ նրան սպասում էր «խնամունց տղէն», նրա ամուսին Գրիգորը։ Նրան թողեցին Գրիգորի մօտ ու հեռացան։

Վարդին ամաչում էր նրա հետ խօսել, բայց չէր վախենում նրանից. նա շատ հետաքրքրւում էր Գրիգորի երեսը մօտակից տեսնել. այդտեղ կայացաւ նրանց առաջին տեսակցութիւնը։ Գրիգորը ծածուկ, ջուրը գնալիս, նրան տեսած էր մի քանի անգամ ու հաւանած, իսկ Վարդին առաջին անգամն էր նրա դէմքը

տեսնում. մանկական անմեղ ժպիտը դէմքին լուռ դիտում էր նրան, իր համար այնքան լաւ-լաւ զատեր բերած «խնամունց տղին»..

Գրիգորն իսկոյն լցրեց Վարդիի գրպանները չամիչով, բաղդադի խուրմայով ու կանֆետով. բարձի տակից հանեց մի արկղ, որի մէջ կային «շաքարով շինած զատեր». բացեց արկղը, դրեց Վարդիի առաջին ու ասաց քաղցր ձայնով՝ «կեր, քեզ մատաղ, կեր. էդ լօխ քեզ համար եմ առել. կեր, էլ կառնեմ»։ Վարդին նստեց անկողնի վրայ ու սկսեց ամաչելով ուտել «շաքարով շինած զատերը»...

Շուտով նորապսակների սենեակի խորհրդաւոր լռութիւնը խանգարւեց մի անօրինակ ճչով։ Իրարանցումն ընկաւ տան մէջ։ «Գնում եմ մեր տուն, մեր տուն... վայ, նանէ, վայ...» լսւում էր նորապսակների սենեակից։

Տնեցիները քնաթաթախ դէս ու դէն ընկան, չիմանալով ինչ է պատահել, ինչումն է բանը։ Շան հաջոցը, դռների ճռռոցը ու տնեցիների ձայները իրար խառնւեցին։ Ընդհանուր իրարանցման ժամանակ նորապսակների սենեակի դուռը յանկարծակի բացւեց ու մի կիսամերկ հերարձակ մանկահասակ կին դուրս թռաւ այնտեղից ու փախաւ։ Փախչողը նորապսակ հարսն էր։ Վարդին՝ սարսափով, զայրոյթով ու զզւանքով բռնկւած՝ կէս գիշերին գիւղամիջով կիսամերկ փախաւ, գնաց իրենց տունը։

Խայտառակութիւնը անչափ մեծ էր ու անչափ անտանելի երկու խնամի տների համար։

Հետևեալ օրը վաղ առաւօտեան դէպքի մանրամասնութիւնները այլ և այլ յաւելւածներով տարածւեցին գիւղում։

1005
22.5-50
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ—ՍՍՐՄ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

IV

Խնամի տների անդամներն ամաչում էին գիւղամէջ դուրս գալ. ամեն քայլափոխում նրանք նկատում էին ժպտացող դէմքեր ու լկտի հայեացքներ։

Վարդիի փախուստից յետոյ Գրիգորն անձնասպանութեան փորձ արաւ. նրա ձեռքից հրացանը զօռով խլեցին։ Երբ Վարդին դուրս թռաւ սենեակից, նա ուզեց հրացանն առնել. նրա ետևից ընկնել, որ համ նրան սպանի, համ իրեն. լաւ էր, որ հրացանը շուտ չը գտաւ։ Նրան մի կերպ հանգստացրին. խոստացան հետևեալ օրը յետ բերել Վարդիին։

Զորթանանց տանից իսկոյն պատգամաւորներ եկան Նորափեսենց տունը. նրանք թախանձանօք ներողութիւն խնդրեցին ու խոստացան շուտով Վարդիին խելքի բերել ու վերադարձնել։ „Զահիլ ա, բալայ ա դեռ,—ասացին նրանք,—խելքը դեռ բան չի կտրում. անքէթ ա թամամ, բոլորովին անմեղ ա, սևն սպիտակից դեռ չի ջոկում. բիրդան վախեցել ա ու փախել. էնհէնց բանի մասին ահր իր օրումը նա, մինչև իր մարդի կուշտը գալը. լսած չի ըլել բնաւ. տանն էլ հարսանիքից առաջ բան չենք ասել, անմեղ ենք ճամբայ դրել։ Աստծու խաթրի համար մի քանի օր սպասեցէք. խելքի կը բերենք ու կը վերադարձնենք, մեր ձեռաւ կը բերենք ձեզ յանձնենք“։

V

Տնեցիք սկսեցին Վարդիին խելքի բերել. նրան խնդրում, աղաչում էին, որ վերադառնայ իր սկեսրանց տունը. նա չէր լսում, չէր համաձայնւում գնալ. նրան ապառնում ու ծեծում էին, այն էլ շատ անխնայ. նա

դարձեալ չէր լսում. նա մի ձէնի կրկնում էր, որ չի գնայ, քանի որ „խնամունց տղէն“ նրա հետ փիս-փիս բաներ է անում...

Նրան կատաղաբար ծեծում, գանակոծում էին ու արգելում այդ բառերն արտասանել, քանի որ նրա փախուստի հէնց առաջին օրը այդ դարձուածքը նրա բերանից դուրս գալուն պէս՝ տարածուեց ամբողջ գիւղում ու ընդհանրական ծիծաղի, ծաղրի առարկայ դարձաւ... Բայց խեղճ Վարդին, երբ նրան նեղն էին դցում, երբ նրան ստիպում էին գնալ սկեսրանց տունը, մեքենաբար կրկնում էր՝ «չեմ գնում, նրա կուշտը չեմ գնում. նա փիս ա, նա ինձ հետ փիս-փիս»... Այդ բառերի վրայ նրան իսկոյն լռեցնում էին գլխին բամփելով, արգելում էին շարունակել, արգելում էին կրկնել երբ և իցէ, սպառնալով հակառակ դէպքում լեզուն արմատից կտրել...

Ռեհան աքիրն իր քոյր Զառիի հետ միասին շատ էր դէս ու դէն անում իր «ամօթ ու աբուռ կորցրած» աղջկան խելքի բերելու համար։ Նրանք նախ դիմեցին գիւղի իմաստունին, գրբացին. խնդրեցին, որ նա գիր անի՝ սատանաներին Վարդիի սրտից դուրս քշելու համար, Վարդիի սիրտն այդպիսով սատանաների ձեռքից խլելու ու իր ամուսնուն տալու համար... Գրբացը երկու հաւ ու մի թունդի գինի ստանալուց յետոյ գիրն արաւ, հաւատացնելով, որ երեք օրից յետոյ Վարդին իր կամքով սուս ու փուս կը գնայ իր ամուսնու մօտ։

Երեք օրն անցաւ, բայց գիրն իր հրաշագործ ոյժը ցոյց չը տուեց. Վարդին չը մտածեց անգամ տեղից շարժուել։

Դիմեցին այն ժամանակ տէրտէրին։ Բարեկրօն հայրը, գիւղի երկարամեայ հովիւ տէր-Մխիթարը, եկաւ, ծալապատիկ նստեց, լաւ կերաւ, խմեց, ըմնոթի քա-

շեց ու դարձեալ խմեց. կատարը լաւ տաքացնելուց յետոյ հրամայեց դուրս բերել Վարդիին պուճախից, տան մութ անկիւնից, ուր նա այցելուներից թաքնւում էր իբրև նորահարս։ Խեղճը դողդոջուն քայլերով եկաւ ու կանգնեց տէրտէրի առաջին։ Տէր-Մխիթարը մեկնեց նրան իր ձեռքը, համբուրել տւեց աջը ու մի երկար քարոզ կարդաց նրա գլխին. յիշեցրեց նրան իր տատին ու՞մօրը, որոնք պսակւել էին տասը տարեկան հասակը հաղիւ բոլորած. սպառնաց նրան, իբրև իր օրինաւոր ամուսնուն անհնազանդ կնոջ, դժոխքի սարսափներով, յաւիտենական ահաւոր տանջանքներով. սպառնաց զրկել նրան եկեղեցի յաճախելու իրաւունքից ու ս. հաղորդութիւնից, իբրև ուխտադրուժ կնոջ, ու վերջում դարձաւ նրան, հարցնելով՝ „Հ՞ը, հասկացար, ինչ որ ասեցի. էս իրիկու գնում ես քո մարդի կուշտը, թէ ոչ. ասա, ամաչիր մի. ամաչի քո արածից, այլ ոչ ինձ հետ խօսալուց“։

Վարդին լուռ էր։ Գետնին յառած նրա աչքերից գլորւում էին իրար ետևից նրա դունատ, թառամած այտերով արտասուքի կաթիլներ։

Մայրը մօտեցաւ նրան ասելով՝

—Ի՞նչ ես տաղ արել. տէրին պատասխան տուր. ասա՝ գնում ես։

—Չէ,—դողդոջուն ձայնով կամացուկ պատասխանեց Վարդին։

—Չո՞ւ—ասաց բարձրաձայն մայրը։

—Ի՞նչ ա, ուզում չի գնա՞մ,—հարցրեց տէրտէրը։

—Չէ, ա՛ տէր, չէ՛. սրա ծնւած օրը սև ըլի, չէ։

—Դէ ես էլ էդ էնց անզգամի ու լիրբի հետ խօսալու բան չունեմ,—ասաց տէր-Մխիթարը, վեր կացաւ տեղից ու վերցնելով անկիւնից գաւազանը, մի քանի անգամ ուժգին խփեց նրանով խեղճ Վարդիի

մէջքին ու ոտներին ասելով՝ «Խելքի եկ, անիրաւ, խելքի եկ. մի՛ շնանալ, նզովեալ. հայի հաւատին, հայի աղաթին ու ամուսնական սուրբ առագաստին հաւատարիմ եղիր է, հաւատարիմ. աստուածային օրէնքն ու իմ արած սուրբ պսակը ոտի տակ մի՛ տալ, թէ հու չէ քեզ քո ծամերովը մի խամ քուռակի պոչից կապել կը տամ, բաց կը թողնեմ ու մեծ կտորդ ականջդ շինեմ, էնքան քեզ քար ու քար քաշ տալ կը տամ»...

Տէրտէրն այդպէս հայրաբար պատժելով կամակորութեամբ ու անհնազանդութեամբ իրեն, տէրին, դիւղի քահանային, անչափ զայրացրած «ուխտադրուժ կնոջ», սիրտը հովացրեց ու դուրս գնաց։

Նրա գնալուց յետոյ մօր և աղջկայ մէջ տեղի ունեցաւ ամենօրեայ սովորական խօսակցութիւնը։ Մայրը նախ խնդրեց, աղաչեց, յետոյ դիմեց սպառնալիքի ու ծեծի. երկաթէ մաշայով կապտացրեց խեղճ Վարդիի մարմինը, թողեց նրան հեծկլտալիս տան մութ պուճախում կծկւած, իսկ ինքը գնաց իր քոյր Զառիի մօտ՝ նրա հետ նորից խորհրդակցելու, միասին մի նոր ճար փնտրելու...

VI

Զառին, հաւատացած լինելով, որ տէրտէրն անպատճառ կազդի Վարդիի վրայ, պատրաստւել էր արդէն այդ երեկոյ գալ ու տանել նրան սկեսրանց տունը։ Երբ քոյրը պատմեց նրան տէրտէրի քարոզի ու յորդորների անաջողութեան մասին, Զառին, իբրև ծայրայեղ միջոց, խորհուրդ տւեց դիմել գիւղի կանանց «քեանդ խուդա», կանանց իւզբաշի, նրանց տանուտէր, Քեօխւայ Հերիքին, որից Վարդին անշուշտ կը վախենայ...

Քեօխլայ Հերիքը մի խստաբարոյ ու խստասիրտ կին էր, հինաւուրց կարգերի, սովորութիւնների ու աւանդութիւնների խստապահանջ պահապան։ Նրանից վախենում, քաշւում էին բոլոր կանայք, իսկ երիտասարդ, ջահել հարսներն ու աղջիկները ուղղակի սարսափում էին. վերջիններից ոչ ոք չէր համարձակւում նրա մօտ խօսալ, նրա մօտ երես կամ բերան բաց անել։ Հերիք աքիրը ոչ ոքի հետ հանաք անել չէր սիրում, երբ որևէ շեղում էր նկատում հնաւանդ կարգերից ու ադաթներից։ Կանայք, մեծ յարգանք տածելով դէպի Հերիք աքիրն ու անպայման խոնարհւելով նրա հեղինակութեան առաջ, յաճախակի դիմում էին նրան գանգատներով, դիմում էին խորհուրդ հարցնելու. բոլորին էլ բաւարարում էր Հերիք աքիրը. որին խորհրդով, մայրական խրատներով էր խելքի բերում, որին իր խիստ, իր անհակաճառելի քեօխլայական հրամանով։ Գիւղի տանուտէրը, իսկական քեօխլան, երբէք չէր խառնւում այնպիսի գործերի մէջ, որոնք բնականօրէն, ըստ իրենց առանձնայատուկ էութեան, Հերիք աքօրն էին ենթարկւում։

Եթէ այդպիսի գործով դիմում էին տանուտէրին, նա ասում էր՝

—Էդ կնկայ գործ ա, իմ խելքի բանը չի. գնացէք էն գլխամեռին ասեցէք, մեր Հերիք աքօրը. էդ բաները նա լաւ ա գիտում. էդ շարը նա ինձանից լաւ կը կտրի։

Նրա հօրն օղորմի,—աւելացնում էր ինքն իրեն խօսելով տանուտէրը,—էս շէնը շիտակ էդ մասնումը եօլա ա տանում ու իմ գլուխն ազատ պահում կնանունց գանգատներից. որ օխտն ուզբաշի ըլեն էս շինումը, էլ չեն կարող կնանունցը քարսազի անել, նրանց գանգատներին բաւականութիւն տալ։ Աստուած հեռու

տանի կնանունց դալմաղալը. նրանց լեզուն տղամարդկանց կշտին երբ բացւում ա, թագաւորն ինքը կարալ չի նրանց տաղացնի. նրանց դարմանը մեր Հերիք աքիրն ա...

Տանուտէրներից մինը սխալւում է մի անգամ ու տնօրինում Հերիք աքօրը ենթակայ մի գործ. բայց շուտով փոշմանում է իր արածը, քանի որ Հերիք աքօրից հրապարակով խիստ յանդիմանութիւն է լսում, խստօրէն կշտամբւում։ Հերիք աքիրը, որին իսկոյն զեկուցանում են տանուտէրի արածի մասին, նոյն օրը և եթ պատահում է նրան ժամի ճանապարհին, կանգնեցնում, իր իշխանների մօտ մի լաւ կշտամբում ու ասում վերջում՝

—Մղափուն ես, ա ուզբաշի, ափսոս, շատ ափսոս, որ բեղերս հլորած տղամարդ չեմ. մգամ քեզ պէս ես շէն կը պահէի, քեզ պէս շէն ու ռահաթ կը կառավարէի. ես էս շէնը հիմի մի քաղաք, մի շհար էի շինել, մի շհար, թագաւորի ուրան նստած տեղի, Պետրիպօլկի, պէս մի շհար...

Տանուտէրը չը յանդգնեց պատասխանել, հակաճառել Հերիք աքօրն ու այդպիսով յարգելով նրան, լռութեամբ լսեց նրա յանդիմանութիւնը ու վերջում միայն ասաց, որ կանանց գործերում այլ ևս չի խառնւիլ։

Ռեհան աքիրը իր քոյր Զառիի հետ գնաց, խընդրեց Քեօխլայ Հերիքին գալ ու խելքի բերել իր կապուկոտոր եղած աղջկան։ Քեօխլան սկզբում մերժեց նրանց խնդիրքը. նա նեղացած էր, որ հէնց դէպքի հետևեալ օրը չեն դիմել իրեն. հողեց գրբացի ու տէրտէրի գլուխները, որ կարողացել չեն բան շինել. ասաց, որ Վարդին իր առաջին ծպտալ չի կարող, որ նրան իսկոյն խելքի կը բերի... Ռեհան աքիրն ու Զառին

մի կերպ շարժեցին տեղից Բեօխուին, որը հողելով ժամանակակից անաբուռ ու անամօթ հարսների ու աղջկերանց գլուխները, ճանապարհեց Զորթանանց տունը։

—Ո՞ւր ա էն հայասուզ սատանէն, կանչեցէք էս սհաթիս,—տուն մտնելուն պէս ասաց խրոխտ ձայնով Բեօխաայ Հերիքը։

Տան հեռաւոր մութ պուճախից Վարդիին դուրս բերան Բեօխաի առաջը։ Մայրն ու մօրաքոյրը հրամայեցին նրան համբուրել Հերիք աքոր ձեռքը, բայց Բեօխաան չարժանացրեց նրան այդ պատուին, յետ քաշեց ձեռքն ասելով՝

—Դրա գլուխը հողեմ, ես էդ էնց հայասուզին ձեռք չեմ տալ, որ պաչի. պէտք ա աբուռն ուրան հաւաքի, հրամանս կատարի. ետնայ։

Վարդին սարսափով նայեց Հերիք աքոր ահաւոր դէմքին ու խոնարհեց գլուխը։ Նա, ինչպէս նաև դիւղի միւս երեխաները, վաղ մանկութիւնից սկսած միշտ ահ ու դողով էր լսել Բեօխաայ Հերիքի անունը։ Մանուկ հասակում, երբ նա լաց է եղել, որեէ չարութիւն է արել, միշտ սպառնացել են տանել նրան Բեօխաայ Հերիքին տալ՝ նրա թշերը շիկացած շամփուրներով դաղելու համար։ Երբ նա պատահել է Բեօխաայ Հերիք աքորը, սարսափով փախել է միշտ ու թաքնուել իրենց հաւաբունում կամ ամբարի ետևում, այնքան մեծ է եղել նրա երկիւղը Հերիք աքորից։

Այժմ ահարկու Բեօխաան եկել է նրանց տունը՝ նրան խրատելու, նրան խելքի բերելու համար... Հեշտ չէր նրա առաջին կանգնել ու նրա խրատը լսել։

—Աղջի, ա անզգամ սաթայէլ,—ասաց Բեօխաայ Հերիքը,—դու էդ քանի՞ գլխանի ես, որ մարդիդ թողնում ես ու փախչում. ոչ մօր ես լսում, ոչ հօր, ոչ տէրտէրի, ոչ իշխանի, ոչ մեծի, ոչ կուճուրի։ Իսկի

ինձ ճանաչում ե՞ս, ինձ. գիտում ե՞ս ով եմ ես... էդ կաշիդ մի պինջ դանակով կը մաշկեմ, պինջ դանակով, շուն անիծած. աչքերդ կը հանեմ ագռաւներին տամ, իսկ եթէ ինձ հակառակ խօսք ծպտաս, լեզուտ տակռկից, թամամ արմատից, կը կտրեմ ու շներին կը տամ։ Ինձ կնանունց Բեօխաայ կասեն հա. լաւ իմացի. էս գեղումը ոչ մի կնիկ իմ խաթրը կոտրում չի, իմ ասածը տափը չի գցում. լօին էլ ինձ լսում են. գիտում ե՞ս. ինչ ասում եմ, լօին էլ ընդունում են. հասկանում ե՞ս։ Էսօր քսան-քսանհինգ տարի ա, ինչ ինձ Բեօխաայ են ասում. էս քսան տարումը ոչ մի կնիկարմատ իմ խօսքը ծռել չի, ոչ մինն ինձ հակառակուել չի. էդ լաւ գիտա, լաւ իմացի հա, լաւ։ Եթէ հիմի դու ինձ հակառակուես, իմ խօսքը չը լսես, իմ հրամանը չը կատարես, էդ թուշերդ հէնց էս սհաթիս կարմրացրած շամփուրներով կը դաղեմ, կարմրացրած շամփուրներով։ Էս իրիկու քո մօրաքիր Զառիի հետ տաղ արած, սուս ու փուս, պռուշ-պռուշի դրած, կը գնաս քո սկեսրանց տունը, քո սկեսօր ձեռքը կը պաչես, ջուր կը տաքացնես նրա ոտները լուանաս, գլուխը կը քթուես, մէջքը կը քորես ու յետոյ... յետոյ... հա, կը գնաս քո մարդի տեղը շինես ու դու էլ էն տեղումը... դէ ես քեզ ո՞նց ասեմ ահր, ա սատանի ճուտ. դու ամեն բան ինձանից լաւ ես հասկանում. օխտը կնկայ խելք ունես. նհախ քեզ անքէթ լախայ ու անմեղ գառն ես ձևացնում. հա, դու էլ էն տեղումը...ը...ը...կը ստակես, քո մարդի կշտին քուն կըլես... Լսում ե՞ս, կը գնա՞ս, ասա՛. համաձայն ե՞ս. ի՞նչ ես տաղ արել, պատասխան տուր, գլուխդ հողեմ. քեզ հետ եմ խօսում։

Վարդին լուռ արտասուում էր ու դողում ամբողջ մարմնով։

—Ի՞նչ ես լաց ըլում,—շարունակեց Բեօխաայ

Հերիքը,—լաց-մացն էն ղոլին դիր ու պատասխանի ինձ. ասա՝ էս իրիկու գնում ես, թէ չէ. ասա՝ հա, հը՛, շուտ. կանոխ արա, նազ մի անիլ։ Ինձ Քեօխւայ Հերիք կասեն հա. ես հանաք-մանաք չեմ սիրում. բերանդ բաց, գլուխդ հողեմ. խօսա, ասա՝ հա, Հերիք աքիր, գնում եմ։ Զէ, դու թամամ լալկւել ես, ոնց տեսնում եմ. քո միտքն էստեղից, էս տանից, պուկ գալի չի. դու էս օջաղը խայտառակելու ետևից ես. դէ լաւ։

—Աղջի Ռեհան,—դարձաւ Քեօխւայ Հերիքը Վարդիի մօրը,—գնա շամփուրները բեր, կրակումը դիր կծացրու, մի լաւ կարմրացրու ու թող մի ես սրա թուշերը դաղեմ. էն վախտը թամաշա արա, տես՝ ոնց ա սա վազ տալով սկեսրանց տունը գնում... Ի՞նչ ես կանգնել, շան տղի կնիկ,—բարկացաւ Քեօխւան Ռեհանի վրայ,—քեզ բան եմ ասում. ես էստեղ մասխարութիւն չեմ անում. գնա էս սնաթիս շամփուրները բեր ու կրակումը դիր։

Ռեհան աքիրը գնաց դէպի պուճախը շամփուրները բերելու. այնտեղ, պուճախում, նա իրեն այնպէս էր ձևացնում, թէ փնտրում է շամփուրները։

Վարդին, որը վաղ մանկութիւնից լսել էր անթիւ անգամ, թէ Քեօխւայ Հերիք աքիրը չար, անհնազանդ ու կամակոր երեխանց թշերը դաղում է կարմրացրած շամփուրներով, այդ ահաւոր պատժի ուրուականը իրենից այդքան մօտ տեսնելով, անպայման հաւատալով Հերիք աքօր սպառնալիքներին, սարսափահար ընկաւ նրա ոտներն ասելով՝

—Հերիք աքիր, քեզ մատաղ, կը գնամ, կը գնամ. թուշերս դաղիլ մի, Հերիք աքիր...

—Զէ, պէտք ա դաղեմ. դու իմ խօսքը տափը

գցեցիր, իսկոյն չը լսեցիր ինձ. թուշերդ դաղիլ պտեմ, դաղիլ, ճնճռստացնիլ խորովածի պէս...

—Վոյ, Հերիք աքիր, քեզ մատաղ. կը գնամ, կը գնամ. իմ սկեսօր ոտները կը լւանամ. իմ թուշերը դաղիլ մի, Հերիք աքիր, քեզ մատաղ, Հերիք աքիր...

—Դէ լաւ, տեղդ կանգնի. ձեռս պաչի,—ասաց Քեօխւան մեղմացած.—էդհէնց, ապրես. խոնարհ կաց միշտ, խոնարհ. մեծերիդ լսի. որ քո մեծերն ասեն՝ գնա կարմնջովը դվէր ընկի, պէտք ա առանց ձէն ու ծպտուն հանելու գնաս դվէր ընկնես. որ ասեն՝ գնա վարար գետն ընկի, պէտք ա տաղ արած գնաս ընկնես. լսում ես։

—Հա։

—Դէ ապրես, ապրես, ա որդի. ապրես ու զօրանաս, ապրես ու խելօքանաս։ Հէնց արա, որ քո մէրն ինձ մին էլ չի կանչի քեզ խրատելու. որ մին էլ կանչեց, էլ հետդ բան չեմ խօսելու. տաղ արած գալ պտեմ, շամփուրները կրակում դնեմ, մի լաւ կարմրացնեմ ու թուշերդ դաղեմ. ինչքան լաց լինես, աղաչես, պաղատես, ուշ չեմ դարձնիլ։ Ասածներս մտիդ պահիլ պըտեմ։

—Հա, Հերիք աքիր։

—Դէ շատ ապրես, զօրանաս։

Վարդին կրկին անգամ համբուրեց Հերիք աքօր ձեռքը։

Ռեհան աքիրն ու Զաոին իրենց երախտագիտութիւնը յայտնեցին նրան։ Քեօխւայ Հերիքը մի բաժակ արաղ խմեց, օրհնեց Զորթանանց օջաղը, օղորմի տուաւ նրանց հին ու նոր ննջեցեալանց ու գնաց։

VII

Նոյն օրը երեկոյեան Վարդին իր մօրաքոյր Զաուիի հետ գնաց իր սկեսրանց տունը։ Նրան խստիւ պատուիրել էին լաց չը լինել, երեսը միշտ ծածկած պահել։ Մեծ դժուարութեամբ զսպելով արտասուքը, նա դողդոջուն շրթունքներով համբուրեց սկեսրի ձեռքը ու գլուխը խոնարհած կանգնեց նրա առաջին։ Սկեսուրը քիչ կշտամբեց նրան, խրատ կարդաց ու յետոյ պատուիրեց ջուր տաքացնել՝ իր ու հանդից սպասող տնեցիների ոտները լուանալու։

Զառին թողեց Վարդին իր սկեսրի մօտ ու գնաց։

Վարդին այդ երեկոյ նամուսով հարսնութիւն արաւ. կրակը թեժացրեց, ջուր տաքացրեց, լուացաւ սկեսրի, պատրունի ու հանդից եկած տնեցիների ոտները. քորեց, երկար քորեց սկեսրի մէջքը։

Գրիգորն այդ երեկոյ բոլորովին չերևաց. Վարդիի բախտից նա սարին էր. գնացել էր այնտեղ խոտ հընձելու։

Զորս օր Վարդին խաղաղ ապրեց իր սկեսրի մօտ։ Բարի սկեսուրը քնացնում էր նրան իր ծոցում։

Շաբաթ երեկոյեան Գրիգորն եկաւ սարից։ Նա լսել էր, որ Վարդին փոշմանել ու վերադարձել է. ուրախ էր. երջանիկ էր զգում իրան։

Նոյն գիշերը Վարդին տարան այն սենեակը, որն այնքան ատելի էր նրա համար, որը նրան կատարեալ դժոխք էր թւում, որտեղ սպասում էր նրան, ոչ թէ այն լաւ, այն բարի, չամիչ ու կանփեթ բերող «ինամունց տղէն», այլ մի ատելի, մի վատ մարդ, խեղճ Վարդիին տանջող մի գազան. Գրիգորն առաջին գիշերից յետոյ թւում էր Վարդիին մի արիւնարբու, մի վայրագ գազան...

Գրիգորը փորձեց գրաւել, սիրաշահել նորահարսին «շաքարով շինած զատերով» ու չամիչով, բայց ի դուր. նա ոչ մի բանի մատով չը դիպաւ ու մի խօսք անգամ չը խօսեց իր ամուսնու հետ։

Կէս գիշերին կրկին լսեց ճիչ, աղմուկ, վայնասուն նորապսակների սենեակից...

Վարդին դարձեալ փախաւ, անհետացաւ խաւարի մէջ...

Կարծեցին, թէ նա փախաւ հէրանց տունը. այդ պատճառով սուս կացան. իսկոյն և եթ նրան փնտրելու չը գնացին, մարդ չուղարկեցին նրա ետևից. չուզեցին աղմուկ բարձրացնել ու այդպիսով նոր խայտառակութիւնը իսկոյն և եթ յայտնի դարձնել ամբողջ գիւղին։

Լուսանալուն պէս մարդ ուղարկեցին Զորթանանց տունը։ Ցայտնեց, որ Վարդին այնտեղ չէ, որ նա տուն չի վերադարձել։

Դէպքն իսկոյն յայտնի դարձաւ բոլորին. իրարանցումն ընկաւ գիւղի մէջ. բոլորն էլ ցաւում, ափսոսում էին խեղճ, դժբախտ հարսին. բոլորն էլ համոզուած էին, որ նա սպանել է իրան, անկասկած ցած է նետուել գիւղի շրջակայ ժայռերից մինից։

Վարդիի մայրը, հայրը, եղբայրները, ազգականներն ու նրանց հետ շատ գիւղացիներ ու գեղկուհիներ ընկան գիւղի շրջակաները՝ Վարդիին փնտրելու. առաջին օրը դատարկաձեռն վերադարձան տուն. երկրորդ օրը կէսօրից յետոյ սկսեցին մարտգները փնտրել ու իրիկնամուտին գտան խեղճին գիւղի ծայրին գտնուող մարագներից մինի մութ ու խոնաւ անկիւնում կծկուած։ Նրան բերան տուն։ Երկրորդ չարաբաստիկ գիշերուայ կրած բարոյական ու ֆիզիքական տանջանքներից ու երկու օրուայ քաղցից նա անչափ հալւել, մաշւել էր. նրա-

նում ոյժ չէր մնացել։ Թէև ամառ էր, բայց նա մրսել էլ էր, տանջւել էր դիշերւայ զովից, քանի որ դաղանացած «խնամունց տղի» ձեռքից փախել էր համարեա կիսամերկ։ Նա դժւարութեամբ էր քայլում։ Մօրաքոյր Զառին փաթաթեց նրան իր վրայի ծածկոցում, շալում, ու խոտեց ինչպէս մանուկի. Վարդին այնքան հիւծւել էր, որ բնաւ ծանրութիւն չէր պատճառում Զառիի ուժեղ կռներին։

Երբ մտան գիւղը, սկզբում գնացին այն փողոցով, որը տանում էր դէպի խնամունց տունը, Վարդիի տանջանաց վայրը։ Նա կարծեց, թէ իրեն դարձեալ տանում են այնտեղ ու ջղաձգօրէն աղաղակեց՝ «գնում չեմ, գնում չեմ, էնտեղ փիս ա... վայ»... Վերջին բառն արտասանելուն պէս նա ուշաթափւեց։ Մօտիկ տնից բերած ջրով նրան ուշքի բերան ու տարան իրենց տունը։

VIII

Վարդիի հետ իրանց տնեցիք մի քանի օր լաւ վարւեցին. բայց էլի հաշտւել իրողութեան հետ, տանել խայտառակութիւնը չը կարողացան։ դարձեալ սկսեցին խնդրել, աղաչել նրան՝ վերադառնալ սկեսրանց տունը, վերադառնալ իր մարդի կուշտը. դարձեալ սկսեցին սպառնալ, դարձեալ սկսեցին ծեծել խեղճին, ծեծել անխնայ։

Գրիգորը մարդ ուղարկեց Զորթանանց տունը ու պատւիրեց յայտնել նրանց, որ նա հրաժարւում է իր «հայասուզ» կնոջից ընդ միշտ ու պահանջում է նրանցից իր արած ծախսերը նշանդրէքի, գնալ-դալու, ընծաների ու հարսանիքի վրայ։ Զորթանանց Բարսեղը, սարսափած այդ պահանջից, խնդրեց պատգամաւորին

յայտնել Գրիգորին, որ երեք օրից յետոյ, ամենաուշը երեք օրից, իր կնոջը կը տեսնի իր մօտ բոլորովին խելքը դլխին...

Եւ նա սկսեց խեղճ Վարդիի խելքը գլուխը բերել... Առաջին փախուստից յետոյ նա այնքան էլ չը միջամտեց. Վարդիի «խելքը գլուխը հաւաքելը» յանձնեց այն ժամանակ իր կնոջ ու նրա քոյր Զառիին. այս անգամ այդ գործն իր ձեռքն առաւ։ Նորափեսան իր դրամական պահանջով նրան սարսափեցրեց ու կատաղեցրեց անչափ, և սկսեց նա իր դայրոյթին յաղուրդ տալ վայրագօրէն ծեծելով խեղճ Վարդիին։

Աւելի կատաղեց Բարսեղը, երբ տանուտէրը, որին գանգատւել ու „տեսել" էր Գրիգորը, կանչեց նրան իր մօտ ու Գրիգորի անունից նոյն առաջարկութիւնն արաւ, ակնարկելով, որ յապաղման դէպքում նա, տանուտէրը, ամենախիստ միջոցներով կը հարկադրի նրան կատարել իր փեսայի պահանջը...

Նորափեսան իր անձերից պահանջում էր երկու հարիւր յիսուն ռուբլի. այդքան նա ծախս էր ցոյց տալիս։ Զորթանանց Բարսեղը եթէ իր ողջ տուն ու տեղը ծախէր, հազիւ երկու հարիւր յիսուն ռուբլի դոյանար. նա աւելի շուտ իր աղջկանը կը մորթէր, ինչպէս ինքն էր ասում, քան կը հրաժարւէր իր փեսայից ու երկու հարիւր յիսուն ռուբլի կը տար նրան։ Անտանելի էր այդ, իսպառ անտանելի՝ Բարսեղի ու նրա ամբողջ ընտանիքի համար. բաւական չէր, որ աղջիկը խայտառակւած ընդմիշտ մնալու էր տանը, տան մնացած պառաւած աղջիկ էր դառնալու, մշտական պատուհաս, «բաշ ու բալա» էր լինելու այդպիսով իր ծնողների ու եղբայրների համար, դեռ պէտք է երկու հարիւր յիսուն ռուբլու մշտական ծանր պարտքի լուծն էլ դնէին իրենց վզին, մի անտանելի

լուծը, որի տակից դուրս գալու հնարաւորութիւն երբէք չէր լինելու...

Բարսեղը գնաց Գրիգորի մօտ՝ անձամբ բանակցելու. խնդրեց նրան յետ կանգնել իր մտքից, տէրութիւնը անել իր «ապրանքին», իր կնոջ։ Գրիգորը հրաժարուեց վճռաբար։ Բարսեղը շարունակեց խնդրել, համոզել, ասելով՝

—Ադա, նա օրէս ետն իմ աղջիկը չի է, իմ աղջիկը, քո կնիկն ա, քո ապրանքն ա. աչքը հանի, խեղդի, սպանի ու քո ասածն արա։ Բա տղամարդ չես դու, էդ փափախն ինչի համար ես գլխիդ դնում, որ կարողանում չես տղամարդութին անի։ Բախին որ շկօլն են տալիս, վարժապետին ասում են՝ վարժապետ, միսը քեզ, ոսկորն ինձ. թակի, սպանի, միսը կեր, ինձ համար մենակ ոսկերքը թող, ամա մարդ շինի է, մարդ։ Հիմի ես նրան տեղովը քեզ եմ տուել՝ համ միսը, համ ոսկերքը. ետ չեմ ուզելու քեզանից. միսը կեր, թակի, սպանի, մենակ ոսկերքը թող, ու էն վախտը նա կնիկ կը դառնայ քեզ համար, արուրին հարսը կը դառնայ քո ծնողաց համար, ձեր տան համար։ Սրտիցդ շատ ես խեղճ, շատ ես ամաչկոտ. տղամարդի ղայդի չես դուրուր գալիս. դուռը՝ պլնդ կողպի, ղփլի, որ էն շան ծիծ ծծածը չը կարողանայ փախչի։ Որ մեռնի էլ, բան չեմ ասիլ. ուզում ես, մեր քեօխուի ձեռքով լեզուիցս քեզ մի թուղթը տամ, որ եթէ, ասուիլ չի, նրա գլուխը մի փորձանք դայ քո կշտին, խօսամ ոչ։ Ասեցի, որ քո ապրանքն ա. էն ա որ պսակուել ես, որ նրա հետ միասին խաչ ու աւետարան ես համբուրել, յաւիտեան քոնն ա, ոտով, ձեռով ու գլխով քոնն ա. Աստծու օրէնք ա, Աստծու կարգադրութիւն ա էդ. եթէ թիքա-թիքա էլ կոտորես նրան, էլի ես բան չեմ ասիլ բնաւ։ Մինչև մի երեք օրը նա խելքը գլխին կը

դայ քո կուշտը. մի երեք օր էլ դիմացի, կէնտ երիք օր։ Ես ինքս կը բերեմ նրան քո կուշտը ու իմ ձեռաւ քեզ տամ, յանձնեմ։ Հը՞, ինչ ես ասում, ինչ ես տազ արել։

—Ի՞նչ ասեմ դէ. բա որ մին էլ ինձ խայտառակի,—ասաց Գրիգորը։

—Ասեցի՝ ղփլի օթախիդ դուռը, նրան ղփլած, դուդսաղի պէս տուն գցած պահի, որ փախչի ոչ։

—Էդ էնց պահելի չի. կարող ա մի հանգաւ դուրս պրծնել ու փախչել։ Էն օրը շատ աշխատեցի պահել. լաց ըլաւ, հարա-հուրա արաւ. տեսայ որ ինձ խայտառակում ա, բօշ արի. նա էլ բաց ընկաւ ու փախաւ. որ մին էլ էդ էնց անի, ինց անեմ էն վախտը։

—Էն վախտը տազ արած թեանքդ առ, կրակ տու ու վեր գցի։ Ես իմ կողմանէ իրաւունք եմ տալիս. թուղթը կը տամ, որ էդ էնց բան եթէ անես, գանգատ չանեմ։

—Հէչ խելքից մօտիկ բան չի էդ,—ասաց Գրիգորը։

—Բա ո՞րն ա խելքից մօտիկը. իմ տունը քանդի՞լը... Ես ինց անեմ, ինչ հոդն ու ցեխը գլխիս տամ. տանով-խիզանով գնամ, որ վարար գետ ընկնեմ, որ ինձ տանի... Երկու հարիւր յիսուն մանէթ ջարմա ես ուզում. պէտք ա գնամ հարիւրին քսան-երեսուն մանէթ շահ տամ, ինձ ու իմ տղերանց փողատիրող յաւիտենական ճորտը շինեմ, որ քո ուզած փողը ճարեմ ես։ Էդ բաւական չի. խայտառակած աղջկանս էլ պէտք ա տանս պահեմ, մուհտա հացակեր պահեմ օջաղիս դրաղին, պատիժ ու պատուհաս պահեմ ինձ ու իմ տղերանց համար... Բա քո Աստծն ո՞ւր ա, այ տղայ. լաւն էն ա, թեանդդ առ ու եկ լօխիս էլ մի անդամից կոտորի էլի. խի՞ ես մի տեղ, միասին կե-

բած էնքան աղ ու հացը էդ հէնց ոտի տակ տալիս, ա աղբաթիխէրի տղայ,—ասաց դողդոջուն ձայնով Բարսեղը։

—Դէ ես ոնց անեմ, Բարսեղ ամի,—ասաց Գրիգորը,—իմ թայ ու թիւշ տղերանցից համանչում եմ, շատ եմ համանչում... Շատ ես նեղն ընկած, տեսնում եմ. բա ես քեզանից լաւ եմ. ես աւելի փիս նեղ դրութեան մէջ եմ. համանչելուց մնացել եմ տուն ընկած, տանը նստած, կարողանում չեմ բանի, գործի գնալ. գիտում եմ թա քարերն էլ ինձ վրայ ծիծաղում են... Ո՞նց անեմ դէ, Բարսեղ ամի, խեղճ եմ գալիս քեզ, ամա ճար չեմ գիտում քեզ համար։

—Ճարը քո ձեռքին ա՝ իմն էլ, քոնն էլ. էն ա որ նրա լացին, հարա-հրոցին մնալ չի դնես ու տղամարդութին անես, նա խելքի կը գայ, ու էդ լաւ ճար կըլի երկուսիս համար էլ։

Գրիգորը լուռ մնաց։ Բարսեղը նրա լռութիւնը համաձայնութեան նշան համարելով, շարունակեց.

—Էն ա ոնց ասեցի, չլայ երեք օրը իմ ձեռաւ կը բերեմ քեզ յանձնեմ ու ինքս էստեղերք, ձեր տան թիւշերում, մի քանի գիշեր, չլայ նրա խելքի գալը, դարաւուլ կը քաշեմ. որ մին էլ փախչի, առաջը կը կտրեմ, մի քար գցեմ գլխին ու սպանեմ, ու էն վախտը թող ինձ կատրժնի տանեն. լաւ ա Սբիր գնամ, քան խայտառակած աղջկայ ու անպատիւ ըլած օջաղի տէր ըլեմ էստեղ...

—Դէ դու ես գիտում, Բարսեղ ամի,—ասաց մեղմացած Գրիգորը,—չարը չհանեմը. էդքան որ ասում ես, մին էլ կընդունեմ, բեր. էդ սպանիլ-մսպանիլն էն դոլին դիր. նեղացած մարդ ես, ասում ես. սրտինդ չի հու. ամա մի կերպ, մի հանգաւ խելքի բեր, խրատի ու Աստծու խաթրի հետի ինձ խայտառակութիւնից

ազատի. գեղամէջ չեմ կարողանում դուրս գալ. համանչելուց քիչ ա մնում, թա տափը ճղեմ ու մէջը մտնեմ... Բարսեղը գնաց տուն ու իր կնոջ հետ միասին սկսեց խրատել, խելքի բերել Վարդիին, այն է՝ ծեծել, ծեծել անխնայ ու անողորմ։

Նրան կատարելապէս ահաբեկելու ու այդպիսով ստիպելու համար, որ կամովին գնայ սկեսրանց տունը, հաշուի այնտեղ իր դրութեան ու իր դերի հետ ու երրորդ անգամ փախչելու մասին չը յանդգնի մտածել անգամ, Բարսեղն ասաց՝

—Էս անգամ ես ինքս պտեմ քեզ տանիլ քո սկեսրանց տունը. մի երկու օր էլ քեզ ժամանակ եմ տալիս, որ քեզ ու քեզ խելքի գաս ու աբուռդ երեսիդ տաղ արած գնաս հարսնութինդ անես. թէ հու չէ ծամերիցդ բռնած կը տանեմ տամ քեզ քո մարդին ու գիշերները թանգա ձեռիս նրանց տան կշտին նստեմ դարաւուլ քաշեմ. փախար թէ չէ, կրակ կը տամ սպանեմ քեզ ու ջամդաքդ գցեմ շների առաջը... Լաւ բոլ խայտառակուեցինք քեզ պէս օձի ճուտի պատճառաւ... Ի պատասխան նա խօսք անգամ չը ծպտաց. լաց էր լինում խեղդուած ձայնով. բարձրաձայն լաց լինել չէր համարձակւում։ Ցոգնեցին ծեծելուց ու թողեցին սիւնի մօտ վայր ընկած։ Ծեծուած, ջարդուած, անչափ ու անողորմ չարչարուած, քաշուեց նա տան մութ անկիւնը, այնտեղ, որտեղ դրած էր ցորենի ամբարը։ Ի՞նչ անէր խեղճ Վարդին. երբ մտաբերում էր «խնամունց տղին» ու նրա արարմունքը, փշաքաղւում էին նրա մազերը, դողում էր նա ամբողջ մարմնով... Ո՞նց անէր, ի՞նչպէս սպասուէր նրանից, էն փիս տղից. ապէրն սպառնում է զօռով տանել. եթէ չը գնայ, ծամերից բռնած քարշ տալով կը տանի. եթէ մին էլ փախչի, էն վախտն ապէրը նրան վէր կը գցի, կը սպանի ու, ոնց ինքն ա-

սեց, շներին կը տայ ուտելու... Իսկ եթէ զօռով տանը մնայ, ինչքան ծեծեն, տեղից չը շարժւի. ապէրը քարշ տալով անգամ չը կարողանայ տանել, այն ժամանակ Հերիք աքիրը կը դայ ու Նրա թշերը կարմրացրած շամփուրներով կը դաղի. չէ որ ասեց, որ մի անգամ էլ եկաւ, էլ Նրա հետ խօսելու չի, ուղղակի շամփուրները կարմրացնելու ա ու իր ձեռքով Նրա թշերը դաղելու...

Անցաւ երեք օր, դաւը, դժոխային օրեր... Ամեն օր դիմում էին Նրան ու պահանջում, որ վեր կենայ ու աբուռն երեսին իր մօրաքոյր Զառիի հետ գնայ իր սկեսրանց տուն. Նա չէր գնում, ի հարկէ, ու ծեծւում էր վայրագօրէն. Նրան տանջում էին սովով, մի կտոր ցամաք հաց էին շպրտում, թքելով ու մրելով խեղճին, գլուխը հարիւր անգամ հողելով... Ռեհան աքօր սըրտում Վարդիի համար դութ չէր մնացել ընաւ. իր տան, իր օջաղի պատիւը, որը Նրա ու իր ամուսին Բարսեղի խորին համոզմամբ արատաւորել էր Վարդին իր «հայասուղութեամբ», Նրա համար անհամեմատ թանկ էր Վարդիից...

Չորրորդ օրը հայրը, ըստ սովորականին լաւ ծեծելուց յետոյ, վճռաբար յայտնեց, որ երեկոյեան մութն ընկնելուն պէս Նա ինքն իր ձեռով կը տանի Նրան ուր հարկն է ու կը յանձնի իր տիրոջ, իր մարդին, որի ապրանքն է Նա... Վերջին անգամ հայրը Նրան կամովին գնալու ժամանակ տուեց մինչև երեկոյեան ճրագավառոցը, մինչև իր վերադարձն արտից, ուր Նա գնաց հունձ անելու։

—Աղջի,—ասաց Նա տանից դուրս գալիս իր կնոջ,—թւանդը դարմանի տակից էսօր հանի, հազրի, պատրաստի մինչև իմ գալը. մի տասը-քսան պատրօն էլ հանի։ Էս գիշեր ես պէտք ա դրան էնտեղ, Նրանց

տան թիւշումը, դարաւել քաշեմ՝ տեսնամ դա ինց ա փախչում ուրան մարդի կշտից...

Սառսաւուն ընկաւ Վարդիի ջանը. անօրինակ սպառնալիքից, ահռելի սարսափից Նրա մազերը փշաքաղւեցին, գոյնը կորցրեց Նա խսպառ. սկսեց դողալ, ցնցւել ուժգին... Այն փիս տղան ու այն դարշելի նկուղը, որտեղ Նրան առանձնացնում էին Նրա հետ, իրենց ամբողջ զազրելի այլանդակութեամբ ու քստմնելիութեամբ իսկոյն պատկերացան Նրա երևակայութեան մէջ ու մեխւեցին Նրա ուղեղում. Նա հազիւ էր շնչում. սառը քրտինքը թափւում էր կաթիլ-կաթիլ Նրա ճակատից ու խառնւում Նրա արտասուքի հետ..,

Կէսօր էր, երբ յանկարծ ջրաբաշխը կանչեց Ռեհան աքօրը բաղչան ջրելու։ Լորին չորանում էր, պէտք էր ջրել. Նա շտապով գնաց բաղչան, որը գտնւում էր գիւղից դուրս։ Վարդին բոլորովին մենակ մնաց. թէ տանը, թէ դրսում ոչ ոք չը կար տնեցիներից. ամառւայ օր էր. բոլորն էլ բանի, գործի ետևից ցրւած էին դէս ու դէն վաղ առաւօտից։ Երբ մօր գնալուց յետոյ տունն ու դուրսը բոլորովին խովլաթեցին, Վարդին դուրս եկաւ տնից, բայց ոչ իր հասակակիցների հետ խաղալու կամ սկեսրանց տունը գնալու համար...

VIII

Բարսեղն իր որդկերանցով բաւականին ուշ վերադարձաւ արտից։ Ճրագավառոց էր արդէն, բայց տանը ճրագ չը կար վառած։ Նրանց գալուց յետոյ, քիչ անցած, եկաւ Ռեհան աքիրը, որը ջրի բարակութեան պատճառով այդչափ ուշացել էր բաղչում։ Տըղամարդիկ դրսում նստած էին, երբ Նա եկաւ։ Տուն մտաւ ճրագը վառեց. Նրանք էլ իսկոյն ներս մտան

նրա ետևից։ Բոլորն էլ հայեացքներով Վարդիին սկսեցին փնտրել. չը կար, չերևաց նա։ Կարծեցին, թէ հոր ահռելի սպառնալիքից վախեցել է ու ինքնակամ գնացել խնամունց տունը, կատարել բոլորի բաղձանքը։ Բարեղի տղաներից մինը հոր պատուէրով իսկոյն վազեց այնտեղ՝ ստուգելու այդ ուրախալի ենթադրութիւնը. հազիւ մի քանի րոպէ անցած հևալով ներս ընկաւ նա տուն ու յայտարարեց, որ Վարդին այնտեղ չէ։

—Նրա գլուխը հողեմ, ամբարի քամակումը կըլի. սատանի պէս էնտեղ կուչ եկած ա ըլում միշտ,— ասաց Ռեհան աքիրն ու քայլերն ուղղեց դէպի տան այն պուճախը, որտեղ գտնւում էր ցորենի ամբարը. մտենալուն պէս ասաց՝—ինչ ես քաչկի պէս շալալ-ւել, մտել ամբարի քամակը ու վէր ընկել էդտեղ, ա գրողը քեզ տանի. դուրս եկ էս սհաթիս, գլուխդ հողեմ։

Բայց այնտեղից ձայն-ծպտուն չը լսեց։

Ռեհան աքիրը գլուխը թեքեց դէպի ամբարի ետևի մութ խոռոչը, ճրագ ուղեց, որն իսկոյն հասցրին նրան. նայեց ու զարմացած և ապշած մնաց. Վարդին այնտեղ չէր։

Բոլորն էլ իսկոյն դէս ու դէն ընկան. Վարդին չը կար ոչ տանը, ոչ դրսում՝ գոմում, մարագում, հորթատանը, հաւաքնում ու հին, կիսախարխուլ ներքնատանը։ Վազեցին հարևանների տները. այնտեղ էլ չը գտան։ Տակն ու վրայ արին գիւղում բոլոր բարեկամների տները. Վարդին չը կար ու չը կար։ Շատերի հարց ու փորձ արին, տանուտէրի հրամանով գզիրն սկսեց այս ու այն կտուրից բարձրաձայն աղաղակել, կանչել Վարդիին տեսնողներին, բայց զուր. ոչ ոք Վարդիին այդ օրը չէր տեսել։ Պարզ էր, որ նա մի փորձանք էր բերել իր գլուխը, որ նա գլուխ էր վերցրել

ու կորել հօր տնից՝ երբէք յետ չը վերադառնալու դիտաւորութեամբ։

Ռեհան աքիրը, զգալով այդ՝ սուգ ու շիւանը զցեց տունը։ «Մախիս գտէք, ձեզ մատաղ, ըսխիս»,— ասում էր նա լալագին ձայնով։

Հայր, եղբայրներ, ազգականներ ու հարևաններ մի-մի ճրագ ձեռներին դուրս գնացին գիւղից՝ նրա շրջականների մարագներում, այգիներում ու ձորերում կորած Վարդիին փնտրելու։ Փնտրեցին ամբողջ գիշերը, ոչինչ չը գտան, փնտրեցին հետևեալ օրը, դարձեալ ոչինչ չը գտան, երկրորդ օրն էլ անհետևանք անցաւ. երրորդ օրը միայն, երբ հաց թխելու համար վերցրին ներքի հինաւուրց անմարդաբնակ տան մի անկիւնում գտնւող թոնրի վրայ շարած տախտակները՝ թոնրը վառելու դիտաւորութեամբ, տեսան այնտեղ խեղճ Վարդիին կծկւած ու անշնչացած. թոնրից հանեցին նրա դիակը...

Ակներև էր, որ խեղճն իրեն սպառնացող սոսկալի արհաւիրքներից ազատւելու համար թոնրն էր ընտրել ամենաապահով պատսպարան իր համար. վերցրել էր ըստ երևոյթին տախտակներից մինը, ներս ցատկել ու ներքևից տախտակը կրկին իր տեղը դրել, որ ոչ ոք նրան չը նկատի, պատահմամբ չը գտնի այնտեղ. մեռել էր կրած տանջանքներից, սարսափից, վշտից ու քաղցից...

IX

Հետևեալ օրը սուգ ու շիւանով, աղիողորմ լաց ու կոծով թաղեցին Վարդիին։ Երբ դագաղը դուրս բերան եկեղեցուց ու վայր դրին դրսում մերձաւորների վերջին հրաժեշտի համար, Ռեհան աքիրն ընկաւ

նրա վրայ, գրկեց պսակի շորերով ու գոյնզգոյն թարմ ծաղիկներով զարդարած, պճնած Վարդիին, աղաղակելով՝ «Ձեզ մատաղ, ինձ էլ տարէք սրա հետ թաղեցէք, ինձ էլ, ա՛ իմ գլուխը մեռնի. մեղաւորը ես եմ, ես, իմ անմեղ բախին ես խի՞ կանոխ մարդի տւայ, ա՛ իմ կուռը չորանայ, ա՛ իմ աչքը դուրս գայ... ես քեզ մատաղ. ա՛ Վարդ»,—դարձաւ նա հեկեկալով դագաղում պառկած անմեղ գառնուկին, որը փոքրիկ թաթիկները կրծքին խաչած ու իր սիրելի եղածաղիկի թարմ արցունքափայլ փնջերով շրջապատուած, կրած տանջանքների դրոշմը դէմքին, կարծես քնած լինէր... Եղածաղիկը հէնց այդ օրը վաղ առաւօտեան քաղել ու բերել էր սարից մեծերի պատւէրով նրանց հարևանի որդի՝ նրա մտերիմ խաղընկեր գառնարած փոքրիկ Վաքին։ Հարսանիքից յետոյ Վաքին չէր տեսել Վարդիին։ Այն չարաբաստիկ օրը, երբ պէտք է Վարդիին պսակէին, Վաքին թողեց իր գառներն ու շները սարին, մեծերի կամքի հակառակ փախաւ եկաւ տուն՝ Վարդիի հարսանիքին թամաշա անելու։ Երբ Վարդիին զուռնա ածելով տանում էին պսակելու, հանդիսատես երեխաների բազմութեան մէջից դուրս եկաւ փոքրիկ կարմրաթշիկ Վաքին, ճեղքեց նորահարսին շրջապատող մեծերի շարքը, մօտեցաւ նրան ու իր ընկերուհուն նոր արտաքինով տեսնելուն պէս, ուրախ ժպիտով փայլեցնելով փափլիկ թշերը, տակաւին թոթով լեզուով բացականչեց՝ «Պի՛, ա՛ Վալդ, դու հալսն ես դալ՞լ, ա՛ Վալդ...»։ Վարդին մոռացաւ իսկոյն հարսանիքն ու «խնամունց տղին», շարժւեց դէպի Վաքիին ուրախ ժպիտը դէմքին, բայց բոպէապէս նրան կարգի հրաւիրեցին, յիշեցնելով, որ նա հարսն է, այլ ոչ Վաքիի պէս անքէթ երեխայ, իսկ Վաքիին յետ հրեցին իր

հասակակիցների բազմութեան մէջ։ Վարդին ու Վաքին այդ բոպէից յաւիտեան բաժանուեցին իրարից։

...«Ես քեզ մատաղ, ա՛ իմ բէյմուրաղ բալա,—շարունակեց Ռեհան աքիրը,—ես ու քու հէրը քեզ էդ օրը գցեցինք, ես ու քո հէրը... Մեղ բաշխի, ա՛ իմ աչքի լիս Վարդի, ա՛ իմ թագ ու պսակ Վարդի, իմ վարդ-մանիշակ Վարդի, իմ խեղճ, իմ անբախտ Վարդի...»

Վարդիի հայրը, եղբայրներն ու մօրաքոյրն էլ կրկնում էին անդադար՝ «Քեզ մատաղ, ա՛ Վարդ, քո ցաւը տանեմ, ա՛ Վարդ, քո չարը տանեմ, ա՛ Վարդ. քո անմեղ հոգուն մատաղ, ա՛ Վարդ...» Մեծ դժւարութեամբ յետ քաշեցին Ռեհան աքօրը Վարդիի դագաղից։ «Ինձ էլ տարէք դրա հետ թաղեցէք, ինձ էլ»,—աղաղակում էր նա հեռացող դագաղի յետևից։

Թաղեցին մուրազազուրկ Վարդիին, գերեզմանատնում աւելացրին մարդկային գոհկութեան ու բարբարոսութեան մի տխուր յուշարձան ևս, անմեղ զոհի մի հողաթումբ էլ, ու վերադարձան Զորթանանց տունը՝ հանդիստ խղճով հոգեհաց ուտելու։ Հանդուցեալի առաջին երկնային արքայութեան դռները բաց անող գինին շատ առատ էր։ Սեղանակիցները խմում էին, օղորմի տալիս Վարդիին ու Աստծուց թողութիւն խնդրում նրա «կամայ ու ակամայ» մեղքերի համար...

Ամենից շատ խմում էր տէր-Մխիթարը, Վարդիին պսակողն ու թաղողը. բաժակը շրթունքներին հասցնելուն պէս դատարկում էր մինչև վերջին կաթիլը, կարծես նրա խմած գինու քանակութիւնից էր կախւած երկնքի արքայութեան դռների շուտափոյթ բացումը հանդուցեալի առաջ։ «Աստւած օղորմի նորոգ հանդուցեալի հոգուն, լիս դառնայ նա,—ասում էր

տէրտէրը,—մին էլ լուսահոգու հարսանիքովն եմ էս-հէնց լաւ խմել. ինչ դինի ա...»

Բարսեղը յաճախակի դառնում էր հիւրերին ու բացականչում՝ «կերէք, ձեզ մատաղ. լուսահոգու բաժինն ա, կերէք, խնայիլ մի՛ք. խմեցէք, խմեցէք ու-օղորմի տուէք, սրտալի օղորմի տուէք, բալքի սիրտս հովանայ...»

--Աստուած օղորմի, Աստուած նրա կամայ ու ակամայ մեղքերը բաշխի —լսւում էին ձայներ այս ու այն կողմից,— քեզ էլ Աստուած համբերութիւն տայ, Բարսեղ, համբերութիւն. մարդի ծնունդն ու մահը Աստծու առուտուր ա. պէտք ա հաշտւես...

—Ի՞նչ եմ ասում դէ, ձեզ մատաղ,—պատասխանում էր Բարսեղը,—Աստծու օջաղը չէն կէնայ. ինքը տուել ա, ինքը տարել. նա լաւն ա գիտում. բալքի հէնց էդհէնց էլ հարկաւոր էր...

—Հա՛, Բարսեղ, հա՛,—վրայ բերեց տէրտէրը,—օրհնեալ լինիս. կատարւել ա էն, ինչ որ վիճակւած ա ըլել նրա համար Աստծուց... Մանուկը, ջահիլը, երբ մեռնում ա, չը պէտք ա նրա համար շատ դարդ անել, քանի որ նա ազատւում ա էս անցաւոր փուչ աշխարհի մեղքերում շաղախւելուց ու ամբողջովին լոյս ա դառնում ու միշտ փայլում աջակողմեան դասում... Աստուած լուսագոյնն ա տնօրինում. մենք երբէք չը պէտք ա քննադատենք նրա որոշումները. մենք հիմա էս օրհնւած սուփրի վրայ պէտք ա ասենք միայն՝ կամք Տեառն օրհնեալ եղիցի, ու օղորմի տանք նորոդ հանգուցեալին, խմենք նրա հոգու փրկութեան համար...

—Փառաւոր ըլես, ա՛ տէր,—լսւեցին ձայներ այս ու այն կողմից,—միշտ կարգի ու պատարագի կենաս, որ էդհէնց մխիթարես մեզ, մեր աչքերը բանաս քո

քարոզներով... Աստուած օղորմի նորոդ հանգուցեալին, Աստուած նրա մեղաց գիրը ջնջի...

Սեղանակիցներն զգացւած սրտով օղորմի էին տալիս նորոդ հանգուցեալին ու անվերջ բաժակներ պարպում նրա հոգու փրկութեան համար...

Հացկերոյթի վերջում, երբ բոլորի կատարներն էլ լաւ կարմրեցին խմած գինուց, տէր-Մխիթարը պահանջեց մի մեծ գաւաթ, լցրեց գինով, դիմեց Բարսեղին ու նրա որդիներին ու նրանց մխիթարելու, նրանց վիշտը վերջնականապէս փարատելու համար ասաց՝ «էսօր դագաղի վրայ ողբալիս մեր Ռեհանն ասաց, որ միթամ դու ու ինքն էք մեղաւոր, գլխաւորապէս ինքը, որ Վարդին շուտ մեռաւ։ Է՛հ, ծնող ա. սրտի կսկծալէն էր էնհէնց ասում։ Ես նրա հետ համաձայն չեմ. նա քեզ ու իրան զուր զրպարտեց. ոչ նա ա մեղաւոր, ոչ դու, Բարսեղ. դուք երկուսդ էլ անմեղ էք. միներդ էլ ա մի մազի չափ մեղք չունէք, որ նրա վերջն էնպէս եղաւ։ Մեղաւորը գիտում ես ով ա, Բարսեղ, իսկի գիտում ես. մեղաւորը մեր էս փուչ, մեր էս անիծւած ժամանակն ա... Հիմիկիս ժամանակը շատ ա փիս է, շատ. Ջահիլ-ջհուլը փչացել ա ու կապուկոտոր ըլել. մեծերին էլ բնաւ չէն լսում, չէն հնազանդւում նրանց. դու մի խօսք ես ասում, նրանք տասն են պատասխանում. դու ասում ես՝ մածունը սպիտակ ա, նրանք ասում են՝ չէ՛, սև ա. դու ասում ես՝ եղը մածնիցն ա, նրանք ասում են չէ՛, սխտորից ա. ոչ տղինում, ոչ աղջկանում ա-բուռ ու ամօթ չը կայ...

Հիմիկիս նշանւող աղջիկը քիչ ա մնում, թէ ասի՝ թող արէք ես տղի հետ ասեմ, խօսամ, նրա հետ կըռնըփռնուկ արած ման գամ. թէ լաւ թւայ, կը գնամ նրան, թէ հու չէ, գլուխը կը հողեմ ու բաց թողեմ...

Առաջներում էդհէնց բան ոմվ ա տեսած, ոմվ ա լսած։ Ասում են, որ իմ լուսահոգի պապը, Տէր-Յարութիւնը, ինքը տարեկան աղջիկ ա պսակած ու ոչինչ. էն աղջիկն ըստ կարգի հարսնութիւն ա արել, մեծացել, հասունացել ու խելքը գլխին կնիկ դառել... Ատա հրէն է, Դոթունց պառաւը. էն գլխամեռն ուղատին կենում ա դեռ, կենդանի օրինակ ձեզ. իմ պապ Տէր-Յարութիւնը նորընծայ ժամանակն ա նրան պսակել. էն էլ գիտում էք քանի տարեկան ա պսակել—ութ ու կէս տարեկան, թամամ ութ ու կէս... Գլխամեռը շատ ա սիրուն ըլել, ասում են. տղէքը թուր ու թանգով են ըլել խոսալիս իրար հետ նրա մասին. Դոթունց Խոսրովը, իբրև դիփից ռաշիդ, առաջ ա ընկել ու մեր տէրի միջոցով հրետին իր մուրազին հասել, պսակւել ու սիրուն կնկայ տէր դառել... Ի՞նչ ա, պակաս ա ապրել Դոթունց պառաւը՞. իսկի տեսած ու լսած էք, որ հիւանդացած լինի՞. տեսնում էք, հրէ ինչասուն հինգ տարին թամամել ա ու դեռ մեռնում չի. ասա մի անգամ գոնէ ժամից ընկնում ա. միշտ գնում եմ տեսնում՝ նա ժամումը, միշտ։ Որ ուզէք, հարիւրաւոր օրինակներ կը բերեմ հին ժամանակներից. ուզում չեմ գլուխներդ ցաւացնեմ. Դոթունց պառաւի պէս շատերն են ըլել. նրանցից մի քանիսին լաւ յիշում եմ։ Պատահում ա, խելառներ են գտնւում, որ դանգատւում են ինձանից, բամբասում ու զրպարտում են ինձ, էստեղ-էնտեղ ասում են՝ թէ նրա համար են հիմի հարսները շուտ-շուտ հիւանդանում ու երեխայ բերելիս յաճախակի մեռնում, որ ես նրանց շատ ջահիլ եմ պսակում... Սուտ ա, անխղճմտանք սուտ ա. տասը-տասնմին տարեկանից պակաս ես ոչ-ոքի չեմ պսակել ու չեմ պսակում։ Եթէ հիմիկիս հարսները շուտ-շուտ են հիւանդանում, պատճառն էն ա, որ ժամանակիս տղամար-

դիկը նրանց երես են տալիս, շատ են երես տալի. հին ժամանակների պէս չեն վարւում նրանց հետ. հիւանդանում են, որ տղամարդիկ նրանց շատ սիրեն, շատ խարջ անեն նրանց համար, նրանց ճորան ու եսիրը դառնան... Սատանաներ են անիրաւները, սատանաներ... Է՛հ, Աստուած օղորմի նորոգ հանգուցեալ Վարդիի հոգուն. Աստուած նրա կամայ ու ակամայ մեղքերը ների, նրա մեղաց գիրը ջնջի... Ոչ նա էր մեղաւոր, ոչ դու ու ոչ քո կինը, Բարսեղ. էս փուչ, էսնզովեալ ժամանակն ա մեղաւոր, որ նրան անհնազանդութեան ու կամակորութեան ճանապարհով տարաւ ու փչացրեց, կորցրեց յաւիտեան... Աստուած նրա մեղքերին թողութիւն տայ ու իւր աջակողմում, իւր հրեշտակաց կարգում, դասաւորի նրան...

—Ամէն, ա՛ տէր, ամէն, փառաւոր ըլես,—աղաղակեցին սեղանակիցները։

—Դարդ մի՛ք անի՛լ,—շարունակեց տէրտէրը,—հանգստացէք, մոռացէք ձեր ցաւը. նրա «ճակատին էլ էն էր գրած...»

Տէր-Մխիթարը Վարդիի մեղքերի համար մի անգամ էլ թողութիւն հայցելով Ամենակարողից, յանուն նրա հոգու փրկութեան դատարկեց, իսպառ ցամաքեցրեց գինու ամեհի գաւաթը ու բռնոթի քաշելով ժողովրդի ուղեկցութեամբ դուրս գնաց Զորթանանց տնից։

ԹԱԹԱԽՈՒՄԸ

I

Զատկի ճրագալոյցի պատարագը մօտենում էր իր վախճանին։ Գիւղական անշուք եկեղեցին լիքն էր ժողովրդով։ Բոլորն էլ լուռ, խորհրդաւոր դէմքերով, շատերն արտասուաթոր աչքերով նայում էին սեղանին. այնտեղ կատարուող սրբագործութիւնը մխիթարում, ոգեւորում էր ամիսների ընթացքում ժամի երես չը տեսած գիւղացի բանւորներին։ Մանր տղաներն ու աղջիկները՝ մի-մի կարմիր ձու ձեռքերում պինդ բռնած, ճեղքում էին ամբոխի խիտ շարքերը ու իրար ետևից դուրս գնում՝ այնտեղ դրսում ժամի պատի տակին թաթախելու համար։

Զատկի թաթախման օրւայ առաւօտեան ժամից յետոյ, երկու սեռի բազմաթիւ մանուկներ, կարմիր ձուները ձեռքերին, ըստ սովորականին խմբւում են եկեղեցու բակում. նրանք անդադար ներս են մտնում եկեղեցի, դուրս են գալիս, պտտւում են եկեղեցու չորս կողմը, խորին ակնածութեամբ նայում են «տէրին», որը եկեղեցու մուտքի մօտ ծալապատիկ նստած, բռնոթի քաշելով, նշխարք է պատրաստում ճրագալոյցի պատարագի համար։

Հանում է վերջապէս բաղձալի Զատիկը, և վտիտ, գունատ, նիհար, պասից անչափ տանջւած մանուկները կարմիր ձուները ձեռքերին ամհամբեր սպասում

են ճրագալոյցի պատարագին, որ երբ վարագոյրը քաշեն, սեղանը բանան ու «տէրը դրօշտին գլխին դրած, նախշուն շորերը կեցած» դառնոյ ժողովրդին «խաղաղութիւն ամենեցունն» ասելու, ըստ մանուկների՝ «մատներով նշան անելու, որ հիմի ուտիս ա, կարմիր ձուն կերէք»,—ցոյց տան նրան կարմիր ձուանները ու դուրս գան ժամի պատի տակին թաթախելու։ Ճրագալոյցի պատարագի ամբողջ ընթացքում մանուկներն այդ պատճառով անդադար մտնում են եկեղեցի ու դուրս գալիս. մտնում են իրար ետևից, ամբողջ օրը խնամքով պահած կարմիր ձուանները «տէրին» ցոյց տալիս նրա «խաղաղութիւն ամենեցունն» ասելիս ժամանակ ու դուրս գնում թաթախելու ժամի պատի տակին։ Անդադար ճեղքում են նրանք ժամաւորների խիտ շարքերը, հրում են նրանց ու երբեմնակի այդ պատճառով մեծերից հարւածներ ստանում։

II

Ճրագալոյցի պատարագն իր անհուն խորհրդաւորութեամբ ընդգրկել, յափշտակել էր բոլոր աղօթողներին, մանաւանդ նրանց, որոնք ամբողջ օրը ծոմ պահելուց յետոյ պէտք է հաղորդւէին այդ երեկոյ։

Աղօթող բազմութեան առաջ առանձնակի կանգնած էր գիւղի տանուտէր Աղաջանը իր շքախմբով, որի անդամներն էին իշխաններ՝ Մատուրը, Մարութը, Խոսրովը ու Վերդին, տանուտէրի օգնական Թորոսը, հարկահան Ուհանը, դատաւորներ՝ Բաղալը, Ոսկանն ու Արզմանը, գրագիր Մահտեսի Առաքելը ու գզիր Զատին։ Գիւղի «մեծաւորներն» էլ պէտք է հաղորդւէին։ Նրանք սովորաբար հաղորդւում են ճրագալոյցի երեկոյեան։ Դա հինաւուց գիւղական կարգ է. բաւական

չէ, որ նրանք եօթ շաբաթ պաս են պահում հասարակ մահկանացուների պէս, հաղորդուելուց առաջ նրանք պարտաւոր են մի ամբողջ օր ոչ միայն ծոմ կենալ, այլ և ոչ ոքի ուշունց չը տալ, չը հայհոյել։ Դա հեշտութեամբ տանելի ապաշխարանք չէ. գիւղի մեծերը ուրախութեամբ եօթ շաբաթեայ տեղ տասնեօթ շաբաթ պաս կը պահեն, միայն թէ անպատիժ ու անարգել ուշունց տալու իրաւունքից մի բոպէով անգամ չը զրկւեն...

Տանուտէր Աղաջանը ու նրա շքախմբի անդամները, բացի գզիր Զատիից, պատարագի վերջում հաղորդուեցին ու դուրս գնացին եկեղեցուց։ Գզիրը, ինչպէս պատարագի սկզբում նա զեկուցեց տանուտէրին, այդ օրը՝ պաշտօնական անյետաձգելի պարտաւորութիւնների կատարման շնորհով՝ չէր կարողացել իրան զսպել. գիւղի փողոցները ոտնի պատճառով սրբել տալու համար շատ, անչափ շատ ուշունց էր տուել կանանց։ Այդ պատճառով տանուտէրը նրա հաղորդուելը, տէրտէրի թոյլտուութեամբ, յետաձգեց հետևեալ օրուայ առաւօտեան ժամին, խստիւ պատուիրելով «մի հանգաւ կրակ ընկած ըռէխը հաւաք ու թամուղ պահել, մինչև ժամի վերջը...»

Դրսում գիւղի մեծերը քիչ կանգնեցին, դէս ու դէն մտիկ տուին, դուրս եկող ժամաւորների զատկական ողջոյններին ըստ պատշաճի պատասխանեցին ու յետոյ բոլորն էլ տանուտէրի հրաւէրով գնացին գիւղական դիւանատունը։ Շարուեցին նրանք սեղանի չորս կողմում. տանուտէրը բռնեց կենտրոնական տեղը. գզիրը կանգնեց շէմքում. գրագիրը բռնեց իր սովորական տեղը սեղանի գլխին ու աչքերը յառեց տանուտէրին։ Վերջինս մի քանի անգամ հազաց. նոյնն արին միւսները ու լուռ հարցական խորհրդաւոր հայեացքներ ուղղեցին միմեանց։ Բոլորին էլ մի ինչ-որ բան սաստիկ զբաղեցնում էր. նրանք անհանգիստ էին երևում. նկատւում էին նոյնիսկ յուզման նշաններ ..

Դիւանատան մօտով անցնող գիւղացիները զարմացմամբ նայում էին մեծերի անակնկալ ժողովին ու իրար ականջի կամացուկ փսփսում. նրանք ենթադրում էին անշուշտ մի շատ լուրջ գործ, գիւղի գլխին եկող մի նոր պատուհաս, մի նոր ցաւ ու չոռ, մի աղէտ, որի առաջն առնելու համար գիւղի մեծերը խորհրդակցելու էին ժողովւել այդ ազիզ երեկոյ։ Անցորդներից մի ծերունի փորձեց մտնել դիւանատունը՝ իմանալու համար ենթադրւող պատուհասի մանրամասնութիւնները ու միանալու խորհրդակցութեան, բայց գզիրը կտրեց նրա առաջն ասելով՝

—Ետ դուռ. մարդ թողնելու հրաման չի կայ։

—Ի՞նչ ա պատահել, ա՛ Զատ,—կամացուկ հարցրեց ծերունին,—ի՞նչից են խօսում։

—Շինի դարդերից։

—Բա հէնց էս ազիզ իրիկունը՞։

—Հա, բարձրից թունդ հրաման ա եկել. գբոնատը մորեխի համար մարդ ա ուղել,—պատասխանեց գզիրը։

Խորհրդաւոր ժողովի լուութիւնը առաջինը խանգարեց իշխան Ծատուրը, որը յայտնի էր նաև «Բիսմարկ» անունով. գիւղի ինտելիգենտները, գրագէտները, նրան Բիսմարկ Ծատուր էին ասում. գիւղի ուսուցչից էր ստացել նա այդ մականունը։ Երբ առաջին անգամը լսեց, սաստիկ բարկացաւ ու նոյնիսկ հայհոյեց ուսուցչին, կարծելով, թէ նա իրան, գիւղի առաջի իշխանին, փիս մարդ է ասում. բայց երբ վարժապետը նրան բացատրեց, թէ ո՞վ է եղել Բիսմարկը ու նրա անունն իրանին կպցնելով ինչպիսի

մեծ պատուի է տիրանում ինքը, կորած-մոլորուած հայ գիւղի իշխանը, Ծատուրն ընդունեց մականունը ու նոյնիսկ հպարտանալ սկսեց նրանով։

—Ի՞նչ էք տաղ արած իրար երեսի մտիկ տալիս,—ասաց նա,—տեսնում էք, որ սաղ գեղումը ոչ ոք մեր մասին մտածում չի, ոչ ոք մեզ մտիկ չի տալիս, մնալ չի գնում էս ազիզ իրիկունը. էս քանդուածումը մեզ գնահատող, գին դնող չի կայ բնաւ...

—Ոնց չի, գնահատող էլ ա ըլում, Ծատուր,—ասաց դատաւոր Արզմանը,—խլի՞ ես էդ հէնց թամուզ ուրանում։

—Ո՞ւր ա է, ո՞ւր ա քո էդ գնահատող հարամզադէն. շան որդին ի՞նչու չի էս ազիզ իրիկունը գալիս մեզ տանում իր տունը. մեզ գնահատողը հիմի ա մեզ պէտք, հիմի։ Բա ես գեղի իշխան ըլեմ, տարին բիւթին գլուխս ցաւացնեմ գեղի համար, կեանքս մաշեմ ու Զատկի ազիզ իրիկունը գնամ իմ տանը թաթախուեմ. էդ Աստուած վեր կունի։ Էլ ի՞նչի եմ կեանքս գեղի համար գրաւ դնում, մաշում. սարսաղ եմ թամամ, լօխս էլ սարսաղ ենք։

—Դրուստ ես ասում, Ծատուր, էս թամամ խայտառակութին ա. էսօր քսան-երեսուն տարի ա, ինչ ձեզ հետ միասին ես իշխանութին եմ անում էս գեղումը, դեռ էսհէնց անհամ ու անլազաթ Զատիկ տեսած չեմ,—ասաց իշխան Մարութը։

—Պէտք ա որ էս իրիկու Քիքունց տանը մեծ ժամ, մեծ հացկերութին ըլէր, գեղը սաղ կանչէր. չէ որ վերջին շաբաթներս ամեն օր հէնց դրանից էր խօսւում. լօխդ էլ լսել էք հու,—ասաց իշխան Վերդին,—էդ ի՞նչ ա պատահել, տեսնաս, որ ձէն ու ծպտուն չի լսւում նրանց կողմից. երևի խափանուել ա նրանց բանը։

—Խափանուել ա, բա ի՞նչ ա. հակառակի պէս երկու օր առաջ նրանց ոչխարների մէջ գիլեր են ընկել ու բաւականին կոտորել,—ասաց հարկահան Ուհանը,—քէֆները խարաբ ա ըլել ու ժամը խափանել են. ասում են, որ պէտք ա Համբարձման օրը ժամ անեն։ Դէ հու Քիքունք իրանց ժամը բոլորովին խափանիլ, կորցնիլ չեն. մեծ օջաղ են մարդիկը. ինչ որ էլ ըլի, նրանք իրանց ժամը կանեն։

—Ա՛յ ոչ անեն, փուչ անեն. Համբարձման օրը նրանց ժամն ինձ պէտքը չի. էն օրը հարիւրից աւել մատաղ ա մորթուում շինուում,—ասաց բարկացած Բիսմարկ Ծատուրը,—ինձ ժամը հիմի ա պէտքը, հիմի, սուրբ Յարութեան ազիզ իրիկունը։ Օխտը շաբաթ պաս եմ պահել, էսօրի էլ մինչև իրիկու ծում եմ կացել, էն էլ ինց ծում՝ ոչ հաց եմ կերել, ոչ գինի-արաղ խմել, ոչ մի կաթիլ ջուր ու ոչ էլ ուշունց տուել, ուշունց. բերանս փեչատած պահել եմ մի կերպ, թա ի՞նչ ա, էս իրիկու իմ ընկեր իշխանների ու մեծամեծների հետ միասին մի կարգին թաթախուեմ, գեղից, հասարակութիւնից պատիւ ստանամ... Ի՞նչ ա, գեղը քանդուել ա. էս իրիկու ոչ թա մի, այլ տասը տանից պէտք ա մեզ կանչեն, քիչը տասը տանից։

—Տեսնաս երէցն էլ ա տեղ ա ճարի՞լ իր համար, թէ նա էլ ա մեզ պէս մաղբուն մնացել, էսհէնց ամեն բանից զրկուել,—հարցրեց իշխան Խոսրովը։

—Նրա դարդը քաշիլ մի, Խոսրով,—ասաց Մարութը,—երէցն իր բանը լաւ ա գիտում, նա իր գլուխը մեզանից լաւ ա պահում։ Հիմի անպատճառ իր ժամհարի ու տիրացուի հետ միասին մի շէն օջաղի ղրաղի նստած փառաւոր ուտում ա, խմում, գինին կլկլալի դվէր ածում ու մեզ վրայ ծիծաղում. նրան լաւ յայտնի ա, որ էս իրիկու մենք մաղբուն ենք մնացել։

—Ահա նրա գլուխը մեռնի, նրա անունը տալ մի է,—ասաց խիստ բարկացած Բիսմարկ Ծատուրը,—նա որ լաւ երէց ըլի, մեզ էսհէնց մաղբուն չի թողնիլ, միշտ մեզ հետ, միշտ մեր միջին նստած կըլի. մեզ հետ միասին կը տխրի ու կուրախանայ, միասին կը սովի, կամ միասին կուտի ու կը խմի։ Ի՞նչ ա, մենք նրանից պակաս մարդիկ ենք, որ նա մեզանից միշտ դրաղ ա ման գալիս, լայեղ չանում ման սհաթ էլ մեզ հետ խառնուի...

—Դէ նա Աստծու ղուլլուղչի ա, Ծատուր,—ասաց դատաւոր Բաղալը,Աստծուն ծառայող մարդ ա, կարգաւոր ա, մեր թայը չի. նա որ կայ...

—Բօլ ա, էլ խօսալ մի,—ընդհատեց Բաղալին Բիսմարկը,—գիտում եմ, որ դու տէրտէրի ղոլէն ես տալու. նա որ Աստծու ղուլլուղչին ա՝, մենք էլ, շինի իշխաններս, ռահաթի, ժողովրդի ղուլլուղչիքն ենք. ուրեմն մենք էլ ենք նրա պէս հոգի աշխատում... Մեր ուզբաշի Աղաջանը, ուրան պամօշնիկ Թորոսը, սրօրչիկ Ուհանը, դուք, սուդիաներդ, հրէն է, չւայ էն չօվուշ Զատին, լօխդ էլ դուք թագաւորի ղուլլուղչին էք, մեր ողորմած թագաւորի. ուրեմն դուք էլ էք հոգի աշխատում... Մեր երէցը պէտք ա էդ գիտայ է, գիտայ. ամեն կերպ միշտ աշխատում ա մեզանից ջոկ մանգալ, ճանկն ընկածը մենակ ուտել. կնունքը միշտ մենակ ա ուտում, նշանդրէքը մենակ ա ուտում, գերեզմանօրհնէքը մենակ ա ուտում. եթէ ուժը պատի, հարսանիքներն ու թաղումներն էլ մենակ կուտի։

—Ժամանակս շատ ա խարաբ, շատ, Ծատուր,—խօսեց վերջապէս տանուտէր Աղաջանը,—թա տէրտէր, թա ժողովուրդ—լօխն էլ իրանց օգտի համար են ապրում. լօխն էլ խելօք են, խելքաւոր են, մեզանից սաւահի. սարսաղը մենք ենք, որ հասարակութեան օգ-

տի համար գեղի չոռ ու ցաւը, գեղի դարդերն ու պատուհասները մեզ վրայ ենք վերցնում միշտ, մեր քասիբութիւնից, մեր բանից-գործից ընկնում ու մեր տները մեր ձեռաւ քանդում... Ինձ զօռաւ ջոկեցիք, էս լուծը դրաք իմ վզին ու տունս քանդեցիք թամամ. ես հու ուզում չէի ուզբաշի դառնամ... Ասենք՝ գետը ձեզ տանի. մենակ դուք չարիք հու, մեր հասարակութինն արաւ. դուք հասարակի կամքը կատարեցիք, ինձ ստիպելով, որ համաձայնուեմ. գեղի ցաւերովն ըլած, ձեր տներն էլ էք դուք քանդում... Էս ուզբաշութինը Աստծու կրակ ա թամամ. սա հու մի փեշակ չի. ուղիղ ա, թագաւորի ղուլլուղ ա, մեծ փառք ու պատիւ ա, որ ես ցեղն ու մեղալը ճիտս եմ գցում ու ողորմածի պատկերի տակին էստեղ նստում գանգատներ լսում, շար կտրում, դիւան անում, ամա ժողովրդի կողմից, մեր ռահաթի կողմից գնահատող չի կայ է, գնահատող... Էս օր երկու տարի ա ես ուզբաշի. էս երկու տարումը իմ մազերը, ոնց տեսնում էք, սիպտակել են՝ էնքան ես ու ես գիշեր-ցերեկ միտք եմ անում մեր գեղի. մեր ռահաթի համար... Ո՞վ ա գին գնում, ո՞վ. ղրաղ տեղերում դեռ ուշունց են տալիս, ոչ մեռել են թողնում, ոչ կենդան... Շատ միտք անելուց շատ վախտ գիշերները քուն չեմ ըլում. աչքերս բաց, օճոլքին գցած, տեղումս հարերդա դէս եմ պրանուում ու դէն ու էդհէնց լուսացնում։ Մեր կընիկը բազի վախտ էն ղոլէն ձէն ա տալիս ու ասում՝ «Այ մարդ, խի՞ չես քուն ըլում, քեզ էդ ի՞նչ ա ըլել»։ «Աղջի,—ասում եմ,—գեղի ցաւն ու չոռը թող ա անում, որ ես քուն ըլեմ. միտքս էն ա հրէ շինի դարդերումը. ուզբաշի եմ է, ուզբաշի, քեօխւայ, ստարշին. մեղայ Աստծու, մեղայ Աստծու,—ասում եմ,—ես ողորմած թագաւորի կոխած հողին խսկի բրբար չեմ,

ամա ես էլ թագաւոր եմ է, մի թիթև թագաւոր եմ էստեղ մեր շինումը, մեր ռահաթի վրայ. ողորմածը ուրան գրոնատուրի ձեռաւը որ էս մեղաղն ու ցեպը ինձ ա տուել, սրանով ինձ ուրան տեղապահ ա դրել էստեղ, շինիս վրայ ինձ թագաւոր ա նշանակել. բա ես ինց քուն ըլեմ, ինց. իմ աչքին քունը ինց կը մոտկանայ, ա հէր օխնած. ինքը, ողորմած թագաւորն,—ասում եմ,—ուրան թախտի վրայ քուն ա ըլում, որ ես էստեղ քուն ըլիմ. նա գիշեր-ցերեկ զարթուն կենում ա թագաւորութին անում, արար աշխարհս պահում. ես էլ պէտք ա էսհէնց զարթուն կենամ. որ իմ շէնն ու իմ ռահաթը պահեմ ու դրանով ողորմածի առաջին պարզերես ըլեմ. մի ային-օյին աչքհուսին ինձ բոլ ա. գիտում ես,—ասում եմ,—էն ա հրէ նրա պատկերը մեր կանցիլարումը դրած, պայծառ աչքերը ուրան ղուլլուղչիների ու ուրան ռահաթի վրայ գցած. երբ բազի վախտ մի երկու թաս էւել խմում եմ ու պինդ քուն ըլում, գիշերը մի ղալմաղալ, մի հարա ա պատահում, հրետին դուրս չեմ գալիս ու շէնս արխոդ անում, ղուլլուղումս բոշանում եմ էդ պատճառաւ կամ ուրիշ սխալմունք եմ գործում, ուրիշ ծուռ բան բռնում, էքսի օրը համանչում եմ, թա նրա պայծառ երեսին մտիկ տամ, աչքերս տափին գցած եմ մտնում կանցիլարն ու տաղ արած, սևերես, գնում իմ տեղը նստում... Դու ուզում ես, որ ես մեր թագաւորի առաջին սևերես ըլիմ»—հարցնում եմ մեր կնկանը։—«Չէ, ասում ա նա,—էդհէնց բանը ես ինց կուզեմ, միսս հու կերել չեմ»։—«Դէ որ չէ, էլ ինձ ասիլ մի թա՝ խի՞ չես քուն ըլում. շինի դարդերը դու իմ գլխիցը հանիլ մի. բազի վախտ էլ որ խմած գալիս եմ, խօսալ մի. օրէնքի մարդը, էն էլ ուզբաշին, քեօխուէն, առանց խմիլի կարալ չի գործ շինի, կարալ չի թագաւորի

ղուլլուղն առաջ տանի ու ողորմածի առաջին պարզերես ըլի։ Մեր խեղճ կնիկը տաղ ա անում, էլ բան չասում, ես էլ էս ա էսհէնց կեանքս մաշում եմ մեր շինի, մեր ռահաթի համար... Իսկի ասա՞ գիտում ես, գնահատում ես... Հրէս է, մտիկ տուէք, լաւ թամաշա արէք. ինձանում իսկի ուժ, հարաքաթ չի մնացել. ուր ա իմ առաջւայ ջանը. առաջ մի ժամումը, մի նստիլումը, օխտը լօշտի էի ուտում, հինգ-վեց ման խորակ ու քիչը կէս վեդրա, համարեա մի բաթման, գինի խմում նրանց գլխին, հիմի էդքանի կէսը զօռով եմ տեղաց անում...

—Ափսոս դու, ափսոս, ուզբաշի Աղաջան,—ասաց Մարութը,—որ էս քանդւած շինումը, էս լաւութին չիմացող ռահաթի մէջ ես ուզբաշութին անում։

—Ջանս մաշւել ա ու փչացել գեղի համար,—շարունակեց տանուտէր Աղաջանը,—չոր ոսկորներս են մնացել... Որ ինձ մորթեն, միս անեն, իսկի մի շամփուր միս չի գոյանալ ինձանից. շատ միտք անելուց, էս բարբաղ շինի համար շատ դարդ անելուց մոմի պէս հալւել ու քամւել եմ թամամ. ի՞նչ ա իմ հախը—էն, որ աչ ու ձախ բամբասում են ու ասում, թա միթամ ես շէնս իմ իշխաններով, իմ սուդիաներով. իմ պամօշնիկով, սբօրչիկով ու չօվուշով վէր կոխած գիլի պէս ուտում եմ ու քանդում... Չէ, տունքանդութին ա, թամամ տունքանդութին ա մեր բանը. գեղի, ռահաթի ցաւ ու չորը չաթու ենք շինել մեր ճիտը գցել, մեր վզերովը փաթաթել ու մեր չորացած ձեռներաւը մեզ խեղդում. էսհէնց էլ խելառութին կըլի, որ մենք անում ենք... Մենք մենակ էսօր չենք մաղբուն մնում է, մենակ էսօր չենք զրկւում մեր ըռիսխից, մեր հալալ աշխատանքից. մենք միշտ ենք մաղբուն մնում, միշտ...

—Ուզբաշին ուրան իշխաններով ապրած կենայ ու շէնն էլ ուրան հիմքերի վրայ հաստատ,—աղաղակեց յանկարծ դիւանատան շէմքում կանգնած գզիր Զատին,—արխային կացէք, մաղբուն չենք մնացել. մերն Աստուած հասցրել ա։

—Ադա, ինչ, ինչ. ինչ ասեցիր,—հարցրին զարմացած այս ու այն կողմից։

—Մերն Աստուած հասցրել ա,—պատասխանեց գզիրը, որն այդ ըսպէին գիւղի մեծերին մի ազատարար հրեշտակ էր թւում։

—Ի՞նչ ա հասցրել, ա գլխամեռ. հրեսին ասա, սիրտս տրաքւում ա,—ասաց Բիսմարկ Ծատուրը։

—Մի տկճոր գինի ու մի տկճոր արաղ։

—Մի տկճոր գինի, մի տկճոր արաղ,—կրկնեցին մեքենայաբար ունկնդիրները, որոնք քիչ էր մնում թէ գրկէին ու համբուրէին աւետաբեր գզիրին։

—Ո՞րտեղ ա, ո՞ւր ա, ասա, պրծի. փորս վեց-վեց ա անում. անօթի, սոված ու ծարաւ մեռնում եմ. շուտ տեղն ասա, գնանք թաթախւենք,—ասաց իշխան Մարութը։

—Էն ա հրէ Բաղդունց Նազարի տանը,—պատասխանեց գզիրը։

—Ադա, նրա պէս աղքատի տանը էդքան գինի-արաղը ո՞րտեղից ա,—հարցրեց տանուտէրի օգնական Թորոսը,—նրա բաղումն էնքան խաղող չի ըլում, որ նրա խիզանը մի-մի փոր ուտեն, կշտանան։

—Ռաղաքիցն ա բերել. էս Զատկին զոնաղլուխ ունի, իր խնամիներին կանչել պտի,—ասաց գզիրը։

—Դու ո՞նց իմացար, ա գլխամեռ, որ Նազարը քաղաքից գինի-արաղ ա բերել,—հարցրեց Բիսմարկ Ծատուրը,—նա աշունքից դէսը հորումն ածուխ ա

անում. Ղարաշէնի ծմակներից տուն չի գալիս. շատ վախտ ա գեղումս երևում չի,—աւելացրեց նա։

—Էդ լաւ ա, որ եկել ա,—ասաց հարկահան Ուհանը,—շատ վախտ ա, ինչ նրա ճամբէն պահում եմ. աչքս ջուր ա կտրել, էնքան սպասել եմ. հիմի ձեռքիցս էլ բաց չի ընկնիլ. իմ թոռը կընկնի. հորիցը բօլ փող բերած կըլի. թէ էս տարւայ խարջը կառնեմ ռղատին, թէ անցեալ տարւայ խարջի դաիմկէն, ապառիկը։

—Լաւ, քո խարջը թող մնայ դեռ,—ասաց Մարութը,—ա Զատ,—դարձաւ նա գզիրին,—դու քո ասելիքն ասա, տեսնանք մի՝ էդ ո՞նց տկճորներ են. գլխներումը խելք կայ, թէ էնհէնց ըէյքարա զատեր են։

—Չէ, խելքաւոր տկճորներ են երևում,—ասաց Զատին,—գինի համը տեսայ. հէնց էր մեռուն ըլի... Ամա դէ տակէն ասեմ. էսօր պատարագից առաջ շէնը պտտում էի. Ղուռուխի ձորումը կնանունցը աղբերը թամուզ անել, հաւաքել էի տալիս, մին էլ տեսայ Նազարը ջորին առաջն արած քաղաքիցը գալիս ա։ Ջորիի վրայ մի մեծ խուրջին կար՝ պռունգ-պռունգ լիքը. լաւ մալում էր անում, որ միջին բան շատ կայ.... Նազարը երբ ինձ տեսաւ, խուրջինը ծածկեց իր շալով, որը հանած ջորի վրայ գցած էր. նա էդ արաւ, որ ես միթամ բան չի տեսնամ... Դէ չօվուշ Զատին ո՞նց ա մեռել, որ նա գինի-արաղի հոտը ձեռաց չառնի. չէ,-ասեցի իմ մտքում,—Նազարիս խուրջինումը բան կայ, էն էլ մեծ բան. մօտեցայ, կանգնեցրի. «Հը՛, Նազար, խէր ըլի, խուրջինումդ ի՞նչ կայ»,—հարցրի։ —«Ոչինչ, ա Զատ, տան համար մի պատառ ային-օյին ա»,—ասեց նա։ «Տեսնեմ մի էդ ո՞նց ային-օյին ա, որ շալով ծածկում ես. բալքի ուրիշ ջուռա ային-օյին ա, ո՞վ ա գիտում. բալքի պատրօն ու բարութ ես բե-

ռում առանց իրաւունքի... Հիմի վայենի պալաժենի ա. էդհէնց բաները թիւնդ դադաղ, սաստիկ արգելած են. դրանց համար զօրքի շտրափ կայ ու դալա, բանտ. պէտք ա խուրջինիդ մէջ դոլը լաւ տեսնամ, տնտղեմ», —ասեցի ու ձեռքս մեկնեցի խուրջինին, երկու թայն էլ լաւ պտռեցի. մինումը մի մնծ տկճոր գինի կար, էն մինու�էլ մի պուճուր տկճոր արաղ, էն լաւ թղնդ արաղէն. հոտը ձեռաց փչեց։ Գինի-արաղից սաւառի խուրջինումը բօլ ձուկը, պանիր, բրինձ, կանաչի ու ուրիշ ային-օյին կար... «Ատա, հարամ դադա,—ասեցի Նազարին,—Աստծու խէր բարաքաթով խուրջինդ լցրած տանում ես ու ինձ սուտ ասում, թա՝ ոչինչ, պատառ ային-օյին ա, ու խուրջինդ էլ ծածկում ես շալովդ. օրէնքից ու օրէնքի մարդից բան կը ծածկեն, ա դու�մսնաղ»։—«Ա՛ Զատ, քեզ մատաղ,—աղաչանք արաւ Նազարը,—ինչ որ ա, էն ա տեսար. էս խոլվաթ տեղը մի բօլ գինի խմի ու յետոյ, Աստծու խաթրի հետի, ուրիշ տեղ բան չասես։ Էս ահագին խարդը քաշել եմ, որ խնամիներիս էս Զատկին կանչեմ, զոնաղ անեմ. աշունքից դէսը, ինչ աղջիկս նշանուել ա, խնամիներիս մի անգամ էլ ա դեռ կանչել չեմ»։ Նազարին խոստացայ ոչ մի տեղ բան չասել ու մի փափախ գինի խմեցի...

—Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ. մի փափախ գինի՞,—հարցրեց տանուտէր Աղաջանը։

—Հա, ուզբաշի։

—Ո՞նց թա. փափախով էդ ո՞նց խմեցիր, ա՛ գըլխամեռ։

—Ամաան չի կար դէ. ուզեցի տկճորից ծծեմ, բան չի եկաւ, հնար չեղաւ. սատկած ջորին թող չարաւ, խըրտնեց, տեղը հանդարտ չը կանգնեց. տազ արած փափախ վերցրի, ջորիի կապը պինդ բռնեցի, կանգնեցրի նրան ու ասեցի՝ Նազար, գինին էստեղ ածա։

Նազարը տկճորի բերանը բաց արաւ ու փափախը գինով լցրեց. ես էլ գլխիս քաշեցի, բերանիս դէմ դրի ու մի բօլ խմեցի քո ու քո մեծամեծների կենացը, աղա ուզբաշի։

—Այ դու գլուխդ քարովը եկար մեր կենացը խմելով,—ասաց բարկացած տանուտէրը,—էսօր դու հաղորդուեցիր ոչ, ասեցիր՝ շատ ուշունց եմ տալ. բանից երևում ա, դու ուրիշ դալաթ էլ ես արել, թաքուն գինի ես խմել, ես բէյխաբար։

Գզիրը զարմանքից ապշեց. նա գովասանք էր սպասում իր մեծից, այլ ոչ յանդիմանութիւն։

—Գինին մենակ լակել ես,—շարունակեց տանուտէրը,—ու եկել էստեղ պարծենում. ինչու չէիր Նազարին ասում՝ բա իմ ուզբաշին, բա նրա բաժինը։

—Ասեցի, ո՞նց չասեցի. խի, խամ ե՞մ. ամեն տեղ, ինչ որ ճանկս ա ընկնում, ինձ համար մին եմ վերցնում, քեզ համար երկու առնում. էս անգամ էլ ուզեցի էդհէնց անեմ։

—Բա ի՞նչի չարեցիր. ո՞ւր ա իմ բաժին գինին, ա հարամզադա,—ասաց տանուտէրը Աղաջանը,—էդ ո՞նց չօվուշ ես, որ առաջ քո ուզբաշիի բաժինը չես վերցնում, ետոյ քոնը։

—Ո՞նց վերցնէի. քո բաժին գինին դէ հու փափախով բերելի չէր. ուրիշ ամաան էլ չունէի։ Մի բան ճարած ժամանակ քեզ ու քո իշխաններին ես իսկի մոռացած ե՞մ, որ էդ թիւրումը մոռանայի՞. չօվուշ Զատիի գլուխը մեռած պտի, որ նա ուրան ուզբաշիին ու շինի մեծամեծերին մոից գցի... Գինին խմեցի. տեսայ, որ շատ լաւն ա, ասեցի Նազարին՝ «Արա, Նազար, էս գինին որ էս շէնն ա եկել, սրա խաբարը, գի-

տում եմ, տարածելու ա. խնամիքդ որ եկան խմեցին, առանց էն չի, էստեղ-էնտեղ ասելու են, գինիդ գովելու են, շատ են գովելու... Որ մեր ուզբաշին լսի, ոնց ես անելու. չէ որ կը նեղանայ քեզանից. ուզբաշի ա, նրա նեղութիւնից, առանց էն չի, մի փորձանք կը գոյանայ քեզ համար. փիս ժամանակներ ա, վայենի պալաժենի ա... Որ ինձ լսես,—ասեցի,—խնամիներիդ հետ ուզբաշին էլ կը կանչես, իշխաններից էլ մարդ կը կանչես, Ծատուր հային ու Մարութին գոնէ...

—Գլխամեռն ինչ չօվուշ ա. մի պասրեդնիկի խելք ունի թամամ,—ասաց Մարութը։

—Մեր մրօվի պասրեդնիկին որ դրա չափ խելք ըլեր, նա հիմի վաղ էր նաչալնիկ դառել, Մարութ, դու էդ ինչ ես ասում,—ասաց Բիսմարկ Ծատուրը,—էդ գլխամեռը թամամ խելքի բուն ա. եկող վիբօրին ես պէտք ա դրան ուզբաշիի պամօշնիկ ջոկել տամ։

—Գիտում ես,—ասեցի Նազարին,—Ծատուր հայն ու Մարութը,—շարունակեց գլուրը, ոգևորված գիւղի ամենաազդեցիկ իշխանների բարձր գնահատումներից ու կօմպլիմենտներից,—մեր շինի ամենամեծ իշխաններն են. նրանք ուզբաշի չեն, ցեպ ու մեդալ չունեն, ամա ուզբաշի ջոկողներ են. ում մատով նշանց են տալիս, հասարակութինը տազ արած նրան ա ընտրում ուզբաշի. առանց նրանց մասլահաթի ոչ մի ուզբաշի չէն չի կառավարում... Մեր ուզբաշիի հետ միասին նրանք էլ պէտք ա քո սուփրի գլխին նստած ըլեն։ Դէ ես էլ պէտք ա գամ,—ասեցի,—նրանց ղուլլուղ անեմ. ուզբաշին առանց չօվուշի ոտ ոտի առաջի չի դնիլ, էդ հին ադաթ ա. առանց կանչելի էլ ուրեմն ես հու կըլեմ ու կըլեմ. թող չեմ անիլ, որ տկճորներիդ մեռունն առանց ինձ խմի...

—Լաւ, բօլ ա, ինչքան նաղլն արիր,—ասաց համբերութիւնը կորցրած տանուտէր Աղաջանը,—դու էն ասա՝ ինչ ասեց բա էն ղուռումսաղը։

—Ասեց՝ ուզբաշին ուրան իշխաններով ապրած կենայ. ես նրանց ոնց կը մոռանամ. թող քեզ մատաղ, ա Զատ,—ասեց,—էգուց խնամունցս կանչեմ, յարգեմ, ճամբա դնեմ, նրանցից պրծնեմ, էքսի օրն էլ, մեռելոց օրը, ուզբաշին կը կանչեմ ուրան իշխաններով. էքսան բաները լօխ խնամիքս հու թամուզ ուտելու չեն ու խմելու. տակին դեռ բաւականին բան կը մնայ։ Մեռելոց օրը,—ասեց,—մեր հանգիստներն օրնիլ պտեմ տալ. տէրտէրին էլ պտեմ կանչիլ։

—Տեսէք, տեսէք, հարամ զադէն մեզ ոնց ա պատուում, — ասաց Բիսմարկը,—խնամիներից ետն ա մեզ կանչում, նրանց թրմասկոմն ա մեզ ղոնաղ անում... Գիւղի ուզբաշին, իշխաններն ու պաչօտնիկները պէտք ա գնան Բաղդունց Նազարի խնամու՝ Զալալանց Բեդիի թրմասկն ուտեն. լաւ, Բեդին ինչացու ա, որ ես գնամ նրա թրմասկն ուտեմ. նա մի հասարակ տաւարած ա, ես գեղի իշխան, քեանդխուդա. նա ղարա ռահաթ ա, ես պաչօտնիկ. պասրեդնիկն ու չւայ պրիստաւն ինքը ինձ ձեռն են տալիս, իսկ նրա վրայ իսկի թքում էլ չեն. Բեդիի պէսը հեռուանց հեռու ա նրանց մտիկ տալիս, իսկ մօտկացած վախտը բօլ-բօլ դամշի ուտում նրանցից...

—Էդ Նազար ղուռումսաղը բա վախում չի՞, որ ուրան փուչերը բացուին,—ասաց Մարութը,—պաղլօժնի բան ունի արած ահր. ինձ ու Ծատուրին լաւ յայտնի ա... Սպասում էինք, որ հորիցը կը գայ և մեզ կը տեսնայ... իսկ նա մեզ բնաւ մոռացած՝ Զալալանց Բեդիին ու Սողիին ա ղոնաղ անում, նրանց հոգն ա քաշում. Զատին եթէ չը պատահէր, նա իսկի մեզ միտը չէր

գցելու. լաւ հաւատացած եմ, որ նա հիմի Զատիկ մեռել-կենդանն էլ ա քաշում, մերն էլ...

—Էդ ի՞նչ պաղլօժնի բան ա, Մարութ,—ասաց տանուտէր Աղաջանը,—էդ ո՞նց ա, որ մինչև էսօր ինձ յայտնել չէք. աղբաթիխէրի մարդիկ, քանի-քանի անգամ եմ ասել ձեզ, որ ինձանից բան չի ծածկէք, մանաւանդ օրէնքին ընդէմ բան։ Երբ ինձ ջոկել էիք տալիս, դեռ էն վախտը ձեզանից խօսք առայ, որ իմ ու ձեր մէջ թաքուն բան չը պէտք ա ըլի. բանից երևում ա հիմի, որ դուք, էդ երկուսդ, ձեզանում սիր էք պահում, ամեն բան էլ ինձ ասում չէք։ Ես ձեզանով եմ ուղբաշի. դուք իմ հաւէն ու արխէն էք. ես կարծել եմ, թա երազում տեսած բանն անգամ կը գաք ձեռաց ինձ կասէք. իսկ դուք ափ-աշկարայ տեսած-լսածն ինձանից ծածկում էք. էդհէնց իշխանութին կանեն բա...

—Մեր լսած բանը քեզանից մինչև էսօր ծածկել ենք, ուղբաշի Աղաջան, դրուստ ա,—ասաց Բիսմարկ Ծատուրը,—ամա չար մտքով չենք ծածկել. տաղ ենք արել, ասել ենք՝ կենանք, սպասենք. Նաղարը երբ ածխահորից գայ, ականջը կը գցենք, կը հարցնենք տեսնանք՝ մեր լսածը դրուստ ա՞, թա սուտ... Է՛հ, խեղճ մարդ ա, մեր գիւղացի ա, ասեցինք,—մեր հայն ա, մի-երկու թուրքի օգտի համար նրա տունը խի՞ քանդուի մի էշի պատճառաւ։

—Ի՞նչ էշ ա,—հարցրեց տանուտէրը։

—Էս ա միտդ կը գցեմ,—ասաց Ծատուրն ու շարունակեց.—կաշխատենք մի կերպ, մի հանգաւ փորձանքից ազատել,—ասեցինք,—դէ էշ չի, հայվան չի, մեր բարի միտքը կը հասկանայ, մեզ կը տեսնայ...

Դէ որ բանն էդտեղ հասնէր, մեզ հու մենակ չէր տեսնելու. սուփրի գլխին դու էիր նստելու, ուղբաշի Աղաջան... Դէ հիմինա Զալալանց Բեդիին ու Սողիին

ա տեսնում, նրանց ա սուփրի գլխին նստացնում, իսկ մեզ նրանց թրմասկովը ղոնաղ անում. էդ էլ էն պատճառաւ, որ մեր չօվուշը տեսել ա նրա խուրջինը ու վզին պարտքը դրել...

—Էդ ի՞նչ ա, ի՞նչ պաղլօժնի բան ա, պարզ ասա՛, հրեսին ասա՛, քո հօրն օղորմի, սիրաս տրաբուում ա,—ասաց համբերութիւնը կորցրած տանուտէրը,—ասա՛, ծածկիլ մի. էս սհաթին շուն շան որդուն կապած ու բխոված ուղարկում եմ պրիստաւի կուշտը։ Իմ գօվրին էս գիւղումը էն ո՞ր շան տղայ կարող ա պաղլօժ անի՝ ու անպատիժ մնայ. հիմի վայենի պալաժենի ա է, հանաք չի. պաղլօժի համար հիմի կատրօժնի են ուղարկում...

Ասա՛, պրծի՛, պարզ ասա՛։

—Դէ մեղքը Նաղարի ուրան վիզը,—ասաց Բիսմարկը,—նա որ էնհէնց հարամզադա ա, էլ նրան խեղճ գալը հարկաւոր չի. լօխդ էլ լաւ լսեցէք։ Բարեկենդանից առաջ ես ու Մարութը գործով գնացել էինք քաղաք. վերադառնալիս Զրմի հողերումը Աղքեանդի պամօշնիկ Բայրամին ու սուդիա Սաբուին պատահեցինք. բօլ ղրից արինք, դէսից-դէնից բաւականին խօսացինք։ Վերջում ասեցինք նրանց՝ «Ա՛ թուրքեր, ձեզ էդ ի՞նչ ա ըլել. խի՞ չէք առաջւայ պէս մեր շէնը գալիս-գնում. խի՞ չէք առաջւայ պէս բարեկամութին, ախալերութին անում մեզ հետ. չէ՞ որ աթադան-բաբադան, մեր հին պապերի գօվրից մինչև մարդումազարի սարքած անիծած կռիւները մենք իրար հետ աղ ու հաց ենք կերել. կռիւը շէյթանի բան էր. ինչ որ էր, փառք Աստծու, անցկացաւ գնաց. էդհէնց սխալմունք էլ պատահել չի. արխային եկէք մեր շէնը, էլ խմբեր չի կան, վախիլ մի՛ք. խմբերը դէս ու դէն ցրուել են, էլ երևում չեն»։—«Խմբեր չի կան, դրուստ ա,

գիտում ենք,—ասեց Սարուն,—ամա ծուռ մարդիկ շատ կան. նրանք խմբերիցը փիս են. խմբի մարդիկը ռաշիդ տղէք էին. մենք նրանցից չենք նեղացած, այլ ձեր շինի ծուռ մարդկանցից. մեր ոտը էդ պատճառով ենք ձեր շէնիցը կտրցրել»... Ուզում չէին իրանց անբաւականութեան բուն պատճառը մեզ պարզ յայտնել. վերջը մի հանգաւ ասել տուանք. բանից դուրս եկաւ, որ Նազար դուռումսաղը մի մեծ զալաթ ա արել...

—Ի՞նչ,—հարցրեց խիստ հետաքրքրուած տանուտէրը։

—Հէրու ամառ նրա էշը հնձատեղից կորաւ չէ՞։

—Հա։

—Նրա ասելով գողացան չէ՞։

—Հա։

—Նա քեզ յայտնեց, որ աղքեանդեցի թուրքերն են գողացել չէ՞։

—Հա։

—Դու հրապօրտ շինեցիր ու էդ մասին յայտնեցիր պրիստաւին չէ՞։

—Հա։

—Դէ ջան. պրիստաւից գործը նաչալնիկի ձեռաւը գնաց հասաւ երանալ-գրռնատուրին. ոնց ձեզ լօխիդ էլ լաւ յայտնի ա, երանալ-գրռնատուրը հրաման արաւ Աղքեանդի հասարակութիւնից էշի ջարմէն առնել ու տալ Նազարին. մեր պարուն պրիստաւը ձեռաց գնաց Աղքեանդ, պաչօտնիկներին, Սարին ու Բայրամին ամենից շատ, հուփ տուաւ, էշի ջարմէն առաւ ու տուաւ Նազար գլխամեռին։ Հիմի բանից դուրս ա գալիս, որ աղքեանդեցիք անմեղ են ըլել ու էսօր էլ անմեղ են. խեղճերից ջարմէն զուր են առել...

—Ո՞նց,—լաւած հետաքրքրութեամբ հարցրեց տանուտէրը։

—Ո՞նց պտի. Նազարն էշը հեռու տեղացի մի անյայտ թարաքամա թուրքի վրայ ծախել ա, փողը ջրումը դրել ու սուտ հարահուրա արել, սուտ գանգատ տուել, թա էշս աղքեանդեցի թուրքերը տարել են։

—Դրուստ ես ասում, Ծատուր. Մարութ, դրուստ, ճշմարիտ ա,—հարցրեց այլայլած դէմքով տանուտէրը։

—Բա մենք սուտ կասենք,—ասաց Մարութը,—միանգամայն կերիլ ենք, որ սուտ ասենք, էն էլ էսհէնց ազիզ իրիկունը։

—Աստծուն ահր հոգի ունենք տալու, ա աղբաթիխէրի մարդ,—ասաց Բիսմարկը,—էս սուրբ Յարութեան դիշերը մենք ոնց էդհէնց մեղք կը գործենք, ոնց սուտ կասենք. էն էլ ում օգտի համար—թուրքերի. մեր հայ քրիստոնի տունը բա մենք նհախ տեղայ կը քանդենք, ինչ ա. մարդը ծուռ բան ա բունել, ասում ենք էլի։

—Ես ու իմ Աստուածը,—ասաց իշխան Խոսրովը, որը մինչ այդ միւսների պէս լուռ լսում էր տանուտէրի ու աւագ իշխանների խօսակցութիւնը,—Սարուն ու Բայրամը սուտ են ասել, ես կամ էդհէնց չեն ասել, ոնց դուք նաղլն արիք. Նազարը բնաւ մեղաւոր չի...

—Ի՞նչ, ինչ, ինչ,—հարցրին միաժամանակ տանուտէրը, Ծատուրն ու Մարութը։

—Տաղ արէք ասեմ. էդ գործն ինձ էլ ա ծանօթ. ես էլ Աստծուն տալու հոգի ունեմ. էս ազիզ իրիկունը սուտն անկարելի ա ասել, պէտք ա ճշմարտութիւնն ասեմ. Սարուն ու Բայրամն էնդուր, էն պատճառով են անբաւական, որ իսկական գողերին թողած՝ ջարմէն, ոնց վայենի պալաժենի վախտն ընդունած ա, նրանցից ու մի քանի ուրիշ իշխաններից են առել, որ յետոյ նրանք գողերին գտնեն, բռնեն ու յանձնեն

գբռնատուրին։ Նրանք գողերին լաւ ճանաչում են, բայց վախում են, թա հետները խօսան.. ուրանց փողն էլ հու իսկի չեն կարողանում նրանցից ստանալ. գանգատուելուց էլ են վախենում. էդ պատճառով խեղճերի փողը բոլորովին կորչում ա. ճարները կտրած մեզ են նեղութին յայտնում, թա միթամ մի իշի համար ուզբաշին խլի էր հրապօրտ տալիս պրիստաւին, մեր իշխաններն ու պաչօտնիկները խլի չէին մի հանգաւ էդ բանի առաջն առնում ու Նազարին մի կերպ քարսազի անում, բաւականացնում...

—Ուրեմն ես սուտ եմ ասում,—ասաց Ծատուրը, սպառնալի դէմքով նայելով Խոսրովին,—ուրեմն դու մեզ...

—Դու մեզ,—խլեց խօսքը Ծատուրից Մարութը,—էստեղ, մեր կանցիլարումը, մեր ուզբաշիի կշտին, ժուլիկ ես դուրս բերում. դու երէկ-մէկէլ օրւայ իշխանն ես, իսկ մենք...մենք...իսկի մեզ ճանաչում ես...

—Լաւ եմ ճանաչում...

—Ո՞նց ես ճանաչում,—գոռաց Ծատուրը,—ափաշկարայ պարզ խօսա, եթէ ռաշիդ տղամարդ ես։

—Էստեղ մեռելքաշութին պիտի ըլիլ էս իրիկու, ոնց ես տեսնում եմ,—նոյնչափ բարձրաձայն ասաց Մարութը,—էստեղ արին պիտի թափուիլ. ես ծուռ մարդի հոր էն գեօրը...

—Տաղ արէք, էլ խօսալ միք, սուս,—խրոխտ, ահարկու ձայնով հրամայեց տանուտէր Աղաջանը ու թոյլ չը տուեց այդպիսով Մարութին արտասանել իշխանական բառարանում յաճախակի կրկնուող այն ազդու բառը, որը պայթելու էր ինչպէս ռումբ, սոսկալի փոթորիկ առաջ բերելու գիւղի մեծամեծների ժողովում ու փոխադարձ երկարատև ուշունցային ռմբակոծութեան սկիզբ դառնալու...

Մարութը լռեց իսկոյն և եթ։ Պայթելու պատրաստ Ծատուրն ու Խոսրովը էլ լուռ մնացին։

Քանի որ փոթորիկն իւրաքանչիւր րօպէ կարող էր բռնկուել, ամենաչնչին պատճառից նոյն իսկ, բազմափորձ տանուտէրը, ղուլլուղում, իր պատասխանատու պաշտօնավարութեան մէջ, եփուած ու տապակուած ուզբաշի Աղաջանը, դիմեց այն արտաքոյ կարգի միջոցին, որին նա դիմում էր միշտ համապատասխան դէպքերում ու այդպիսով պահպանում կարգն ու օրէնքի անխախտ գերիշխանութիւնը. վերին աստիճանի լուրջ, մռայլուած դէմքով հանեց գրպանից տանուտէրական շղթան հանդերձ մեդալով ու հագաւ պարանոցի վրայ, ըստ իր՝ ճիտը գցեց, այնպիսի խորհրդաւորութեամբ, ինչպիսին արտայայտում է քահանան՝ պատարագելու համար սաղաւարտն իր գլխին դնելիս... Երբ տանուտէրը շղթան հագած է, նա կատարեալ պաշտօնական դիրքի, դրութեան մէջ է գտնուում. այդ դէպքում ամենաազդեցիկ իշխանն անգամ չէ համարձակւում նրան հակաճառել, նրա հրամանները չը կատարել, նրա ասածներն անտես առնել...

Հագաւ շղթան, նստեց տեղը, պատկերի տակ, մի-երկու անգամ խուլ հաղաց, մաքրեց կոկորդն ու ասաց՝

—Էս ազիզ իրիկունը մենք էստեղ կռիւ անելու համար չենք հաւաքուել, այլ գործ շինելու, գեղի համար ցաւելու... Ճշմարիտ ա, շատը մեր դարդից ենք խօսում, ամա ժողովրդի, ռահաթի համար էլ ենք ցաւում էս սհաթիս, գեղի ծուռ մարդկանց, գեղի անունը կոտրողների, գեղը խայտառակողների արարմունքներից խօսելով... Ի՞նչ ա, ուզում էք կուէք էստեղ կանցիլարումը, ողորմածի պատկերի առաջին, իմ կշտին, ուզում էք իրար մեռել-կենդան քաշէք Նազարի պէս

մի էշ շան տղի համար ու ինձ էլ խայտառակէք, ձեզ
է՞լ... Որ մեր պարուն պրիստաւը լսի, ինձ ի՞նչ կասի,
իսկի գիտում է՞ք. նրա առաջին ես եմ կարմրելու. ես
եմ համանչելու, ոչ թա դուք. լաւն էն ա ինձ էս-
տեղ սաղ թաղէք, քան թէ խայտառակէք մեր պրիս-
տաւի առաջին... Զէ՛, կռիւը, մեռելքաշութիւնը ես
էստեղ թոյլ չեմ տալ. սէր ու միաբանութիւն պէտք
ա լինի ձեր մէջ, ոչ թա միայն էս աղիզ իրիկունը,
այլ միշտ...

Դէ հիմի էլ ետ իշի գործիցը խօսանք. պալմաղալ
չանէք. տաղ արած լսեցէք. մենակ ես պտեմ խօսալ ու
կարգադրութիւն անել էդ գործի մասին։ Որ լաւ խելքիս
տակն ու գլուխն եմ տալիս էդ գործը, տեսնում եմ, որ
ծուռը Նազարն ա. Մատուրն ու Մարութը սուտ ասող
մարդիկ չեն. ես սրանց հաւատում եմ։ Նազարն էն-
պէս հարամզադէն ա, որ ամեն բան էլ կանի... Էդ ա
ուրան շնորհքը նա հիմի մեզ լաւ նշանց ա տալիս,
Զալալանց Բեդիի ու Սողիի թրմասկոմը ա մեզ ղոնաղ
անում. շինի ուղբաշին, շինի իշխանները պէտք ա գը-
նան քաչալ ու ճիպոռտ Բեդիի թրմասկն ուտեն...
Քոռանան նրա ճիպոռտ աչքերը, քոռանան. դիլն ուտի
նրա քաչալ գունդը. նրա թրմասկէն քաչալահոտ կը
գայ... Նազար ղուռումսաղն էդ ջուռա ա ուզում պատ-
ուի. ինչ ասէք, նա կանի. նա մեզ մասխարա գցիլ ա
ուզում, այլ ոչ թէ պատուել... Աղա՛,—դարձաւ նա բար-
կացած ու խիստ բարձրաձայն շէմքի մօտ կանգնած ու
անթարթ աչքերը նրան յառած գդիրին,—գնա՛ էս սը-
հաթիս Նազար շան տղին բեր. որ հակառակի, գլու-
խը թակելով բեր. դամշիդ խնայես ոչ. իրաւունք եմ
տալիս, թէև աղիզ իրիկու ա։ Ես նրան կապած ու
բխոված պտեմ պրիստաւի կուշտն ուղարկիլ, կապած
ու բխոված... Դէ՛, վազի՛, ետ չընկնես։

Գդիրը, տանուտէրի ահեղ հրամանը լսելուն պէս,
մտրակի կոթը ձեռքում ամուր սեղմած, դուրս վազեց
դիւանատնից։

—Մահտեսի,—դարձաւ տանուտէրը գրագիր մահ-
տեսի Առաքելին,—էս սհաթիս մի կանվերտ հանի եաշ-
չիկից ու բերանքը փեչատի. ամ փեչատը,—ասաց,
հանելով գլպանից ու տալով մահտեսուն տանուտէրա-
կան կնիքը,—զմբուռով փեչատի, ոչ ծխով, էն լաւ
կարմիր զմբուռով։

Երբ մահտեսին ծրարը հանեց սեղանի արկղից,
հարցական հայեացք ուղղեց տանուտէրին. պարզ էր. նա
լուռ հարցնում էր՝ արդեօք որ և է թուղթ, պատրաստ-
ուի գրութիւն կամ ծրարում դնելու. դատարկ ծրարն
ինչո՞ւ կնքել։ Տանուտէրն իսկոյն հասկացաւ նրան ու
ասաց՝

—Հէնց էդ էդ դարտակ կանվերտի բերանքը
թքով կպցրու ու փեչատի, բոլ զմբուռ թափի վրէն.
երեսին էլ գրի, վիրի ղոլէն, որ էդ կանվերտը մի թամ
պրիստաւիցն ա ինձ վրայ եկել. նրա հրամանա. ի՞նչ
ես աչքերդ աչքերս գցել. դու արա՛ ինչ հրամայում եմ.
էդ իմ գիտալու բանն ա։ Մահտեսին խորհրդաւոր լը-
ռութեամբ կատարեց տանուտէրի հրամանը։

III

Շուտով եկաւ Նազարը գդիրի ուղեկցութեամբ։
Նրա հետ էր նաև իր մեծ եղբայր Թոմասը, որը եկել
էր իմանալու՝ թէ ի՞նչ է պատահել, որ՝ տանուտէրը
Զատկի պէս աղիզ տօնի երեկոն խլել էր Նազարից ու
կանչել նրան դիւանատուն. հարկը պահանջած դէպ-
քում նա բարեխօսելու, աղերսելու էր եղբօր համար,
ի հարկէ։ Թոմասն ու Նազարը մի վատ բան, մի փոր-

ձանք էին ենթադրում. ռահաթի մարդուն, խեղճ գիւղացուն, տանուտէրը հօ խէր բանի համար չի կանչիլ դիւանատուն. նրանք գունատ էին, անհանգիստ ու յուզուած սաստիկ...

—Նազար, դարձաւ տանուտէրը Նազարին վերջինիս ներս մտնելուն պէս,—պրիստաւը քեզ էկստրա ուզել ա. պատրաստուի, որ հէնց էս սհաթիս չօվուշ Զատիի հետ միասին ճանապարհ ընկնես քաղաք։

—Լաւ, նա ինձ ինչ ա անում էսհէնց ազիզ իրիկունը. հրամանը ուր ա, ինչ ա եկել,—հարցրեց դողդոջուն ձայնով Նազարը, որի վրայ «էկստրա» բառը պրիստաւի սհաւոր անունով հանդերձ սհաբեկիչ տրպաւորութիւն գործեց։

Ոչ պակաս սարսափահար եղաւ Թոմասը։

—Ո՞նց թա՝ ինչ ա անում. հրէս է հրամանը. տեսնում ես էս կանվերտը, տեսնում ես էս փեչատը. մի լաւ մտիկ տուր, կարդա կանվերտի իրեսը,—ասաց տանուտէրը, մօտեցնելով մահտեսու պատրաստած ծրարը Նազարի դէմքին։

—Կարդալը գիտում ես, որ կարդամ. ռահաթի մարդին կարդալն ինչ ա ուզել,—ասաց Նազարը,—գիր չի գիտացող, անլեզու, խեղճ տաւար մարդ եմ։

—Դրուստ ես ասում. տաւար մարդ ես, խոտակեր հայվան ես թամամ,—ասաց ձայնը սովորականից մի քիչ բարձրացրած տանուտէրը,—որ հարցնում ես, թա՝ պրիստաւն ինձ ինչ ա անում։

Պրիստաւը որ կանչի, էլ հարցնել չեն, թա՝ նա ինձ ինչ ա անում. տաղ արած ճամբա կընկնեն. բալքի ուզում ա հէնց էնհէնց քէֆի համար գլուխդ մի բօլ թակի, բալքի ուզում ա քեզ մորթի, կախ տայ, դու սուս արած պէտք ա գնաս։

—Լաւ, ես ինչ եմ արել, որ կանչում ա ահրա։

—Ո՞նց թա ինչ ես արել. գիտում չես,—ասաց բարկացած տանուտէրը,—էշդ թարաքամի վրայ ծախել ես, փողը չբերդ դրել, եկել ինձ խաբել, ինձ հրապօրտ գրիլ տուել, պրիստաւաւ, նայալնիկաւ գործը հասցրել երանալ-գբռնատուրին, էդ կերպաւ գանգատ տուել, բարձր իշխանութեան գլուխը ցաւացրել, թա միթամ աղքանդեցի թուրքերն են էշդ գողացել, ու անմեղ մարդկանցից նհախ տեղայ ջարմայ ես առել դրել չբերդ։ Էդ հիմի լաւ պարզուել աւ։ Դրա համար պրիստաւը քեզ կանչում ա, որ առաջ մի ինքը ուրան օխնած ձեռաւը կաշիդ պուկի ու յետոյ ուղարկի քեզ երանալ-գբռնատուրի կուշտը. թա ինչ կանի երանալ-գբռնատուրը, էդ Աստուած ա գիտում, մին էլ ինքը...

—Ձեզ մատաղ, ես էդհէնց բան չեմ արել,—ասաց սարսափահար եղած Նազարը,—Աստուած ու երկինք վկայ են, որ էշս հէրվանի աղքանդեցիք հնձատեղից գողացել են. լօխին էլ յայտնի ա էդ. սուտ ա, որ ասում են, թա ծախել եմ. էս ազիզ իրիկունը վկայ ա, որ սուտ ա, անասուած, անխղճմտանք սուտ ա...

—Ի՞նչ, ինչ, ինչ. շուն շան որդի, ինչ,—գոռաց իր ահարկու ձայնի ամբողջ ոյժով տանուտէր Աղաջանը,—ինքը պրիստաւը սուտ ա ասում, դու ըղձրթ. անասուած, անխղճմտանք սուտ ասողը նա ա, ա դուռումսամ։ Դու էդ քանի՞ գլխանի ես, որ մեր աղի մասին էդհէնց խօսում ես. դու նրա թայն ես, հը՞. ինչ ես հայվանի պէս տաղ արել. դու մի էշ ես, նա մի երեւելի մեծաւոր։ Վայենինի պալաժենի ա հիմի, իսկի գիտում ես. քո տեղը օրէս ետը Սբիրն ա, Սբիրը. էլ ես քեզ հետ խօսալու բան չունեմ. դու պրիստաւին անխղճմտանք ու անասուած ասա, նրան ասի, նրան ուշունց տու... Մահտեսի, գրի,—դարձաւ նա գրագրին,—էս նմուտին մի հրապօրտ գրի մեր պարուն պրիս-

տաւին էն մանի, որ Նազար Բաղդունցովը նրա սուրբ խօսքը ստեց, նրան անխղճմտանք, անաստուած ասեց, նրան ուշունց տուաւ, զանազան թիւնդ ուշունցներ ասեց... Ֆեզ կապած ու բխոված պտեմ ուղարկիլ, բխոված,—դարձաւ նա Նազարին, մօտեցաւ նրան, քեօխւայական շեշտակի ապտակներ տուեց ու մի քանի անգամ էլ բամփեց, ուժգին խփեց գլխին, ասելով՝—դէ կէր, դէ կէր, շուն հարամզադա, դէ կէր, լաւ կէր ..

Նազարը չը բողոքեց, ի հարկէ. Թոմասն էլ չի բան ծպտաց. բողոքն անկասկած առաջ կը բերէր նոր հարուածներ ու աւելի ահեղ «հրապօրտի» նիւթ կը դառնար. խելագարուել էին, ինչ ա, բողոքել, հակառակուել, ընդիմադրել տանուտէրին ու այն էլ այն ժամանակ, երբ նա կատարում էր իր դուլլուղը, իր պաշտօնական պարտաւորութիւնները, «ցեպը ճիտը գցած», տանուտէրական շղթան հագած... Էդ դեռ ոչինչ. բա «վայենների պալաժենին», որի մասին մի քանի բոպէ առաջ ակնարկեց տանուտէրը, որի մասին աւելի վաղ, ճրագալոյցի պատարագից առաջ ակնարկել էր Նազարին գզիր Զատին՝ նրա խուրջինը խուզարկելիս. այդ բառից Նազարի ու Թոմասի մազերը փշաքաղւում էին բառիս բուն մտքով... Նրանք երկուսն էլ մնացել էին ապշած. լուռ ու սրտատրոփ դիտում էին «հրապօրտ» գրող մահտեսու գրչի շարժումները։

Մահտեսի Առաքելն իսկոյն սկսեց գրել «հրապօրտը»։

Մահտեսին, որն իրան մեծ գրաբարագէտ էր համարում, Նազարին ու Թոմասին կատարելապէս ահաբեկելու ու տանուտէրին հաճոյանալու համար ասպարէզ հանեց իր գրաբարի ամբողջ պաշարը։ Երբ նա գրում էր, տանուտէրը, մատնանշելով մահտեսուն ու

վերջինիս առաջին դրած «հրապօրտը», շարունակ սպառնալիքներ էր կարդում խեղճ Նազարի գլխին։

Մի քանի բոպէից յետոյ ահաբեկիչ թուղթը պատրաստ էր արդէն։

Մահտեսին վերջացնելու վրայ էր, երբ Ծատուրը, համբերութիւնը կորցրած, աղաղակեց՝

—Մահտեսի, ինչ որ գրել ես, բոլ ա. պրծի, կարդա հոգիս դուրս եկաւ էսքան սպասելուց։

—Կարդա,—ասաց տանուտէրը,—աղա, լաւ լսի, հարամզադա,—դարձաւ նա Նազարին։

Մահտեսի Առաքելը շտկեց գրելուց առաջ քթի վրայ սաղացրած ակնոցները, հազաց, մաքրեց կոկորդն ու սկսեց կարդալ «հրապօրտը» քիչ երգեցիկ, բայց խրոխտ ձայնով ու շեշտադրութեամբ։ Տիրեց մեռելային լռութիւն։ Ունկնդիրները լարեցին իրանց ամբողջ ուշադրութիւնը։ Նազարի ու Թոմասի ջանը դող ընկաւ. նրանք աւելի գունատուեցին։ «Ա՛ռ նորին բարձր մեծապէս գերազանց բարձրութեան ու ողորմած բարեծննդութեան, բարեշնորհ իշխանազնոյ իշխանին,—կարդաց մահտեսին,—ամենապատուական աղային մերոյ ու պրիստաւին ուշաստօկի երկրորդ գաւառիս. ամենախոնարհ ուզբաշի-տանուտէր ու ստարշին և քեօխւայ Աղաջան Ազիզովից ամենախոնարհապէս հրապօրտ վասն Նազար Բաղդունցովի մասին, որ եստուր ուշունց զանազան նորին բարձրապայծառութեան աղային մերոյ, տաւ զնա զմօրաւ, զհօրաւ և զկնկանաւ, քաշեց զմեռել և զկենդան նորին պայծառաբարձրութեան ողորմած աղայի մերում... Ուզբաշի Աղաջան Ազիզովը վասն պատճառաւ անգրագիտութեան իւրոյ հրապօրտն զայս փեչատի միմիայն զարքունական կնիքովն իւր»։

—Դէ բեր փեչատեմ, մահտեսի,—ասաց տանուտէրը, հանելով գրպանից իր պաշտօնական կնիքը։

Այդ բոլորը լսելով, Նազարը քիչ մնաց թէ ծնկաչոք ընկնի տանուտէրի ու իշխանների առաջը՝ նրանցից ներողութիւն, գթութիւն խնդրելու։

—Գլխիդ ու արևիդ մատաղ, ուղբաշի, հրապօրտը փեչատիլ մի,—ասաց նա, դողդոջուն ձեռքը մեկնելով դէպի տանուտէրը,—ուղբաշի, ինձ էստեղ մորթի քո ձեռքով, ամա էդ հրապօրտի ըռեխը մի տալ. իմ խիզանին խեղճ եկ։ Մեր աղէն ապրած կենայ. էս սհաթիս կը գնամ, վազ տալով կը գնամ. նրա հրամանը կը կատարեմ ձեռաց. նրա խօսքը սուրբ ա ինձ համար։ Հրապօրտը փեչատիլ մի, խնդրւում եմ. Աստծու խաթրի հետի փեչատիլ մի...

—Չէ, փեչատիլ պտեմ. Սբիր պտես գնալ է, Սբիր. հիմի վայենի պալաժենի ա է, հանաք չի... Դու միսդ կերել ես, ինչ ա, որ պրիստաւի խօսքը ստում ես, նրան անաստուած ու անխղճմտանք ասում։

—Իմ լեզուն չորանայ տակռկից ու լալկւի, թա ես նրան անաստուած ու անխղճմտանք ասած ըլեմ, ուղբաշի։

—Որ Սբիր գնաս, էն վախտը կը լալկւի, լաւ կը լալկւի։

—Ահը որ Սբիր գնամ, իմ երեխէքը քո եթիմները պտեն դառնալ. գեղի տէրը, գեղի ուղբաշին ես. ես էլ եմ քոնը, իմ երեխէքն էլ. դու պտես նրանց հոգսը քաշիլ ինձանից ետը. խեղճ եկ իմ օղլուշաղին, իմ երեխանցը. բաշխի, ներողութիւն արա ինձ, ուղբաշի,—ասաց աղիողորմ ձայնով Նազարը։

Այդ շողոքորթ աղերսանքն անգամ չը մեղմացրեց տանուտէրին։

—Որ խիզանիդ համար ցաւիլը գիտում ես, պադ-

լօժնի բան չի պտիր բռնիլ... Գիտում ես ինչ ես արել, ղուռումսաղ, իսկի գիտում ես. դեռ պատլօժդ լաւ բացւել չի, դեռ պրիստաւը կաշիդ պուկելաւ քննիլ պտի քեզ, դեռ խոստովանքի ա կանչում... Ոչ պադլօժդ հաստատւեց, մենակ քո տունը չի քանդւելու է, քեզ պէս շան տղի տունը չի քանդւելու մենակ. էս սաղ շինի տունն ա քանդւելու, լօխիս տներն ա քանդւելու քո պատճառաւ. ես խայտառակւելու եմ պրիստաւի առաջին, պրիստաւը խայտառակւելու ա նաչալնիկի առաջին, նաչալնիկն էլ խայտառակւելու ա երանալ-գբռնատուրի առաջին. էն վախտը լօխի ջուղարն էլ դու պէտք ա տաս է, տաս։ Շէնս դու քանդելու ես, շուն շան որդի. երանալ-գբռնատուրը երբ իմանայ, թա քո սատկած էշի գործումն ուրան խաբել ենք, շէնս թոփի ըռըխում, թոփի բերանում կը դնի, բոմբավատ կանի, թուրքերից առած ջարմէն մեզանից ետ կուզի, շինումս զեկուցիա կը դնի ու մեզ, ինձ ու իմ իշխաններին, տանով-տեղով Սբիր կուղարկի և էդ լօխ քեզ պէս մի էշ շան տղի պատճառաւ. հիմի վայենի պալաժենի ա է, հանաք չի... Չէ, դու կատրօժնի պըտես գնալ է, կատրօժնի. խիզանդ էլ սոված պէտք ա կոտորւեն,—ասաց վճռաբար տանուտէր Աղաջանը ու դառնալով հրամանների սպասող գրիրին աւելացրեց՝ —Աղա, ա Զատ, հազրւի, պատրաստւի, որ էս շան տղին տանես պրիստաւի կուշտը. պէտք ա էս գիշեր տանես, հէնց էս սհաթիս...

Սարսափից Նազարի լեզուն պապանձւեց խսպառ. էլ չը կարողացաւ բան խօսել. անթարթ աչքերը յառած ահարկու տանուտէրին ու իշխաններին նա սկսեց ինչ-որ բան կմկմացնել, բայց պարզ ասել իր ասելիքը չը կարողացաւ. լռեց ու ապշեց, փափախով սրբելով ճակատի սառը քրտինքը։

Տանուտէրը կնքեց «հրապօրտը» ու տուեց մահտեսի Առաքելին, հրամայելով ծրարել։

Տեսնելով, որ տանուտէրը բոլորովին հանաք չէ անում ու վտանգը շատ մեծ է, Նազարի եղբայր Թոմասը միջամտեց։ Իբրև հասակով աւելի մեծ ու հետևաբար աւելի փորձուած մարդ, նա իսկոյն հասկացաւ, թէ ինչպէս ու ինչով կարելի է սպառնացող «փորձանքի» առաջն առնել. նա յիշեց Նազարի բերած գինիարաղը, որի մասին գինուց դեռ ճանապարհին լակած գզիր Զատին անշուշտ յայտնած էր գիւղի մեծերին, ու, եղբօրը մօտ կանչելուց ու ականջին քիչ փսփսալուց յետոյ, որոշեց զոհել բերած բարիքը, խնամիների հրաւէրը յետաձգել և այդպիսով մի կերպ խեղճ եղբօրը անակնկալ «փորձանքից» ազատել։

—Լաւ, ուղբաշի Աղաջան, շինի իշխաններ,—ասաց Թոմասը,—ախպէրն իմն ա, ձեզ եմ տալիս, ձեզ եմ բաշխում։ Սբիր չի, որ Սբրից էլ դէնն ուղարկեցէք. ես սրա խիզանին կը պահեմ։ Առաջ եկէք գնանք մի պատառ հաց ուտենք, թաթախենք. ազիզ իրիկուն ա, Զատիկ ա. ոչ մենք ենք թաթախել դեռ, ոչ դուք։ Աղբաթիխէրի մարդիկ, ինչ էք էդքան շինի համար ցաւում, չարչարւում, ինչ. չւայ էսհէնց ազիզ իրիկունն էլ ձեզ խնայում չէք. գիշեր-ցերեկ ձեր ազիզ կեանքը մաշում էք գեղի ու ժողովրդի համար։ Ձեր արած լաւութիւնները ով պիտի գիտալ, ով. ձեզ խընայեցէք մի պատառ, ձեր հոգսն էլ քաշեցէք։ Եկէք գնանք. Նազար առաջ ընկի։ Հայվան ես, հայվան,—ասաց նա եղբօրը,—էս մարդկանցը կանչի, տար պատիւ տուր, ուտացրու, խմացրու, որ Աստուած քեզ քօմակ հանի, որ սրանք քեզ համար ցաւեն, որ պրիստաւի ու նաչալնիկի կշտին քո օգտին խօսան։

Նազարն իր կողմից ևս հրաւիրեց ու առաջ ընկաւ։

Տանուտէր Աղաջանը ուզեց մի քիչ էլ նազ անել, աւելի թախանձանօք խնդրել տալ, իր իշխանութեան ահաւորութիւնը լրիւ, իր ամբողջ չափով ցոյց տալ, բայց Ծատուրն ու Մարութը ետևից բռունցքներով բոթեցին նրան առաջ, կամացուկ, Թոմասի համար անլսելի կերպով, ասելով՝

—Զայնդ կտրիր ու տազ արած առաջ ընկի. հորսը հազուր ճանկ ա ընկել. պրծի, գնա, էլ կանգնիլ մի. սոված ու ծարաւ մեռանք։

Տանուտէրը դուրս եկաւ դիւանատնից. նրան հետևեց շքախումբը։ Խոսրովը չէր ուզում գնալ, Ծատուրի ու Մարութի սարքած բանին չէր ուզում մասնակցել ու այդպիսով Աստծուն տալիք իր հոգին դըժոխքում տանջւելու վտանգին ենթարկել, բայց վերջի վերջոյ ենթարկւեց տանուտէրի հարկադրական պահանջին ու միւսների հետ միասին ուղղեց իր քայլերը դէպի Նազարի խրճիթը։

«Հրապօրտը» մնաց գրագիր մահտեսի Առաքելի ձեռքին։

IV

Նազարն շտապով գնաց տուն պատրաստութիւն տեսնելու։

Թոմասն ուղեկցեց հիւրերին, զրուցելով նրանց հետ։

—Քո հօրն օղորմի, Թումաս,—դարձաւ տանուտէրը Թոմասին,—դրուստ ես ասում, որ մեր կեանքը մաշում ենք գեղի ու ժողովրդի համար, որ ամեն մարդ էլ էդ բանը քեզ պէս հասկանայ, մենք էլ պառաւիլ չենք, գեղի ցաւ ու չոռը վիզ կալած մինչև մեր վերջը տազ արած կը տանենք։ Ինչ էս լուծը մեր հա-

սարակութիւնը իմ վզին ա դրել, մի դինջ օրի երես չեմ տեսել. գիշեր-ցերեկ իմ իշխանների հետ միասին չարչարուում եմ հասարակութեան օգտի համար։ Ջանս հալւել ա ու մաշւել թամամ։

—Բա ես էդ օրին չեմ, ես հանգիստ քուն ունեմ. եթէ ես մենակ քեզ գովում,—ասաց Բիսմարկ Ծատուրը,—էս վերջի քառասուն տարումը տասը-տասնհինգ ուղբաշի ա փոխւել, իսկ գեղի ծանր բեռը միշտ ինձ վրայ ա ընկել ու միշտ ինձ վրայ։

—Մենակ ինձ չեմ գովում,—ասաց տանուտերը,—դու էլ ես իմ օրին, Մարութն էլ, բոլոր իշխաններն ու մեծամեծներն էլ. թող հասարակութինը գիտայ ու գնահատի է, գիտայ ու գնահատի։

—Հասարակութինը գիտում ա, գնահատում ա միշտ, ուղբաշի,—ասաց Թոմասը,—բամբասողներ, ձեր լաւութինը չիմացողներ, դրուստ ա, պատահում են, ամա շատ քիչ. դէ հիմի վայիս մարդիկ ինրտեղ չի կան, հու մենակ մեր շինումը չեն։ Աստուած քեզ քո մեծամեծներով միշտ սաղ պահի մեր գեղի համար. առանց ձեզ գեղը մի օր անգամ եօլա չի գնալ, կը քանդուի, քարուքանդ կըլի. մենք թամամ քեափուրի հողումը կը մնանք. լաւն էն ա էն վախտը գեսը վարարի ու գայ մեզ սկի տանի... Կանոխ արէք մի, կանոխ. հրեսին գնանք Աստծու տաճարով թաթախւենք։

Նազարի խղճուկ խրճիթը հազիւ տեղաւորից անկոչ հիւրերին։

Սկսեց կեր ու խումը. ուտում էին ձու, ձուկը, պանիր, կանաչի, փլաւ, այնպիսի ախորժակով, որին լեռնային ոռնացող «ծաղկակոխն» անգամ կարող էր նախանձել...

Տկճորներից ամենից առաջ ձեռք առան արաղինը։ Երբ նա կիսով չափ դատարկւեց, Նազարը

դուրս քաշեց պուճախից գինու տկճորը, յուսալով այդպիսով արաղի կէսը փրկել։

Ծատուրը, նկատելով այդ, ասաց.

—Նազար, վռազիլ մի, դրա դազնանէն ետնայ կանենք դեռ. թող մի առաջ արաղի բազբօրը պրծնենք։

Բիսմարկ Ծատուրը սիրում էր այս ու այն պաշտօնեայից յաճախակի լսած ու այդպիսով իւրացրած, սովորած ռսերէն բառեր գործածել, որոնց միտքը մեծ մասամբ չէր հասկանում։ Այդ նրա հեղինակութիւնը ամբոխի աչքում անչափ բարձրացնում էր. նրան մեծ օրէնսգէտ էին համարում։ Շուտով վերջացրին արաղի «բազբօրը», այսինքն դատարկեցին նրա տկճորը ու սկսեցին գինու «դազնանէն»...

—Հրետին եկ է, ա իմ իգիթ ախպէր, նամուս ու ղէյրաթ, կեանք ու հոգի տուող տկճոր,—ասաց խորին ոգևորութեամբ Մարութը, երբ գինու տկճորը եկաւ ասպարէզ.—կեանքումս մեղք շատ եմ գործել, գիտում եմ, որ ախիրն ու վերջը դժոխքը պտեմ գնալ. ամա որ դու կշտիս ըլես էն աշխարհում, տկճոր Ջան, ա իգիթբաշի, դժոխքն ինձ համար դրախտ կը դառնայ...

—Էնհէնց չի՞, Ծատուր,—դարձաւ նա Բիսմարկին, աշխարհիս լազաթը գինիի տկճորումը չի՞։

—Էդհէնց ա, Մարութ, էդհէնց. որտեղ լիքը տկճոր կայ, դրախտն էնտեղ ա. տկճորի հետ հազար տարի դժոխքումը կապրեմ, ամա դրախտումն առանց նրա մի օր էլ չեմ ապրիլ, մի օր,—ասաց Բիսմարկ Ծատուրը.—Նազար գինին ածա, պրծի, ինչ ես տաղ արել, ծարաւ մեռանք ահը,—դարձաւ նա Նազարին։

Նազարն սկսեց ածել գինին, մեծամեծներն սկսեցին խմել, բայց ոչ այն փոքր բաժակներով, որոնցով խմում էին արաղը, այլ մեծ գաւաթներով։

Առաջին գաւաթը խմելուն պէս Մարութը, հիա-

ցած գինու համ ու հոտից, ասաց դառնալով գզիրին՝

—Մեռնես ոչ, ա՛ Զատ, լաւ ես ճանանչել. ճըշմարիտ որ խելքաւոր տկճոր ա սա, թամամ քեզ պէս խելքի բուն ա. գինին էլ դէ հու էն ա խալիս մեռուն ա... Ահր զուր չասեցի,—դարձաւ նա սեղանակիցներին,—որ էս գլխամեռին մի պասրեդնիկի խելք ունի...

Նազարն ու Թոմասը իրար երեսի լուռ ու շեշտակի նայեցին. առանց բառերով արտայայտելու նրանք հասկացան իսկոյն, որ իրենց գլխին եկած անակնկալ պատուհասում նշանաւոր չափով խառն է գզիրի մատը. խուրջինը Ղուռուխի ձորում խուզարկելուց ու մի փափախ գինին լակելուց յետոյ տկճորների մասին նա անկասկած մանրամասնօրէն զեկուցել է ում և ինչ հարկն է...

—Նազար,—դարձաւ Մարութը Նազարին,—մի տկճորի գլխից էդ գլխամեռին մի փափախ գինի տու. ադա՛,—դարձաւ գզիրին,—փափախդ դէմ արա տկճորի բերանին, լաւ լցրու ու Թամուզ խմի քու ուզբաշիի ու շինի մեծամեծների կենացը։

Մարութի ցանկութիւնն իսկոյն կատարուեց։

Գինով լիքը փափախը ձեռքին գզիրը կանգնեց տեղից ու աղաղակեց՝

—Ուզբաշին ուրան իշխաններով ապրած կենայ. Աստուած մեր ուզբաշիին ու շինի մեծամեծներին ջանասաղութին տայ ու անփորձանք պահի։

Բարեմաղթութիւնն անելուն պէս փափախը գըլխին քաշեց ու բոպէապէս դատարկեց։

Կեր ու խումը շարունակուեց։ Երբ գլուխները քիչ տաքացաւ, Թամադա պահանջեցին. տանուտէր Աղաջանի առաջարկութեամբ միաձայն Թամադա ընտրուեց Բիսմարկը, որն ըստ սովորականին հրաժարուեց, բաւականաչափ կոտրատուեց, վերջ ի վերջոյ զիջեց ու ըն-

դունեց պատուաւոր պաշտօնը։ Սեղանակիցները լաւ գիտէին, որ եթէ մի ուրիշի ընտրէին Թամադա, Մատուրը կը նեղանար սաստիկ ու հացը գլխներին հարամ կանէր, կը փչացնէր այն հրաշալի տրամադրութիւնը, որով բռնկուած էին բոլորն էլ։ Թամադան առաջարկեց բազմաթիւ կենացներ. ի միջի այլոց մի առանձին ոգևորութեամբ առաջարկեց նա պրիստաւի, նաչալնիկի ու բարձր իշխանութեան կենացները՝ համապատասխան ճառերով. բարձր իշխանութեան կենացը տանուտէր Աղաջանի առաջարկութեամբ խմեց յոտնկայս։ Գզիրին երբեմնակի խմացնում էին իր փափախով ու զարձանում այսպիսով...

Քէֆն իր գագաթնակէտին հասաւ, երբ աքաղաղը կանչեց. յայտարարեցին, որ նաւակատիկը աքաղաղի կանչելով վերջացաւ ու հետևաբար կարելի է միս ուտել. ասացին, որ հաւի մսից պատրաստած խորովածը գինու հետ ու փլաւի վրայ շատ լաւ կը լինի։

Գաղափարը տուեց Թամադա Բիսմարկը. արծարծեց Մարութը, ակնարկելով, որ մերձակայ այն հաւաքունում, որտեղ այնպէս զիլ կանչում է աքաղաղը, անկասկած բաւականաչափ հաւեր կան... Գզիրը յառեց աչքերը տանուտէրին. պարզ էր. հրամանի էր սպասում՝ հաւաորսութեան գնալու... Զատին բաւականին փորձուած ու հմուտ էր այդ գործում. տանուտէրական ու իշխանական քէֆերին հաւի խորոված մատակարարելը նրա պաշտօնական պարտաւորութիւններից մինն էր. հաւաորսութիւնը գզիրական որսորդութեան ամենաանմեղ տեսակն էր. երբեմնակի որսում էր նաև սագեր, բադեր ու հնդուհաւեր. գարնան սեզոնում, Զատկից յետոյ, որսում էր արու փափկադմակ գառներ. աշնան սեզոնում որսում էր արու փափկամիս ուլեր կամ ըստ իր՝ դէբուներ, որոնց միսը աշ-

նանը, գինու նոր պարզած ժամանակը, առանձնակի քաղցրութիւն ունի... Կորուստաւորները, որոնք համարեա բացառապէս գիւղի յետին խեղճերից, այրի կանանցից, ազգեցութիւնից ու կապերից զուրկ տներից էին լինում, հետևեալ օրը գալիս էին դիւանատուն, գանգատւում տանուտէրին, դանգատւում դատաւորներին, յաճախակի սուգ ու շիւանով դիւանատունը լցնում. մինը հաւեր էր լինում կորցրած, միւսը սագ, բադ կամ հնդուհաւ, աչքի լոյսի պէս մի ագիզ օրւայ՝ տղի կամ աղջկայ նշանդրէքի, հարսանիքի՝ համար պահած. երրորդի կորուստը դառ էր լինում, չորրորդինը դրբռ... Տանուտէր Աղաջանը կատաղում, բորբոքւում էր այդ գանգատները լսելիս. շանթեր էր արձակում «անյայտ» գողերի հասցէին, սպառնում էր նրանց «վայենենի պալաժենիի» բոլոր սարսափներով, ահարկու հրամաններ էր արձակում. հրամայում էր գնալ բերել ու բանտարկել դիւանատան կից նկուղում գիւղի այս կամ այն թափառաշրջիկին, անգործ թրև եկող լօթուն, ըստ իր՝ ժուլիկին, պաժարնիկին, իբրև աներկբայելի գողի. գղիրն իսկոյն վազում էր բերում ու բանտարկում այդպիսիներին։ Տանուտէրը սեփական ձեռքով, յաճախակի գղիրի եռանդուն աշխատակցութեամբ, նաև ծեծում, ջարդում էր այդպիսիներին, իբրև գեղը խայտառակողների ու խեղճերի տները քանդողների, սպառնում էր պրիստաւին դրկելիք «հրապօրտով», սպառնում «վայենենի պալաժենիի» խստութիւններով ու ջարմա, տուգանք առնում նրանցից՝ պաշտօնապէս յօգուտ կորուստաւորների, իսկ իրապէս յօգուտ իւր ու մերձաւորներից մի քանի ընտրեալների գրպանների... Կորուստաւորներից հազագիւտ բախտաւորներն էին մի բան ստանում այդ տուգանքներից։ Դժգոհներից եթէ պատահում էին այն-

պիսիները, որոնք յանդգնում էին շատ խօսել, իրենց հասանելիք ջարման պահանջել, առանց սեռի խտրութեան մի քանի ազդու հարւած էին ստանում՝ անմիջապէս ուզբաշուց, տանուտէրից, կամ նրա հրամանով գղիրից՝ ու խելքները գլուխները հաւաքած գնում տուն... կորուստաւորներից ու տուգանք տուողներից շատերը, երբեմնակի նոյնիսկ ամբողջ գիւղը, գողութեան այս կամ այն դէպքում լաւ գիտէին, թէ՝ ովքեր են իսկական գողերը՝ յանցաւորները, բայց ի՞նչ կարող էին ասել կամ անել. չէր գտնւում մէկը, որը նրանց փուչերը բանալու, նրանց հետ բացարձակապէս բռնւելու խելագարութիւնը կամովին յանձն առնէր... Ճարները կտրած գիւղի տիրոջ, տանուտէրի փեշն էին բռնում ու ասում՝ վերև Աստուած, ներքև դու, ուզբաշի. Աստծու ուրան խաթրի հետի մեր ցաւին, մեր դարդին մի դարման արա... Տանուտէր Աղաջանն էլ իր գիտեցած ձևով ու միջոցներով դարման էր անում նրանց ցաւերին...

Մարութի ակնարկը լսելուն պէս տանուտէր Աղաջանը արձակեց ցանկալի հրամանը։

—Ադա,—դարձաւ նա գղիրին, որը հրամանի առաջին բառը լսելուն պէս կանգնեց տեղից,—գնա էս սհաթիս մի քանի հաւ ճարի, վափուկ մսաւոր հաւ. լաւերն ըլեն հա. կոշտ միսը բաբաթ կարում չեմ ծամեմ...

—Իմ էս ջոխտ աչքիս վրայ, ուզբաշի,—աղաղակեց գինովցած ժրաջան գղիրն ու դուրս թռաւ սենեակից։

Երբ մեծամեծները ու ինքը տանուտէրը հաւի խորոված ուտելու ցանկութիւն արտայայտեցին, Նազարը, Թոմասը ու պուճախից հիւրերի համար ուտելիքներ ուղարկող կանայք մտաբերեցին, ի հարկէ,

իրենց հաւերին, որոնց մասին սեղանակիցներից Մարութը բաւականին պարզ ակնարկեց... Հաւեր մորթելու մասին խորհրդակցելու հնարաւորութիւն չկար այդ րօպէին. իւրաքանչիւրում նրանցից միտք յղացաւ գնալ երկու հաւ գոնէ բերել, մորթել ու անկոչ հիւրերի ըռեխները գցել, բայց ոչ ոք վճռականութիւն չունեցաւ անել այդ իսկոյն և եթ. կարծում էին, թէ կասեն, կը խօսան այդ մասին ու տնեցիներից արձագանք չը լսելով իրենց ասածին, կամաչեն, տաղ կանեն, կերածներով կը բաւականան. գիտէին և այն, որ իրենց կատարեալ լռութեան դէպքում գղիրը կարող է տանուտէրի հրամանով հաւաորսութեան գնալ. այդ բանը, այդ ադաթը ամբողջ գիւղին յայտնի էր... Այդ դէպքում յոյս ունէին, որ իրենց տանն այնքան առատօրէն կերած ու խմած գղիրի սրտում այնքան գութ ու խղճմտանք կը լինի, որ նա նրանց խաթրը կանի ու որսորդութեան համար ուրիշ հաւաբուններ կը գնայ, այլ ոչ նրանց... Երբ գղիրը դուրս վազեց տանուտէրի հրամանը կատարելու, տնեցիներն սկսեցին իրենց մտքերում աղօթել, Աստուած կանչել՝ գղիրական գթասրտութեան արժանանալու յուսով...

Քաջարի որսորդը շուտով վերադարձաւ հարուստ աւարով՝ հաւի եօթ հատ արիւնաթաթախ դիակներ ձեռքին, արժանանալով բուռն օվացիաների ու արտաքոյ կարգի գովասանքների. ինքը տանուտէրը արժանացրեց նրան մի այնպիսի գովասանքի, որը հազագիւտ դէպքերում ասում է նա այս կամ այն իշխանին, համփային, գիւղի այս կամ այն ազդեցիկ մարդուն, որ մինչ այդ ոչ մի գղիր աշխարհումս դեռ չէր լսած. տուեց նրան այդպիսով մի անգնահատելի բարձր պարգև, որի շնորհով գղիր Զատին արար աշխարհի գղիրներից

ամենանշանաւորը, ամենահռչակաւորը, հետևաբար և ամենաառաջինը դարձաւ. նա ասաց իր գղիրին՝

—Ա՛ Զատ, ա՛ գլխամեռ, քեզ թամամ մի պրիստաւի խելք ունես...

Այդ որ գղիրն էլ լսած իր ուզբաշուց. Զատին շատ տանուտէրների էր ծառայած, շատերի էր մեծ ծառայութիւններ մատուցած. տանուտէր Աղաջանիկ ու նրա նախորդներից հազագիւտ դէպքերում պատահած էր նրան լսել, որ ինքը մի բօռնիկի խելք ունի, որը շատ մեծ գնահատում էր համարում՝ ոգևորիչ, թեւառրող. իր խելքի այդ մեծութիւնը այս ու այնտեղ գիւղում, կարիք եղած դէպքերում, մատնանշում էր ու այդպիսով աւելի զարկ տալիս իր պրեստիժի բարձրացման... Այդ երեկոյ էլ դիւանատանը, երբ զեկուցանում էր իր ու Նազարի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը, առաջին անգամ կեանքում լսեց իշխաններից մէկից, Մարութից, որ ինքը մի պասրեդնիկի խելք ունի. Ծատուրը հաստատեց այդ ու նոյն իսկ ակնարկեց, որ Զատին իրենց շրջանի այժմեան «մրօվի պասրեդնիկից», հաշտարար միջնորդից, աւելի խելօք է. Նազարի տանը Մարութը նոյնը կրկնեց, երբ խմեց Զատիի գտած գինին։ Զատին իրեն անչափ վարձատրուած համարեց, բայց այդպիսի գնահատման մասին, ինչպիսիին նա արժանացաւ ուզբաշուց, նա երևակայել անգամ չէր կարող. իր երկարամեայ գղիրական բազմաչարչար ծառայութեան ընթացքում նա երբէք յանդգնած չէր այդպիսի բանի մասին մտածել, երազել անգամ... Լինել գղիր, ուզբաշիի չօվուշ, ու ունենալ պրիստաւի խելք, խելքով հաւասար լինել իրեն պրիստաւին, որը նրա ու բոլոր գիւղացիների խորին համոզմամբ պասրեդնիկից օխտն աստիճանով բարձր մեծաւոր է, քանի որ պասրեդնիկին մէկ, ամենաշատը

երկու ստրաժնիկ է ուղեկցում շրջագայելիս, իսկ պըրիստաւին օխտն-ութը, երբեմնակի նոյն իսկ տասը տասնհինգը՝ բոտնիկի հետ միասին,—էլ դրանից աւել ինչ բախտաւորութիւն կարող է լինել աշխարհումս չօվուշի համար...

Երբ օվացիանները վերջացան, երբ տանուտէրական գերազանց գովասանքը լսեց ու թեաւորուեց հոգով, քաջարի որսորդը առանց քաշուելու յայտարարեց, որ Նազարի հաւաքումում թողել է միայն մի հաւ. ու աքաղաքին՝ դմազլղի համար, այսինքը սերունդի շարունակման. աւելացրեց, որ աքաղաղին, չը նայած ախորժակ շարժող նրա պարարտութեան, թողել է նաև այն բանի համար, որ նա առաւօտները տնեցիներին շուտ վերկացնի ու բան ու գործի ուղարկի...

Նազարի ու Թոմասի կանայք սիւնի ետևում, մեծ դժուարութեամբ զսպելով իրենց հեկեկանքը, որն ամեն րոպէ սպառնում էր պայթել, արտասուելով թեփուեցին հաւերն ու խորովեցին, անկոչ հիւրերի գլուխներն անընդհատ հողելով։ Մինչև լուսաբացը գիւղի մեծերն ուտում էին հաւի խորովածն ու խմում գինին։

Նազարի կինը չը համբերեց. գնաց հաւաքուն՝ սեփական աչքերով տեսնելու գգիրի գործած աւերմունքը. գնաց, տեսաւ իր գլխին եկած աղէտը, կոտորած հաւերի գլուխները հաւաքեց ու փեշում բերաւ տուն։ Գինովցած հիւրերը նրա գնալ-գալը չը նկատեցին համարեա։ Երբ Նազարի կինը ցոյց տուեց իր տէրբակնոջ հաւերի գլուխները, նրանք լսելի կերպով հեկեկացին, ճչացին համարեա, քիչ մնաց, թէ դուրս գային սիւնի ետևից, անխօսութիւնն այն կողմը դնէին ու հիւրերի գլուխները բարձրաձայն հողէին, բայց զգաստ Թոմասը մի ակնթարթում տեղից վեր թռաւ, նետեց իրան պուճախն ու իսկոյն և եթ լուեցրեց նը-

բանց, ասելով՝ «Տաղ արէք, սուս, լալկուեցէք, ձէն ու ծպտուն մի՛ք հանիլ, շան աղջկէք, որ էս սհաթիս ձեզ կը մորթեմ. խիզանը թող ցամաք հաց ուտեն, էս մարդկանցը պատուեցէք. օխտը հաւի տեղ, որ տասն օխտը հաւ ուտեն, էլի տաղ արէք. նրանց պատիւ տալով Նազարին Սբիրից թափում ենք է, թափում. որ բօշ անենք, Նազարը թիւշ կատրօժնի ա գնում է, ձեր հէրն անիծած. հիմի վայենի պալաժենի ա, իսկի գիտում էք, հասկացէք ու տաղ արէք. որ էն մի կէնտ կթի կոմը էլ չւայ գնան էս սհաթիս թովլից դուրս քաշեն մորթեն, բան չի ծպտաք, թէ չէ ձեզ կը կոտորեմ»...

Խեղճ կանայք լռեցին ու, աղի արտասուք թափելով, շարունակեցին հաւի միսը խորովել, այն համոզմամբ, որ այդպիսով Նազարին ազատում են Սիբիրից ու նրա հետ միասին Բաղդունց օջաղը մի մեծ դժբախտութիւնից, մի անօրինակ աղէտից... Նազարն ու Թոմասը վաղուց բաժանուած էին իրարից ու ապրում էին առանձին տնտեսութեամբ, առանձին, իրար կից տներում. բայց շաղկապուած էին անկեղծ եղբայրական սիրով։ Գիւղի մեծերի անակնկալ արշաւանքից գլխաւորապէս տուժեց Նազարը, թէև Թոմասի տանից էլ բաւականին «ային-օյին» բերան անյագ գայլերի ըռեխներն ու որովայնները լցնելու համար...

Երբ հիւրերի քէֆն անչափ չաղացաւ, երբ զօրաւոր ու «խելքաւոր» տկճոլոնների շնորհով նրանց սըրտերը կատարելապէս փափկեցին, բոլորն էլ միաբերան խնդրեցին տանուտէրին ներել Նազարին։ Տանուտէրը, որը նոյնպէս բաւականաչափ փափկել էր, նազարեց, որից սակայն ներման յոյսեր նկատեցին. տանուտէրական նազը շուտով կոտրուեց շնորհիւ Բաղդունց մեծ հարսի, Թոմասի կնոջ, որը գնաց իր տնից

մի զոյգ ընտիր նախշուն գուլպայ բերեց ու դրեց տանուտէրի առաջին։ Տանուտէր Աղաջանը, սաստիկ զգացուած այդ անակնկալ պատուից, օրհնեց խելացի հարսին ու յայտարարեց կատարեալ ներումն. հրամայեց գրագիր մահտեսի Առաքելին պատուել հռչակաւոր «հրապօրտը», որի հրաշագործութեան շնորհով այնքան գինի-արաղ խմեց, այնքան քէֆ արեց. Նազարին պրիստաւի մօտ ուղարկելը խափանեց, խոստանալով անձամբ բարեխօսել նրա համար պրիստաւի առաջին ու այդպիսով նրա զօրաւոր հովանաւորութեան տակ դնել Նազարին, եթէ Աղքեանդի իշխանները պնդեն իրենց ասածների վրայ, աշխատեն պաշտօնական ընթացք տալ նրանց, որ Նազարն իբր թէ իր էշը մի անյայտ թարաքեամի վրայ ծախել է ու Աղքեանդի հասարակութիւնից զուր տեղը տուգանք ստացել իշխանութեան հրամանով։

Մատուրն ու Մարութը խոստացան յատկապէս գնալ Աղքեանդ, տեսնել Սարին ու Բայրամին ու խնդրել, համոզել նրանց, եթէ պրիստաւը քննութիւն ձեռնարկի, փոխեն իրենց խօսքերը, յօգուտ Նազարի ցուցմունք տան ու այդպիսով մի էշի պատճառով երկու հարևան գիւղերը, հայ ու թուրք, դարձեալ չը թշնամացնեն իրար հետ...

Տկճորներն այնչափ խոր տպաւորութիւն էին գործել տանուտէր Աղաջանի վրայ, որ նա ոչ միայն անպայման ներեց Նազարին, այլև անկեղծ ցաւ յայտնեց նրան ծեծելու համար, նոյն իսկ ներողութիւն խնդրեց նրանից ու ինքն իրան պարսաւեց, յանդիմանեց, անկեղծ զայրոյթով անիծեց իր ձեռքը, որն ըստ իր վատ սովորութեան, հրաւէրից առաջ, դիւանատանը, մի քանի անգամ սատանայի դրդմամբ ուժգին թափով դիպաւ Նազարի գլխին։

—Էս ձեռը չի քեզ տուել,—ասաց տանուտէրը, ցոյց տալով իր աջ ձեռքը Նազարին,—դէ չորանայ սա. հրէս է, տես. իմ էս ձեռը չորանայ, որ քեզ տուել ա, քեզ դիպել ա. լաւ եմ ասում. դէ հու ինձանից նեղանում չես։ Գիտում չեմ՝ անտէր սատանէն էն նեղ սնաթումը որտեղից եկաւ կոնատակս մտաւ, ձեռս դուրս տուաւ, ու էս չորացածն էլ քեզ նի կալաւ։ Մեղաւորն էս չորացածն ա է,.էս, ես չեմ...

—Ատա խի՞ ա չորանում,—բողոքեց Թոմասը,—էդ ի՞նչ ես ասում, ա աղբաթիխէրի մարդ. որ քո ձեռը չորանայ, բա էս շէնն ո՞վ կը կառավարի, ո՞վ կը պահի. ձեռդ դիլար կենայ, ուղբաշի Աղաջան. քո ձեռն ա, որ էս գեղը կառավարում ա. զօրաւոր կենայ քո ձեռը, զօրաւոր... Ախպէրն իմն ա,—լաւ ես արել, որ տուել ես. իմ կողմանէն ես տէր եմ, համաձայն եմ. մեր ուղբաշին ես, մեր օրէնքն ես, իրաւունք ունես. որ քեզ լսում չեն, պէտք ա տաս, պէտք ա թակես։ Մեզ պէս ռահաթի կարկաժը շատ ա պինդ. ինչքան տաս, ինչքան նի պրանես, գետաքարի պէս դէմ կը կենայ, կոտրիլ չի։ տուր, որ քեզանից վախեն ու քեզ լսեն, տուր արխային։

—Հալբաթ քի, մեր ուղբաշին ես, իրաւունք ունես. պէտք ա տաս,—ասաց Նազարը,—որ մեզ բօշ անես, որ չը տաս, չը թակես, մենք իրար միս կուտենք... Ես քեզանից իսկի նեղացած չեմ։

—Ադա, ուղբաշիի ձեռը պաչի, ուղբաշիի ձեռը պաչի, որ քեզ էն փորձանքիցն ազատեց,—հրամայեց Թոմասը Նազարին։

Նազարը կատարեց եղբօր հրամանը, համբուրեց տանուտէրի ձեռքը։ Այդ անակնկալ պատուից, մեծարումից, տանուտէր Աղաջանը յուզուեց սաստիկ ու համբուրեց Նազարի ճակատը։

Առաւօտեան ժամասացութիւնն սկսելուն մօտ էր, երբ գինու տակճորն իսպառ դատարկուեց։ Հիւրերը վեր կացան վերջապէս ու ցրուեցին, որ ժամ գնալուց առաջ մի քիչ աչքահուփի տան, հանգստանան՝ «սաղ գիշերը, ինչպէս խիստ լրջօրէն ասաց Բիսմարկ Ծատուրը ցրուելիս, յօգուտ հասարակաց չարչարուելուց յետոյ...»

Թոմասն ու Նազարը, խորին շնորհակալութիւն յայտնելով տանուտէրին, իշխաններին ու նրա բոլոր մեծամեծներին, ճանապարհեցին նրանց մինչև փողոցը։

Երբ անկոչ հիւրերը գնացին, Նազարի խղճուկ խրճիթում ազիզ օրւայ համար ուտելու ու խմելու ոչինչ չը կար այլ եւ. դատարկ էին՝ հացի տաշտը, իւղի ու ձկան պուլիկները, բրնձի տոպրակը, ձուանների քթոցը ու պանրի քսակը. դատարկ էին չարաբաստիկ տակճորները. դատարկ էր նոյն իսկ հաւաբունը...

«ԱՍԻՍՏԵՆՏԸ»

I

Մակի ապէրը մեռաւ ութսունհինգամեայ հասակում, մեռաւ խեղճ մարդն իր մուրազին չը հասած։

Նրա մուրազն էր հարիւր տարին թամամել, լրացնել, տեսնել իր ծուռներին ու հուռներին ու յետոյ միայն թողնել անցաւոր աշխարհը։ Մեռաւ Մակի ապէրը՝ ամբողջ երկու շաբաթ ծանր հիւանդութեան ճանկերում տանջուելուց յետոյ, սաստիկ փորացաւից։ Բոլոր ժամանակ «վայ փորս, վայ փորս» էր աղաղակում նա ու մի ճար, մի օգնութիւն ու թեթեւութիւն աղերսում շրջապատողներից. բայց իզուր. գործ դրած ճարը նրա հիւանդութիւնը աւելի սաստկացրեց, կըրկնապատկեց, տասնապատկեց նրա ցաւերը, ու խեղճն անտանելի ցաւերից մեռաւ վերջապէս, ազատուեց այդպիսով բազմատեսակ ցաւերով հարուստ մեր էս անցաւոր աշխարհից...

Մակի ապօր հիւանդութեան չորրորդ օրը բոլորովին անսպասելի կերպով զիւղն եկաւ գաւառական բժիշկը, որը տեղական դատական քննիչի հետ միասին եկել էր սովորական պաշտօնական գործերով. մի քանի ամիս առաջ պատահած ինչ-որ սպանութեան զոհի դիակը պէտք է հանէին գերեզմանից, անդամահատէին ու արձանագրութիւն կազմէին ըստ օրէնքի։

Մակի ապօրենց տանը, երբ լսեցին բժշկի գալու մասին, անչափ ուրախացան. կարծեցին, թէ հէնց

Աստուած ինքն է ուղարկել նրան յատկապէս Մակի ապօր համար։ Վարդանը, հիւանդ ծերունու մեծ որդին, իսկոյն վազեց գիւղական իջևանատունը, որտեղ իջնում ու ապրում են գիւղը եկած պաշտօնեաները. ուզեց ներս մտնել, բայց շէնքի մօտ կանգնած գզիրը յետ հրեց, ասելով՝

—Զայ են խմում. կարելի չի. ի՞նչ ունես ասելու, ի՞նչ գործ ունես քեզ սլեստչի ու դօխտուրի կշտին։

—Ակուփ, ապէրը հիւանդ ա է, շատ ա դժար, մեռնում ա թամամ,—ասաց Վարդանը,—եկել եմ դօխտուրին տանեմ. թող, քեզ մատաղ, գնամ կուշտը։

—Մեռնիլ չի. Մակի ապօր կողքը շատ ա պինդ. տաղ արած ես դառ տուն. դօխտուրն ինձ հրաման ա արել, որ թող չանեմ մարդ մտնի կուշտը։

—Ակուփ, քեզ մատաղ, ինձ համար մի կերպ արա, թող մտնեմ. ես չոք-չոք կանեմ դօխտուրի առաջին. խեղճ կը դայ, կընդունի խնդիրքս. ապէրը մեռնում ա ահը։

—Ասեցի, որ մեռնիլ չի. քո խաթրին, ի՞նչ ա, ես պէտք ա դօխտուրի հրամանը քանդեմ ու դուլլուղից ընկնեմ. իմ ըսխանցը հաց կը տաս պահի՞ս. դօխտուրը տուն մտաւ թէ չէ ինձ ասեց՝ ամեն գալով հիւանդներն ու հիւանդատէրերը գալիս են թափւում էստեղ, զահլէս տանում, գլուխս ցաւացնում. դիփ դու ես մեղաւոր, շան տղայ. կաշառք ես առնում,—ասեց,—ու ամեն եկողի ներս թողնում. ճանապարհից Ջարդւած եմ. ձեր քոսոտ ու հոչլոտ հիւանդների համար չեմ եկել ես. էս անգամ էլ եթէ մարդ թողնես մօտս,—ասեց,—քաղաք վերադառնալուն պէս պրխստաւին կասեմ, որ համ կաշիդ պուկի, համ դուլլուղից դուրս անի քեզ, ժուլիկ դուռումսաղ. որ սաղ շէնն էլ քանդւելիս ըլի ու դիփունք էլ կոտրւելիս,—ասեց,—էլի իմ կուշտը

մարդ չի թողնես. բեզարցրել են ինձ էդ էշերը... Հիմի ես քեզ ո՞նց թողնեմ, որ գնաս դօխտուրի կուշտը. ուզում ես, որ իմ տունն իմ ձեռով քանդե՞մ։

—Ակուփ, ցաւդ տանեմ...

—Էլ խօսալ մի, բաւական ա. կը լսի ու դուրս գայ մեռել-կենդանս քաշի. ետ դառ տուն, ասեցի։

—Ակուփ, ջանիդ մատաղ, թող մտնեմ,—ասաց ձայնը ցածրացրած Վարդանը,—թող ինձ ուշունց տայ. կասեմ, որ դու թող չէիր անում, ես զօռով մտայ. բալքի խեղճ ա գալիս ու խնդիրս ընդունում ա. ո՞վ ա գիտում. Աստուած, Աստուած. ահը էն խեղճ մարդն էնտեղ մեռնում ա...

—Դօխտուրը խեղճ-մեղճ չի ճանաչում,—ասաց նոյնպէս ձայնը ցածրացրած Ակուփը,—էսօր տասը-տասնհինգ տարի ա նա մեր ուեզդումը դօխտուր. լաւ սովորել եմ նրա խասիաթը. մի կարմիր տասնանոց, քիչը մի հինգանոց պտես դնիլ հափռումը, որ նա գայ հիւանդիդ տեսնի. իսկ էստեղ տեսնալու համար պէտք ա մի իրեքանոց տաս. նրա օրէնքն էդ էնէ ա. իմ օրէնքն էլ էսէնց ա, որ պէտք ա ինձ էլ մի տաս շահի տաս՝ բանը գլուխ բերելու համար. փողով էլ որ մտնես կուշտը, էլի ինձ հօրաւ-մօրաւ պիտի ասիլ, ինձ ուշունց պիտի տալ. ես առանց փողի, մուհտա, իմ մեռել-կենդանը քաշիլ չեմ տալիս...

—Ակուփ, ես էդքան փողը ո՞րտեղից ճարեմ,—ասաց Վարդանը,—էս սհաթիս որ մեզ տանով-խիզանով մորթես, տաս շահի նաղդ փող չի կանանչիլ տանը. ես հինգ մանէթուկէսը ո՞րտեղ գտնեմ, ո՞նց ճարեմ. երկու օր պէտք ա շէնը ման գամ, որ մի հանգաւ, մի կերպ էդքան փող պարտք անեմ մէկից։

—Դէ էն ա գիտում եմ, որ դարտակ ես, էնդուր եմ ասում՝ գնա է,—ասաց Ակուփը,—գնա տաղ արած.

ետ դառ, լաւ բոլ գլուխս ցաւացրիր,—աւելացրեց նա, բարձրացնելով ձայնը։

—Ակուփ, քո բախունց ցաւը տանեմ. ինձ խուկիլ մի. ես գնամ տանն ինչ ասեմ. ապէրը մեռնում ա ահը. դու ու քո Աստոծը, մի կերպ արա, թող մի հանգաւ դոխտուրի իրեսը տեսնամ, էնհէնց մի խորհուրդ էլ ա հարցնեմ նրանից, մի ճար իմանամ. քեզ մի բոլ գինի կը խմացնեմ, Ակուփ. դու ասա դոխտուրը ճար նշանց տայ ու ապէրը լաւ դառնայ, քեզ մի լաւ ղոնաղ կանեմ ապօր լաւանալուց յետոյ... Մի հլա էս ա՛ռ, էս ա՛ռ, էսօր չէայ հանգ ու հունգը մի լաւ արաղ խմի,—ասաց Վարդանը, դնելով Ակուփի բռունցքում մի տաս կոպէկանոց, որը նա, լաւ ծանօթ լինելով գզիրական օրէնքների ու բարքերի հետ, վերցրել էր տանից յամենայն դէպս։

Ակուփը կակղեց. թոյլ տուեց կանգնել Վարդանին իշխանատան բակում ու սպասել բժշկի պատահական դուրս գալուն. չէ որ նա կարիքի համար կարող էր դուրս գալ։ Դիակի անդամահատութիւնը ու քննութիւնը պէտք է հետևեալ օրն առաւօտեան կատարէին. արդէն ուշ էր այդ օրը. իրիկնապահ էր։ Վարդանը լուռ կանգնեց, ծառացաւ իշխանատան բակում ու անթարթ աչքերը յառեց այն լուսամուտին, որի ետևում, սեղանի մօտ, նստած էր բժիշկը ու քննիչի հետ միասին թէյ էր խմում, ուտում, զրուցում. նրանից նա փրկութիւն էր սպասում իր ապօր համար. ինչ-որ գերբնական զօրութիւն էր տեսնում նա բժշկի մէջ. կարծում էր, թէ նրա մի խօսքը, մի հայեացքը բաւական է՝ նրա խեղճ ապօրը սպառնացող մահից փրկելու համար. բժիշկը նրան մի շատ զօրաւոր, մի սքանչելագործ սուրբ էր թւում, բայց շնորհիւ իր անմատչելիութեան՝ շատ ահեղ, ահարկու սուրբ...

Շատ սպասեց Վարդանը, շատ կանգնեց, չորացաւ ոտի վրայ. մթնեց, ճրագավառոց դարձաւ։ Քննիչի ու բժշկի մօտ գալիս էին գիւղական պաշտօնեաները՝ պաշտօնական գործերով ու այնպէս, ներկայանալու. գալիս էին գիւղի ազդեցիկները, զօրքաները, հարուստները. բոլորն էլ ազատ ներս էին մտնում ու դուրս գալիս։ Վարդանի պէս անճարների առաջին էին դռները փակ։ Վերջապէս բախտը ժպտաց Վարդանին. բժիշկը դուրս եկաւ կարիքի համար. Վարդանը փափախը վերցրեց, մօտ վազեց, սկսեց շտապ-շտապ ասել նրան իր ասելիքը. ասելով գնաց հետը, մօտեցաւ այն տեղին, ուր նա պէտք է մտնէր. բժիշկը չէր լսում Վարդանին։ Նա մտաւ կարիքի տեղը. Վարդանը գըլխաբաց սպասում էր. երբ դուրս եկաւ ու ճանապարհուեց դէպի սենեակը, Վարդանը աղերսելով ուղեկցեց նրան. բժիշկը խէթ աչքով նայեց, դարձեալ բան չասեց ու լուռ մտաւ սենեակը։ Վարդանն ուզեց ետևից մըտնել, բայց Ակուփը ցցուեց առաջին, թեթևակի յետ հրեց, ասելով՝ «Ետ դառ, լաւ. ես մի հանգ կանեմ. էն ա ինչ հարկաւոր էր, ասեցիր, պրծար. ես էս ա կը մտնեմ մէջ դոլ, կը հարցնեմ դոխտուրին ինչ հարկաւոր ա, կը խնդրեմ, որ ասի թա՝ ինչ ճար ա հարկաւոր Մակի ապօր համար»։

Կրկին ծառացաւ Վարդանը, կրկին յառեց անթարթ աչքերը այն լուսամուտին, որի ետևում նստած էին բժիշկն ու քննիչը։ Նրանք ծխում էին, զրուցում, ծիծաղում...

Ցարմար բոպէ գտնելուն պէս Ակուփը ներս մտաւ։ Վարդանի տուած կաշառքը ու խոստացած հիւրասիրութիւնը նրան լաւ էին տրամադրել, բաւականին փափկացրել էին գզիրական ոչ այնքան քնքոյշ սիրտը. նա «անկեղծօրէն» ցաւում էր Մակի ապօր

համար։ Մօտեցաւ Ակուփը բժշկին, ներողութիւն խնդրեց ու յիշեցրեց Վարդանի խնդիրքը, խորհուրդ, ճար խնդրեց հիւանդի համար։ Բժիշկը խոժոռ հայեացք ձգեց Ակուփի վրայ, հայհոյեց, որ հիւանդ-միւանդներով էլի նրա գահլէն տանում է, էլի կաշառք է լափել ու իր գրօշների համար նրա, բժշկի գլուխն է ցաւացնում։ Քննիչն էլ հայազգի էր, ուստի առանց թարգմանի իսկոյն հասկացաւ բանն ինչումն է. նա խորհուրդ տուեց բժշկին մի բան ասել ու գլուխն ազատել այդպիսով։ Բժիշկը հետևեց քննիչի խելացի խորհրդին ու ասաց՝ «Թող հիւանդին լաւ փրթիւշով բուլեօն ուտացնեն ու թէյի հետ զագրանիչնի կանեակ խմացնեն. լսեցիր»։

—Հա, աղա։

—Դէ գնա. մնաց. էլ էդհէնց բաների համար չը գաս մօտս, որ քո հէրը կանիծեմ։

Ակուփը չը հասկացաւ բժշկի ծաղրը. նրա ասածը լուրջ խորհրդի, հալած իւղի տեղ ընդունեց ու դուրս գնաց, մտքումը կրկնելով բժշկի ասած բառերը։ Թէև նա «հա» ասաց բժշկին, բայց իսկապէս ոչինչ չը հասկացաւ նրա տուած խորհրդից. բուլիոն, թէյ, կանեակ ու զաղրանիչնի բառերը թէև նա առաջներում, համանման դէպքերում, լսած էր բժշկից, բայց մի հասկացողութիւն չունէր նրանց մասին։ Խնդրել նրան պարզ ասել, բացատրել, չը համարձակւեց, վախեցաւ զուր տեղը իր մեռել-կենդանը քաշել տալ... Եթէ թէյի տեղ չայ ասէր, կը հասկանար. միակ բառը, որը նա հասկացաւ բժշկի ասածներից, այդ փրթիւշն էր. Ակուփի սիրելի փրթիւշը. լօբի, մոխոխի, խաշլի, բողբաշի ու խաշի մէջ նա սիրում է բօլ բրդել, չի խնայում, քանի որ իբրև գգիր միշտ համարեա ուրիշի տներում է ուտում, այլ ոչ իր, սիրում է այդպիսով լաւ փրթիւշ

անել ու մի լաւ, մատները գդալի տեղ բանեցնելով, ուտել, մաքրաղարդել երեք-չորս ամսան։ Շատ մտածեց, շատ խելքի տակն ու գլուխը տաւ բժշկի խորհուրդը. բազմափորձ գգիրը. ինչպէս հասկացնէր Վարդանին բժշկի ասածը, ինչ թարգմանէր նրա բառերը. ամեն անգամ համանման դէպքերում, նա իրենից մի բան հնարում, մոգոնում է, բժշկի անունից հաղորդում այն Վարդանի պէս անճարներին ու հանգիստ խղճով ճանապարհում տուն. այս անգամ էլ պէտք էր այդպիսի մի բան անել։ «Ի՞նչ անենք, թէ Մակի ապէրը կարող է մեռնել բժշկական սխալ խորհրդի գործադրութիւնից, —ասաց Ակուփն իր մտքում,—լաւ բօլ ապրել ա. նրա հասակակիցները եօթը պատան են մաշել արդէն... Եթէ լաւ դառնայ, առողջանայ, լաւ. դէ էն ա կասեմ՝ ես բժշկեցի, ու. մի բօլ կուտեմ, կը խմեմ, քէֆ կանեմ նրանց տանը. եթէ լաւ չի դառնայ, դհա լաւ. իմ քիսից բան չի կորչիլ. էլի կուտեմ, կը խմեմ, քէֆ կանեմ ու էն էլ մի քանի անգամ՝ թաղումին, այքին, եօթին ու քառասունքին. մի բօլ կը խմեմ ու բօլ օղորմի տամ Մակի ապօրը... Ափսոս, շատ ափսոս, որ պաս ա, էն էլ մեծ պաս,—շարունակեց իր մտքում Ակուփը,—եթէ ուտիս ըլէր, Վարդանին բժշկի բերանից կասէի, որ Մակի ապօր համար լաւ-լաւ ուտսի խորակներ պատրաստեն՝ բոզբաշ, բոզարթմա, չոբանղօուրմասի, խաւ, ինչ պատ ա, կորկոտ, հաւի չղրտմա, հաւի խորոված, փլաւ ճուտով ու եղուծով, խաշ, խաշ սխտորով ու քացախով... Ես էլ կը գնայի կուտացնէի Մակի ապօրը, դօխտուրութին կանէի. դէ նրա իշտահը բաց անելու համար ղրաղ-բուջաղէն ես էլ կուտէի էլի. ինչ անենք, թա ողքատ են. մի քսան-երեսուն մանէթ պարտք կանէին իրանց հօր փրկութեան համար. երկու աշխատող տը-

զամարդ կայ տանը։ Էս մեծ պասը չը լինէր, ինչ քէֆ կանէի՛, ինչ քէֆ. ինչ լաւ հորս ա ճանկս ընկած, բայց ափսոս... Քեզ թաղեմ, Մակի ապէր, ոնց թաղիլ պտեմ. եանի քիչ կը սպասէիր ու Զատկից ետի էն երկար ուտսում հիւանդանայիր էլի՛, ա գլխամեռ։ Դէ եթէ ասեմ, որ ուտսի խորակ պատրաստեն, ուտիլ չի բնաւ, կը մնանի, որ ուտիլ չի. պէտք ա պասուց խորակներ պատրաստել տամ էլի՛, ճար չի կայ. կը գնամ ես էլ զաթումը եօլա գնամ, հլէ մի բօլ գինիարաղ էլ ա կը խմեմ չօլմասա։

Այդչափ երկար ու բարակ մտածելուց յետոյ Ակուփը վերջապէս որոշեց պատուիրել Մակի ապօր համար՝ բուլեօնի տեղ լօբի ու վիլուկ, թէյի—փիփերթ ու մոխոխ, կանեակի—թունդ քացախ. զագրանիչնի բաւը որոշեց թարգմանել սխտոր, առանց որի վիլուկն ու փիփերթն ուտել անկարելի է. սխտորն է միայն նրանց «լազաթ», համ ու հոտ տալիս... Նա համոզուած էր, որ այդ կերակուրները, եթէ քացախով ու սխտորով լաւ համեմած լինեն, Մակի ապօրը կը լաւացնեն. եթէ չը լաւացնեն, յամենայն դէպս այնքան էլ շուտ չեն մեռցնիլ, քանի որ նա այդ կերակուրներին լաւ սովոր է, նրանցով է ապրել. համարեա ամբողջ կեանքը վիլուկ ու փիփերթ քաղելով է անցկացրել. նրանցով պէտք է մի հանգով ձիգ տայ ու Զատկից ետի ուտիսներին հասնի, երբ բանը կը հեշտանայ. ուտսի կերակուրներով կը բժշկուի այն ժամանակ...

Վարդանը աչքերը Ակուփին յառած, ամբողջովին հարցական նշան դառած, լուռ սպասում էր։ Ակուփը սենեակից դուրս գալուն պէս ծառացաւ նրա շէմքում ու ընկաւ մտքերի, մտածմունքի ծովի մէջ, որտեղ երկար դէս ու դէն արաւ, ոնց տեսանք։ Վարդանը չէր համարձակւում հարց տալ. գիտէր, որ Ակուփը,

առանց էն չի, մի բան կասի, բժշկից բան կըլի լսած. չէ՞ որ բժիշկը հետը խօսեց. ձայնը դրսում բաւականին պարզ լսւեց. Վարդանը լսեց, որ բժիշկը ուշունց տուաւ, հայհոյեց Ակուփին, իսկ Ճնացած ասածներից բան չը հասկացաւ։ Երևի հէնց այդ ուշունցների պատճառով էր Ակուփն այնքան լուրջ, մտախոհ ու լուռ. այդպէս էր թւում Վարդանին։ Ծեղճմարդը իր մեռելկենդանը քաշել տւեց նրա օգտի համար, նրա ապօր առողջութեան համար. էդ ինց պէտք է նրա պարտքի տակից դուրս գար,—մտածում էր Վարդանը։

Վերջապէս Ակուփը մօտեցաւ Վարդանին ու ասաց՝

—Վարդան, տեսա՞ր, լսեցի՞ր հու, ոնց դօխտուրն իմ մեռելկենդանը քաշեց,

—Լսեցի, Ակուփ, քեզ մատաղ, ներողութիւն արա ինձ. պատճառը ես եմ. գիտում եմ. քո պարտքն իմ վիզը։

—Է՜է, հա դէ քրիստոնութին ա, վիզս ա ընկել, անում եմ էլի՛. էսօր սրա օգտի համար եմ իմ մեռելը քաշիլ տալիս, էգուց նրա. էս անդամ էլ դէ հու Մակի ապօր օգտի համար քաշիլ տւայ...

—Գիտում եմ, Ակուփ. տանով-խիզանով մեզ պարտական շինեցիր. էգուց, հէնց որ դրանց համբայ դնես, ազատւես, եկ դէպի մեր ղոլը. ապօրը կը տեսնաս. դրից կանես հետը, դօխտուրի ասածը հէնց իրան անկաշումը կասես. դէ Աստծու տւածից մի բան կը ճարւի տանն էլի՛. քեզ սոված չենք համբայ դնիլ... Ցաւդ տանեմ, Ակուփ, դէ հիմի ասա. դօխտուրն ի՞նչ ասեց,—սրտատրոփ հարցրեց Վարդանը։

—Դօխտուրն ասեց, Վարդան, որ հէնց էս իրիկու Մակի ապէրը թող մի բօլ մոխոխ ուտի, էնհէնց լաւ տաք-տաք մոխոխ, լաւ փրթիւշ արած. մի բօլ, երկու-իրեք ման ուտի, որ քրտնքի ու քուն ըլի.

էգուց առաւօտ, գիշերով դեռ, թող,—ասաց,—մի լաւ վիլուկ ուտի, սխտորով ու քացախով, սխտորը պէտք ա քիչ լինի, իսկ քացախը շատ, էն էլ թիւնդ քացախ, որից կէնտ-կէնտ էնհէնց ուրան գլխու, առանց խորակի, պէտք ա խմի, արաղի ստաքանով գոնէ. նա որ փորիցն էնքան հարա ա տալիս, նրա փորումն, ասեց, մի բան կայ, էն էլ շատ փիս բան. պէտք ա, ասեց, նրա մէջ ղոլը եվուի, էրուի, որ նա լաւ դառնայ. էդ քացախով ու սխտորով միայն կարող ա գլուխ գայ, հա, լաւ միտս ընկաւ, մին էլ արաղով, թիւնդ արաղով, էն խալիս ջեջի արաղով. կէնտ-կէնտ էլ արաղ պէտք ա տալ ուրեմն. կէսօրին էլ, ասեց, պէտք ա փիփերթ ուտացնէք Մակի ապօրը, նոր դուրս եկած փափլիկ, կակղ փիփերթ. բաղերում շատ կըլի. հարսներին ուղարկի քաղեն. փիփերթն էլ պէտք սխտորով ու քացախով ուտի, էլի քացախը պէտք ա շատ ըլի ու թիւնդ. էգուց իրիկու էլի մոխոխ տուէք, լաւ տաքցրած ու լաւ փրթիւշ արած։ Էդհէնց ուրեմն. առաւօտները վիլուկ, կէսօրին փիփերթ, երկուսն էլ քացախ-սխտորով, մտիդ լաւ պահի, իրիկունները մոխոխ։ Մի քանի օր էդհէնց կը շարունակէք. հէնց որ Մակի ապօր կողքը մի քիչ պնդեց թէ չէ, կը սկսէք լորի ուտացնել, էն վախտն, ասեց, լորիին զօռ արէք, Աստծու օրհնած լորիին... Դէ էն ա էդհէնց կանէք, էդհէնց կը շարունակէք. Աստուած ողորմած ա, մինչև Զատիկը Մակի ապօրը մի հանգաւ էր սաղացնենք, կառողջացնենք...

—Հա, քեզ մատաղ, Ակուփ,—ասաց ուրախացած Վարդանը,—դու էդ ա նրա դօխտուրը դառար. դու պտես նրան սաղացնիլ... Էգուց ել, ասման օր էլ ել մեր տունը, օրէս ետը տունը քոնն ա. ապէրը լաւ

դառաւ թէ չէ, ասման աղիզ օր դու պէտք ա մեր տանը զոնաղ ըլես, զոնաղ. էգուց անպատճառ ել հա։

—Լաւ, կը գամ, ոնց չեմ գալ,—ասաց Ակուփը,—բա ես թող կանեմ, որ էն խեղճ հիւանդն անտէր ու անօգնական, անարխայ մնայ. էս պատուհասներին ճամբայ դնեմ թէ չէ, ձեռաց կը գամ. հիմի դու գնա էս իրիկունւայ ճարն արա, մոխոխը տաքցնիլ տուր հարսներին, փրթիւշ արա ու բոլ ուտացրու, ոնց ասել եմ։

—Գնում եմ, քեզ մատաղ, էգուց ել հա,—ասաց Վարդանն ու շտապով հեռացաւ Իշխանատան բակից։

II

Վարդանը ուրախ-ուրախ վազեց տուն, որովհետև «դօխտուրի» նշանակած դեղերի ետևից չը պէտք է գնար քաղաք. իրանց տանը շատ կար նրանցից. մոխոխը, մեծ պասւայ այդ գլխաւոր եօլատանիչը, լոբին, անցեալ տարւանից քաղած ու չորացրած թթուաշ վիլուկը, սխտորն ու քացախը առատ էին, փառք Աստծու. գինի-արաղ էլ կար, լաւ ջեջի արաղ. դէ փիփերթն էլ հօ Աստուած գարունը բացւելուն պէս ամեն տեղ բոլ-բոլ փռել էր... «Դեղերը» Մակի ապօր սիրած բաներն էին, թէև այժմս սոսկալի փորացաւը նրանց հետ չէ հաշտւում. ուտում, ծամծմում էր մի կերպ, բայց չէր մարսում. քացախ-սխտորն ու գինի-արաղը թէև շատ էր ուզում առաջւայ պէս գործ ածել, բայց բոլորովին չէր կարողանում, նոյն իսկ կուլ տալ, ամենաաննշան չափով գոնէ, անկարող էր գտնւում՝ չը նայելով իր դերմարդկային ջանքերին. անիծւած փորացաւը քացախի, սխտորի, գինու ու մանաւանդ արաղի անհաշտ թշնամին էր ուղղակի. նրանց տանել, նրանց հետ հաշտւել բնաւ չէր կարողանում... Վարդանը հա-

մոռուած էր, որ այդ բոլոր բաները, իբրև «դեղերը», այն էլ ոչ թէ մի հասարակ դալլաքի, ջառահի նշանակած դեղերը, այլ մեծ «դոխտուրի», որ համարեա նաչալնիկի բարաբար մարդ է, Մակի ապէրը կընդունի, կուտի, կը խմի մի կերպ։ Նա հաւատացած էր, որ իր ապէրը կը փրկուի անշուշտ, որ տան «քեօթուկը» մի քանի տարի էլ կապրի դեռ, գուցէ իր մուրազին հասնի, հարիւր տարին լրացնի, ու Աստուած էլ այդ «քեօթուկի» աղօթքների շնորհով նրա օջաղի «բրիսխը, խէր-բարաքաթը» անպակաս կը պահի... Տունը առանց «քեօթուկի», առանց մեծի, առանց նանի կամ ապօր, չէ որ տուն չէ... Նրանց նանը վաղուց էր մեռած. ապէրն էր տան միակ «քեօթուկը». պէտք էր նրան մի կերպ փրկել. չը նայած նրա ութսունհինգամեայ հասակին, նրա մահը դեռ վաղաժամ էր Վարդանենց տան համար...

Բժշկի, աւելի ճիշտ կը լինի ասել՝ նրա երկարամեայ օգնական, նրա «ասիստենտ» գզիր Ակուփի պատուէրը կատարել սկսեցին ամենայն ճշտութեամբ. իսկոյն մոխոխ տաքացրին, լաւ եռացրին, սովորականից աւել, բաւականին հաց բրդեցին մէջը, լաւ փրթիւշ արին ու համարեա ստիպմամբ ուտացրին հիւանդին. մի ման հաղիւ կերաւ. երկրորդի համար շատ խնդրեցին, շատ աղաչեցին, բայց հնար չեղաւ. կերածն էլ համարեա ամբողջովին շուտով յետ թափեց, փսխեց. գիշերը համարեա չը քնեց, «վայ փորս» ու «վայ մեռայ» կանչելով լուսացրեց... Տնեցիք բոլորն էլ համարեա անքուն անցկացրին գիշերը, ամեն կերպ փաղաքշելով ապօրը, աշխատելով մի կերպ թեթևանցնել նրա տանջանքները։

Վաղ առաւօտեան վիլուկ եփեցին, համեմեցին սխտորով ու քացախով, վերջինով առատօրէն, ու

տաք-տաք, մի քիչ հաց բրդած մէջը, մօտեցրին Մակի ապօրը, որը մի քիչ հանգստացած էր երևում. թմրել էր, կամացուկ հեւում էր. կարծես քնած էր։ Որովհետև «բժիշկը» պատուիրել էր վիլուկն ուտացնել առաւօտեան, շատ վաղ, լուսաբացին համարեա, չը սպասեցին Մակի ապօր զգաստանալուն. վրդովեցին խեղճի հանգիստը ու փրկարար վիլուկը հրաշագործ սխտորով ու քացաքով մօտեցրին նրան։ Հիւանդը մեծ դժւարութեամբ մի քիչ ծամծմեց մի կերպ ու յետ թեքւեց ամանից, «վայ փորս... վայ մեռայ...» աղաղակելով։

—Ապէր կեր. կեր, քեզ մատաղ, ապէր. վախիլ մի, դոխտուրն ա ասել, քեզ ՁԼաս չի տալ, լաւ կը դառնաս անպատճառ, —ասում էին շրջապատողներն ու համարեա ոյժով ստիպում խեղճին ուտել վիլուկը, մի էս թիքէն էլ, էս թիքէն էլ կուլ տուր. էդ ա էդ-հէնց. լաւ կուլ տուր, քեզ մատաղ, ապէր. իշտահով կուլ տուր... Դէ դրա վրայ էս արաղից մի քիչ խմի. լաւ ջիջի արաղ ա է, ապէր, թունդ արաղ ա...

—Կարալ չեմ, ինձ կը սպանի դա,—ասաց հեւալով Մակի ապէրը,—արաղ խմիլի հալ չունեմ...

—Էս արաղն ահր քեզ համար ճար ա է, դեղ ա,—ասաց Վարդանը,—դոխտուրն ասեց, որ պէտք ա վիլուկի վրայ խալիս ջեջի արաղ խմես ու ուրան գլխու թունդ քացախ, որ մէջ ղոլդ էրի, խորովի, որ էդ կերպաւ էդ ցաւը, էդ դարդը քեզանից, քո փորից դուրս գայ կորչի... Խմի, քեզ մատաղ, ապէր, մի ային-օյին, մի կէս ստաքան էլ ա խմի։

—Չէ, կարալ չեմ... մեռնում եմ... վայ փորս, վայ, ասաց Մակի ապէրը,—վայ մեռայ, ձեզ մատաղ... քացախն էլլհա մի հանգաւ կը խմեմ, ամա արաղն իսկի կարալ չեմ. վայ փորս...

—Դէ քացախը խմի. բան չի կայ, արաղը ետ-նայ կը խմես։

Քացախը մօտեցրին. Մակի ապէրը մի կում խը-մեց ու սոսկումով յետ թեքւեց խսկոյն։

—Վայ... վայ մեռայ, ձեզ մատաղ,—ասաց նա,—թողէք... էլ խմում չեմ... թողէք մեռնեմ...

—Խմի, քեզ մատաղ, ապէր, մի կում էլ խմի,—վրայ թափւեցին շրջապատողները, մօտեցնելով քացա-խի թասը նրա շրթունքներին,—մի կէնտ կում, մի կէնտ կում միայն խմի, էդհէնց. էդ ա հա. վախել մի, ապէր, քեզ մատաղ. փորիդ ցաւին մտիկ մի տալ. դօխտուրն ասել ա, որ քացախն ու արաղը նրան թրի պէս կը կտրեն, թրի պէս. ջահիլութիւնդ միտդ գցի ու խմի արխային։

—Ահր սպանում ա... վայ մեռայ... ինց խմեմ... վայ... մէջ դոլս տակն ու վրայ ա անում... վայ... վայ փորս... կասես դալլաքի սուր ծիլաւ... կոտորելիս լի-նի... կոտորելիս թիքա-թիքա... փորս ու աղիքներս,—ասաց սաստիկ հեւալով Մակի ապէրը։

—Էդ ա էդհէնց պիտի անիլ է, որ լաւ դառնաս,—ասաց ուրախացած Վարդանը,—էդ լաւ նշան ա, ապէր, վախիլ մի. դօխտուրն ասեց ահր, որ քո մէջ դոլը պէտք ա էրւի, խորովւի, փուլ գայ թամամ, որ էդ դարդը քեզանից դուրս գայ կորչի...

Լաւ նշանից խրախուսւած շրջապատողները կըր-կին հարկադրաբար դիմեցին Մակի ապօրը, կրկին հրաշագործ քացախի թասը մօտեցրին նրա շրթունք-ներին։

—Մի կում էլ խմի, ապէր, քեզ մատաղ,—ասա-ցին,—մի կէնտ կում էլ. ցաւի աչքը, ինց տեսնում ենք, սա պիտի հանիլ...

—Թաղեցէք, կորցրէք էդ զահրիմարը,—ասաց եր-

որդ կումը խմելուց յետոյ Մակի ապէրը, ձեռքի հր-ռումով հեռացնելով իրանից քացախի թասը,—բա մի լաւ բան չի կայ... վայ փորս... տաք ինձ... հէնց էդ անտէր վիլուկն ա... վայ մեռայ, վայ... հէնց էդ աղու-լդի քացախն ա... էդ ժհար քացախը... վայ, ձեզ մա-տաղ... վայ... կեանքս դրանք են մաշել... վայ փորս... հիմի էլ հիւանդ տեղս էլ... վայ մեռայ... պէտք ա վի-լուկ ուտեմ... մոխոխ ուտեմ... ու քացախ խմեմ... վայ... բա ձեզ Աստած չունէք... վայ, վայ, վայ... վայ փորս, ձեզ մատաղ...

—Ապէր, ահր դօխտուրն ա ասել է, դօխտուրը,—ասաց Վարդանը,—նա ա հրաման արել. նա ինքն ու-րան բերանով էնտեղ մէջ դոլ, ինց գալուս պէս ասե-ցի, ասան բան մանդրամասնը ասեց մեր չօվուշ Ակու-փին. Ակուփն էլ դուրս եկաւ ու մանդրամասնը ինձ ասեց ասան բան։ Էն մեծ դօխտուրն ա է, ապէր. էն որ սլեստչի հետ ման ա գալիս. մեր շէնումը նրան շատ տեսած կը լինես, շատ ա եկած։ Ասում են, իմաս-տուն ա թամամ, մաղերը դօխտուրութէնում են սիպ-տակել. մեծութին էլ ունի է, մեծութին. ասում են, օխտը չին ունի. ետ նաչալնիկը, ետ նա. նաչալնիկին բրբար մարդ ա. ինց նաչալնիկը մեր էս սաղ մհալի վրայ նաչալնիկութին ա անում, նա էլ դօխտուրու-թին ա անում մեր մհալի վրայ։ Դէ էնհէնց երևելի մարդի, էնհէնց մեծ դօխտուրի ասածը լսի է. ապէր, լսի. սրտալի մոխոխն ու վիլուկը կեր, քացախն ու ա-րաղը խմի, խմի տաղ արած. դեռ պէտք ա, ինց իրի-կունն ասեցի, փիփերթ էլ ուտես, վիլուկի պէս սըխ-տորով ու քացախով. ցաւդ հէնց որ փրղաթացաւ, ջանդ մի քիչ պնդեց թէ չէ, պէտք ա լոբի ուտես, լո-բին զօռ անես. ահր էդ լոխ լսի ու կատարի, միտդ

կեռիքդ կալ, դօխտուրի նշանց տուած բաները կեր ու խմի, որ լաւ դառնաս է։

— Թէ նրա նշանց տուած բաներովը պտեմ լաւ դառնալ... վայ մեռայ... ոչ լաւ դառնամ... փուչ լաւ դառնամ... վայ, ձեզ մատաղ... վայ... թող արէք տաղ արած մեռնեմ,—ասաց խորին յուսահատութեամբ Մակի ապէրը,—վայ... փորս օղիք-մօղիք ա գալիս... վայ, քեզ մատաղ Աստուած... վայ...

—Շրջապատողներն իրար ականջում փսփսացին. ինչ-որ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ նրանց մէջ։ Վարդանն ըստ երևոյթին չէր համաձայնւում միւսների հետ. պնդում էր «բժշկի» ասածների վրայ։

—Ապէր,—դարձաւ հիւանդին նրա փոքր որդի Աւագը,—որ մի հաւ մորթենք, էնհէնց լաւ շորւայ պատրաստենք, ետ կամ կաթնով ճաշ եփենք, բրնձով կամ կորկոտով, կուտես։

—Դու ուզում ես ինձ դժոխքն ուղարկես, Աւագ... վայ... էդ ինչ ես ասում... վայ փորս... էսօր որ օր ա... իմ սաղ կեանքում պաս չը կերած... վայ... հիմի պտեմ ուտի... հիմի, ոտիս մինը էն ա գերեզմանումն ա... վայ. . երբ էսօր-էգուց... Աստծու ահաւոր դատաստանի առաջն եմ դուրս գալու... վայ... էն էլ ե՞րբ ուտեմ, ե՞րբ. մեծ պասին... վայ... մեծ ապաշխարանքի օրերին... ժամ չեմ գնում, բաւական չի... դեռ պէտք ա պաս էլ ուտեմ... միսդ կերել ես, ինչ ա, որ էդհէնց բան ես ասում ինձ... վայ... աւելի լաւ ա մեռնեմ, մեռնեմ... էս փուչ աշխարհից հրետին գնամ, հեռանամ, քան պաս ուտեմ... դու ուզում ես, որ իմ հոգին յաւիտեան դժոխքումն էլի՞, Աւագ... վայ փորս, վայ...

—Չէ, քեզ մատաղ ապէր,—ասաց Աւագը,—էդհէնց բանը ես ո՞նց կուզեմ. իրան հօր համար իսկի մօր ծի՞ծ կտրողն էլ չի էդհէնց բանն ուզիլ։

—Դէ ասա՝ մեղայ Աստծու. ասա, քեզ մատաղ, ասա, մեղք գործեցիր, ասա,—սաստիկ հեւալով ասաց Մակի ապէրը,—վայ... Տէր Յիսուս, քեզ մատաղ, Տէր Յիսուս... ջահիլ ա դեռ... հասկացաւ ոչ ինչ ասեց... բաշխի... ներողութիւն արա... վայ, մեռայ, վայ...

—Մեղայ Աստծու,—ասաց երեսին խաչակնքելով Աւագը ու լռեց։

Մակի ապէրը ծանր շնչում էր, հևում սաստիկ ու շարունակ «վայ փորս» ու «վայ մեռայ» աղաղակում։ Շրջապատողները լուռ, անզօր ու տխուր նայում էին նրան։

Վարդանը փիփերթի վրայ, իբրև շատ քնքոյշ, շատ կսկուղ բանի, մեծ յոյս ունէր դրած. տնեցիներից մէկին ուղարկեց փիփերթ քաղելու։

Գէսօրից մօտիկ Մակի ապօր դրութիւնը աւելի վատթարացաւ. որձկաց մի քանի անգամ, այնպէս սաստիկ, որ քիչ էր մնում, թէ աղիքները բերանով դուրս գային. փսխեց, արտավիժեց կերած վիլուկն ու խմած քացախը։ Իրարանցումն ընկաւ տնեցիների մէջ։ Հարսներն ու աղջկերքը կամացուկ, տղամարդկանցից աննկատելի կերպով, լաց լինել սկսեցին։

—Արա Վարդան,—դարձաւ Աւագը մեծ եղբօրը,—կարելի ա, որ էն գլխամեռ Ակուփը դօխտուրի ասածներից բան ծածկած ըլի քեզանից. ինչ ասես, նա կանի. ծածկած կըլի, որ մեզանից փող առնի ու նոր թամամ ասի։

—Խի ուրան միսը կերել ա. գիտում ես, թա ես նրան մաղբուն եմ թողել, որ էդհէնց բան անի՞,—ասաց Վարդանը,—դօխտուրի կուշտն ուղարկելուց առաջ ես նրան, ոնց հանդն ա, տեսայ... կակղացրի, փափկացրի թամամ. երկու շահի արաղի փող տուայ ու ասեցի, որ էսօր դայ տուն՝ համ ապօրն ակը տայ, համ

հաց ուտի, գինի-արաղ խմի. խոստացայ ապօր լաւ դառնալուց յետոյ ման ազիզ օր ղոնաղ անել։ Նա հրէս կը գայ. ժամանակն ա. դօխտուրն ու սլեստչին ճամբայ դրաւ թէ չէ, իսկոյն կը գայ։

Այդ լսելին դրսում լուեց շան հաջոցն ու գղիր Ակուփի խրոխտ ձայնը. նա պարսաւում, անարգում էր շանը, որ համարձակւում էր նրա վրայ հաջել։

—Ըհը՛, հրէս եկաւ,—ասաց Վարդանը ու շտապով գնաց դուրս՝ զսպելու, պահելու շանը ու «ազիզ ղոնաղին» ներս հրաւիրելու։

Գղիրի ձայնից լաւ նկատւում էր, որ նախաճաշելուց յետոյ ճանապարհւած «մեծաւորների» սեղանի մնացորդներից նա կարգին օգտւել է, մանաւանդ գինու ու արաղի առատ մնացորդներից...

III

Ներս մտնելուն պէս պաւառական բժշկի «ասիստենտ» գղիրը սովորականից շատ բարձր ձայնով դիմեց հիւանդին հետևեալ խօսքերով՝

—Հը՛, Մակի ապէր, ոնց ես, ոնց. ինչ ես տեղի տակը մտել, հէր օխնած. վախիլ մի՛, լաւ ես, լաւ. կանոխ արա վեր կաց. էնքան ժամահացերը, էն համովհոտով, էն լաղաթին քելեխները, առանց քեզ անցնում գնում են, լոխ քո քիսիցն են գնում է, ա աղբաթիխէր...

—Է՛, քեզ մատաղ, Ակուփ,—ասաց հեւալով Մակի ապէրը,—շուտով իմ ժամահացն էլ էք ուտելու... մեռնում եմ, մեռնում... ինձ թափի՛... ինձ մի ճար արա, քեզ մատաղ... ասում են, խելքդ բան ա կտրում... վա՛յ մեռայ, վա՛յ...

—Վախիլ մի՛, մեռնիլ չես. դեռ քո ժամահացն ու-

տելու վախտը չի. ուրիշների ժամահացերում իրար հետ դեռ շատ պտենք գինի-արաղ խմիլ, շատ։ Աղջի Մայան հարս,—դարձաւ գղիրը հարսներից մինին, որի անունը դեռ աղջիկ ժամանակից գիտէր,—էդ ի՞նչ բանի ես. ի՞նչ ես էդտեղ տաւարի պէս կանգնել, ա՛ քո հէրը շան տեղը հաջի. մի արաղ բեր ես ու Մակի ապէրը իրար կենաց խմենք... Դէ, կանոխ արա, շուտ. մեծաւորի կշտին էդ էնց դուրուր կը գա՞ն, շան աղջիկ. պէտք ա դուշի պէս դէս ու դէն թռչկոտաս, երբ ձեր տանը մեծաւոր ես տեսնում։

Գղիր Ակուփը գիւղացիների ստորին խաւերում իրան բացարձակապէս մեծաւոր էր յայտարարում ու այդ կոչումն իր վրայ հաստատուն պահելու համար ամեն կերպ աշխատում էր շրջապատողներին նկատելի դարձնել իր ուսերի վրայ գտնւող կարմիր մահուդի խունացած կտորները, գղիրական ուսակալները՝ բաւականին ահաւոր նրա մտրակին ու կեղնքման ենթակայ խեղճ գիւղացիների համար։ Ինքնակոչ մեծաւորի պահանջն իսկոյն կատարուեց. արաղն ասպարէզ եկաւ։

—Հը՛, ջեջի ա՞, թա թթնի էդ արաղը,—հարցրեց «ասիստենտը», արաղի շիշը հարսի ձեռքին նկատելուն պէս։

—Ջեջի ա, Ակուփ, խալիս ջեջի արաղ ա,—ասաց Վարդանը,—ես քեզ ոնց թթնի արաղ կը խմացնեմ. բայց ափսոս ապէրը խմում չի. էսօր շատ աշխատեցինք, բայց գլուխ չեկաւ, չը խմեց։

—Էս ա ես կը խմացնեմ,—ասաց գղիրը ու յետոյ մի բաժակ արաղ իր ձեռքն առաւ, իսկ միւսը հրամայեց մօտեցնել Մակի ապօրը։

—Մակի ապէր,—ասաց նա խիստ բարձրաձայն,—Աստուած ջանսաղութին տայ, Մակի ապէր, վաղի իգի-

թութինը միտդ գցի, արաղը մի գլխիդ քաշի խմի. ինչ ես գլուխդ դէս ու դէն անում. խմի, քեզ ասում եմ. արաղը քեզ օգուտ ա. արաղն ու քացախը պտեն քո մէջ ղոլը քանդիլ, փորդ ու աղիքներդ կլեկիլ, ղլաւիլ, որ դու էդ դարդիցը պրծնես... Քեզ պէս շատերի եմ արաղով, քացախով ու սխտորով ես ցաւերից թափած, բժշկած. դու առաջին անգամն ես պատահում. դեռ հունարս գիտում չես. արաղը խմի, քեզ ասում եմ, կուլ տու, հ՛ը... Տէր, մեղայ քեզ, Աստուած, չըլի՞ իմ դօխտուրութէնին հաւատում չես, Մակի ապէր,— հարցրեց վիրաւորուած տօնով բժշկի «ասիստենտը»։

—Հաւատում եմ, քեզ մատաղ... ինց չեմ հաւատում, վայ... ամա կարում չեմ խմեմ է, կարում,—ասաց հիւանդը։

—Իմ կեանքումը գեղը եկած դօխտուրներին էնքան ղուլլուղ եմ արել, որ ես էլ եմ դօխտուր դառել. իմ խելքն էս սհաթիս նրանցից պակաս չի բան կտրում. մեր էս դօխտուրին, էս որ սլեստչի հետ եկաւ, գնաց, ես համարեա պամօշնիկութին եմ անում, պամօշնիկութին... Աչքերդ հուփ կալ ու արաղը թամուղ կուլ տու. քո փրկութինն էդ արաղումն ա...

—Վայ փորս, վայ... կարում չեմ խմեմ, Ակուփ, քեզ մատաղ, կարում... վայ... թամամ մեռնում եմ... դու խմի... քեզ հալալ...

—Զաւայ էստեղ գալս ես մի բօլ խմել եմ ու էլ պտեմ խմիլ, քեզ հետ էլ պտեմ խմիլ. բա ես արաղ բաց կը թողնեմ. հրէս, հրէս, մի եաշի, մի մտիկ տու. սա բաց թողիլի զատ ա, ա սրա ադաթ դնող սատանի ոտը քարին ոչ նի ունի. հրէս ես խմում եմ, դէ դու էլ խմի. դէ մին էլ ջանսաղութին, Մակի ապէր. հը՛, բեր մի չրխկըցնենք...

—Վայ, ձեզ մատաղ, ինձ սպանիլ միք... ինձ բաշ-

խի, Ակուփ... իմ բաժինն էլ դու խմի,—աղաչում էր «դօխտուրին» մերձիմահ հիւանդը։

—Բայց «դօխտուրն» անողորմ էր։

—Արա Վարդան, Աւագ, մտիկ միք տալ, ձեր զօռթը գցեցէք խմացրէք, զօռով բողազն ածեցէք ա-բաղը. սխտորով ու քացախով կերած վիլուկի վրայ դա շատ լաւ կլի. դրա ցաւի գլխաւոր ճարն ու դարմանն էդ ա. դէ, խմացրէք, դրա հարահրոցին էլ եաշիլ միք,—ասաց հրամայական տոնով «ասիստենտ» գզիրը, պարպելով իր բաժակը։

Հիւանդին արաղը զօռով խմացրին, ուշ չը դարձնելով նրա «վայ փորս» ու «վայ մեռայ» աղաղակներին, որոնք աւելի յաճախակի դարձան ու աւելի սաստկացան։

—Էդ լաւ ա, վախիլ միք, շատ ա լաւ. ցաւը շատ օգուտ ա դրան. ցաւիլ պտի, որ հիւանդութինը դրանից դուրս գայ ու կորչի,—ասում էր հարցական հայեացքներով նրան մտիկ տուող անեցիներին գաւառական բժշկի բազմաշխատ «պամօշնիկը», պարպելով իրար ետևից նախ մի քանի արաղի, յետոյ գինու անվերջ թասեր, նախաճաշելով թթու դրած կաղամբով, շուշանով ու սոխով համեմած կարտօպլով։

Հիւանդը անտանելի ցաւերից, որոնք գնալով սաստկանում էին աւելի ու աւելի, գալարւում էր անկողնում ու բոլոր ոյժով «վայ փորս» ու «վայ մեռայ» գոռում։

—Էդ ա հա, լաւ ես դառնում, Մակի ապէր, քո կենացը. Աստուած օջաղդ հաստատ պահի,—ասում էր գզիրը, խմում գինին ու խրախուսում, քաջալերում այդպիսով խեղճ Մակի ապօրը,—ոնց օձը իր բնից դուրս ա գալիս, ցաւն էլ էն ա էնտեղից քեզանից, քո փորից ա դուրս գալիս. վախիլ մի. քո կենացը...

Աստուած թոռներդ պահի, բարով էնքան ապրես, որ նրանց ուրախութիւնը տեսնաս... Աղջի Մայան հարս, —դարձաւ գինովցած գզիրը տնարար հարսին,—շան ծիծ ծծած, տեսնում չէ՞ս, որ առաջիս կարափինգու�էլ գինի չի կա՞յ. ի՞նչ ես հայվանի պէս աչքերդ պլշած կանգնել. գնա գինի բեր։

Մայան հարսն շտապով գնաց գինի բերելու։

Գզիրը մեքենաբար վերցրեց գինու դատարկ բաժակը, բարձրացրեց, ուշի ուշով նայեց բաժակին, լաւ տնտղեց, կարծես առաջին անգամն էր տեսնում ու դարձաւ այդ բոպէին գինով լիքը գրաֆինը ձեռքին մօտեցող հարսին, ասելով՝

—Էս ի՞նչ ա, շան աղջիկ. ուղտին դդալով ջուր կը տա՞ն. ես էս ստաքանով կը կշտանամ... Սրա շինող ուստի հէրն էլ անիծած. քոնն էլ. օգուտ ես դէպքից, որ Մակի ապօր հիւանդութէնից գլուխս խառնուել ա, որ նրա գարդն ինձ չաշմիշ ա արել, էնպէս շփոթել ա, որ լիսն ու մթինը իրարից ջոկում չեմ, բերել ես էս մատնանոցն առաջիս դրել, իփագօղլի աղջիկ. էդ էնց ես քո պատրունին սաղացնողին պատիւ տալիս. բա ձեր տանը մի մեծ թաս չի կա՞յ. տղամարդի թաս եմ ասում է, այլ ոչ թա էսհէնց սատանայի փափուչ...

—Կայ, ո՞նց չի կայ, Ակուփ,—ասաց Վարդանը,—խամ հարսն ա, անքէթ ա. դեռ գիտում չի, թա օրէնքի մարդկանց ոնց կընդունեն. ներողութիւն արա... Դէ էդ ա հրէդ սովորեցրիր. քո ուղած թասը դոչաղն էդ ա բերաւ. հիմի քո քէֆին խմի, Ակուփ. խմի, ինչքան սիրտդ ուզում ա. դու ապօրը սաղացրու, ու էն վախտը ինչքան գինի ունենք, քեզ հալալ... Մայան հարսը գզիրի կշտամբանքը լսելուն պէս վազեց դէպի

պուճախը. իր սունդուկից մի թէյի բաժակ հանեց ու բերեց դրեց ահաւոր «գօխտուրի» առաջին։

—Դէ հիմի ապրես, հիմի օրհնեալ ըլես,—ասաց փաղաքշաբար գզիրը,—գիտում ես, թա մենակ ուշունց տալն եմ գիտում. օրհնիլն էլ եմ գիտում. էդհէնց մարիփաթին կաց, քաղաքավարութին արա՛, որ միշտ օրհնեմ քեզ. ձեր տունն էլ մեծաւոր կը դայ, հէր օրհնած, մենակ հու ես չեմ...

Գաւառական բժշկի «ասիստենտը» շարունակեց կեր ու խումը. խմում էր գզիրական ագահութեամբ՝ թէյի բաժակով, մաքուր, անկաթիլ. քաջալերում, խրախուսում էր հիւանդին...

Մակի ապէրը մի քանի անգամ սաստիկ, շատ ուժգին ործկաց ու փսխեց, դուրս վիժեց բերանով վիլուկի վերջին մնացորդները՝ խմած քացախի ու արաղի մէջ եփած, տապակած...

—Վա՛յ... ձեզ մատաղ, վա՛յ... փորս, ջգարս ու աղիքներս... քիչ ա մնում .. թա բերանովս դուրս գան... վա՛յ... մեռնում եմ, մեռնում,—ասաց ուժգին հևալով Մակի ապէրը։

—Էդ ա հա. հէնց էդհէնց սիրտդ թափիլ պտես, որ լաւ դառնաս, Մակի ապէր. վախիլ մի, էդ լաւութեան նշան ա. լաւ ես դառնում էն ա. գօխտուրն ասել ա ահր, որ մէջ ղոլդ պէտք ա էրուի, խորովուի, տակն ու վրայ ըլի ու փուլ դայ, որ լաւ դառնաս. էդ ա փուլ ա գալի. կը նշանակի գործդ աջողում ա, լաւ ես դառնում... Քո կենացը, Մակի ապէր. տանով-խիզանով սաղ ըլես-ուրախ. ի՞նչ ես տնքում ու էղքան հարահուրա անում, աղբաթիխէրի մարդ. կախ չենք տալիս հու քեզ. ցաւ ա էլի, մէջ ղոլդ չանգռիլաւ դուրս ա գալիս. էն ո՞վ չի հիւանդանում. չէ՞ այ թագաւորն ինքն էլ հիւանդանում ա... Վարդան, Աւագ, աչքներդ

լիս, Մակի ապէրն էն ա դէպի լաւն ա գնում. իմ խա-
լաթը հագուր ըրէք, հիմիկուց պատրաստեցէք,—ասաց
գզիրը, պարպելով ձեռքի թասը։

Մակի ապէրը կրկին ործկաց, կրկին փսխեց,
գորշագոյն հեղուկ վիժելով բերանով։ Ըսպէսչափ ան-
զգայ դրութեան մէջ ընկաւ. կանայք վայնասուն բարձ-
բացրին. Մակի ապէրը դարձեալ ուշքի եկաւ։

—Էդ ինչ լալուշ ա. տաղ արէք, շան աղջկէք, որ
էս սհաթիս զամշիս կառնեմ ձեր ջանին ըլեմ,—ասաց
խրոխտ ձայնով գզիրը. կանայք իսկոյն լռեցին.—ձեր
մեռել-կենդանը զօռով ինձ քաշիլ էք տալիս հա,—շա-
ռունակեց նա,—որ սկսեմ, էլ հօր գեօռ, էլ հին ու նոր
ննջեցեալնց քեալլա չեմ թող անիլ. լօխ մի թիւշի կը
թրազեմ... Ինձ չօվուշ Ակուփ կլասեն հա, մեր շէնումն
ինձ պէս ուշունց տուող չի կայ. ինձ պէս թակող էլ չի
կայ, ինձ պէս մարդ թակող... Գիտում էք թա՝ կնա-
նիք էք, ձեզ թակիլ չեմ. ձեր բախտէն դուք դեռ իմ
զամշի համը տեսել չէք. մի հարցրէք տեսէք՝ էս շի-
նումը քանի-քանի կնիկ ա իմ զամշի ըռեխն ընկել, ու
նոր օրէնքի դէմումը բան բռնեցէք։ Օրէնքի առաջին
լօխն էլ հաւասար են. օրէնքն իր ասածն անելիս ոչ
կնիկ ա հարցնում, ոչ տղամարդ... Ես էլ օրէնք եմ,
էն էլ ոնց օրէնք, գիտում ԷՔ—զամշին բանացնող օ-
րէնք... Շատերը չօվուշին մի բանի տեղ չեն դնում.
երեսանց յարգում են, թաքուն վրէն ծիծաղում, իսկ
կնանիքը, կոտրուած կնանիքը, դեռ գլուխն էլ հողում.
գիտում էք չօվուշն ով ա. չօվուշն օրէնքի զամշին
ա, օրէնքի շալլաղն ա. չօվուշի հետ հանաք անել չի
կարելի...

—Ներողութիւն արա, Ակուփ, քեզ մատաղ,—
ասաց Վարդանը, անխելք կնանիք են, հասկանում չեն։

—Անխելք են, որ ինձ կզնուացնում են է,—ասաց

բժշկապետի «ասիստենտը»,—որ խելօք ըլեն, բա լաց
կըլեն ու խեղճ հիւանդին սրտաճաք անեն. հիւանդ
մարդի կշտին, մեծ ըլի նա, թա կուճուր, լաց չեն ըլիլ
ահը, ա դրանք բրդւեն, կոտրուեն։ Արիւնն էստեղ
սրտիցս կաթում ա. ինչ իմաստութիւն ունեմ, լօխ
դորձ եմ ածում, գիտում չեմ ոնց անեմ, ոնց հնարներ
բանացնեմ, որ խեղճ մարդին ազատեմ, դրանք լաց են
ըլում ու իմ շինածը քանդում. ոնց չի կզնւեմ բա,
սիրտս հայ ա անում, թա տրաքի... էն որ Մակի ապէ-
րը վեր ածեց, էն մաղձն ա. մալձը թափիլը լաւ
դառնալու ամենամեծ նշանն ա. պէտք ա ուրախանալ,
այլ ոչ թա լաց ըլել. ա դրանց ջինսը կտրի. էդ լաց
ըլողների. Ադամէն սկսած չւայ օրս կնանիքը մարդի
տուն են քանդում, հու տուն չեն շինում... Աղջի Մա-
յան հարս,—դարձաւ գզիրն ահարկու ձայնով կամա-
ցուկ լացող Մայան հարսին, որն աշխատում է չը
նկատուել «ասիստենտից»—բա դու լսում չես էս ինչ եմ
ասում, ա շան հանք ու բերք. ինչ ես թաքուն լաց
ըլում, ինչ ես հիմի աչքերդ սրբում. տեսայ պըր-
ծայ. ոնց տեսնում եմ, դու ուզում չես, որ քո հօր
կարկաժը դինջ կենայ... Ո՛չ ուշունցներս սկսեցի, էլ
ուշ չեմ դարձնիլ, թա հէրդ մեռած ա. խեղճն իմ ձեռ-
քից էլ ազատուիլ չի... Գնա գինի բեր. տեսնում չես, որ-
առաջիս կարափինգումն էլ խէր ու բարաքեաթ չի
երևում. գինի բեր, շան աղջիկ, որ խմեմ, սիրտս ու-
րախ պահեմ, սրտիս աղուն ցրիւ տամ, որ քո պատ-
ռունին սաղացնեմ ահը...

Մայան հարսը շտապով գնաց ու նորից մի գրա-
ֆին գինի բերեց իր պատռունին «սաղացնողի» համար...

Գզիրը խմում էր անյագօրէն ու սրտի աղուն
ցրում՝ Մակի ապօրը բժշկելը կատարելապէս աջողեց-
նելու համար...

Նա շարունակ քաջալերում էր հիւանդին. առաջարկում էր նրա անկողնի մօտ կանգնած Վարդանին ու Աւագին ուրախ կենալ, գալ նստել իր մօտ ու մասնակցել կեր ու խումին, քէֆ, ուրախութիւն անել, քանի որ, փառք Աստծու, նրա խորին համոզմամբ. Մակի ապէրը ակնյայտնի կերպով բարբաթանում, լաւանում էր... Բայց նրանք չընդունեցին առաջարկը, շնորհակալութեամբ մերժեցին սիրալիր հրաւէրը, շարունակեցին կանգնած մնալ հիւանդի մօտ ու սրտատրոփ հետևել հիւանդութեան ընթացքին, որը գնալով վատթարանում էր աւելի ու աւելի։

Երբ հիւանդի տանջանքները հասան ծայրայեղ չափերի, Աւագը դիմեց «ասիստենտ» գզիրին ասելով՝

—Ակուվ, քեզ մատաղ, բաշխի, նեղանալ մի, ներողութիւն արա. գիտալ մի, թա ես քեզ հաւատում չեմ. բալքի դօխտուրի ասածներից բան ըլես մտիցդ գցած, մոռացած, ղուլլուղդ մեծ, գլխացաւանքդ ու հոգսդ շատ մարդ ես, կարող ա պատահի, քէֆիդ նի չունի ասածս. դօխտուրը ուրիշ բանի անուն չի տուեց, ուրիշ բան չասեց բա։

—Նրա ասածիցը ես մի խօսք էլ ա մտիցս գցել չեմ, մի խօսք։ Դրուստ, ճշմարիտ ա շինիս հոգսը հաստատ լոխ իմ վղին ա, ամա խելքս ուրան տեղն ա միշտ. ես իմ միտքը կորցնող մարդ չեմ, լսածս մոռանող չեմ։ Էն մարդն ինձ ասեց, որ էդ ջուռա հիւանդութինը, այսինքը մէջ ղալի, փորի հիւանդութինը, ուտիլ-խմիլաւ ա բժշկւում. ասենք առանց էդ ասիլն էլ ես գիտում էի, որ էդհէնց ա, քանի որ շատ եմ լըսած էդ նրանից. հու նոր չեմ նրան «պամօշնիկութին» անում... է՛հ, ուտիլ էլ կայ, ուտիլ էլ. կան ուտիսւայ խորակներ, կան պասւայ. քանի որ հիմի պաս ա, էն էլ մեծ պաս, դօխտուրը Մակի ապօր համար պասւայ

խորակներ նշանակեց։ Ես ասեցի, որ էդհէնց անի, քանի որ գիտում էի, որ Մակի ապէրը կը մեռնի, որ պաս չի ուտիլ. իսկ էն սխտորը, քացախն ու արաղը, ուտիս էլ որ ըլէր, էլի պէտք ա գործ ածէր, քանի որ մեծ զօրութինը նրանց միջին ա... Եթէ ուտիս ըլէր, ես, այսինքը մեր պարուն դօխտուրն ու ես, դրան վիլուկ ու մոխոխ կուտացնէինք. հիմի ձեզ էնհէնց մի բօզբաշ, ղազի մսաւ էնհէնց մի կորկոտ էի եփիլ տըւեալ, որ մարդ ուրան մատներն էլ հետն ուտէր, ուրան մատները... Էն վախտը ես էս զահրիմար քալամը կուտէի՞, ա սրա սերմողի հէրը գոռբագեօռ ըլի. էն վախտը ես էստեղ կրտօպլի կուտէի՞, կրտօպլի. հիմի Մայան հարսը ինձ ու Մակի ապօր համար հաւ էր տապակում, փլաւ էր դամ տալի, ղազի ես հնդուշկի խորոված էր անում... Ը՞հ, քո ի՞նչն ասեմ, Մակի ապէր,—դարձաւ գզիրը հեացող հիւանդին,—թէև զանքաչդ վաղուց ա մեռած ու էն աշխարհումը հիմի օխտը պատան կը լինի մաշած, ամա էլի փլաւ անի նա, որ դու, էսքան տարի սաղ-սալամաթ ապրած մարդ, սատանի խելքովն ես ընկել ու էս մեծ պասին հիւանդացել. էդ մենակ քեզ համար չի տունքանդութին է, ինձ համար էլ ա... Զատկի ետի էն երկար, էն օրհնւած ուտիսումը կը հիւանդանայիր, աղբաթիխէրի մարդ, որ մի լաւ, մի բօլ քէֆ էինք արել. էս էլ ա քէֆ, շնորհակալութին, ամա ուտիսի քէֆը ուրիշ բան ա...

—Դու ասա ապէրը սաղանայ, քէֆ շատ կանենք, Ակուվ,—ասաց Վարդանը։

—Բա սաղացած ոչ, ի՞նչ պիտի ասիլ. կը սաղանայ, Աստծով կը սաղանայ անպատճառ. դուք արխային կացէք։

—Որ մի քիչ դաթով կերակուր ըլէր է, լաւ կըլէր,—ասաց Աւագը։

—Փիփերթը քացախով ու սխտորաւ քեզ լաւ դաթով կերակուր,—ասաց գզիրը,—աղջի փիփերթ էք քաղէլ,—հարցրեց նա հիւանդի մօտ խմբուած կանանց, որոնցից գլխի շարժումով դրական պատասխան ստացուեց.—թէև ես պատուիրել եմ, որ փիփերթը կէսօրին տաք,—շարունակեց նա,—բայց Մակի ապէրը հիմի բաբաթ բեզարած ա սիրտը թափելուց. թողէք մի քիչ դինջանայ. իրիկնաժամից առաջ փիփերթ կուտացնէք, լաւ քացախ-սխտորած, իսկ իրիկունը, քուն ըլիլի թիւշումը, մոխոխ կը տաք, ոնց ասել եմ, լաւ փրթիւշ արած մոխոխ։

—Փիփերթումն էլ չի էնքան զօրութին կայ, Ակուփ,—ասաց Աւագը,—ես ասում եմ աւելի զօրաւոր բան ըլի։

—Դէ աւելի զօրաւոր բանը ուտիսի խորակն ա,—ասաց գզիրը,—կուտի։ Մակի ապէր,—սովորականից բարձր ձայնով դարձաւ նա հիւանդին,—հէ, Մակի ապէր, աչքերդ բաց արա թաղա հարսի ետևից մտիկ տուող Ջահիլ-Ջիւան տղի պէս ու ինձ եաշի։

—Քեզ մատաղ, Ակուփ, մեռնում եմ... էլ ինձանում հարաքեաթ չի մնացել... վայ... էլ ի՞նչ ճար ես գիտում... ասա, քեզ մատաղ... վայ մեռայ... հոգիս բողազս ա հաւաքել էս ա...

—Մեռնում չես, տաղ արա. թող քո թշնամին մեռնի. դու հիմի ինձ ասա, ուտսի խորակ կուտենս. ի՞նչ ա սիրտդ ուզում. ուրիշ ճարը, նոր ճարը, ուտսի խորակն ա։

—Գա, գա, գա, գա... վայ... մեղք ա, քեզ մատաղ,—ասաց սարսափահար եղած «զօխտուրի» այդ առաջարկութիւնից Մակի ապէրը,—էդ բանն էլ ասես

ոչ... էսօր մեր Աւագն էլ ասեց... էլ ետ փոշմանեց, մեղայ եկաւ... վայ մեռայ... բախայ ա դեռ, սիրտը ցաւում ա ինձ համար... վայ փորս... սրտի ցաւելուց ասեց էլի... վայ... Ինչ իմ մօր ծծից ետ եմ ըլել, ես մինչև օրս պաս չեմ կերել... վայ փորս... մեր ժամանակին էդ հէնց ա ըլել... բախէն մօր ծծից ետ ա ըլել թա չէ, պահիլ են սովորացրել... վայ փորս... հիմիկիս բա՞խէն չէայ հինգ-վեց տարեկան դառնալը դեռ պաս ա ուտում... վայ...

Ահը ես ոնց պաս կուտեմ... էսքան տարեայ պահած հոգիս ես ոնց սատանային կը տամ, ա քեզ մատաղ... վայ փորս... կեանքիս շատը ժամում ու ժամի ճանապարհին եմ անցկացրել... վայ... որ Աստծու արքայութէնում ինձ տեղ ըլի, ինձ համար մի բուրջ ըլի... Վայ մեռայ, վայ... Բա մի երկու տարեայ անցաւոր կեանքի հետի ես... յաւիտենական փառքից ու պատուից զրկւեմ, Ակուփ... վայ, վայ, վայ... վայ մեռայ...

—Զէ, զրկւիլ մի. խի՞ ես զրկւում. դու արքայութէնական մարդ ես,—ասաց Ակուփը,—դրա համար էլ քեզ արքայութէնական խորակներով եմ բժշկում, դէպի արքայութինը տանող ճար եմ տալիս։

—Դէ, քեզ մատաղ... Ինձ Աստծու ճանապարհից գցել մի... Ես Աստծու Ջանին մատաղ... Նրա տունը շէն կենայ... ես նրա փեշը պինդ բռնել եմ ու բնաւ բաց չեմ թողնիլ... վայ փորս... վայ...

—Դէ տեսնում ես, Աւագ, որ ես սխալւել չեմ. տեսնում ես, որ ես, այսինքն մեր զօխտուրն ու ես, լաւ ենք գիտացել, թա Մակի ապօրն ի՞նչ ճար ա հարկաւոր... ուրիշ բան որ ասած ըլի մեր զօխտուրը, ես ի՞նչ ա, միտս կերել եմ, որ տաղ անեմ, որ ձեզանից ծածկեմ, ա աղբաթիխէրի տղայ։ Ես հու բախայ չեմ,

ծծկեր չեմ, իմ խելքն էլ ա բան կտրում, ես էլ խելքատեր եմ, էն էլ ինց խելքատեր... Տեսնում ես էս ճակատը, մի լաւ թամաշա արա,—ասաց շփելով ափով ճակատը,—սրա քամակը, այսինքը գլխիս մէջ դոլը, լոխ խելք ա էլ, ծալծալ կիտած խելք ա. ճակատիս լէնքն ըզօրայ խելքս էլ ա շատ, փառք Աստծու... Մեր ուզբաշին, քէֆի լաւ վախտը, ինձ միշտ ասում ա՝ Ակուփ, ա գլխամեռ, քեզ մի բօտնիկի խելք ունես. մեր ռուս թագաւորի հողումը քեզ պէս խելօք չօվուշ չի ըլիլ... Սուտ չասում մեր ուզբաշին. որ ես անխելք չօվուշ ըլէի, հիմի ինձ վաղ էր դուլլուղից դուրս արել նաւ Քանի քանի դօխտուրներ եմ տեսել ու ճամբել, քանի քանի դօխտուրներ իմ միջոցով հիւանդների ու հիւանդատէրերի մասլահաթ ու խորհուրդներ են տուել. քանի քանի ջան եմ թափել, ազատել ես մահից. իսկի գիտում էք... Գլխիս մազը էս դուլլուղումն ա սիպտակել։ Էսօր քսան-երեսուն տարի ա ես գզիր, ես չօվուշ. դօխտուրներից աւելի երևելի մարդկանց եմ ես դուլլուղ արել։ Ես հիմի ամենալաւ դօխտուրից շատ բան եմ հասկանում. պրիստաւի, զեմլամերի, ինջընների, արխիդօխտուրի, ակցզնի, չնօշնիկի, սպեխտուրի ու դրեխտուրի դուլլուղ եմ արել. մեշաբէգի, մրօվի սուդի, պասրեդնիկի, նաչալնիկի, սլեստչի ու պրըկուրօրի դուլլուղ եմ արել. տափի երանալին դուլլուղ եմ արել, վիսի գբռնըտուրին դուլլուղ եմ արել, մեծ գբռնըտուրին դուլլուղ եմ արել, չեայ երանալ գբռնըտուրին ուրան դուլլուղ եմ արել... Հիմի հու խելքս բան ա կտրում, չէ՞,—հարցրեց նա վերջում մեծ հպարտութեամբ, շեշտակի նայելով Աւագի դէմքին։

Աւագն ու միւս բոլոր տնեցիները մնացին խորին ակնածութեամբ լուռ նայելիս իր կեանքում այնպիսի

նշանաւոր գործեր կատարած, այնպիսի երևելի ծառայութիւններ մատուցած մեծագործ գզիրին...

— Ի՞նչ ես տաւարի պէս պլշել, ա՛ քո հէրը սալին տրաքի,—ասաց նա խիստ բարձրաձէնած, դիմելով դարձեալ Մայան հարսին, տար կարափինգէն մին էլ լցրու. Մակի ապօր կենացը պէտք ա մի սաղ կարափինգա ուրան գլխու, առանց թասի, խմեմ թամուզ, խմեմ մի շնչում ու ետոյ գնամ։

Գինով լիքը գրաֆինը կրկին ասպարէզ եկաւ։

—Մակի ապէր, մի եաշի, թամաշա արա տես՝ քո կենացը ինց եմ խմում է,—ասաց «սասիստենտը», դառնալով մերձ ի մահ հիւանդին, որը համարեա անընդհատ աղաղակում էր՝ «վայ փորս, վայ մեռայ»։—Մեր պարուն նաչալնիկը պրիստաւի հետ երբ գալիս ա շէնս, ջոխտ ոչխար ենք մորթում, էստեղից-էնտեղից բօլ գինի-արաղ, հաց, ձու, եղ, պանիր ու հաւեր եմ հաւաքում. լաւ պատիւներ ենք տալիս մեր նաչալնիկին ու մեր պրիստաւին... Երբ նրանց ճամբայ ենք դընում, մեր ուզբաշին ուրան իշխաններով մի լաւ քէֆ ա անում. Աստծու տուածից շատ բան ա ըլում մնացած... Դէ, ես էլ նրանց դուլլուղ եմ անում. նաչալնիկի ու պրիստաւի կենացները բօլ-բօլ խմում են մեր ուզբաշին ու իշխանները, ուրախութիւն են անում, որ մեր շէնը պարզերես են դուրս բերել նրանց առաջին. օրհնում են նրանց եկած-գնացած ճամբէն, խմում ու ինձ էլ խմացնում... Երբ մեր ուզբաշի քէֆը շատ չաղանում ա, հրաման ա անում ինձ, որ մի մեծ կարափինգայ գինով լցնեմ ու մի շնչումը մեր նաչալնիկի կենացը խմեմ նրանով. Աստծուց ջանսաղութին եմ խնդրում մեր նաչալնիկի համար, կարափինգէն գլխիս քաշում ու մի շնչումը էն սաղ կարափինգէն դարտակում նրա կենացը... Գիտում ես, թա

հեշտ ա, Մակի ապէր, մի շնչումը մի կարապինգայ գինի խմիլը. քիչ ա մնում, թա շունչս կտրի, հոգիս քըթածակերովս դուրս գայ. ամա խմում եմ, միսս կեռիքս եմ ունում ու խմում... Գիտում է՞ք իսկի, այ մարդիկ, ինչի՞ համար, ո՞ւմ համար եմ խմում—մեր շինի, մեր հասարակութէնի օգտի համար. նաչալնիկը մեր մհալի մեծն ա, նա մեր տէրն, նա թագաւորի ուրան պայծառ աչքն ա՝ էստեղ մեզ համար, մեր պահպանութեան համար նշանակւած. նա մեր մեծ օրէնքն ա. ես Աստուածանից ջանսաղութին եմ խնդրում նրա համար, նրա ազիզ կենաց պայծառութէնի համար մի շնչումը մի սաղ կարապինգայ եմ դարտակում, որ Աստուած նրա միտքը դիւզ պահի դէպի մեր շէնը, նրա աչքը քաղցրը պահի մեզ վրայ... է՞է... մեր շինի, մեր հասարակի օգտի համար քիչ ա մնում, թա կեանքս մահու տամ, ամա էլի ղադրըս գիտում չէն. էստեղ-էնտեղ, ղրաղ բուջաղում, թաքուն ուշունց են տալիս ինձ, միթամ ես շէնս քանդում եմ, իսկ կնանիքը, կոտորւած կնանիքը, գլուխս հողում են, շինի ցաւ ու չոռում սիպտակած գլուխս... Մակի ապէր, մի դէս մտիկ տուր, դէս. դիւզ երեսիս եաշի. աղջի,—դարձաւ նա հիւանդին շրջապատող կանանց,—գլուխը բարձրացրէք, դանջղներ. քոռ է՞ք, տեսնում չէ՞ք, որ խեղճ մարդը կարողանում չի իրան հաճակի՞...

Կանայք իսկոյն, գրկելով բարձը, բարձրացրին վայող հիւանդի գլուխը ու նրա մարող հայեացքն ուղղեցին այդպիսով դէպի իր «փրկիչը», իր «բժիշկը», որը գինով լիքը գրաֆինը մօտեցրել էր իր շրթունքներին։

—Տես,—շարունակեց նա,—հրէս մի սաղ կարապինգայ գինին միսս կեռիքս կալած խմում եմ քո կենաց համար ու խնդրում Աստուածանից, որ քեզ շու-

տով ջանսաղութին տայ, իսկ երբ լիս դառնաս, երբ մեռնես,—հիմի ոչ է, հիմի դեռ շատ պտես ապրիլ, ետոյ, երբ վաղէդ գայ,—էն աշխարհումն էն վախտը ոտդ ոչ քարի նի ունի,—ասաց, գրաֆինը քաշեց գլխին ու ամբողջովին դատարկեց։

Ներկայ եղողները՝ անթարթ աչքերը յառած նրա կոկորդին՝ մի-երկու բօպէ լուռ ունկնդրեցին գինու կլկլոցին...

—Հը՛,—դարձաւ նա հիւանդին գինին խմելուն պէս,—տեսա՞ր, Մակի ապէր, ի՞նչ արի. իսկի հասկացա՞ր սա էս ինչ բան է՞ր. քեզ մի նաչալնիկի պատիւ տայ, մի նաչալնիկի պատիւ... Հէր օխնած, էլ ի՞նչ անեմ քեզ համար, որ դու շուտով լաւ դառնաս. ղադրս ո՞նց պտես գիտալ...

—Շնորհակալ եմ, քեզ մատաղ, Ակուփ... շնորհակալ... վա՛յ մեռայ, վա՛յ,—ասաց հեւալով հիւանդը։

—Մեռնիլ չես, տաղ արա՛. լաւ բօլ հարահուրա արիր,—ասաց գդիրը,—աղջի՛,—դարձաւ նա կանանց,—գլուխը վէր դրէք, բարձը հաճակեցէք, թողէք մի բօլ դինջանայ Մակի ապէրը։

Կանայք իսկոյն կատարեցին սքանչելագործ «ասիստենտի» հրամանը։

—Վարդան, Աւագ, արխային կացէք,—ասաց նա. դառնալով Վարդանին ու Աւագին,—դրա հարահրոցին մտիկ մի՛ք տալ. լաւ դառած-պրծած հաշիւ արէք դրան. դա որ Աստծու փեղը էդհէնց պինդ բռնել ա, մեռնիլ չի. շատ պիտի ապրիլ դեռ։

Աղջի,—դարձաւ նա կանանց,—ես դուլլուղ ունեմ, գնում եմ էս ա, ամա ոտիս մինն էստեղ եմ պահելու. էսօր որ կարամ ոչ գալ, էգուց առաւօտ շատ գիշերով էստեղ պատրաստ եմ. բան ա, ասելի չի, Մակի ապէրը կարող ա սէրտը մին էլ թափել, էլ չաշ-

միշ ըլել, լաց չի ըլէք հա, լաց չըլէք ու խեղճ մարդին սրտաճաք անէք. թէ հու չէ կը գամ ու էլ հին ու նոր չեմ հարցնիլ, մեծ պաշը մոէս կը գցեմ ու ձեր մեռելլ-կենդանը տակն ու վրայ անեմ... Ձեր բախտիցը մեծ պաս ա. թաթախման պատարագին մեր ուզբաշիի ու իշխանների հետ միասին սրբութին պտեմ առնիլ. էս պատճառաւ էսօր ինձ մի հանգաւ պահեցի, թէ հու չէ ձեզանից մի քանիսի հօր կարկաժ պէտք ա մի կարգին թրազէի ու նախշէի...

Մայան հարսը, հաստատ հաւատացած լինելով, որ իր խեղճ հօր կարկաժի հանգստութիւնը վերջ ի վերջոյ կարող է վրդովման ենթարկուել ահարկու «մեծաւորի» կողմից, եթէ նա իր մենախօսութեան վերջում գրաֆինը դատարկ նկատի, կենսատու անօթը դատարկուելուն պէս լցրել բերել էր արդէն «ասխատենտի» առաջին դրել։

Մեծագործ գլիրը իրար ետևից դատարկեց մի քանի բաժակ էլ ու Մակի ապօրը ջանասիրութիւն, շուտափոյթ ապաքինումն ու երկարակեցութիւն ցանկանալով, դուրս գնաց տնից։

Հետևեալ օրը վաղ առաւօտեան Մակի ապէրը մեռաւ...

ՑԱՍՈՒՍ

I

19...թ. Հոգեգալստի տօնին Քարկապ գիւղումը ըստ սովորականին տեղի ունեցաւ ցասման պատարագ։

Քարկապն իր գաւառում յայտնի է իբրև ամենահացառատ գիւղ. նրա արտերն ամեն տարի բռնում են ընդարձակ տարածութիւն, նրա գութաններն ու եզները մարտի սկզբից մինչև նոյեմբերի վերջերը դաշտից տուն չեն վերադառնում. նրա ցորենը ոչ միայն քանակով, այլ և որակով յայտնի ու հռչակած է ամբողջ գաւառում. նա արտահանւում է նոյն իսկ քաղաք։ Երբ հարևան գիւղերում հացի պակասութիւն է զգացւում, կալիքաւորներն իսկոյն դէպի Քարկապ են վազում՝ այնտեղից հաց գնելու կամ փոխ առնելու համար։ Քարկապը բոլորին էլ պահում, պահպանում, եօլա է տանում մինչև նոր հունձը. նա իր շրջանի գիւղերի գլխաւոր յոյսն ու ապաւէնն է։

Ամեն տարի Հոգեգալստի տօնին Քարկապում կատարւում է ցասման պատարագ, մի շատ խորհրդաւոր ու հանդիսաւոր պատարագ, որին մասնակցելու համար հրաւիրւում են շրջակայ գիւղերի բոլոր քահանաները, դպիրները, զառամեալ տիրացուները. հրաւիրւում են իբրև պատուաւոր հիւրեր նաև գիւղական տանուտէրները, իշխանները, դատաւորները, պաշտօնեաները ու ազդեցիկները։ Քահանաներից ամենամեծը,

աւագը, մատուցանում է պատարագը, միւսները, մի-մի փորուրար հագած ու շուրջառ ծածկած, պաշտօնակցում են նրան։ Հինաւուրց տիրացուները, զանազան երկարութեան ու գոյնի շապիկներ հագած, եկեղեցու դասում խմբուած, երգում են անընդհատ, երգում են ողբաձայն ու աննրդաշնակ. նրանք չեն խընայում իրանց չորացած կոկորդները. իւրաքանչիւրը նրանցից աշխատում է քանի կարելի է բարձր, շատ բարձր երգել. իւրաքանչիւրն իր սիրած եղանակն ու չափն ունի։ Նրանց աննրդաշնակ ձայները խնկի, ծխի թանձր քուլաների հետ բարձրանում են վեր ու ոգեւորում ջերմեռանդութեամբ տոգորուած գիւղական ամբոխին, դէպի գերբնական ոյժն ու վերջինիցս բղխող սքանչելագործութիւնները, հրաշքները, խոր հաւատ տածող ամբոխին, որն աղօթում է բազկատարած, աղօթում է արտասուաթոր աչքերով։ Նա խնդրում, աղերսում է Ամենակարողից գթութիւն իր համար, հովանաւորութիւն իր արդար վաստակի, իր արտերի ու դաշտերի համար։ «Տէր, դարձրու մեզանից քո ցասումը, Տէր Աստուած, քեզ մատաղ»,—լսւում է անընդհատ եկեղեցու այս ու այն անկիւնում։ Շատերը բոլոր ժամանակ չոքած, գլուխները գետնին յենած՝ աղօթում ու արտասանում են անընդհատ՝ «Դարձրու մեզանից կարկուտը, Տէր, կարկուտը, երաշտը, մուկն ու մորեխը...»

Ամենաաւերիչ ու սոսկալի ցասումն է կարկուտը, որը մի քանի րոպէում ոչնչացնում է գիւղացու ամբողջ տարեայ վաստակը. աղերսանքներն այդ պատճառով պտտում են գլխաւորապէս կարկուտի շուրջը։ Քանի զիլ են երգիչների ձայները, քանի թանձր է խնկի ծուխը, այնքան աւելի ազդու է ժամերգութիւնը ու հետևաբար աւելի ոգեորիչ աղօթող ամբոխի հա-

մար։ Նրա խորին համոզմամբ ցասման պատարագն է պահպանում նրա արտերն ու խոտհարքները կորստից, Հոգոյն Սրբոյ շնորհով են նրանք փրկւում կարկուտից։ Այդ պատճառով ցասման պատարագի աջողութեան համար ոչինչ չէ խնայւում. մորթւում են բազմաթիւ մատաղներ՝ ոչխարներ, արջառներ ու նոյնիսկ ամեհի եզներ. կերակրւում են առատօրէն բոլոր գիւղացիները՝ հարուստներն ու աղքատները, մեծերն ու փոքրերը. կերակրւում են բոլոր հրաւիրուածները, իսկ վերջում ժողովրդի համար Աստծու գթութիւնը հայցողները՝ քահանաներն ու դպիրները՝ ստանում են մի-մի մատաղի հէրի, առաջինները նաև մորթի, երբեմնակի նոյնիսկ տաւարի հէրի, որն անհամեմատ մեծ է ու հետևաբար աւելի արժէքաւոր է ոչխարի հէրուց։

Քարկապը շէն, ունևոր գիւղ է. բոլորն էլ գոհ սրտով հեռանում են այնտեղից. բոլորն էլ լաւ հիւրասիրութիւն են վայելում այնտեղ, բաւականութիւն ու բաւարարութիւն են ստանում լիովին ու օրհնում քարկապեցիների օջաղը, հանդն ու հանդաստանը, որոնց ցասման պատարագի շնորհով գլխաւորապէս իւրաքանչիւր տարի փրկւում են կորստից ոչ միայն Քարկապի, այլև նրա շրջանի միւս բոլոր գիւղերի արտերն ու խոտհարքները, այգիներն ու ագարակները։

Ամեն գիւղ, ուղիղ է, իր հերթին, տարեայ այս կամ այն նշանաւոր տօնին, ցասման պատարագ է մատուցանում, բայց ոչ մի տեղ այդ պատարագը այն հրաշագործ զօրութիւնը չէ ունենում, ինչ որ Քարկապում. իրանց չքաւորութեան պատճառով միւս գիւղերը չեն կարողանում ցասման պատարագին այն փայլն ու շուքը տալ, այնքան մատաղներ մորթել, որ երկնքում, ինչպէս հարկն է, լսւի նրանց աղերսանքը..

II

19... թ. ցասման պատարագը Բարկապում կատարուեց առանց հարևան Խաչաշէն գիւղի քահանայ տէր-Զաքարի մասնակցութեան։ Բարկապի քահանաները, տանուտէրն ու իշխանները դիտմամբ չը հրաւիրեցին նրան։ Պատճառն այն էր, որ տէր-Զաքարը, իրան միւս բոլոր գիւղական քահանաներից մեծ, աւագ քահանայ համարելով, իւրաքանչիւր տարի ցասման պատարագից յետոյ առիւծի բաժին էր վերցնում իր համար մատաղների հէրիներից ու մորթիներից ու այդպիսով զրկում շատերին իր պաշտօնակիցներից։ Տարիներ շարունակ բարեկրօն հայրերը համբերութեամբ տանում էին այդ անարդարութիւնը. վերջապէս որոշեցին բողոքել ու պատժել իրանց աւագ կարգակցին. տանուտէրի ու իշխանների համաձայնութիւնը առնելով, չը հրաւիրեցին տէր-Զաքարին, ու այդպիսով 19... թ. ցասման պատարագն անցաւ Բարկապում առանց տէր-Զաքարի մասնակցութեան։ Նա զրկուեց պատարագն անելու պատուից, փառաւոր կերը ու խումից ու ևս առաւել՝ փառաւոր հէրիներից ու մորթիներից։

Սաստիկ վշտացաւ ու անչափ զայրացաւ տէր-Զաքարը. այդպիսի անպատուութիւն իր օրում նա չէր տեսած. այդ նրա համար հասարակ, սովորական անպատուութիւն չէր, այլ կատարեալ տունքանդութիւն։ Բարեկրօն տէր-հօր զայրոյթն իր չափն ու սահմանն խպառ կորցրեց, երբ նա պատարագի հետևեալ օրը իր ժամկոչ ու դպիր մահտեսի Գալստից իմացաւ Բարկապում տեղի ունեցած հանդիսի մանրամասնութիւնները։

Մահտեսի Գալուստը ժամկոչ էր ու աւագ տիրացու, հին, իմաստուն, ամենագէտ դպիր։ Տէր-Զա-

քարն առանց նրա մի քայլ չէր անում. իր քահանայի հետ նա էլ զրկուել էր ցասման պատարագին մասնակցելու բախտից. նրան էլ չէին հրաւիրել, քանի որ այդ անկարելի էր առանց տէր-Զաքարի։

Մահտեսի Գալուստը դէպքի մանրամասնութիւններն իմացաւ Բարկապից վերադարձած խաչաշէնցի հիւրերից։ Նա էլ տէրտէրի պէս սաստիկ վշտացաւ ու զայրացաւ։ Իրրև փորձուած, իրրև «իմաստուն» մարդ նա գիտէր, նա լաւ հասկացաւ, որ այդ բանն անպատիժ չէ անցնելու քարկապեցիների համար. համոզուած էր, որ առանց տէր-Զաքարի պէս սուրբ մարդու ու իր մասնակցութեան ցասման պատարագը մի սովորական, հրաշագործ ոյժից զուրկ ժամասացութիւն է եղել, որից անմտութիւն էր որ և է օգուտ սպասել... «Իրանց ձեռքերով իրանց տները քանդել են բարկապեցիները,—ասաց մահտեսի Գալուստը, լսելով իր համագիւղացիներից հանդիսի մանրամասնութիւնները,—Աստուած նրանց անպատիժ չի թողնիլ, Աստուած նրանց խելքի կը բերի...»։ Երբ տէր-Զաքարը լսեց բոլոր մանրամասնութիւնները, սաստիկ զայրացած դարձաւ մահտեսի Գալստին ասելով՝

—Մահտեսի Գալուստ, ի՞նչ, ի՞նչ. ասում ես՝ երեսուն ոչխար են մորթել ու օխտը տաւար. ճանի հաւատամ, հաւատամ, ճշմարիտ ես ասում։

—Հա՛, ա՛ տէր, երեսուն ոչխար ու օխտը տաւար. նրանցից իրեքն արջառ, չորսը եզը։

—Չորս եզը, չորս եզը,—կրկնեց ինքն իրան տէր-Զաքարը.—հէրու Հոգեգալստին երկու եզն էին միայն մորթել. էս տարի իմ աչքու են չորսը մորթել։

—Էն էլ ոնց եզներ, ոնց եզներ, ա՛ տէր,—ասաց մահտեսի Գալուստը,—մինը մի գոմէշի չափ. ամեն

մինի հէրում, ասում են, մի փութ միս կըլէր ամենապակասը։

—Ադա, ումն են ըլել եղները։

—Մինը Մաթունցն ա ըլել, մինը Սայունցը, մինը Վերդիի տղինը, մինն էլ Քիքունցը. ասում են լոխից մեծը, պաւարտը, Քիքունց եղն էր։

—Զըլէ՞ Քիքունց Ծաղիկ եղն ա ըլել. էն որ հէրու հնձի վախտը, երբ գնացել էինք քարկապեցիների կալերն օրհնելու, իմ ձեռքով պոչի պտկի մազերը խուզեցի, նշան արի, որ պահեն էս տարուայ ցասման պատարագի համար մորթելու։

—Հէնց Ծաղիկն ինքն ա ըլել. քո սուրբ ձեռքով ջոկած ու նշան արած Ծաղիկը։

—Այ նրա միսը ոչ մարսեն իմ կարգակիցները, ոչ. աղու զահրիմար դառնայ նրանց գլխներին ու սպանի նրանց։ Ես լաւ գիտեմ, որ նրանք են ինձ կանչելը խափանել, որ ի՞նչ ա՝ հէրիքն ու մորթիքը մենակ իրանք մարսեն... Տէր-Դանիէլ,—ասաց Քարկապի աւագ քահանայի հասցէին տէր-Զաքարը,—Քիքունց Ծաղիկ եղան հէրիքը աչքումդ կենան, էդ աչքումդ. առանց ինձ նրա միսը դու ոնց կերար, ա զահրիմար ուտես դու, բալքի քեզ սպանի։ Լաւ, լաւ. տես քո ու քո ժողովրդի գլխին տէր-Զաքարն ինչ օյին ա դնելու. տես, լաւ թամաշա ացա, լաւ մտիկ տուր. իմ զօրութիւնը, մեղայ Աստծու, ոչ իմ, այլ Աստծու զօրութիւնը շուտով ես քեզ նշանց կը տամ. ինձ պէս սրբակրօն քահանային անպատուելով դուք Աստծուն էլ էք անպատուել...

—Մենակ տէր-Դանիէլը չի կերել ահր հէրիքը,—ասաց մահտեսի Գալուստը,—երեսուն ոչխարից ու օխտը տաւարից օխտանասուն չորս հէրի ա ըլել, երեսունօխտը մորթի ու կաշի, երեսունօխտը գլուխ ու

հարիւր քառասուն ութ ոտը. տեղովը, լոխ, տէրտէրները ու տիրացուները բաժանել են ու իրանց տները տարել։ Ասում են, որ մենակ ծովաշէնցի տէր-Սարգիսը, իբրև աւագ քահանայ ու պատարագիչ, երկու հատ տաւարի հէրի ա տարել, չորս հատ ոչխարի, մի եղան կաշի ու հինգ հատ ոչխարի մորթի, մի տաւարի գլուխ ու չորս ոտը, երեք էլ ոչխարի գլուխ ու տասներկու ոտը։ Մնացածներից էլ ամեն մինը իր խելքի կտրած ու սրտի ուզած մի բան ա ճանկել ու տարել։ Ես ու դու ենք ամեն բանից զրկուել, մաղբուն մնացել։

—Մաղբուն չենք մնալ, մենք նրանցից շատ կը շահենք. համբերի, մահտեսի,—ասաց տէր-Զաքարը։

—Ո՞նց, ա տէր։

—Տէրը գիտում ա. դու միայն տէրին լսի. նա քեզ իմաստութիւն դեռ շատ կը սովորցնի։ Ասում ես՝ հէրիքը տարել են, մորթիքը տարել են. բան չի կայ. թող ուտեն, վայելեն. դարդ մի անիր. մենք էլ կը տանենք, մենք նրանցից շատ կը տանենք. համբերի...

—Ա՛ տէր, ահր ոնց է. մի ասա տեսնեմ, քեզ արքայութիւն ըլի։

—Էգուց սարին քեզ կասեմ, սարին. ուրանից, Ամենակարողից, էնհէնց մի ցասում բերեմ քարկապեցիների համար, որ յաւիտեան չը մոռանան, յաւիտեան՝ որդէց որդի ու թոռնէց թոռը... Ի՞նչ ա, նրանք գիտում են, թէ ցասումից պրծել են. իմ գլուխը մնռել ա, ի՞նչ ա, որ նրանք առանց ինձ, առանց իմ աղօթքների, ցասումներից պրծնեն, հանդ ու հանդաստան պահեն... Առանց ինձ նրանք եթէ տասը ցասման պատարագ էլ անեն, էլի չեն պրծնիլ Աստծու ահեղ դատաստանից, այնքան շատ ու ծանր են նրանց մեղքերը. էնհէնց մի ցասում պտեմ հայցիլ նրանց համար, որ երկինք ու երկիր սարսեն անգամ... Թէ

նրանք և թէ մեր գիւղացիք իմ պահածն են. էս սաղ մնալը իմ աղօթքներով ու ապաշխարանքով ես եմ պահում, ես միմիայն. ուրիշ ոչ մի երէց, ոչ մի քահանայ, ժողովրդի համար ցաւում չի. քանի-քանի անգամ եմ բոբիկ ոտներով երաշտ տարիները սուրբ Արթոնի սարը գնացել ու այնտեղից աշխարհի համար հրաշագործ քար ու նրա հետ միասին անձրև, կեանք ու փրկութիւն բերել. քանի-քանի անգամ եմ մեծ աւետարանը շալակած սար ու դաշտ դուրս եկել ու ժողովրդի համար Աստծուց ողորմութիւն, գթութիւն խնդրել։ Կեանքս Արթոնի ճանապարհին եմ մաշել։ Ծառայ եմ նրա սուրբ զօրացը. խնդիրքս միշտ կատարել ա, խաթրս պահել ա, քէֆիս դիպել չի, ինձ ժողովրդի առաջին սևերես չի արել. աշխարհի համար անձրև ա ուղարկել իմ խնդրանօք։ Ո՞ւմ համար եմ չարչարուել ու կեանքս մաշել—քարկապեցիների համար, մեր գիւղացիների համար, արար աշխարհի համար, ոչ միայն մեր հայ քրիստոնեաների համար, այլ և թուրքերի ու այլ միլլաթի համար։ Թուրքերը քարկապեցիներից լաւ են. քան-քանի անգամ են նրանց երևելիները ինձ ոչ թէ հասարակ հէրիներ ու մորթիներ, այլ սաղ գառներ ու ոչխարներ բաշխած՝ Արթոն գնալուս ու այնտեղից անձրև բերելուս համար. սուրբ Արթոնի զօրութեան նրանք էլ են հաւատում։ Մի արաշտ տարի շատ վաղ գնացի Արթոն, գարունք էր դեռ. քոչերը նոր էին սկսել, թարաքամէն արանից նոր էր սար բարձրանում դեռ։ Գնացի, բարձրացայ սարի գլուխը, սուրբ նահատակի գերեզմանից քարը վերցրի թէ չէ, պարզ երկինքը թխպով ծածկուեց ու սկսեց որոտալ. ես իջնելիս սարի լանջումն էի դեռ, երբ անձրևը սկսեց։ Շարունակելով աղօթքներս՝ բաշացայ սարի տակն ու ի՞նչ տեսայ. քոչերն իրար խառնուած, մարդ ու անասուն

գլուխները կորցրած, չը գիտեն՝ ի՞նչ անեն, ո՞նց ազատուեն անձրևի ձեռքից. երեխանց լացն ու կսկանց ճիչը, հարա-հուրէն, ականջ էր խլացնում։ Քոչուորներն ինձ տեսան թէ չէ, ձեռաց գլխի ընկան, հասկացան, որ Աստուած անձրևը իմ խնդրանօք ա ուղարկել, ես եմ անձրևի սարաբը... Քեզ լաւ յայտնի ա, որ նրանք էլ են ինձ լաւ ճանաչում. գիտում են, որ Աստծու կշտին խաթրաւոր մարդ եմ, զօրաւոր մարդ եմ. ինձ նրանք չէ որ անձրև բերող քեշիշ են ասում։

—Էդ լօխ ինձ լաւ յայտնի ա, ա տէր, ո՞նց չի,—ասաց մահտեսի Գալուստը,—նրանք լաւ գիտում են, որ մեր մնալի հայ գեղերանքումը քեզ պէս սրբակրօն ու իմաստուն երեց չը կայ։

—Մի հասակաւոր երեսաց թուրքի կնիկ ինձ տեսնալուն պէս անխօսութիւնը էն կողմին դրաւ, դարձաւ ինձ ու ասեց՝ «ա քեշիշ, քո տունն Աստծը քանդի, դու մեր տները խի՞ ես քանդում, մեզ խի՞ ես կոտորում. էս ի՞նչ ա մեր հալը, էս ի՞նչ ա էս երեխանց հալը. էսքան անձրև կը բերի՞ն, որ դու բերել ե՞ս. կը դիմանայիր, քոչերը կը վերջանային ու էն վախտը կը գնայիր անձրև բերելու էլի...» Թուրքի կնիկը դեռ չը վերջացրած, էն զոլէն մի համփա, մի աղսախկալ թուրք, քոչուորների մեծը, ոնց յետոյ երևաց, վազելով եկաւ ու սկսեց ձեռքի չոմաղով խեղճ պառաւին թակել՝ ասելով՝ «Չէնդ կտրի, քեօփադ օղլի կնիկ. էդ ի՞նչ ես ասում. քեշիշը մեզ համար աստուածային պարգև ա բերում, արար աշխարհի համար փրկութիւն, ողորմութիւն ա բերում Աստծուց, դու նրան ասում ես՝ քո տունը քանդի՞. գնա՛ քեշիշի ոտները պաչի, ոտները...» Վազեցի, չոմաղից բռնեցի ու զօռով, մուննաթ անելով, խեղճ պառաւին ազատեցի քոչուորների մեծի ձեռքից, թէ հու

չէ սպանելու էր։ Խելքահաս տղամարդիկը լոխ հաւաքեցին մի տեղ, իմ կուշտը. ինձ շնորհակալութիւն յայտնեցին, խնդրեցին սրտիս մօտ չընդունեմ, չը նեղանամ անխելք կնիկարմատի ասածներից. քոչւորների մեծը հրամայեց ոչխարների սուրուներից մի մեծ վերց, մի ահագին արու ոչխար, ջոկել ինձ համար. հրամանն իսկոյն կատարեցին. մեծը վերցը տուաւ ու ասեց՝ «Ա՛ քեշիշ, էս վերցը տար մատաղ արա, կեր քո ջամհաթի, քո ժողովրդի հետ միասին ու աղօթի աշխարհիս համար, խնդրուի, որ Աստուած թա հային, թա թուրքին մի աչքով եաշի. լոխն էլ նրա ստեղծածներն են...» Մի չորան դրեց հետս՝ վերցը դիւղը բերելու համար։ Բերայ, մատաղ արի ու տունը մի ամսան բաժանեցի։ Էն տարին դու էստեղ չէիր, Երուսաղամ էիր գնացել։ Թուրքերն էդ հնից մարդութիւն արին, մեր քարկապեցիներն էնհէնց։ Օրհնեան թուրքերը, ոչ օրհնեան քարկապեցիները, որոնք մոռացել են իմ բոլոր լաւութիւնները. ինձ բանի տեղ չեն դնում. ցասման պատարագն առանց ինձ են անում. մատաղի հերիքը ուրիշների են ուտացնում... Լաւ, տեսնեմ ինչ են ցասումից աղատւում, ինչ. նրանց էնհէնց մի պատիժ պտեմ տալ, որ տէրտէրով, տանուտէրով ու իշխաններով դան ինձանից ներողութիւն խնդրեն ու մի անգամից օխտը տաւար մորթեն իմ առաջին, օխտը տաւար... Հը՛, լաւ եմ ասում,—դարձաւ նա մահտեսի Գալուստին,—մտքիս հաւան ե՞ս. պատիժ չը տամ նրանց, արժանի չե՞ն. դու ու քո Աստուածը, ճշմարիտն ասա. էս բանը քեզ հետ միասին պտեմ գլուխ բերիլ։

—Արժանի են, տուր, ա տէր,—ասաց մահտեսի Գալուստը,—պատժի, որ Աստծուն միտները պահեն։

—Լաւ, դէ էգուց շատ գիշերով, դեռ մութը, լուսաբացից առաջ բուրվառը, խաչը, աւետարանն ու շուրջառը վերցրու ու եկ գնանք սարը։ Էգուց առաւօտ ժամ չեմ ասելու. պէտք ա շատ կանուխ գնանք, էնպէս որ քեզ տեսնող չըլի ճանապարհին։

Մահտեսի Գալուստը, սաստիկ հետաքրքրուած՝ թէ ինչպէս պէտք է տէր-Զաքարը պատժէ քարկապեցիներին, գնաց տուն, խոստանալով ճշտութեամբ կատարել տէր հօր պատուէրը։

III

Հետևեալ օրը վաղ առաւօտեան տէր-Զաքարն ու մահտեսի Գալուստը բուրվառով, խաչով ու աւետարանով գաղտագողի դուրս եկան գիւղից ու ճանապարհուեցին սարը։

—Ա՛ տէր, քեզ մատաղ. մի ասա տեսնեմ, սա ինչ ա նշանակում,—ասաց ճանապարհին մահտեսի Գալուստը,—բան չեմ հասկանում. էս սարքերով, որ մենք գնում ենք, ուրեմն պէտք ա մաղթանք կատարենք. բա մաղթանքով ես ուզում պատժել քարկապեցիներին. մաղթանքով էդ ինչ պտես պատժիլ. էդհէնց բան ես լսած ու տեսած չեմ։

—Էսօր կը տեսնաս,—ասաց տէրտէրը,—կը տեսնաս, որ տէր-Զաքարի իմաստութեանը չափ ու սահման չը կայ բնաւ. թող մի բարձրանանք սարը, էն վախտը դու մի թամաշա արա, տես՝ տէր-Զաքարը քարկապեցիների տները ինչ՝ա քանդում... Տաւարի հերիքը տէր-Սարգսին ուտացրել են ու գիտում են, թա նրանով հանդ ու հանդաստան են փրկելու. սխալւում են անչափ. ամեն բան քանդիլ պտեմ ու աւերեմ։ Օխտը տաւար պտեն ինձ համար մորթիլ, օխտը տաւար,

թէ հու չէ Քարկապի հանդում մի հատ հասկը ու մի հատ կանաչ խոտ չեմ թողնիլ...

—Ա՛ տէր, ահր էդ ինց պտես անիլ. մի ասա է. համբերութիւնս հատել ա. սիրտս տրաքւում ա. ամեն իմաստութիւն քեզանից եմ սովորել, մի էդ իմաստութիւնն էլ սովորեցրու է, էդ զօրաւոր իմաստութիւնը,—ասաց մահտեսի Գալուստը։

—Ասում ես՝ ինչ պտեմ անիլ, ինչ պտեմ քարկապեցիներին պատժիլ ու Աստծու ուղիղ ճանապարհը ցոյց տալ նրանց. դէ լսի՝ էս ա որ բարձրացանք սարերը, կը գնանք ամենաբարձր սարի, Քամանդի, գլուխը, մեր գեղի ու Քարկապի հանդի սահմանը։ Այնտեղից մեր աչքերի առաջ փռուած կը լինեն թէ մեր և թէ քարկապեցիների արտերը, ամբողջ հանդն ու հանդաստանը. այնտեղ մաղթանք կը կատարենք. կը խընդրենք, կաղերսենք, որ Աստուած իր բոլոր բարիքները, իր ողորմութիւնը թափի մեր հանդի վրայ, իսկ իր բարկութիւնը, իր ցասումը, կարկուտն ու բոլոր չոռ ու ցաւը, բոլոր պատուհասները՝ քարկապեցիների արտերի, արօտների ու խոտհարքների վրայ...

—Քո իմաստութեանը չափ ու սահման չը կայ, ա տէր,—ասաց խորին հիացմամբ մահտեսի Գալուստը,—լաւ ես մտածել. քո խելքին խելք չի հասնիլ. մի եպիսկոպոսի խելք ունես քեզ, ա տէր։ Թող քարկապեցիները խրատուն ու իմանան, որ էս մհալումը, մեր սաղ գաւառումը, քեզ պէս իմաստուն, սուրբ ու զօրաւոր երէց չը կայ։

Կէսօրից մօտիկ ճանապարհորդները հասան Քամանդի գագաթին. ճանապարհին մարդ չը պատահեցին. սարերն ամայի էին. արտերն ու խոտերը հասունացած չէին դեռ. մինչև հունձը դեռ բաւականին ժամանակ կար։ Քամանդի գագաթից բոլոր շրջակայ տարածու-

թիւնը, թէ Քարկապի և թէ Խաչաշէնի հանդը պարզ երևում էր։ Քիչ հանգստանալուց ու բացւող լայնածաւալ տարածութիւնը դիտելուց յետոյ, տէրտէրն ու ժամկոչն սկսեցին մաղթանքը։ Մահտեսի Գալուստը խնկարկում էր տէր-Զաքարին ու ձայնակցում նրան. տէրտէրը բարձրաձայն երգում էր ու կարդում աւետարանը։ Երբ մաղթանքի սահմանած կարգը վերջացաւ, սկսւեց նրա ոչ-պաշտօնական մասը. տէր-Զաքարը, խաչը ձեռքին բարձր բռնած, սկսեց խիստ բարձրաձայն Աստծու օրհնութիւնն ու ողորմութիւնը հայցել Խաչաշէնի համար, իսկ բարկութիւնը, ցասումը, սոսկալի պատիժները Քարկապի համար։ Իր ասելիքները շարադրում էր նա տեղն ու տեղը, շարադրութիւնը նախօրօք ուրուագծած, կշռադատուած էր երևում, երգում էր մաղթանքի համար սահմանած եղանակով, խորհրդաւոր ու ազդու ձայնով։ Ժամկոչը ձայնակցում էր նրան, անդադար խնկարկում խորին երկիւղածութեամբ ու պատկառանքով ու աշխատում կրկնել այն դարձուածքները, որն այնպիսի զարմանալի հմտութեամբ շարադրում էր իմաստուն տէրտէրը։ Մահտեսին խնկարկութեան համար կրակն արաւ սարի գագաթը բարձրանալուն պէս. խունկ առատութեամբ վերցրել էր եկեղեցուց։ Անողորմ վրէժի ծարաւով բռնկւած տէրտէրը թւում էր Քարկապի արտերը, հողերի, խոտհարքների ու արօտավայրերի յատուկ անունները, այս կամ այն արտաշատ ու խոտառատ վայրը ու ցասում, կարկուտ, հեղեղ ու ամեն տեսակ պատուհաս՝ խընդրում Աստծուց նրանց համար։

Նա մանրամասնաբար թւում էր Քարկապի լայնածաւալ հանդի սահմանները՝ դէպի վեր—բարձրաբերձ սարերը, դէպի վայր—ձորերը, ծուռ ու մուռ կամ, ըստ նրա, կեռ ու մեռ ձգւող սահմանագիծը

ու հայցում, որ բաղձալի կարկուտը այն սահմանագծից դէպի Խաչաշէնի հանդը չանցնի, այլ աւերի միմիայն Քարկապի հանդը. յատկապէս մատնանշում էր Քարկապի այն ազդեցիկ մարդկանց, ազդեցիկ տոհմերի հողերը, որոնք անկասկած ձայն էին տուած յօգուտ այն բանի, որ նա չը հրաւիրուի ցասման պատարագին։

Մաշտոցով սահմանած մաղթանքը վերջացնելուն պէս տէր-Զաքարը մի լաւ հաղաց, մաքրեց կոկորդը ու սկսեց երգել իր սեփական մաղթանքը, որն իր մտքում յատկապէս ուրուագծել, շարադրել էր ցասման համար, մահտեսի Գալստի զեկուցումը լսելուց յետոյ, գիշերը, երբ նա քուն չունեցաւ համարեա, ու կատարելագործել էր սարի ճանապարհին, մահտեսու հետ միասին սար բարձրանալիս։

Լուրջ, վշտադրոշմ հայեացքն ուղղելով դէպի վեր, դէպի կապուտակ անհունութիւնը ու ընդգրկելով ամենատես աչքերով նաև Քարկապի հանդաստանը, նա սկսեց՝

Օրհնութիւնը մեր հանդին, ցաւն ու չոռը Քարկապին.
Ով Տէր մեծազօր, ղրկի մեզ բարիքներ, Քարկապին չարիքներ.
Աւերեա՛ ու քանդեա՛ զամենայն արտօրայս ու դաշտօրայս նոցա, այն է՝
զԳեանդդարա և զՏանձուտ, զԿալի հող, զԱղի ձոր,
Դէս դվէր զՔամհար-քար, դէն գլխվէր զՀնդշափոր...
Ամէն, ալելուեա, ալելուեա, ալելուեա... զՀնդշափոր... զՔամհար քար... դէս դվէր... գլխվէր...
զԱղի ձոր,—ասաց երգելով մահտեսի Գալուստը, երեսը դէպի տէր-Զաքարը դարձրած ու նրան խնկարկելով՝ փոխելով տեղը. մինչև մաղթանքի

վերջը մէջ ընդ մէջ նա երգելով կրկնում էր ալելուն, տէրտէրի ասածներից կցկտուր յաւելուածներ անելով փոխում տեղն ըստ աշխարհի կողմերի, ինչպէս այդ սահմանուած է մաղթանքի համար. տէրտէրն էլ համապատասխան կերպով փոխում էր տեղը ու կանգնում խնկարկուի դէմ ու դէմ։

Տէր-Զաքարը շարունակեց, ուղղելով վշտով ու զայրոյթով տոգորուած հայեացքը մերթ դէպի երկինքը, մերթ դէպի Քարկապի լայնարձակ հանդի այլ և այլ կողմերը՝

Դէն դվէր, դէս գլխվէր, ետ դրեա՛, ձորն ու վեր, կեռ ու մեռ
Թավի՛ շատ զկարկուտ և զսելաւ ու դարձրու զանապատ՝
զՄաթունց հողը, զխմհատս Վերդիի, զարտօրայս Քիքունց և զՍայունց մեծ Թալայ
Ու զամենայն արտս ու արօտս բազմամեղ ժողովրդի Քարկապայ,
Որ մոռացել է իսպառ զքեզ ու քո դատաստանն ահեղ...
Ամէն, ալելուեա՛, ալելուեա՛, ալելուեա՛... աւերեա՛ զարտօրայսն Քիքունց և Սայունց... ու ժողովրդի բազմամեղ Քարկապայ... ետ դրեա՛, ձորն ու վեր...
Դէն դվէր, դէս գլխվէր, կեռ ու մեռ, հարերդա տարտարոս թող դառնան
զԲաբի հողք և զԱրմօվ. զԲակեր և զՄալեր, զխոտհարքներ, զարօտներ,
զՇլկլտնի, Սլկլտնի, զԿեռ հողեր ու զամենայն դեարադիւլակս ու թումբ ու փոսս այն.
Առաքեա՛ զկարկուտ և զսելաւ ու քանդեա՛, աւերեա՛՝
զՇամիձոր, զԱմիրվար, զԶէյրաթ, զԾլծլան, զՊլպլան,
Թող բուսնեն անդ միայն կռոտնի, բլդրդան,
Որ ոչխարք ոչ ուտեն, որից նրանք կոտորուեն...

Ամէն, ալելուեա, ալելուեա, ալելուեա...զՊլպլան...
Թող բուսնեն անդ միայն կռոտնի, բլդրդան...
զԾլծլան... բլդրդան, որ ոչխարք ոչ ուտեն...
Դէն դվէր, դէս գլխվէր, ձորն ու վեր, կեռ ու մեռ,
Ետ դբետ, հարերդա դէն դիեր զկարկուտ թող շատ գայ
Ու քանդի, աւերի զարտօրայսն Տօմբրունց...

—Ա՛ տէր, քեզ մատաղ,—ընդհատեց տարօրինակ մաղթանքը մահտեսի Գալուստը,—Տօմբրունց արտերի անունը տալ մի, նրանց համար ցասում մի ուզիր. նրանց խեղճ եկ, փրկի. ահը նրանք իմ խնամիքն են. բան չի գալ. աղջիկս նրանց տանն ա. նրան էլ ես իր խիզանով զրկում ահը։

—Ես էստեղ խնամի-ճամի չեմ ճանաչում. Աստծու ահեղ ու արդար դատաստան ա կատարւում էստեղ. քարկապեցիները բոլորն էլ մեղաւոր են, բոլորն էլ պէտք ա պատժւեն...

—Ա՛ տէր, կարգիդ մատաղ, խնամիներիս խեղճ եկ։

—Բա ցասման պատարագի օրը քո խնամիները, որոնք գիւղի անւանի, համփա մարդկանցից են, դիփի գլխաւորներն են համարեա, էն ինչու չէին իրանց տէրտէրին ու տանուտէրին ստիպում, որ մեզ կանչեն։

—Ինչ որի ա, ա տէր, բաշխի նրանց. ներողութին արա. աղջկանս ու նրա հրեխանցը գոնէ խեղճ եկ։

—Չէ, բաշխիլ չի պտեմ. նրանց ամենից շատ պըտեմ պատժիլ, ամենից շատ. նրանք մեծ օջաղ են, մեծ տուն են, պէտք ա կուճուր տուն շինեմ նրանց...

—Ա՛ տէր, քեզ մատաղ, ինձ խաթրն արա. Տօմբրունց տունը քանդիլ մի. նրանք, առանց էն չի, մեզ լաւութիւն կանեն, լաւ խալխն են։

—Չէ, քանդիլ պտեմ, քանդիլ։

—Ա՛ տէր, էդ սուրբ կարգիդ մատաղ գնամ ես. իմ ծերութեանը գոնէ խաթրն արա. ես քեզ խնդրւում

եմ, տէր հայրը,—ասաց դողդոջուն ձայնով մահտեսի Գալուստը, բռնելով իր ալեոր բռնոթոտ միրուքից։

—Դէ լաւ, լաւ,—ասաց տէր-Զաքարը,—էդքան որ խնդրւում, մունաթ ես անում, ծերութեանդ խաթրն եմ անում, Տօմբրունց ներում եմ, նրանց արտերը փրկում եմ. ամա ասա, որ լաւութիւնս մոռանան ոչ հա. հասկացրու նրանց։ «Տէր, փրկեա՛ ու պահպանեա՛ զարտօրայսն Տօմբրունց»,—ասաց տէր-Զաքարը, հայեացքն ուղղելով դէպի վեր։ Հիմի գոհ ես,—դարձաւ նա մահտեսուն։

—Հա՛, ա՛ տէր, փառաւոր ըլես. Աստուած քեզ կարգի ու պատարագի պահի։ Ես Տօմբրունց կասեմ, կը հասկացնեմ նրանց, թէ ինչ լաւութիւն ես դու արել, ոնց ես Աստծու բարկութիւնը հեռացրել նրանցից։ Նրանք կը շահեն, կը պատւեն քեզ, լաւ կը շահեն. միամիտ կաց։

—Դէ, շարունակի. բուրվառ արա՛ ու ձայն պահի,—ասաց տէր-Զաքարը։

Մահտեսի Գալուստը շարունակեց բուրվառ անել ու ձայնակցել. տէր-Զաքարն էլ շարունակեց իր ահաւոր մաղթանքը։ Նա մանրամասնօրէն թւում էր քարկապեցիների արտերը, խոտհարքները, արօտավայրերը, ագարակները, այգիներն ու բանջարանոցները ու աղերսում երկնքից նրանց համար կարկուտ ու ամեն տեսակ չոր ու ցաւ։ Քամանդի գագաթին մօտ մի ժամաչափ էլ լսւեց անընդհատ՝ «...Դէն դվէր, դէս գըլխվէր, հարերդա ձորն ու վեր, ետ դբետ, կեռ ու մեռ աւերեա՛ ու քանդեա՛ զարտօրայս, զարօտս, զխոտհարքս, զագարակս ու զայգիս բազմամեղ ժողովրդի Քարկապայ...»

IV

Իրիկնաժամից քիչ առաջ մտերիմ բարեկամները իրանց գործը կատարած վերադարձան գիւղը։ Ճանապարհին պատահող գիւղացիները, իմանալով, որ տէր-տէրը գնացել է մաղթանք կատարել սարին (մանրամասնութիւնները ոչ ոք նրանցից չը գիտէր դեռ), իրանց անկեղծ շնորհակալութիւնը, սրտաբուղխ երախտագիտութիւնն էին յայտնում նրան, որ առանց մատաղի, ցամաք հաց ուտելով, ինքնաբերաբար բարձրացել է սարերը՝ այնտեղ ժողովրդի ու աշխարհի համար Աստծու ողորմութիւնն ու գթութիւնը հայցելու...

«Կարգիդ մատաղ գնանք, ա տէր, կարգիդ. դու ես մեզ պահում, դու միայն. քո աղօթքներով ենք մենք ապրում... Եթէ դու չաղօթես մեզ համար, Աստուած մեր գլխին կը խռովի, նրա բարկութիւնը մեզ կը բռնի, ու մենք հող ու մոխիր կը կորչենք, սոված-ծարաւ կը կոտորուենք. փառաւոր ըլես դու, ա տէր, փառաւոր», ասում էին սաստիկ զգացուած երախտագէտ գիւղացիները ու համբուրում տէր-Զաքարի բռնոթոտաջը։

Պատահող գիւղացիների մէջ լինում էին նաև քարկապեցիներ. նրանք էլ նոյնն էին ասում ու նոյնն անում։ Տէր-Զաքարը բոլորին էլ անխտիր օրհնում էր։

Վերադառնալով գիւղը, տէրտէրն ու ժամկոչը գնացին եկեղեցի, երեկոյեան ժամն ասացին ու հանգիստ խղճով գնացին տուն։ Երբ նրանք բաժանուում էին իրարից, մահտեսին ասաց տէր-Զաքարին, ցոյց տալով երկինքը՝

—Ա՛տէր, մտիկ տուր մի. հրէ հա. Քարկապի սարերի վրայ սև-սև թխպեր են երևում. տեսնում ես։

—Տեսնում եմ, տեսնում. Աստծու պատիժն էն ա հա, կամաց-կամաց հասնում ա նրանց... Առանց ինձ ցասման պատարագ են անում, օխտը տաւար, երեսուն ոչխար են մորթում. հէրիքը տէր-Սարգսին են ուտացնում. թող հիմի Աստծու ահաւոր ցասումը դարձնեն իրանցից, տեսնեմ՝ ոնց են դարձնում։

V

Զուգադիպութիւնը զարմանալի էր ու սոսկալի. նոյն գիշերը Քարկապի հանդին սաստիկ կարկուտ եկաւ ու աւերեց, ոչնչացրեց նրա արտերի ու խոտհարքների մեծ մասը։

Խաչաշէնը լաւ պրծաւ. նրա արտերն անվնաս մնացին բոլորովին։ Կարծես ինչ-որ չար ոյժ բոլոր հարուածները դիտմամբ ուղղել էր խեղճ քարկապեցիների դէմ։ Խաչաշէնցիք իրանց փրկութիւնը ամբողջովին վերագրում էին իրանց տէրտէրին։ Նրա ինքնաբերաբար սար գնալն ու այնտեղ մաղթանք կատարելը յայտնի էր դարձել ամբողջ գիւղին։ Տէրտէրի ձեռքերն ու փեշերը համբուրում էին գիւղացիք։ Նրա ժողովրդականութիւնը միանգամից կրկնապատկուեց, տասնապատկուեց. առաջ էլ նրան շատերը սուրբ էին համարում, բայց այդ անգամ բոլորովին սրբացրին. ոչ ոք այդ բանի դէմ հակաճառել չէր համարձակւում այլևս։ Ժամկոչ մահտեսի Գալստի հօրն էլ օղորմի էին տալիս անդադար, որ նա էլ, չը նայած իր ծերութեան, տէրտէրի հետ ոտով բարձրացել էր սարը՝ գիւղը կորստից փրկելու համար։ «Թեզ արքայութիւն ըլի, Գալուստ ապէր,—ասում էին նրան,—քո հօրն օղորմի. եթէ տէրն ու դու չը գնայիք սարը, կարկուտը մեր տուն ու տեղն էլ կը քանդէր, ոնց քարկապեցիներինը քանդել ա։

Բոլորն էլ մնացել էին զարմացած, ապշած՝ թէ ինչ պատճառից էր քարկապեցիներին այն ինամը հասել, էն էլ հազիւ երկու օր ցասման պատարագից անցած. պատճառն ինչ էր, որ Աստուած չընդունեց նրանց պատարագն ու մատաղները. չէ՞ որ ամեն տարի ընդունում է, չէ՞ որ տասը, քսան տարի կը լինի, ինչ քարկապեցիների գլուխն այդպիսի օյին չէ եկել։ Տէր-Զաքարն ու մահտեսի Գալուստը լուռ էին դեռ։ Ժողովուրդը հաղար ու մի ենթադրութիւն էր անում ու վերջ ի վերջոյ վերագրում դժբախտութիւնը Աստծու անըմբռնելի տնօրինութեան, որի գութը շարժելու ու աչքը դէպի իր ստեղծածները քաղցր պահելու համար պէտք է շատ ապաշխարել, շատ պատարագներ ու մատաղներ անել...

Քարկապը սուգ ու շիւանի մէջ էր. ամեն տան ողբ էր լսւում, աղի արցունք էր թափւում. կորուստը անչափ մեծ էր ու անփոխարինելի, անօրինակ համարեա. արտերի մեծ ու ամենաընտիր մասը հողի հետ հաւասարել էր։ Նոյն վիճակին էին ենթարկւել նաև Տօմբրունց արտերը, որոնց համար տէր-Զաքարը իր ժրաջան ժամկոչի ու դպիրի թախանձագին խնդրանօք առանձնակի դիմում արաւ ում հարկն է ու փրկութիւն հայցեց։ Քարկապեցիների դժբախտութիւնը անտանելի էր վերին աստիճանի։ Մեծերը երանի էին տալիս փոքրերին, մանուկներին, որոնք հասկացողութիւն չունէին տեղի ունեցած աղէտի մասին ու խաղում էին ըստ սովորականին անհոգ։ Կանայք խմբերով գնում էին տապալւած արտերին մտիկ տալիս ու սուգ անում նրանց վրայ։ Նրանց աղիողորմ ձայներից քիչ էր մնում, թէ քարերն անգամ արտասւեն. ամեն տեղ սուգ էր՝ թէ գիւղում, թէ դաշտում, թէ սարում, թէ ձորում։ Քարկապեցիները թւում էին իրանց մեղ-

քերը, ծեծում իրանց գլուխները ու ողորմութիւն, գթութիւն ու փրկութիւն խնդրում Աստծուց մնացած արտերի համար։

—Դժբախտ դէպքից երեք օր հազիւ էր անցել, երբ հուչակաւոր մաղթանքի մանրամասնութիւններն ու իսկական նպատակը յայտնի դարձան նախ Խաչաշէնում, ապա Քարկապում ու շրջակայ միւս գիւղերում։ Մահտեսի Գալուստը տէր-Զաքարի թոյլտուութեամբ, որն օգտւեց դէպքից իր «ահաւոր» ոյժը ժողովրդին ցոյց տալու համար, պատմեց ամեն բան։ Ինքը տէրտէրը ոչ ոքի ոչինչ չէր ասում. նա ժամ էր գնում գալիս լուռ, լուրջ, խորհրդաւոր ու ահաւոր դէմքով։ Ժողովուրդը, այդ բանն իմանալուց յետոյ, տեսնելով նրա մէջ մի տեսակ գերբնական սոսկալի ոյժ, խորին ակնածութեամբ նայում էր նրան, ի սրտէ «օրհնեա, տէր» ասում ու դողդոջուն շրթունքներով համբուրում նրա բռնոթոտ աջը։

Խաչաշէնցիները մեղադրում էին քարկապեցիներին, անխնայ դատափետում էին նրանց անհեռատեսութիւնը, ապերախտութիւնն ու յիմարութիւնը, որ իրանց «տէրի» պէս սուրբ մարդին արհամարհել են, ցասման պատարագին դիտմամբ չեն հրաւիրել ու այդպիսով իրանց տներն իրանց ձեռքերով քանդել են, իրանց գլխներին զօռով Աստծու ցասում են բերել... Կային և այնպիսիներն, ի հարկէ, որոնք մեղադրում էին տէր-Զաքարին ու ասում իրանք իրանց, կամացուկ, ծածուկ՝ «Գլուխդ մեռնի, էդ գլուխդ. ինչ անենք, որ քեզ կանչել չեն. քո կեանքում խրիկ ես կերել ու խմել Քարկապում. մի սուրու տաւար ու ոչխար կըլես կերած էնտեղ. կէնտ երկու հէրի համար խեղճ մարդկանց տներն ինչու ես քանդել, ա դու օձի միս ուտես հէրիների տեղ»։

Այդպիսի ձայները հատ ու կտոր էին ու բացարձակ չէին լսւում. այդպիսիները հրապարակով նոյնպէս մեծարում էին տէր-Զաքարին ու նոյն իսկ սրբերի կարգում դասում նրան, այնքան բարձրացել էր նրա հեղինակութիւնը Բամանդի գագաթին տեղի ունեցած հրաշագործ մաղթանքից յետոյ։

VI

Բարկապում երբ իմացան տէր-Զաքարի կատարած մաղթանքի մանրամասնութիւնները, աննկարագրելի զայրոյթով բռնկուեցին բոլորն էլ. անէծք, նզովք ու սպառնալիքներ էին լսւում նրա հասցէին ամեն քայլափոխում, ամեն տան. մեծ ու փոքր, մայր ու մանուկ հէնց մի ձէնի անիծում էին նրան։

«Քո տունը քանդուի քո գլխին, ոնց մեր տները քանդել ես, ա՛ անաստուած,—ասում էին զայրացած քարկապեցիները տէր-Զաքարի հասցէին,—երկու հէրի համար էսհէնց օյին կը դնեն սաղ գեղի գլխին, որ դու դրել ես... Ըհ, տէր-Զաքար, հոգիդ դժոխքումը դաղ-դաղ ըլի, հոգիդ. մարդ էդքան անխղճմտանք կըլի՞։ Մեր աղ ու հացը քեզ քոռացնի. քանի-քանի անգամ ես մեր շինու�ը կերել ու խմել. բա իսկի մտիդ չի՞. որ լաւ հաշիւ անենք, քիչը հարիւր գլուխ տաւար կերած կըլես քո տիրացուներով. դեռ խուրդա հայվանը՝ հաւը, վերցակը, գառը, ուլը, ոչխարն ու էծը՝ չը հաշուած... Մի կէնտ անգամ զրկուեցիր կեր ու խումից ու վեր կացար գնացիր Բամանդի գլխից սաղ գեղը քանդեցիր, քարուքանդ արիր. բա քեզ հոգի ու խըղճմտանք չունես, ա՛ գլխամէ՞ռ, այ հարամ ըլի՞ քո կարգը քո գլխին, հարամ...»։

Ընդհանուր զայրոյթը, կատաղութիւնը չափ ու

սահման չունէր։ Երկու հարևան գիւղերի մէջ հեշտութեամբ կարող էր արիւնահեղ ընդհարում պատահել տէրտէրի պատճառով. գիւղերից մինը, Խաչաշէնը, համարում էր նրան սուրբ, իմաստուն, «զօրաւոր», միւսը՝ Բարկապը,—անաստուած, անխղճմտանք, անհոգի...

Չը նայած դրան Բարկապում կային մարդիկ, որոնք այլ կերպ էին նայում տէր-Զաքարի վրայ. անօրինակ դէպքն ստիպում էր նրանց ակամայ համարել Խաչաշէնի տէրտէրին գերբնական ոյժով օժտուած մարդ, որը կարող էր նրանց աւելի մեծ ՁՆասներ հասցնել ու որին այդ պատճառով պէտք էր սիրաշահել, գրաւել... Այդ մարդիկն էին գիւղի մեծերը, ծերերը, նահապետները, հասարակութեան հին, փորձած աւագ անդամները։ Նրանք մեծ, աննկարելի սխալ էին համարում տանուտէրի ու քահանաների կողմից տէր-Զաքարին ցասման պատարագին չը հրաւիրելը. նրանք համոզուած էին, որ կարկուտը չէր լինի, եթէ այդ սխալը գործած չը լինէին, եթէ տէր-Զաքարը նախկին տարիների պէս մասնակցէր պատարագին, ինքն անէր պատարագը, այլ ոչ ծովաշէնցի տէր-Սարգիսը, ու մատաղներից իր անուն ու դիրքին վայել բաժին տանէր իր համար... Մի քանի օր անցնելուց յետոյ, երբ գրգռուած կրքերը մի քիչ հանդարտուեցին, ծերերը ժողովի հրաւիրեցին գիւղի հասարակութիւնը. կըշտամբեցին տանուտէրին, քահանաներին ու իշխաններից նրանց, որոնք առաջիններին թոյլ էին տուել այն մեծ սխալը գործելու, ու յետոյ առաջարկեցին առանց երկար ու բարակ մտածելու նոր մատաղներ մորթել ու այդպիսով գրաւել, սիրաշահել տէր-Զաքարին, խնդրել, աղաչել նրան՝ գալ Բարկապի սարերին մաղթանք կատարել, Աստծու գթութիւնը հայցել, նրա պայծառ աչքերը դէպի Բարկապ դարձնել՝ մնացած

արտերը, այգիներն ու պարտէզները գոնէ կորստից փրկելու համար...

Ժողովին ստւար բազմութեամբ ներկայ գտնւող երիտասարդները, որոնց հետ չէր խօսւում այդ սև օրերին, որոնց մեծերը, խելքահաս մարդիկը, զօռով էին պահում, խնդրելով, աղաչելով, հայրաբար կշտամբելով, զինաթափ անելով մի կերպ, զայրոյթով պատասխանեցին ծերերի այդ առաջարկութեան։ Դեռ այդ ժողովից առաջ, տէր-Զաքարի մաղթանքի մանրամասնութիւնները լսելուն պէս, նրանցից շատերը, անզուսպ զայրոյթով բռնկւելով, զինւեցին՝ Խաչաշէն գնալու հաստատ մտադրութեամբ, այնտեղ տէրտէրին ու նրա դպիրին թիքա-թիքա կոտորելու համար, մեծ դժւարութեամբ նրանց զինաթափ արին ու հանգստացրին։ Մինչև այդ ժողովի օրը այդպիսի տեսարաններ մի քանի անգամ կրկնւեցին. ծերունիների առաջարկին երիտասարդները պատասխանեցին նոր սպառնալիքներով. մի քանիսը նոյնիսկ անպատիւ արին, հայհոյեցին ծերերին. ձեռքերը դէպի դաշոյններն ու փեշերի տակ պահած ատրճանակները տարան. սպառնացին իսկոյն և եթ զինւել հրացաններով, մօսիններին անունը տւան նոյն իսկ, ու գնալ տէր-Զաքարի ու մահտեսի Գալուստի գլուխները բերել՝ փոխանակ նրանց առօք-փառօք հրաւիրելու...

—Գժւե՞լ էք դուք,—ասացին ծերերը,—պակասը դրանով կը թամամէք. դրանով դուք գեղը շինիլ չէք, այլ կը քանդէք. որ դուք էդ էք ուզում, ա՛ խիզան, առաջ մեզ լօխիս, էս գիւղումը ձեզանից սաւահի ինչ մարդ կայ՝ մեծ ու կուճուր, մէր ու մանուկ՝ կոտորեցէք, գետն ածեցէք ու նոր գնացէք Խաչաշէն ձեր ասածն անելու... Էդ ի՞նչ ա անցկենում ձեր մտքովը, ո՞ւմ էք ուզում սպանել—քահանայի ու մղդսո՞ւ. գիտում էք

ո՞վքեր են նրանք,—Աստծու զուլլուղչիներ, Աստծու սպասաւորներ. մինն օծեալ ա, միւսը տեսաճեալ. նրա ձեռները Քրիստոսի ուրան սուրը գերեզմանի վրայ են տեսաճւել։ Եթէ Աւտւած մի արասցէ, մի արասցէ, դուք բոլորովին խելքներդ կորցնէք ու ձեր ասածն անէք, էն ժամանակը մենք կը կարանք իսկի Աստծու հետ խօսա՞նք, նա մեր ազօթքը, մեր մատաղը, մեր պատարագը կընդունի՞, կը կարանք նրա պայծառ երեսին մտիկ տանք գոնէ՞, ի՞նչ էք գիտում. դեռ բախէք էք. աստւածային բարկութիւնը էնհէնց կը բռնի մեզ, որ մեր հանդին մի հատ հասկ, մի հատ կանաչ խոտ, մեր բաղերում, բաղչաներում մի կանաչ տերև անգամ չի մնալ. ոչ մի շնչաւորի համար մեր շինումն էլ ապրուստ չի ճարւիլ... Էդ բաւական չի. մենակ Աստծու բարկութիւնը չի բռնիլ մեզ, թագաւորի բարկութիւնն էլ կը բռնի, մեր ողորմած թագաւորի. որ դուք գնաք Խաչաշէն տէր-Զաքարին ու մահտեսի Գալուստին սպանելու, խաչաշէնցիք հու տաւարի պէս տաղ չեն անելու. իրար կոտորիլ պտէք ու արիւնով ու սուգ ու շիւանով երկու շէնը լցնէք... Մեղաւորը դուք, մենք, քարկապեցիներս կըլենք, ի հարկէ, մեզ մեղաւոր կը համարեն, մեր փչացած, մեր տաքացած արտերին մտիկ չեն տալ. շինիս վրայ պրիստաւ կը գայ, սլեստչի, նաչալնիկ կը գայ, զազախ կը գայ. շինումս զեկուցիա կը դնեն... Գետը մեզ տանի, ո՞նց կանենք էն վախտը, ո՞նց. զեկուցիէն կարկուտից բեթար, կարկուտից զուլում ցասում ա. էն փիս տարիներին տեսել ու քանդւել ենք հու, բա էն մեզ բաւական չի՞, ա՛ ձեզ մատաղ. խի՞ էք ուզում ողորմած Աստծու ու ողորմած թագաւորի աչքից մեզ մին էլ գցել, նրանց բարկութինը մին էլ մեր խեղճ շէնի վրայ վէր բերել...

—Դէ լաւ, դէ լաւ,—ասացին հանգստացած երի-

տասարդները,—մեր ասածն էլ անիլ չենք. թողէք ձեր ասածն ըլի. ընդունում ենք։

—Ձեզ մատաղ,—շարունակեցին խրախուսված ծերերը,—տէր-Զաքարը զօրաւոր մարդ ա. նրա խնդրուածքը, նրա աղօթքը Աստուած միշտ ընդունում ա, լսում ա. արաշտ տարիքը երբ նա գնում ա Արթոն սարը թոռ, անձրև բերելու, միշտ բերում ա. լոխիդ էլ յայտնի ա էդ հու. ուրիշ երէցներ էլ են գնում Արթոն, չէայ վարդապետներից էլ ա գնացող ըլում, ամա շատերը նրանցից շատ վախտ դարտակ են գալիս էնտեղից. տէր-Զաքարը ուրան օրումն Արթոնից դեռ դարտակ եկած չի. սուրբ նահատակի գերեզմանից քարը վերցնում ա, սարի լանջում դվէրում թէ չէ, Աստծու ողորմութիւնը ձեռաց թափւում ա աշխարհիս վրայ, անձրևն սկսւում ա ու ջրում արար աշխարհը... Ասում էք՝ տէր-Զաքարը Աստծուն խնդրւել ա կարկտի մասին. Աստուած էլ մեր մեղքը տեսնալով, էն մեղքը, որ մենք նրա պէս սրբակրօն մարդին մեր ցասման պատարագին կանչել չենք, կղնւել ա մեզ վրայ, նրա խօսքը կոտրել չի, կարկուտ ա ուղարկել ու մեր տնեքը քանդել... Դէ որ նա էդքան զօրաւոր ա, որ էդ դուք ձեր աչքով տեսնում էք, էլ ինչ կարող ենք մենք անել նրա դէմումը։ Իմաստուն Աթալարն ասում ա, որ մի ձեռք կարողանում չես կտրես, էն ձեռքը, որը քո տունը ափաշկարայ քանդում ա, պէտք ա պաչես, ճակատիդ դնես... Տէր-Զաքարի ձեռքը մենք պէտք ա պաչենք ու մեր ճակատներին դնենք, ա որդիք. ուրիշ կերպ նրանից փրկութիւն չունենք. եթէ նրա քէֆին մին էլ դիպչենք, նրան չը շահենք, էլի Աստծու կրակը գլխներիս կը թափի, մեզ հող ու մոխիր կը կոլցնի թամամ... Էն մարդն Աստծու կշտին խաթրն ունի, մեծ խաթրը... Ուրիշ ճար չունենք. պէտք ա գնանք

նրա առաջին մեղայ գանք, մեր սխալմունքը վիզ ունենք ու խնդրենք, որ գայ մեր սարերում մաղթանք կատարի, մեր աղ ու հացն ընդունի՝ մեր մնացող կարողութիւնը ցասումից փրկելու համար։ Քանի տէր-Զաքարը մասնակցել ա մեր ցասման պատարագներին, մեր գլուխն էսհէնց օյին չի եկել...

Ծերունիներին ոչ ոք չը հակաճառեց այլ ևս։ Երիտասարդներն իրանց լռութեամբ հասկացրին, որ միանգամայն համաձայն են նրանց հետ ու ընդմիշտ հրաժարւել են իրենց չար մտադրութիւնից։ Ժողովուրդը միաձայն որոշեց՝ Քարկապի հասարակութեան կողմից պատգամաւորութիւն ուղարկել տէր-Զաքարի մօտ, ներողութիւն խնդրել նրանից ու հրաւիրել, խնդրել, որ իր դպիր մահտեսի Գալուստի հետ միասին հետևեալ կիրակի օրը բարձրանայ Քարկապի սարերը ու նրա ամբողջ հասարակութեան ներկայութեամբ մաղթանք կատարի այնտեղ ու ընդունի քարկապեցիների աղ ու հացը։ Պատգամաւորութիւնը, որը կազմված էր քահանաներից, տանուտէրից ու մի քանի աչքի ընկնող իշխաններից, գնաց Խաչաշէն, տեղական իշխանաւորների ու անուանի մարդկանց միջնորդութեամբ ներկայացաւ տէր-Զաքարին, որն սկզբում նրանց անունն անգամ լսել չէր ուզում։ Ներողութիւն խնդրեց պատգամաւորութիւնը բարեկրօն հօրից, խնդրեց, որ նա իր զօրաւոր աջը տարածի նաև Քարկապի վրայ, ու հրաւիրեց առաջիկայ կիրակի օրը բախտաւորացնել Քարկապի հանդն ու հանդաստանը իր այցելութեամբ ու մաղթանք կատարել այնտեղ։

Տէր-Զաքարը ծանր ու բարակ նազ անելուց ու մարդարէների, առաքեալների ու հրեշտակների մասին բաւականաչափ խօսելուց յետոյ ներեց, բայց հրաւէրը չընդունեց. կտրականապէս մերժեց։ Խօսակցութեան

ընթացքում նա ի միջի այլոց ասաց, որ իր հռչակաւոր մաղթանքի նախընթաց գիշերը տեսաւ երազում Պօղոս առաքեալին, որն ասաց նրան՝ «Տէր Զաքար, այս քանի օրը մեծ աղէտ ա սպառնում աշխարհին. Աստծուն բարկացնողներ են եղել. Տիրոջ քէֆը բաբաթ լաւ չի... Արթուն կաց ու քո ժողովուրդը, քո գեղը պահի...»—«Դէ ես էլ կատարեցի երանելի առաքեալի պատուէրը, գնացի էս խեղճ շէնը, որը ձերի չափ հարուստ չի ու փարթամ, կարում չի ձեզ պէս ցասման պատարագներ անի, օխտը տաւար ու երեսուն ոչխար մատաղ անի, իմ մաղթանքով, իմ խնդրուածքով աստուածային բարկութիւնից, Աստծու ցասումից ազատեցի»—ասաց տէր-Զաքարը։ Ցետոյ ակնարկեց, որ նոյնը կարող էին անել և ուրիշ քահանաները՝ Քարկապի ու այլ գիւղերի. նրանք ևս կարող էին նեղութիւն կրել, բարձրանալ սարերը ու ժամանակին կատարած մաղթանքով առնել աղէտի առաջը, եթէ նրանց ուշն ու միտքը բևեռած լինէին երկնքի վրայ, այլ ոչ հէրինների, եթէ նրանք հոգով ու մտքով Աստծու ու նրա բարեխօս սրբերի ու հեզահոգի հրեշտակների մօտ լինեն միշտ, այլ ոչ այս նզովեալ բազմամեղ աշխարհում հէրի քնթիլիս... Եթէ նրանք մտքով երկնքումը լինէին, բարեգութ Պօղոս առաքեալը նրանց էլ կերևար ու կը հաղորդէր Աստծու բարկութեան մասին... Ակնարկը շատ պարզ էր ու շատ հասկանալի։ Պատգամաւորութեան կազմում գտնուող Քարկապի քահանաները կարմրեցին, հազացին, կոկորդ մաքրեցին, խօսելու, առարկելու փորձեր արին իրենց մտքում ըստ երևոյթին, բայց վերջ ի վերջոյ լուռ մնացին. խօսելու տեղն ու ժամանակը չէր...

Երբ պատգամաւորութիւնը վերին աստիճանի զգուշաբար ակնարկեց, որ մաղթանքն առանց մատաղ-

ների չի լինելու, որ այնտեղ ժողովուրդ, բազմութիւն է լինելու, որին բաւարարելու համար առնւազը եօթը հատ մեծատաւար պէտք է մորթել, որոնց հէրինները բացառապէս մաղթանք կատարող քահանայի տրամադրութեան տակ են լինելու, տէր-Զաքարը կակղեց քիչ-քիչ ու վերջապէս համաձայնեց կատարել բաղձալի մաղթանքը։

Հետևեալ կիրակի օրը մեծ հանդիսաւորութեամբ կայացաւ մաղթանքը, Քարկապի ամբողջ հասարակութեան ու հոգևորականութեան ու շրջակայ գիւղերի իշխանաւորների և ազդեցիկների ներկայութեամբ։ Մաղթանքի կատարման վայրն էր Քամհար-քար լեռան գագաթը, որը ամենաբարձրն էր Քարկապի սարերից։ Տէր-Զաքարն այնտեղ էլ անթիւ անգամ կրկնեց իր հռչակաւոր «Դէն դվէր, դէս գլխվէր, հարերդա ձորն ու վեր, կեռ ու մեռ, ետ դրետ, դէն գլխվէր»...դարձուածքը, աւելացնելով ցանքսերի, խոտհարքների, արօտավայրերի ու ագարակների յատուկ անունները, այն էական զանազանութեամբ սակայն, որ այս անգամ Աստծուց ողորմութիւն, գթութիւն, փրկութիւն ու բարիքներ էր հայցում նրանց համար, այլ ոչ ցասում, կարկուտ, հեղեղ ու ամեն տեսակ չոռ ու ցաւ։

Մատաղի միսն անչափ առատ էր. Քարկապի ջերմեռանդ, աստուածավախ ժողովուրդը մորթել էր եօթը տաւար՝ երեքը նրանցից արջառ, իսկ չորսը եզը։

Տէր-Զաքարն ու մահտեսի Գալուստը ոչ միայն լաւ կերան, կշտացան, այլ և հէրինների, կաշինների, գլուխների ու ոտների հարուստ աւարով վերադարձան Խաչաշէն...

ՔԵԶ ՉՆՉԵՑԻՆ

I

Յովհաննէս Մուրղուզեանը Իշխանաց վանքի հին փոքրաւորներից էր։ Տասնեակ տարիներ մնալով վանքում, ամենայն ջանասիրութեամբ ծառայելով նրան, նա անցել էր փոքրաւորութեան բոլոր աստիճանները ու վերջում ստանձնելով վանական տնտեսի պաշտօնը, վանահօր, բարեսիրտ Պօղոս հայր սուրբի աջ ձեռքն էր համարւում։ Ամեն բան Յովհաննէսն էր կարգադրում վանքում, ամեն ինչ նա էր տնօրինում. հմուտ ու փորձւած տնտես էր։

Վանքն ունէր տաւարի նախիր, ոչխարների հօտ, ընդարձակ ագարակ, վարելահողեր, խոտհարքներ, արօտավայրեր ու անտառներ։ Նա մի շէն օջաղ էր իր շրջակայ հայ ու թուրք գիւղերի համար. նրա բարիքներից գիւղացիք առատօրէն օգտւում էին։ Իշխանաց վանքը իր հին աւանդական հիւրասիրութեամբ մեծ ժողովրդականութիւն էր վայելում ոչ միայն հայ, այլև թուրք գիւղացիութեան շրջանում։ Յովհաննէսը իր տնտեսագիտական շնորհքով աւելի հարստացրեց, ճոխացրեց վանքը, աւելի բազմացրեց նրա բարիքները ու այդպիսով աւելի դարկ տւեց նրա ժողովրդականութեան։ Վանքն ու ժողովուրդը իրար համար յենարան, պահապան էին. երբ նա կարիք էր ունենում, երբ այս կամ այն պատճառով ձախորդութիւնների

մէջ էր ընկնում, ժողովուրդն առատաձեռնութեամբ օգնում էր նրան. երբ ժողովուրդն էր կարիք զգում, վանքն էր նրան օգնում. նրա շտեմարանները բացւում էին ժողովրդի համար։ Ամեն տարի վանքը շրջակայ ժողովրդից ստանում էր աւանդական տուրքը՝ իւղ, պանիր, ցորեն, գարի, կորեկ։ Այդ բոլորն ամբարւում էր վանական սեփական եկամուտների հետ միասին, գործ էր ածւում վանական պէտքերի համար ու կարիք եղած դէպքում բաժանւում ժողովրդին, կարիքաւոր գիւղացիներին։ Թուրք գիւղացիներից ունևորները ինքնաբերաբար մասնակցում էին աւանդական տուրքին՝ տարւայ բերքից, Աստծու տւած բարիքներից, նըւիրատուութիւններ էին անում վանքին. Իշխանաց վանքը նրանց համար ևս դարաւոր սրբութիւն է. որոշ տօներ կան, երբ նրանք էլ այնտեղ ուխտ են գնում ու մորթում մատաղներ։

Վանահայր Պօղոս հայր սուրբը մեծ յարգանք ու սէր էր վայելում թէ հայ և թէ թուրք գիւղական ժողովրդի կողմից։ Երկար տարիներ էին անցել նրա ալեզարդ գլխով։ Վանքի ապագան նրան մեծ մտատանջութիւն էր պատճառում. վանքում նա միակ վեղարակիրն էր. միաբանութեան միւս անդամները աշխարհական մարդիկ էին՝ մահտեսիներ, ծերացած ու հիւծւած, մեծ ու պստիկ փոքրաւորներ, ծառաներ. չը կար մի ուրիշ վարդապետ, մի աբեղայ գոնէ, որին նա պատրաստէր վանահայրութեան համար ու յանձնելով նրա հոգատարութեան հինաւուրց մենաստանը, իր հին, իր շէն հիւրասէր օջաղը, հանգիստ խղճով փակէր աչքերը՝ յաւիտենականութեան գիրկը մտնելու համար։ Հարկաւոր էր այնպիսի վանահայր, որը հաւասարապէս հմուտ լինէր թէ տնտեսական և թէ հոգևոր մասի մէջ։ Վանքի ծառայողներից ամենահմուտն

էր Յովհաննէս Մուրղուզեանը. բայց հմուտ, բանիմաց էր նա տնտեսական մասի մէջ. գրել-կարդալու հետ հեռաւոր ծանօթութիւն անգամ չունէր, թէև բերանացի գիտէր բոլոր աղօթքները, շարականները, ժամասացութիւնը, ինչպէս գիտէին այդ վանքի մահտեսիները, հինաւուրց փոքրաւորները։ Նա համարւում էր ոչ միայն լոկ տնտես, այլ և աւագ-դպիր, «այիր-բենի» հետ սակայն անծանօթ դպիր։ Մուրղուզեանը, չը նայած Պօղոս հայր սուրբի բոլոր ջանքերին, անգրագէտ մնաց։

Ութ տարեկան հասակում նա մտաւ վանք։ Յաջորդաբար կատարելով գառնարածի, հորթարածի, հովւի, նախրչու պաշտօն, նա միևնոյն ժամանակ դասեր էր առնում հայր սուրբից. ուտում, վայելում էր հեզութեամբ անթիւ, անվերջ հարւածներ. հայր սուրբը կամ իր օրհնւած աջն էր գործ ածում իբրև ազդու մանկավարժական միջոց, կամ իր հունի գաւազանը. ամեն առաւօտ Յովհաննէսը հարւածների տարափով լաւ մկրտւում էր ու յետոյ ժամագիրքը ծոցումը դրած, մտքում գիր ու գիրք հնարողի մեռել-կենդանը քաշելով, գնում իւր գառներն ու հորթերն արածացնելու։ Մուրղուզեանի գլուխը գետաքարի պէս դէմ էր կենում զօրաւոր հարւածներին, սակայն նրա ներսը ոչինչ չէր թափանցում այն իմաստութիւնից, որը դասախօսում էր նրան վանահայրը։ Այդ աշակերտութիւնը տևեց մօտ տասը տարի. այդ տասը տարւայ ընթացքում տասը տառ անգամ չը իւրացրեց Մուրղուզեանը։ Նա սովորեց ամեն բան անգիր, մեքենաբար, առանց մի խօսք անգամ հասկանալու իւր ասածներից. նա մեքենաբար սովորեց իւր անունն ու ազգանունը գրել, նրանց կազմող տառերը իրար ետևից շարել՝ առանց նոյն տառերը ջոկ-ջոկ,

առանձին, գրելու կարողութեան. այդ էլ յաճախ մոռանում էր. իւրաքանչիւր անգամ պէտք էր նրան ցոյց տալ տառը կամ գրիչը շարժելու ձևը, գրչի այս կամ այն կերպ շարժելը։

Պօղոս հայը սուրբը այնքան ժամանակ ոյժ ու եռանդ նւիրեց նրա կրթութեան, այնքան շօշափեց նրա գլուխն ու ուսերը իր աջով ու զաւազանով յանուն մի մեծ նպատակի, այն է՝ նրան պատրաստելու վարդապետութեան համար, նրան իր յաջորդը դարձնելու համար յանձնելու նրան այն օրհնւած հունի «կլուեչանը», այն զօրաւոր գաւազանը, որն անզօր գտնւեց Մուրղուզեանի բազմամեղ գանգը իմաստութեամբ լցնելու։ Տասնամեայ ապարդիւն ջանքերից յետոյ նա ձեռք վերցրեց իր այդ մտադրութիւնից ու թողեց Յովհաննէսին պարապել իր սիրած գործով, այն է՝ վանքի խաշնարածութեամբ ու տնտեսութեամբ։

II

Անցան տարիներ։ Պօղոս հայր սուրբը հասաւ խորին ծերութեան։ Յովհաննէսը բոլորեց իր երեսուն տարին. ամենաազդեցիկը դարձաւ վանքի ծառայողներից։

Վանահայրը յաճախակի վշտացած սրտով գանգատւում էր, որ իրանից յետոյ վանքն անտէր է մնալու, քանդւելու, քայքայւելու է առանց բանիմաց, տնտեսագէտ վանահօր։ Տնտեսագէտ բառը Յովհաննէսի մէջ կամաց-կամաց ծագեցրեց մի տենչանք, որը նա չէր համարձակւում յայտնի դարձնել ոչ ոքի. նա իրան մեծ տնտեսագէտ էր համարում, հետևաբար սկսեց համարել նաև ամենաարժանաւոր վանահայրացու։ Նրա մէջ վերջապէս յղացաւ մի բուռն ցանկու-

թիւն՝ ինչ միջոցներով էլ որ լինի, վարդապետ ձեռնադրել ու Պօղոս հայր սուրբից յետոյ դրաւել նրա տեղը Իշխանաց վանքում։ Կամաց-կամաց ակնարկներով նա յայտնի դարձրեց իր ցանկութիւնը վանքում գտնուող իր մտերիմներին ու շրջակայ գիւղերի ազդեցիկներին։ Վանական ծառայողների ու գիւղացիների մէջ քիչ-քիչ սկսեցին լսել ձայներ յօգուտ Յովհաննէսի ձեռնադրութեան։ վանահայրութեան ամենաարժանաւոր թեկնածուն էին համարում նրան. բոլորն էլ համոզուած էին, որ Պօղոս հայր սուրբից յետոյ միմիայն նա կարող է շէն պահել Իշխանաց վանքը, միայն նա կարող է պահպանել նրա ճոխութիւնը ու աւանդական հիւրասիրութիւնը։

Նկատելով այդ համակրութիւնը, Մուրզուզեանը որոշեց բանալ իր սրտի գաղտնիքը Պօղոս հայր սուրբին։ Յարմար բօղէի էր սպասում. հեշտ չէր այդպիսի լուրջ հարցի մասին Պօղոս հայր սուրբի հետ խօսելը։ Երկար ու բարակ մտածելուց յետոյ Յովհաննէսը որոշեց դիմել վանահօրը բարեկենդանի օրերին, երբ, ըստ հնաւանդ սովորութեան, վանքում երկու-երեք օրով աքեղաթող էր յայտարարւում. ամեն ոք կարող էր ազատ զւարճանալ, քէֆ անել, կատակել նոյն իսկ վանահօր հետ, թէև վանականներից հասակաւորներն էին միայն օգտւում այդ իրաւունքից։

Բուն բարեկենդանի շաբաթ օրը Յովհաննէս Մուրզուզեանը, լաւ կոնծելուց յետոյ, իրիկնաժամից առաջ գնաց մտաւ վանահօր խուցը։

Զը նայած աքեղաթողին, Պօղոս հայր սուրբը, որը կարդում էր մեծածաւալ «Ճաշոց» գիրքը, խոժոռ հայեացք ձգեց տնտեսի վրայ, հարցնելով՝

—Հը՞, ի՞նչ կայ, խէր ըլի։

—Խէր ա, հայր սուրբ, խէր ա,—ասաց Մուրզուզեանը,—քո Հանէսը ճիշտ ա վատ խաբարով եկած կուշտդ, որ հիմա գայ. իմ խաբարը միշտ խէր ա, միշտ բարի ա։ Մի զօրաւոր խնդիր ունեմ, հայր սուրբ... Վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ... Լեղուս զօրում չի, թա ասեմ... Ներիր զիս յանցաւորիս, ներիր բազմամեղիս,—ասաց Յովհաննէսն ու ծնկաչոք ընկաւ Պօղոս հայր սուրբի առաջին,—բէր մի աջդ պաչեմ, հայր սուրբ, բէր զօրաւոր աջդ համբուրեմ,—ասաց մի քանի անգամ իրար ետևից համբուրելով վանահօր աջը,—սրտիս խորհուրդը շատ ա մեծ, հայր սուրբ... Քիչ ա մնում թա սիրտս տրաքի, պատառ-պատառ ըլի, այնքան զօրաւոր ա էդ խորհուրդը...

—Լաւ, լաւ. ասա տեսնեմ ի՞նչ կայ, ի՞նչ ա պատահել քեզ հետ,—ասաց վանահայրը,—չը լինի՞ միտքդ փոխել ես, չը լինի՞ ուզում ես պսակւել, վերադառնալ աշխարհք, թողնել վանքը. փուչ կենդանի, երազումդ հարսն ես տեսել հը՞։

—Չէ, նզովւեն աշխարհ [illegible] որ հարսները,—ասաց Յովհաննէսը,—իմ միտքը բոլ[illegible] ժամանակ հրեշտակների հետ ա, այլ ոչ հարսների [illegible] ես ուզում եմ հրեշտակաց կարգը մտնել, հայր սուրբ, ուզում եմ հոգով նրանց հետ միանալ։

—Ո՞նց թէ. պարզ ասա. քեզ լաւ չեմ հասկանում։

—Էլ ի՞նչ ծածկեմ, հայր սուրբ. ուզում եմ ձեռնադրւել։

—Ի՞նչ, սարկաւագ։

—Ո՛չ, աբեղայ, վարդապետ։

—Գժւել ես, ի՞նչ ա,—ասաց բարկացած Պօղոս հայր սուրբը,—էնքան գինի ես խմել փուչ կենդանի, որ գլխումդ էլ խելք չի մնացել։ Քանի անգամ եմ ասել՝ էդ անտէրիցը քիչ խմի, քիչ լակի. օգտւել ես դէպքից, որ բարեկենդան ա, որ աքեղաթող ա ու

զահրիմար գինին էնքան դվէր ես ածել, որ գլխումդ մի հատ «այիբ» անգամ չի մնացել։ Կեանքս մաշեցի քեզ կարդացնելով. «այիբ-բենն» անգամ կարդին չը սովորեցիր. անունդ ձեռք քաշել չը գիտես, կտրած անունդ. պէտք ա օխտը սհաթ քեզ քօռի պէս դէս ու դէն տանեն, որ կարողանաս անունդ ու ազգանունդ գրես... գնա, անիրաւ, գնա, կորի աչքիցս. վէրքերս նորից մի. ես ուզում էի գաւազանս քեզ կտակել, վանահայրութիւնը քեզ թողնել, բայց դու թերուս մնացիր։

—Հայր սուրբ, ես ամեն բան անգիր գիտեմ,—ասաց Յովհաննէսը,—դու ինձ տար սրբազանի կուշտը, էնտեղ ինձ վարդապետ շինի ու տես՝ ինչեր եմ անում է, ինչեր. ինչիս ա պէտք գրել-կարդալը, երբ ամեն բան, ինչ աւետարանում, ժամագրքում, մաշտոցում ու ուրիշ սուրբ գրքերում գրած ա, անգիր առռալի ասում եմ։ Երբ սուրբը կարդին ինձ արժանացնես, ես թամամ իմաստուն կը դառնամ՝ իմաստուն։

—Քեզ պէս իմաստունին ես թաղեմ, ես. «այիբ-բենն» ինչ ա, որ չը արեցիր, ա անիրաւ։

—Այիբ-բենն ինչիս ա պէտք, երբ «ճաշոցի» պէս մեծ գիրքը, հլէդ է, էդ որ առաջիդ ա դրած, անգիր գիտում եմ։

—Տաղ արա, ձէն ու ծպուտդ կորի, թէ հու չէ էս «ճաշոցը» վեր կունեմ էնպէս գլխովդ դամ, որ կարկաժդ օխտը կէս կը լինի. ինչ ա, կարծում ես թա վարդապետութիւնը չորանութիւն ու տաւարածութիւն ա. գնա, գնա, նզովեալ, գնա կովերդ կթէ, տնտեսութիւնդ արա։

—Հայր սուրբ, խնդրւում եմ, հայր սուրբ. մեծապատիւ խնդրւում եմ. առաջներիս Զատկին ինձ տար սրբազանի կուշտը ու վարդապետ շինի։

—Գնա, ռադ ըլի գլխիցս. ինձ խայտառակել ես ուզում, ինչ ա, անզգամ։

—Հայր սուրբ, կարդիդ մատաղ, ինձ բէյմուրազ մի անիր, ինձ վարդապետ շինի, վարդապետ. բա էսքան տարի զուր եմ վանքին ծառայել։

—Կորիր անիրաւ, դուրս,—ասաց խիստ բարկացած Պօղոս հայր սուրբը, երկու ձեռքով բռնելով առաջին դրած «ճաշոցը», սպառնալով բոլոր ոյժով իջեցնել մեծածաւալ սուրբ գիրքը Մուրղուղեանի ըմբոստ, անհնազանդ կարկաժին։

Յովհաննէսը, մտաբերելով իր վաղեմի աշակերտութիւնը, հեռու անցեալի այն դառն օրերը, երբ «ճաշոցը» երբեմնակի ստանձնում էր «հունի կըռեչանի», դաստիարակիչ գաւազանի դերը ու ամեհի ծանրութեամբ իջնում նրա հնազանդ բազմաչարչար գլխին, շտապով դուրս գնաց խցից ու ազատուեց այդպիսով «ճաշոցի» հարուածից։

III

Այդ անաջողութիւնը չը յուսահատեցրեց Յովհաննէսին։ Նա լաւ գիտէր, որ Պօղոս հայր սուրբը բարի է, անչափ բարի. գիտէր և այն, որ նա վանահայրութեան համար ուրիշ թեկնածու չունի։ Մուրղուղեանը առանց ակնարկների, առանց տատանուելու բացից իր միտքը վանական ծառայողներին. պատմեց նրանց իր այցելութեան ու անաջողութեան մասին։ Նրանք խոստացան միջնորդել։ Նրանցից հասակաւորները դիմեցին վանահօրը, բայց ցանկալի աջողութիւնը նրանք էլ չունեցան. հայր սուրբը նրանց վրայ էլ բարկացաւ։ Յովհաննէսն ու վանականներն սկսեցին շրջակայ գիւղացիներին դրդել, որ նրանք միջնորդեն ում մօտ

հարկն է. նոյն իսկ դիմեցին այն ազդեցիկ Թուրքերին, որոնք մտերմական յարաբերութիւններ ունէին Պողոս հայր սուրբի հետ։

Շուտով վանահօրը ներկայացաւ մի մեծ պատգամաւորութիւն շրջակայ գիւղերից. նրա մէջ կային քահանաներ, տանուտէրներ, գիւղական իշխաններ. կային նաև Թուրք աղասիկալներ։ Բոլորն էլ մատնացոյց էին անում այն, որ Յովհաննէսը ամէն բան անգիր գիտէ. հետևաբար նա մեծ իմաստուն է, միանգամայն արժանի իւր մեծ ուսուցչին, Պողոս հայր սուրբին. նրան համարում էին այդպիսով Պողոս վարդապետի ամենաարժանաւոր յաջորդ։ Ժողովրդի ներկայացուցիչների խնդիրքը Պողոս հայր սուրբը անուշադիր թողնել չը կարողացաւ. ձայն բազմաց ձայն Աստծոյ է. պէտք էր լսել բազմաց ձայնը. նա լսեց ու զիջեց։ Պատգամաւորութեան նա առաջարկեց մի խնդրագիր կազմել թեմական առաջնորդի անունով, նրա տակ ստորագրութիւններ ժողովել գիւղերում, վաւերացնել տալ այդ ստորագրութիւնները տանուտէրներին ու այդ կերպ պատրաստած խնդրագիրը ներկայացնել իրան, հայր սուրբին՝ քաղաք տանելու համար։

Շուտով պատրաստուեց խնդրագիրը հարիւրաւոր ստորագրութիւններով։ Թուրք աղասիկալներից շատերը ստորագրել էին նոյնպէս։

Երբ Պողոս հայր սուրբն ստացաւ խնդրագիրը, որոշեց Զատկի տօներին գնալ առաջնորդանիստ քաղաքը, տանել իր հետ Մուրղուզեանին ու աբեղայ ձեռնադրել տալ նրան։ Որոշեց անպատճառ Զատկին գնալ, քանի որ այդ նշանաւոր տօնի օրերին սրբազանի ու կոնսիստորիայի անդամների տրամադրութիւնը, հաւանական է, լաւ կը լինի. եթէ այնքան էլ լաւ չը

լինի, զատկական անմեղ ընծաներով նրանց սրտերը կակղեցնելը հեշտ է։

Մուրղուզեանի պէս «իմաստունի» ձեռնադրութիւնը յարմար բոլէին միայն կարելի էր աջողեցնել. Պողոս վարդապետը, իբրև փորձած մարդ, շատ լաւ էր հասկանում այդ։ Ամենայարմար բոլէն Զատիկը համարուեց։

IV

Ծաղկազարդից յետոյ Պողոս հայր սուրբը պատրաստուեց ճանապարհուել առաջնորդանիստ քաղաքը։ Իշխանաց վանքի ճոխ մառաններից զատկական ընծաների առատ պաշար պատրաստուեց. իւղի, մեղրի, թարմ պանրի, կարագի ու ձուի մեծ քանակութիւն վերցուեց. մորթեցին ու մաքրեցին ութ հատ ընտիր հնդուհաւ ու նոյնչափ վառիկներ։ Յովհաննէսն ուզեց դառներից էլ վերցնել նոյն քանակութեամբ, բայց վանահայրն արգելեց, քանի որ կենդանի տանելը շատ դժուար էր, իսկ մորթած՝ ոչ այնքան վայել, սազական. աւելի յարմար գտաւ դառները քաղաքում գնել։ Պատրաստութիւնները տեսնում էր Յովհաննէսն ինքը, անձամբ. բոլոր ժամանակ մեծ եռանով դէս ու դէն էր անում. եթէ բանը նրան մնար, մառանների բոլոր բարիքը կը տանէր առաջնորդանիստ քաղաքը, միայն թէ աջողուէր իր գործը։ Նկատելով այդ, Պողոս հայր սուրբն ասաց ինքն իրան՝ «գլուխդ մեռնի, էդ այբ-բենից զուրկ գլուխդ. աշխատիր ուսմամբ, իմաստութեամբ դրաւել սրբազանին ու կոնսիստորիայի անդամներին, այլ ոչ թէ մեղրով ու հնդուհաւերով...»։

Աւագ ուրբաթ օրը Պողոս հայր սուրբը Մուրղուզեանի ուղեկցութեամբ ճանապարհուեց առաջնոր-

դանիստ քաղաքը, յանձնելով վանքի ժամասացութիւնը հարևան գիւղի քահանաներից մինին։ Հետևեալ օրը կէսօրից առաջ նրանք հասան քաղաք։ Տեղ հասնելուն պէս Յովհաննէսը վանահօր պատուէրով գնաց շուկայ ու գնեց այնտեղ վեց հատ ընտիր գառը, հինգ գլուխ շաքար, գինի ու օղի։ Կազմեց այդպիսով զատկական ընծաների ընտիր, բազմատեսակ ու առատ ժողովածու։

Պօղոս հայր սուրբն իսկոյն զբաղուեց բերած ու գնած ընծաների բաժանմամբ. նրանց նշանաւոր ու ընտիր մասն ուղարկեց սրբազանին մի խոնարհ տոմսով հանդերձ. մնացածը համապատասխան տոմսերով կոնսիստորիայի անդամներին ու ատենադպրին, քարտուղարին. վերջնիս ուղարկուեց նաև մի վեդրօ գինի ու երկու շիշ ընտիր օղի. ատենադպիրը չէ որ օրագիր կազմողը, թղթեր սարքողն է... Բոլոր ընծաները տարաւ ըստ պատկանելոյն ինքն աբեղացուն, Մուրղուզեանը, առաջնորդարանի ծառաներից մինի ուղեկցութեամբ։ (Նրանք ըստ սովորականին իջել էին առաջնորդարանի ներքնայարկի անշուք սենեակներից մինում)։

Երեկոյեան պատարագից առաջ Պօղոս հայր սուրբը գնաց ներկայացաւ նորին սրբազնութեան։ Սրբազանը բարեհաճ ընդունելութիւն ցոյց տուեց նրան, ժպտադէմ ու սիրալիր կերպով զրուցեց հետը. սկզբում թեթևակի կշտամբեց, որ նա զատկական տօներին իր վանքն անտէր է թողել ու եկել քաղաք։ Պօղոս հայր սուրբը պատասխանեց, որ նա թոյլ տուեց այդ իրան՝ մի անգամ գոնէ կեանքում բախտ ունենալու անցկացնել Զատիկը նորին սրբազնութեան կտրի տակ, նրա հիւրասէր օջաղում։ Բարեսիրտ սրբազանը ներեց վարդապետին ու հրաւիրեց նրան թաթախման ընթրիքին։

«Պատուական մեղրն ու կարագ ես բերել, Պօղոս հայր սուրբ,—ասաց սրբազանը,—Իշխանաց վանքի մեղրը ընութեան հրաշալիքներից ամենասքանչելին է. նոյնը կարող եմ ասել գառներիդ, հնդուհաւերիդ ու վառիկներիդ մասին. երևում է, որ առատ ու ազնիւ սնունդ են վայելած. թիկնաւէտ են, թանձրամիս ու ճարպառատ... Ապրիս. իմ թեմի վարդապետներից ու վանահայրերից ամենաարժանաւորն ես դու։ Շարունակիր այդպիսի անսպառ եռանդով գործել. գործնէութիւնդ, յուսով եմ, վաղ-ուշ կը պսակի ծայրագոյն վարդապետի կոչմամբ...» Պօղոս հայր սուրբը, անչափ զգացուած սրբազանի սիրալիր խօսքերից, արտասուախառն աչքերով համբուրեց նրա աջը, յայտնելով, որ պատրաստ է նորին սրբազնութեան համար իր կեանքը նոյն իսկ զոհել, որ ինքն ու իր բոլոր վանականները նրա խոնարհ ծառաներն են...

Յովհաննէսի մասին բան չասեց. պէտք է առաջ անդամներին ու ատենադպրին տեսնէր, նախ նրանց հետ խօսէր իր «իմաստուն» աբեղացի մասին...

V

Հետևեալ օրը Պօղոս հայր սուրբը պատարագից յետոյ այցելութեան գնաց կոնսիստորիայի անդամներին։ Բոլորի մօտ էլ նա լաւ ընդունելութիւն գտաւ. բոլորն էլ գովում էին նրա ուղարկած մեղրը, իւղը, գառները, հնդուհաւերն ու վառիկները. կշտամբում էին՝ թէ ինչու շուտ-շուտ չէ գալիս քաղաք, շատ աղիզ է պահում իրան, սակաւ երևում առաջնորդանիստում. պարտաւորեցնում էին, որ աշնանը, մեղրի առատ ժամանակը, չը մոռանայ իրանց։

Իր ճանապարհորդութեան բուն նպատակը Պօ-

դոս վարդապետը ամենից առաջ յայտնի դարձրեց ատենադպրին։ Վերջինս ասաց, որ Զատկի առիթով ձեռնադրուողներ շատ են եկել գիւղերից, մօտ 10—12 ցուցակ կայ կազմած, ու Յովհաննէսին էլ մտցրեց այն ցուցակի մէջ. ատենադպիրն աւելացրեց, որ մեռելոցի տօնից յետոյ, երեքշաբթի կամ չորեքշաբթի, պէտք է ատեան դումարուի սրբազանի նախագահութեամբ՝ ձեռնադրուողներին քննելու համար. սրբազանն ինքն է այդպէս կարգադրել։

Պօղոս վարդապետը յետոյ տեսաւ անդամներին. նրանք էլ նոյնն ասացին. խոստացան ներողամտաբար վերաբերուել Մուրղուզեանին քննութեան ժամանակ։

Բոլորից յետոյ վարդապետը գնաց սրբազանի մօտ ու ներկայացրեց նրան ժողովրդի խնդրագիրը. իր կողմից էլ թախանձանօք խնդրեց՝ ինչ հարկն էր։ Սրբազանն ընդունեց խնդիրն ու խոստացաւ աջող քննութեան դէպքում իսկոյն ձեռնադրել։

VI

Տխուր-տրտում վերադարձաւ Պօղոս հայր սուրբը իր սենեակը. նա գիտէր, որ Յովհաննէսը քննութիւն տալ չէր կարող, խայտառակելու էր իրան, Իշխանաց վանքի մեծահամբաւ վանահօրը. ճանապարհորդութիւնն ու այնքան ծախսերը զուր են կորչելու...

Մուրղուզեանը անհամբեր սպասում էր նրան։

—Ա՛դա,—առանց նրա դէմքին նայելու դարձաւ նրան Պօղոս հայը սուրբը,—բանդ, ոնց տեսնում եմ, բուրդ ա։ Քեզ պէս շատերն են եկել ձեռնադրուելու. մի տասը-տասներկու հոգի քահանայացուներ կան։ Կոնսիստորումը ձեռնադրուողների ցուցակ են կազմել. քեզ էլ գրեցին էն ցուցակումը։ Պէտք ա երեքշաբթի

օրը սրբազանի նախագահութեամբ ատեան կազմեն ու էն ցուցակով բոլորիդ էլ քննեն. լաւ լսի՛ հա՝ ատեանին սրբազանն ինքն ա նախագահելու... Ով լաւ քննութիւն բռնի, նրան կը ձեռնադրեն...

—Ի՞նչ, ի՞նչ, ա՜ վարդապետ,—ասաց զարմացած Յովհաննէսը,—էդ ի՞նչ ես ասում։

—Աչքդ հանիչ եմ ասում. ի՞նչ ա, քառ ե՞ս, խուլ ե՞ս, լսում չե՞ս։ Քեզ ցուցակ են մտցրել. պէտք ա քննեն է, քննեն քեզ էն ցուցակաւը. այիրը բենից ջոկում չես. տեսնեմ՝ ո՞նց պտես քննութիւն տալ. քեզ էլ ես խայտառակելու, ինձ էլ. ինձ ուղղակի սաղ թաղելու ես սրբազանի առաջին. դատարկաձեռն ենք գնալու այստեղից։

—Էդ ի՞նչ ցուցակ ա. ի՞նչ զատ ա դա,—հարցրեց Յովհաննէսը, ցուցակ բառը չը հասկանալով բնաւ. կարծելով՝ մի գուցէ նա որևէ է դժուարիմաստ գրքի կամ ձեռագիր մագաղաթի անուն է,—ինձ ցուցակաւ կարդացրել ե՞ս, որ հիմի ցուցակաւ քննիլ ես տալի՞ս։ Ես իմ օրումը ցուցակ տեսած չեմ. էդ էնց գիրք մեր վանքումը չը կայ. անունը ցուցակաւ ես քննութիւն չեմ տալ. ինչ ուզում ես արա։

—Ցուցակը գիրք չի, գլուխդ մեռնի,—ասաց Պօղոս հայը սուրբը,—ցուցակը թուղթ ա է, թուղթ. էն թղթի վրայ ձեռնադրուողների անուններն ու ազգանունները շարքով գրել են, որ ատեանի օրը հերթով կանչեն նրանց ու քննեն. ցուցակը ձեռնադրուողների սիային ա։ Էն շարքումը քեզ էլ են գրել։

—Ինչ որ ա, ես ցուցակ-մուցակ չեմ ճանաչում։ Ի՞նչ ա. ես եկել եմ էստեղ ձեռնադրուե՞մ, թա ցուցակ մտնեմ։ Բա էնքան պատիւներ բերանք մեզ հետ, բոլորին էլ առատ առատ բաժանեցինք. էնքան բաները պէտք ա զուր կորչե՞ն։ Էն հնդուհաւերն ու վառիկները

աչքիս լիսի պէս պահել եմ, մեծացրել, որ նրանց օգնութեամբ ես ձեռնադրեմ. հիմի անդամները նրանց տապակել են, կերել ու ինձ ցուցակ մտցրել։ Բա էդ Աստուած վեր կունի՞. բա էդ ա՞ քո միջնորդութիւնը։

—Ո՞նց անեմ դէ, ա՛ գլխամեռ. դպրանոց ես աւարտել, ճեմարան ես աւերտել լինչ ա, որ քեզ ցուցակից հանել տամ. ահը կարկաժդ դատարկ ա է. կարկաժումդ այբ-բենի կտոր չի կայ։

—Իմ կարկաժի հունարը յետոյ կերևայ, թող մի վեղար ծածկեմ, էն վախտը թամաշա արա ինձ, մտիկ տուր տես՝ ինչեր եմ անում, ինչեր. հէնց ժամ կասեմ, հէնց պատարագ կանեմ, որ ներքի ղոլէն եաշղը, մտիկ տուողը հէնց կը գիտայ, թա ես իմ մօրէն հէնց էսհէնց իմաստուն ու բապունի եմ ծնուել, իմաստուն ու բապունի։

—Քեզ պէս իմաստունին ու բապունիին ես թաղեմ. վեղարն ահը ո՞նց ծածկես, որ առաջ պէտք ա քննութիւն տաս ու էն էլ լաւ քննութիւն. հրէն ցուցակումը անունդ գրած է, գրած։

—Ասեցի, որ ես ցուցակ-մուցակ չեմ ճանաչում. գնա՛ տաղ արած ինձ ջնջիլ տուր. թող առանց քննութեան ինձ ձեռնադրեն։

—Ահը ո՞նց ջնջիլ տամ, հեշտ ա՞։

—Էդ դու գիտես. ասա՛ էլ մեղը ու կարագ կը բերենք, էլ գառներ ու հնդուհաւեր կը բերենք, կուղարկենք... ինձ գովի, ծաղկացրու. ասա՛ վանքի տընտեսը նա ա. մեղրն ու կարագը, հնդուհաւերը, վառիկներն ու գառները նրա շնորհով են առատ. իսկ սուրբ գրքերն ու ժամի բաներն էլ վաղուց ա ջուր արած, լոխ անգիր գիտի...

—Հէչ դրանից բան չի դուրս գալ. ինչքան էլ ծաղկեցնեմ քեզ, էլի պէտք ա մի ային-օյին քննութիւն տաս. մի թեթև քննութիւն գոնէ կը պահանջեն. ես էդ հաստատ գիտեմ։

—Չէ, քննութեան հետ ես բան չունեմ. էն ա ասում եմ՝ թա ինձ ջնջիլ տաս ու բանս դրանով գլուխ բերես, կը մնամ քո վանքում, թէ հու չէ, էն վախտն ինձ ներողութիւն արա. էլ քո վանքումը չեմ կարող մնալ՝ գլուխ կը վերցնեմ ու մի տեղով կը կորչեմ. կը գնամ մի հեռաւոր անապատում, մի խուլ ամայի մենաստանում, մեն-մենակ կապրեմ, աշխարհքից կտրուած իմ արևի ձէնը կածեմ... Տեսնեմ էն վախտն ո՞վ ա վանքդ կառավարում. ինձ պէս մնտես, ինձ պէս կառավարիչ ո՞րտեղ ես ճարում, տեսնեմ։

—Ահը ո՞նց ջնջիլ տամ, ո՞նց, ա՛ անիծած. գոնէ մի նշան պիտի, որ դու գրագէտ ես. անունդ ու ազգանունդ էլ ա պէտք ա գրել իմանաս։

—Բեր մի թղթի վրայ անունս ու ազգանունս գրեմ. տար ատեանին նշանց տուր։

—Ո՞նց գրես։

—Դու օգնիր, ես գրեմ, հօ էլ ես արած։

—Անտէր ըլի էնհէնց գրելը, որ դու գրում ես. ճար չի կայ. թող քո ասածը լինի։

VII

Պօղոս հայր սուրբը գրեց Յովհաննէսի առաջին մի կտոր թուղթ ու թանաքաման, տուեց նրա ձեռքը գրիչ ու սկսեց թելադրել նրան նրա անուան ու ազգանուան տառերը, առանձին-առանձին, ցոյց տալով, մատնանշելով նրան գրչի բոլոր շարժումները։

—Դէ առաջ գրի՝ յի,—սկսեց Պօղոս հայր սուրբը։

—Ո՞նց գրեմ,—հարցրեց Մուրղուզեանը։

—Գլուխդ մեռնի, յի-ն գրելը չը գիտես, իսկ ու-

զում ես աբեղայ ձեռնադրուել, տափը չես մտնում բա։

—Բանը բանից անցել ա. պրծի, նշանց տուր՝ ինց գրեմ։

—Ինց ցաւը նի ունի քեզ։ Դէ, զալամը թանաքոտ արա. հիմի պտուկը դիր թղթի վրայ. ինչ ա ձեռքդ դողդողում, գինի չես լակել հո՞ւ. ասում եմ՝ զալամի պտուկը դիր թղթի վրայ. էդհէնց, լաւ. ուշքդ վրէդ պահի, չը սխալւես ու ինձ բարկացնես. հիմի զալամի պտուկը էդհէնց գլխվէր տար. գլխվէր եմ ասում, լաւ լսի, գլխվէր, այսինքը դվէր տար, դէդ դվէր, դէպի քաշ. լաւ. բաւական ա, բաւական ա, կանգնի. դու մի կանգնիր, հայվան, տեղիցդ վեր մի կենալ, այլ զալամդ կանգնեցրու է, զալամդ. նստի, վէր ընկի տեղդ ու զալամիդ պտուկը դիր էնտեղ, որտեղից վեր կալար. էդհէնց. հիմի պտուկը դէպի ձախ ծռի, ձախ, նզովեալ, ձախ. ինչ ես դէպի աջ կեռ տալի. յի՜ն հունի հլորչան ա, ինչ ա, որ էդհէնց ծռմռում ես. ձախն աջից ջոկում չես, իսկ ուզում ես վարդապետ դառնալ, ժողովուրդ հովւել. զալամի պտուկը էդհէնց պինդ թղթի վրայ պահի. հիմի կամաց-կամաց դէպի ձախ ծռի. բոլ ա, բոլ ա. քիչ դիր, այսինքը դէպի բարձր տար. քիչ, քիչ. էդհէնց. բոլ ա, բաւական ա. փառք Աստծու, յի՜ն գրեցիր։ Դէ, հիմի էլ ո՜ն գրի. զալամի պտուկը դիր վիրի ղոլէն յի՜ի կողքումը. առաջից ոչ, անիրաւ, աջ կողքին դիր, քամակին այսինքը. էդհէնց. զալամը լաւ պահի, էդ ինց ես բռնել, մի մըտիկ տուր. զալամը միջամատով, ցուցամատով ու պթով, այսինքն բութ մատով, կը բռնեն, այլ ոչ թէ հինգ մատով կը հափռեն. չորանի պէս ես բռնել. կասես դագանակ լինի ձեռքիդ, այլ ոչ զալամ. դէ հիմի զալամի պտուկը քիչ, շատ քիչ, գլխվէր տար, էդհէնց, դէդ դվէր, մի քիչ էլ. բաւական ա, բոլ ա, կանգնի.

էլ հայվանի պէս կանգնեց տեղից. Տէր Աստուած, ինչ պտեմ ես սրանից ազատուիլ. հոգիս ձեռքիս լինի, բաց կը թողնեմ. տեղդ վէր ընկի ու զալամի պտուկը դիր էդ խազի գլխին. էդհէնց. պինդ պահի, չորացած ձեռքդ դողդողացնիլ մի, լաւ պահի. հիմի էդ խազի գլխէն շատ զգոյշ, այսինքը կամաց, հանդարտ, դրա չափ մի խազ դէպի աջ տար, դէպի աջ, նզովեալ, դէպի աջ եմ ասում, քառ ես, ինչ ես. էդհէնց, բաւական ա, բոլ ա. զալամի պտուկը իրան տեղը պինդ պահի. հիմի էլ էդքան մի խազ հէնց էդտեղից դէդ դվէր, տար, դէդ դվէր, անիրաւ, ոչ դիր, դէդ դվէր, այսինքը գլխվէր. էդհէնց, էդհէնց. բոլ ա, բաւական ա, դարձեալ փառք Աստծու. ո՜ն էլ գրեցինք... Դէ, հիմի էլ վեվ-ը պէտք ա գրենք, վեվ-ը. գետն ինձ տանի, էս ինց պտեմ վեվ-ը քեզ գրել տալ. մի սաղ գիշեր անքուն նստելն ու օխտը գլուխ սաղմուս քաղելն ինձ համար աւելի հեշտ ա, քան քեզ մի հատ վեվ գրել տալը։

—Հայր սուրբ, կարգիդ մատաղ, եկ վեվ-ը դու ինքդ քո ձեռքաւ գրի, ինացածները ես մի հանգաւ կորկոտ կանեմ, մի կերպ դուրս կը բերեմ. վեվ-ը բաբաթ դժւար ա,—ասաց Մուրդուզեանը։

—Ջանդ դուրս գալով վեվ-ն էլ դու գրի, վեվ-ը. յի՜ի ու ո՜ի պէս վեվ-ն էլ կորկոտ արա, գլուխդ մեռնի։ Կեանքս մաշեցի քեզ համար, իսկ դու գրերը, մեսրոպեան սքանչելի տառերը, կորկոտ անել միայն սովորեցիր. այդքան ա շնորհքդ, քանզի ուղեղդ էլ ա կորկոտ։

—Հայր սուրբ, քեզ մատաղ, վեվ-ն է, մենակ վեվ-ը...

—Լռիր, անիրաւ. ինց տեսնում եմ, Զատիկն էլ ես բարեկենդանի պէս աբեղաթող արել ու ինձանից ծածուկ լակել։ Ուզում ես հրեշտակաց կարգը մտնել,

իսկ վավ-ն ինձ ես գրել տալիս. չէ, ջանդ դուրս գալով դու պտես գրիլ, դու. դալամը թանաքոտ արա։

—Հայր սուրբ...

—Խօսալ մի, անզգամ, դալամը թանաքոտ արա տաղ արած. ուշքդ վրէդ պահի հա. լաւ գրի. ճաշոցը կշտիս չի, ամա էս օրհնուածը հրէս է, մօտս ա. կարծես ոչ թա առաջնորդանիստում գաւազան չեմ վէր բերիլ կարկաժիդ. հոգիս բողազս ես հաւաքել է, հոգիս. ինձ խայտառակելու ես սրբազանի առաջին... Հիմի ականջներդ լարի ու լաւ լսի. դալամի պտուկը դիր թղթի վրայ ո-ի բարարար, նրա աջ կողքից. էդհէնց. հիմի մի խազ քաշի դվէր. դվէր, անիրաւ. բաւական ա, բօլ ա. էդտեղ պինդ պահի դալամի պտուկը. հիմի շատ զգոյշ, այսինքը շատ կամաց, մի քիչ ծռի դէպի աջ. դէպի աջ, կործանուած, դէպի աջ. էդհէնց. բօլ ա, բօլ ա, կանգնի. էլ հայվանի պէս տեղիցդ վեր կացիր. Տէր Աստուած, ինց անեմ ես սրա հետ. գաւազանս եմ ափսում է, ոչ թէ կարկաժդ. վախում եմ կոտրեմ ու էս ազիզ օրերին անգաւազան մնամ առաջնորդանիստում. տեղդ վեր ընկի ու դալամդ թանաքոտ արա։ Զորացած ձեռքդ դողդողում ա էլի, դալամդ շուն ա հաչացնում... Հայ դեղ դառնայ ու քեզ սպանի էն դինին, որ լակել ես. արիւնը սրտիցս կաթում ա, շատ մտածելուց քունս կորել ա, իսկ դու արխային, էնհէնց քո քէֆին գլնի ես դվէր ածում, օգտուելով իմ բացակայութիւնից։

—Հայր սուրբ, ներողութիւն արա,—ասաց Յովհաննէսը,—մասնաւոր եմ խմել, էնհէնց, մի երկու բաժակ, շատ ոչ...

—Այ մի մասնաւոր ցաւ քեզ նի ունի, բալքի պրծնեմ քեզանից. դու միշտ մասնաւոր ես խմում. մի

սաղ տկճոր էլ որ խմես, թամուղ դարտակես, էլի կասես մասնաւոր ա...

—Հայր սուրբ, Զատիկ ա ահը, ազիզ օր ա, բա մի քիչ էլա...

—Լաւ, լաւ. սարերով ու քօլերով մի ընկնիր. ջանդ դուրս գալով վավ-ը գրիլ պտես է, գրիլ. շարունակի. հիմի դալամի պտուկը քիչ բարձրից դիր թղթի վրայ։ շատ ես բարձր դրել. վեր կալ ու մի քիչ էդտեղից քաշ դիր. էդհէնց, պինդ պահի. դէ հիմի էդտեղից քո թիւշին հարերդա գլխվէր տար, էդհէնց, դէդ դվէր. էլ, էլ, էլ տար, գլուխդ մեռնի, էլ տար. հիմի բօլ ա, բաւական ա, բօլ ա, անիրաւ, բօլ ա, արջախպէր, տանձակեր արջ, բօլ ա, տանձուտից բերած արջ, բօլ ա, բաւական ա. հայ չորանայ էդ ձեռքդ, չորանայ. ինչ ես հարերդա դվէր տանում չորացեալդ. էդքան երկար վավ կըլի. ահը ես էդ վավ-ը ատեան պտեմ դուրս բերիլ. սրբազանին իրան նշանց պտեմ տալ. էնտեղ ինձ ինչ կասեն. սրբազանին ես ինչ պատասխանեմ, ա գլխամեռ... Ճար չի կայ. Աստուած քեզ ինձ համար պատիժ ա ուղարկել, պատիժ. շարունակի մի տեսնեմ՝ ինչ հողն ու ցեխն եմ գլխիս տալիս... Հիմի դալամը ծռի դէպի աջ. տար, տար դէպի աջ. էլ, էլ, անզգամ, էլ. վավ-ի հաքին երկար ա լինում. բաւական ա, բօլ ա, բօլ ա, անիծուած, բօլ ա, կանգնի. վեր ընկի տեղդ, խոտակեր. դալամդ կանգնեցրու է, դալամդ, դու մի կանգնիր հայվանի պէս... Փառք Աստծու, վավ-ն էլ գրեց։ Դէ հիմի էլ հո-ն գրի. օհ, ջուրն ինձ տանի. էդ ինց պտեմ հո-ն քեզ գրիլ տալ...

—Հայր սուրբ. մի քիչ բռնոթի քաշի, դինջացի,—ասաց Յովհաննէսը։

—Գլուխդ մեռնի, բեզարեցիր հը՞. էդհէնց դըժուար բան ա գրելն է. առանց գրել իմանալու ուզում. ես վարդապետ դառնալ։

Պողոս հայր սուրբը հետևեց Մուրդուղեանի խելացի խորհրդին, բռնոթի քաշեց, հանգստացաւ ու շարունակեց իր տարօրինակ թեւադրութիւնը։ Մի ամբողջ ժամ անընդհատ լսւում էր՝... «Գլխվէր տար, դվէր բեր, հարերդա դէդ դվէր, դէս գլխվէր, դէն դիեր, դէպի քեզ. աջ ծռի, չորացեալդ աջ ծռի, անիծւած. դիեր տար, դիք դիեր, դէպի վեր, հարերդա դէդ դիեր, կործանւած. դէպի ձախ, լաւ լսի՝ դէպի ձախ, քիչ էլ տար, մի քիչ էլ. դէն գլխվէր, հարերդա դէն դվէր, գլխամեռ. ձախ ծռի, չորացեալդ ձախ ծռի. էդհէնց չի, էդհէնց չի, անիրաւ. դվէր տար, թիւշ գլխվէր. բօլ ա, բաւական ա, կանգնի. տեղդ վէր ընկի, հայվան, էլի կանգնեցիր. ձախ ծռի, դարձեալ ձախ. ետ դբէտ. լաւ լսի՝ ետ դբէտ, քիչ էլ տար, քիչ էլ տար, նզովեալ»...

Վերջապէս աբեղացուն, «վայ էն հալին», մի կերպ անմահացրեց թղթի վրայ «Յովհաննէս Մուրդուղեանց» բառերը։

Պողոս հայր սուրբը, իր տնտեսի գլուխն ու արևը հողելով, վերցրեց նրա գրագիտութիւնը վկայող այդ թուղթը ու դուրս գնաց սենեակից։

Նա կրկին այցելեց անդամներին, այցելեց ատենադպրին. կրկին անդամ ներկայացաւ նորին սրբազնութեան, որի մօտ ընթրեց ու գիշերեց նոյն խսկ։ Սրբազանի սիրալիութեան ու բարեացակամութեան չափ չը կար։

Հետևեալ օրը Պողոս հայր սուրբն առաւօտեան ժամից յետոյ եկաւ ու աւետեց իր տնտեսին՝

—Ա՛դա, քեզ ընչեցին...

Կանաչ կիրակի օրը մեծ հանդիսաւորութեամբ կատարւեց Մուրդուղեանի ձեռնադրութիւնը։

ՎԱՔԻԼԲԱՇԻՆ

I

Օրը կիրակի էր, յուլիսեան օրերից մինը։ Գիւղի հրապարակում կանգնելու տեղ չը կար. այնտեղ կուտակւած էր մի ստւար բազմութիւն։ Գիւղացիները խմբերի բաժանւած խօսում, դատում, վիճում էին տաք տաք. ինչ-որ մի շատ կարևոր հարց սաստիկ զբաղեցնում էր բոլորին. խօսում էին ըստ սովորականին շատ բարձր. շատերը գոռում էին ուղղակի. կոկորդները չէին խնայում բնաւ, իրար բերանից խօսք էին խլում։ Աղմուկը, հարահրոցը, յաճախակի հայհոյանքներով ուղեկցւող, աննկարագրելի էին, բայց գիւղի համար շատ սովորական. գիւղական ժողովը առանց աղմուկի, առանց հայհոյանքների երբէք չէ անցնում։ Քանի լուրջ, քանի կարևոր է քննադատւող հարցը, քանի խորն է շօշափում նա հասարակական շահերը, այնքան մեծ է լինում աղմուկը, այնքան ընտիր ու ազդու են լինում զանազան հասցէներով արտասանւող հայհոյանքները...

Հրապարակի ծայրին գտնւող գիւղական դիւանատան պատշգամբի վրայ կանգնած էր գիւղական աւագանին։ այնտեղ էր տանուտէրը իր օգնականով. այնտեղ էին դատաւորները, իշխանները, գրագիրը։ այնտեղ էին նոյնիսկ գիւղի քահանաները, որոնք ժողովի են հրաւիրւում արտաքոյ կարգի դէպքերում. նրանց ներկայութիւնը ապացոյց էր, որ քննադատւող հարցը

չափազանց կարևոր է ու լուրջ։ Պատշգամբի սանդուղքի աստիճանների վրայ կանգնած էր գղիրը, մըտրակը ձեռքին բռնած. բոլոր ժամանակ նայում էր նա տանուտէրին։ Վերջինս ձեռքում մի թուղթ ունէր բռնած. երբեմնակի նա թուղթը մօտեցնում էր աչքերին, կարդում էր իբրև թէ, այն ինչ բոլորին յայտնի էր, որ նա ամեն բան գիտէ, բացի կարդալուց. «այիբբենը» երազումն անգամ չէ ծամած դոնէ մի անգամ, ու պաշտօնական թղթերը վաւերացնելիս գրագիրը նրա բերանից գրում է միշտ՝ «թուղթս զայս ես, քեօխվայուզբաշի Աղասի Վիրաբօվս, վասն պատճառի անգրագիտութեան իմոյ հաստատեցի փէչատմամբ արքունոյ կնքոյ»։ Թղթին նայելուց յետոյ տանուտէրը դառնում էր շրջապատողներից սրան կամ նրան ու զրուցում նրա հետ, թղթի բովանդակութեան մասին, ի հարկէ, երբեմն միջի մատով, միւս մատները ծալած, ցոյց էր տալիս թղթի այս կամ այն տողը ու տաք տաք խօսում։

Ծիծաղի նշոյլ անգամ ոչ ոքի երեսին չէր նկատւում. տանուտէր է, գիւղի մեծը, գիւղի տէրն է. նա ամեն բան կարող է անել. նրան ամեն բան ներւում է։

Այդ նշանաւոր ժողովի օրը նա կարգին կուլ տուած*) էր երևում։ Ասենք՝ ճրը չէ նա կուլ տալիս. իր խորին համոզմամբ, եթէ նա առանց կուլ տալու գայ ժողով, այնքան ահարկու չի լինի ժողովականների համար, զուրկ կը լինի «զահմից», կընկնի տանուտէրական պրէստիժը ու նրա հետ միասին իշխանութեան վարկն առհասարակ։ Այդպիսով տանուտէրի կուլ տալը, նրա կոնծաբանութիւնը, ոչ թէ, նրա կարծիքով, լոկ անձնական զւարճութիւն է, այլ հասարակական նշանակութիւն ունեցող գործ։

*) Խմած։

Նոյն համոզմամբ նոյն բանն են անում նրա մերձաւորները, գիւղի միւս պաշտօնեաներն ու գործիչները. բոլորն էլ իրանց բանը տեսած են գալիս հրապարակ։ Ամեն կիրակի, ամեն ժողովի կամ դատարանի նիստի օր, առանց այն չէ, որ մի քանի գիւղացիներ գործեր չունենան՝ համայնական ժողովի կամ գաւառական քննադատութեան ենթակայ. ահա այդպիսիները իրանց գործերի աջողութեան համար աշխատում են վաղ առաւօտեան ում հարկն է «տեսնել», կանչում են իրանց տները «մի պատառ ային-օյին անելու»...

«Ային օյինի» հետևանքը լինում է լաւ կեր ու ևս առաւել լաւ խում, որից յետոյ իշխանաւորները գալիս են նիստի կարմրած դէմքերով ու տաքացած գլուխներով։ Աջողւում է նրա գործը, որի գինին ու արաղը աւելի առատ են լինում ու աւելի ընտիր՝ իրանց որակով ու աւելի ազդու... Այդ օրւայ նիստին լաւ կուլ տուած էին եկել ոչ միայն տանուտէր Աղասին, այլ և նրա ողջ շքախումբը։

Տանուտէրի ձեռքի թուղթը պաշտօնապէս թէև չէր կարդացւել դեռ, բայց նրա բովանդակութիւնը կցկտուր յայտնի էր համարեա բոլորին. արդէն մի շաբաթ էր, ինչ նա ստացել էր գիւղում. մինչև ժողովի օրը գրագիր մահտեսի Առաքելը այստեղ-այնտեղ պատմել էր նրա բովանդակութեան մասին. ընդհանուր խօսակցութիւնը նրա մասին էր։ Ժողովը հրաւիրուած էր թղթի պաշտօնական ընթերցանութեան համար. իշխանութեան հրամանը պէտք է հանդիսաւորութեամբ յայտարարուէր գիւղական հասարակութեան ու առաջարկւէր՝ միջոցներ ձեռք առնել հրամանը ճշտութեամբ կատարելու համար։ Ամբոխը գնալով ստւարանում էր. նոր ու նոր ժողովականներ էին գալիս. աղմուկը աւելի ու աւելի սաստկանում էր։ Վերջապէս տանուտէրը

հրամայեց գզրին լռեցնել ամբոխին՝ իշխանութեան հրամանը լսելու համար։

—Տա՛ղ արէք, հրամանը կարդում են,—գոռաց գզիրը իր կոկորդի բոլոր ոյժով. նա ստիպւած էր մի քանի անգամ կրկնել նոյնը ու մի քանիսին խփել ձեռքի մտրակով։ Բոլորն էլ լռեցին վերջապէս ու լուռ դէմքերով դարձան դէպի պատշգամբը, յառելով աչքերը տանուտէրին։

—Մահտեսի, առ կարդա՛,—ասաց տանուտէրը, մեկնելով ձեռքի թուղթը գրագիր մահտեսի Առաքելին։

Վերջինս խսկոյն վերցրեց գլխարկը, դրեց գետնին, առաջ անցաւ. առաւ տանուտէրի ձեռքից խորհրդաւոր թուղթը, հանեց գրպանից ակնոցները, սարքեց, սաղացրեց քթի վրայ, երկու ձեռքով բռնեց թուղթը, դարձաւ ամբոխին, մի-երկու անգամ հազաց ու մնաց լուռ կանգնած. մի քանի րոպէ շւարած նայում էր նա թղթին։ Այնքան բարձր տեղից էր վերջինս, որ մահտեսու լեզուն կապւել էր ուղղակի. թէև բացի ռուերէնից, թուղթը գրած էր նաև հայերէն, բայց մահտեսին էլի ահաբեկւում էր նրան նայելիս...

—Ա՛ռ, ա՛ռ. ա՛ռ մի պատառ բռնոթի քաշիր ու խելքդ գլուխդ հաւաքի՛, մահտեսի,—ասաց նրա ետևում կանգնած տէր-Գալուստը, մեկնելով նրան իր կաշէ բռնոթամանը,—մի լաւ վեր ծծի, բալքի լեզուդ բացւի։

Մահտեսին ծուեց դէպի տէրտէրը, խորին պատկառանքով վերցրեց մի պտղունց նրա «օրհնւածՙ», բռնոթուց, երկու անգամ իրար վրայ փռշտաց, «մեղայ քեզ, Աստուածՙ կրկնելով, խելքն այդպիսով գլուխը հաւաքեց ու յետոյ սկսեց կարդալ թուղթը այնպիսի ձայնով, ինչպէս նա երբեմնակի կարդում է եկեղեցում Պօղոս առաքեալի թուղթն առ Կորնթացոց, շատ հանդիսաւոր ու իր ունկնդիրների համար

շատ ազդու կերպով։ Թէև թուղթը յատուկ վերնագիր չունէր, բայց մահտեսին անհրաժեշտ համարեց վերնագիր կարդալ, որը շարադրեց իրանից տեղն ու տեղը և հէնց մասամբ այդ պատճառով այնքան լուռ կանգնեց սկզբում. պէտք էր մի ազդու վերնագիր ասել։ «Նորին բարեսրտութեան ու բարեծնունդ մեծահոգութեան առ բարձր իշխանութեան կողմից. վասն երևալոյ խօլերայի մասին»... Քիչ կանգ առնելուց ու շրջապատողների վրայ թուղթիկ հայեացք ձգելուց յետոյ նա կարդաց այնուհետև կզկզացնելով ամբողջ թուղթը։ Գրութիւնը նահանգական վարչութեան կողմից էր ղրկւած, գաւառապետի միջոցով, նրա յաւելւած թղթով, որը նոյնպէս կարդացւեց։ Մօտեցող խօլերայի պատճառով իշխանութիւնը խստիւ հրամայում էր գիւղական վարչութեան անհրաժեշտ առողջապահական միջոցներ ձեռք առնել՝ գիւղը սպառնացող վտանգից ազատ պահելու համար. հրամայւում էր հիմնովին մաքրել գիւղը, անհետացնել գիւղի դարաւոր աղբակոյտերը ու այդ նպատակի համար առաջարկւում էր յատուկ առողջապահիկ յանձնաժողով ընտրել հասարակութեան բանիմաց անդամներից, որոնք պէտք է գործէին տանուտէրի անձնական վերահսկողութեան տակ։ Շաբաթը երեք անգամ յանձնաժողովը պէտք է շրջէր ամբողջ գիւղը, ստիպէր գիւղացիներին մաքրել իրանց հայաթները, նրանց կից փողոցները, տները, գոմերը ու դուրս տանել աղբը գիւղի հեռաւոր շրջականները. ամենից առաջ նա պէտք է ստիպէր հեռացնել գիւղից հինաւուրց փտող ու նեխւող աղբակոյտերը, որոնցով անչափ հարուստ են մեր գիւղերը։

Ընտրւող յանձնաժողովը իրաւունք էր ստանում արձանագրութիւններ կազմել այն դէպքերում, եթէ հրաժարւէին նրա օրինաւոր պահանջները կատարել.

այդ արձանագրութիւններով գիւղական դատարանը պէտք է տուգանքներ առնէր զանցառուներից. բացի այդ յանձնաժողովը կարող էր մաքրել որևէ հայաթ, գոմ, դուրս կրել գիւղից որևէ աղբանոցի աղբ զանցառւի հաշուով։ Տանուտէրին, գիւղի բոլոր իշխանաւորներին ու ընտրուող յանձնաժողովի անդամներին պարզ հասկացնուում էր, որ նրանք կենթարկուեն անձնական խիստ պատասխանատուութեան, եթէ անտարբերութեամբ ու անբարեխղճութեամբ վերաբերուեն գործին ու այդպիսով ենթարկեն գիւղը վարակուելու վտանգին։

II

Երբ վերջացաւ թղթի ընթերցանութիւնը, կրկին սկսուեց աղմուկը։ Տանուտէրը դարձաւ ժողովրդին խօսելու համար։ Գղիրը, նկատելով այդ, բարձրաձայն դոռաց՝

—Տաղ արէք, ուղբաշին խօսում ա։

Իսկոյն լռութիւն տիրեց։ Բոլորն էլ դարձրին երեսները տանուտէրին։

—Ա՛ խալխը,—ասաց տանուտէր Աղասին,—էդ ա տեսնում էք, որ խուլ ցաւը գալիս ա. Ղղլբաշի հողումն ա երևացել ու հիմի էլ կամաց-կամաց դէպի մեզ ա գալիս։ Ասում են էնտեղ, շահի իրան շհարումը, օրը հազար, երկու հազար մարդ ա կոտորուում։ Անտէր ցաւը շահին որ խաթրը չանում ու նրա աչքի առաջին էդքան մարդ ա փչացնում, մեզ իսկի չի խաթրն անիլ, մեզանից աւելի կը կոտորի, եթէ գայ. գիւղումս էլ մարդ չի մնալ, գիւղը կը դատարկուի. էդ լաւ իմացէք հա։ Բարձր իշխանութիւնը, Աստուած նրան բարի տայ, հրաման ա արել էդ ա, որ թամուղ կենանք, գիւղը

մաքրենք, աղբերը չը թողնենք, գեղից դուրս տանենք, աղբանոցները ոչնչացնենք։ Ասում են զօխտուրները կազէթներումը գրել են, որ որտեղ աղբը շատ ա, որտեղ փնթի, կեղտոտ են ասլրում, խուլ ցաւն էնտեղ ա տարածուում. լաւ լսեցէք հա։ Բարձր իշխանութիւնը հրաման ա անում, որ խուլ ցաւի համար չորս վաքիլ*) ջոկենք։ Վաքիլները պէտք ա շաբաթը երեք անգամ գեղը պտտեն ու ճամբէքը, հայաթները, տները, գոմերը ու աղբանոցները թամուղ անել տան։ Ես միշտ նրանց հետ եմ ըլելու։ Էգուցւանից պէտք ա սկսենք գեղը մաքրել. մի-երկու օր պէտք ա բոլորդ էլ մնաք տանը ու էդ բանի ետևից կենաք. մի-երկու օրով պէտք ա հունձն ու փունջը թողնէք, կալ չը կալսէք. բարձր իշխանութեան հրամանը շատ թունդ է, շատ։ Ով որ վաքիլներին հակառակուի, նրանց քէֆին դիպչի, նրանց հրամանները չը կատարի, իր հայաթն ու գոմը չը մաքրի, իր դռան աղբը դուրս չը տանի գեղից, նրանից ամենաքիչը տասը մանէթ շտրաֆ կառնեմ ու իրան էլ տուն կը գցեմ։ Իմացէք հա։ Ինչպէս ասացի ես ինքս միշտ վաքիլների հետ ման պտեմ գալ. լաւ իմացէք հա. էս խուլ ցաւի ձայնը քանի կայ ու կըլի, ես համ ուղբաշի եմ, համ վաքիլբաշի։ Ով մի քիչ գոնէ հակառակուի ինձ, նրա կարկաժ-մարկաժը կը ջարդեմ. նրան Սբիր ուղարկիլ կը տամ, Սբիր։ Ով փորձի հացով, գինի-արաղով իմ ու վաքիլների խաթրն առնել, կաշառք տալ ու էղէնց փանդ ու փունդով ազատուել մեր պահանջներից, ձեռներն ու ոտները կապած նրան կուղարկեմ գբրնատուրի կուշտը. նրա անունը գբրնատուրի սև դաւթարումը կը գրուի ու ինքն էլ հող ու մոխիր կը կորչի։ Իմացէք, որ նաչալնիկն**)

*) Լիազօր, հաւատարմատար։

**) Գլաւառապետը։

ինքը գալ պտի գեղին մտիկ տայ. եթէ դեղը մաքուր չը լինի, ինձ ու վաքիլներին Սբիր կուղարկի է, Սբիրֆինչ ա, ուզում էք, որ ձեր խաթրին, ձեր պատճառով մենք տանով-տեղով կորչենք։ Չէ, ես թող չեմ անիլ, որ դուք իմ ու իմ իշխանների տները քանդէք. օրէս ետը ինձ համար էլ բարեկամ-մարեկամ չի կայ, հարուստ ու աղքատ չի կայ. էս խուլ ցաւը քանի կայ, ոչ մինի խաթրն էլ ա պահիլ չի պտեմ։ Բարձր իշխանութեան հրամանը շատ ա թունդ է, շատ. իմ օրումը էսհէնց թունդ հրաման չեմ ստացած։ Էս հրամանն, ասում են, գբրնատուրի վրայ Պետրիպօլկէն*) ա եկել է, Պետրիպօլկէն. մէկէլ օրը քաղաքումը պրիստաւի գրագիրն ինձ էդ ասեց։ Ա՛ տէր,—դարձաւ տանուտէրը քահանաներից աւագին,—մի-երկու խօսք էլ դուսան. երէց ես, կարգաւոր ես. քո խօսքը զօրաւոր կը լինի։

Տանուտէր Աղասին վերջացրեց իր ճառը։

Տէր-Գալստի համար անսպասելի էր այդ դիմումը։ Ի՞նչ ասէր նա. նրա դրութիւնը շատ դժուար էր. տանուտէրի ճառի ոչ մի կէտի հետ համաձայն չէր նա։ Նրա խորին համոզմամբ խօլերայի դէմ պէտք է կռուել միմիայն աղօթքներով, թափօրներով, մաղթանքներով ու մատաղներով. գիւղի մաքրութիւնից խօլերան չի վախենայ. նա Աստծուց ուղարկած պատիժ է, ահաւոր, սոսկալի պատիժ։ Բայց իր սրտինն ասել այդտեղ տէրտէրը չէր կարող. այդ կը նշանակէր բարձ իշխանութեան հրամանին հակառակ բան բռնել. պէտք էր հաստատել տանուտէրի ասածները ու ակնարկներով միայն հասկացնել, որ բացի բարձր իշխանութիւնից Աստուած ևս կայ, որ նրա պահանջներն ու պատուէրներն էլ պէտք է կատարել։ Տէր-Գալուստը

*) Պետերբուրգից։

կարմրեց, քրտնեց սաստիկ, հանեց գրպանից բռնոթու մէջ շաղախուած դունաւոր թաշկինակը, սրբեց նրանով ճակատը, ծանր ու բարակ բռնոթի քաշեց, խելքն այդպիսով գլուխը հաւաքեց ու դարձաւ ժողովրդին՝

—Ա՛ ժողովուրդ,—ասաց նա,—մեր ուղբաշին ինչ ասեց, միտներդ լաւ պահեցէք ու կատարեցէք. նա ամեն բան ասեց. ես էստեղ քիչ բան ունեմ ասելու. բարձր իշխանութեան հրամանը սրբութեամբ կատարեցէք. մեր օգտի համար ա նա եկել էնքան հեռու տեղից։ Ամա... Ամա Աստծուն էլ միտներդ պահեցէք է, Աստծուն. նրա փեշը պինդ բռնեցէք. իսկի բաց չը թողնէք. խուլ ցաւը նա ա ուղարկել. մեր մեղքերը շատ են, շատ անչափ... Գիւղը մաքուր պահելը բաւական չի. պէտք ա մեր սրտերն էլ մաքուր պահենք, պէտք ա Աստծու սիրտն էլ շահենք, Աստծու, որ իր ցասումը դարձնի մեղանից, իր ողորմութիւնը թափի մեզ ու արար աշխարհի վրայ... Է՛հ, էլ ինչ ասեմ. էստեղ տեղը չի ամեն բան ասելու. իմ ասելիքները ես ձեզ ժամումը կասեմ. ժամ եկէք ամեն օր, ժամ, ա՛ օրհնուածներ։

—Փառաւոր ըլես դու, ա՛ տէր, փառաւոր,—լսեց ամբոխի միջից,—դարմանն էդ ա, որ ասեցիր. կանենք, ինչ ասեցիր, կը կատարենք. Աստծու փեշը պինդ կը բռնենք։

—Աստծու սիրտը կը շահենք, ա՛ տէր, միամիտ կաց,—ասաց տանուտէր Աղասին,—գիւղը մի քիչ մաքրեցինք թէ չէ, պէտք ա մաղթանքների ու մատաղների ետևից կենանք, ամեն օր Աստծու դուռը թակենք. օխտը սարի գլխի պէտք է օխտը մաղթանք կատարես, մեծ աւետարանը պէտք ա դուրս բերես. ամեն մաղթանքի պէտք ա օխտը տաւար մորթի... Բա ես թող կանեմ, որ իմ ռահաթը, իմ ժողովուրդը, Աստ-

ծուն մոռանայ ու հող ու մոխիր կորչի, խուլ ցաւի ըռեխն ընկնի։ Զէ, քանի ես ուզբաշի եմ, էդհէնց բան իմ օրչեստումը *) պատահիլ չի։

—Զօրանաս դու, ուզբաշի Աղասի,—ասաց տէր-Գալուստը,—ես գիտեմ, ես գիտեմ, որ դու ամեն բան ինձանից լաւ ես հասկանում։ Բարձր իշխանութեան հրամանն ա քեզ ստիպում աղբերի ետևից ընկնել, թէ չէ դու քո ժողովրդի հետ միմիայն Աստծու փեշը կը բռնես. ի՞նչ արած, հրամանը թունդ ա։

—Հա՛, ա տէր, հրամանը շատ ա թունդ, շատ. պէտք ա կատարած. իշխանութիւն ա, մեր մեծն ա, մեր տէրն ա. հրամանն, ասում են, գբրնատուրի վրայ Պետրիպօլիէն ա եկել է, հանաք չի. պէտք ա կատարեմ։ Հ՛ը, ա խալխը, ի՞նչ էք տաղ արել,—դարձաւ տանուտէրը ամբոխին,—վաքիլներ ջոկեցէք, ասեցէք՝ ո՞ւմ էք ուզում. խելքը գլխին չորս մարդ ջոկեցէք։

—Ուզբաշի.—լսւեց ամբոխի միջից մի ձայն.—ներողութիւն արա՛. մի խօսք ունենք ասելի։

Հը՛, ի՞նչ ես ուզում ասես, Ղուկաս, ասա՛. լսում ենք,—ասաց տանուտէրը։

—Բարձր իշխանութիւնը մեր օգտի համար ա էդ հրամանն ուղարկել. հասկանում ենք. Աստուած նրան մեզ համար հաստատ պահի,—ասաց Ղուկասը։ Դու ու մեր տէրը լաւ խօսացիք. շնորհակալ ենք. դու քո իշխաններով ու սուդիաներով գիշեր-ցերեկ մեզ համար ես ցաւում ու մտածում. էդ մենք գիտենք. դրա համար էլ ենք շատ շնորհակալ։ Ամա մի բան կայ. եթէ հիմի մենք մեր բանն ու գործը թողնենք ու աղբերի ետևից ընկնենք, դեղը մաքրել սկսենք, մեր տները կը քանդուեն մեր գլխներին։ Էսօր ահը ո՞ր օր. ա. մեր հնձի, մեր փնջի, մեր կալ ու կուտի վախտն ա։ Գիւ-

*) Համայնքում։

ղումն էնքան աղբն ու աղբանոց կայ, որ եթէ հիմի մեր բանն էն շինենք, նրանց ետևից ընկնենք, երկուսերեք ամսուամը չենք պրծնիլ. բա ո՞վ կը հնձի մեր արտերը, ո՞վ կը կալսի մեր կալերը. խուլ ցաւը եկած լաւ ա, քան մենք մեր արտերից ու կալերից ընկած։ Գիւղումը մեր պապերի, մեր տատերի ժամանակներից, Ղզլբաշի ու Ջաւադ-խանի դօվրից աղբեր կան կիտած. հեշտ չի նրանց դէն ածիլը. թող մնան. բանից երբ պրծնենք, դէն կածենք. առաջներիս ձմեռը մեր բանն էդ կը շինենք։ Ով ա գիտում, բալքի Աստծու ողորմութիւնը հասնում ա ու խուլ ցաւը գալիս չի։ Աստծու պատիժ ա, տէրն ասեց. աղբերի միջիցը հօ չի դուրս գալիս հիւանդութիւնը։ Աստուած մեր ու մեր տէրի աղօթքները կը լսի, մեր մատաղները կընդունի, մեզ կը խնայի. ոնց մեր պապերից սկսած մինչև հիմի մեզ կը խնայի. ոնց մեր պապերից սկսած մինչև հիմի եօլա ենք գնացել, օրէս ետն էլ էնհէնց եօլա կը գնանք...

—Ադա, տաղ արա՛, տաղ արա՛, հարամզադա,—ասաց բարկացած տանուտէրը,—ամեն տեղ ու ամեն բանի մէջ կոտրած գդալի պէս մէջ ես ընկնում. ըռեխդ քեզ հաւաքի. ի՞նչ ա, բարձր իշանութիւնից դու շատ ես հասկանում. նրա խելքը քոնի չափ էլ չի բան կտրում նրա հրամանը սուտ ա։

—Ներողութիւն արա՛, ուզբաշի,—ասաց Ղուկասը,—մեղայ Աստծու, ես էդհէնց բան չեմ ասում. բարձր իշխանութեան հրամանը սուրբ ա մեզ համար. մենք խնդրում ենք միայն, որ հիմի մեզ թող անես մեր բանին գնանք, իսկ դեղը ձմեռս թամուզ կանենք։

—Անկարելի ա, հրամանը շատ ա թունդ։

—Ուզբաշի, խնդրում ենք. ուզբաշի, մեր տները կը քանդուեն, եթէ բանից ընկնենք. շատ ենք խնդրում, ուզբաշի,—լսւեցին ձայներ այս ու այն կողմից։

—Հրամանը Պետրիպոլիկէն ա է, Պետրիպոլիկէն, ասեցի. ինչ ա, ուզում էք, որ ես իմ իշխաններով Սբիր գնամ. կարելի չի, պէտք ա գեղը մաքրենք։

—Ուզբաշի,—ասաց դարձեալ Ղուկասը,—թագաւորը ողորմած ա, նա քեզ ու քո իշխաններին կը բաշխի, ողորմածութիւն կանի. խնդրում ենք, մեզ մեր բանիցը գցիլ մի։

—Քեզ ասում եմ՝ տաղ արա. սուս,—հրամայեց խրոխտ ձայնով տանուտէրը։

—Ահը ինց տաղ անեմ. տունս քանդում ա է. արտերս ու կալերս մնում են։

—Ադա, էդ հարսմղադին տարէք տուն գցեցէք,—գոռաց տանուտէր Աղասին,—ես դրան բխոված պէտք ա ուղարկեմ գբրնատուրի կուշտը, բխոված. դրա անունը սև դաւթարումը գրիլ պտեմ տալ։

—Գզիրն իր օգնականներով իսկոյն յարձակուեց Ղուկասի վրայ ու քաշեց նրա թեւից. նա մի փոքր ընդիմադրութիւն ցոյց տուեց, բայց մի քանի ուժգին հարուածներ ստանալով գլխին. վզակոթին ու մէջքին, քայլերն ուղղեց դէպի գիւղական դիւանատան տակ գտնուող մութ, խոնաւ ու կեղտոտ նկուղը, ուր նրան բանտարկեցին ու դուռը նրա ետևից ամուր կողպեցին։ Տանուտէրի այդ վճռական քայլից յետոյ այլ ևս ոչ ոք չը խօսեց իշխանութեան կարգադրութեան դէմ, ու առողջապահիկ յանձնաժողովը, չորս հոգուց բաղկացած, ընտրուեց. բոլոր անդամներն էլ ընտրուեցին տանուտէրի սովորական շքախմբից, գիւղի դատաւորներից ու իշխաններից, նրանցից, որոնց հետ տանուտէր Աղասին սովորաբար «թաս է բռնում»... Ընտրուածները պաշտօնապէս, գրագիր մահտեսի Առաքելի ձեռքով կազմած արձանագրութեամբ, յայտարարուեցին «խուլ ցաւի վաքիլներ», իսկ տանուտէր Աղասին «վաքիլբաշի», այ-

սինքը նրանց գլխաւոր, ղեկավար, նախագահ։ Յայտարարուեց, որ յանձնաժողովը կը սկսի իր գործունէութիւնը վաղուանից, երկուշաբթի օրից ու պաշտօնապէս ման կը գայ գիւղում, կը շրջի նրա բոլոր հայաթներն ու փողոցները, շաբաթը նրեք անգամ՝ երկուշաբթի, հինգշաբթի ու կիրակի օրերը. տանուտէրն աւելացրեց, որ նա ոչ-պաշտօնապէս ամեն օր պէտք է շրջի գիւղը, մենակ կամ ընկերներով, ու վայ նրան, ում հայաթում կամ գոմում աղբ կը տեսնի։

Երբ համայնական ժողովի նիստը վերջացաւ, իշխաններից մի քանիսը դիմեցին տանուտէրին ու խնդրեցին, որ ների բանտարկուած Ղուկասին. տանուտէրը գործը քիչ ծանրացնելուց յետոյ վերջապէս նեռրից, Ղուկասի վզին երկու վեղրս գինի ու մի «թեթեւ» խորոված դնելով։ Նոյն երեկոյեան Ղուկասի տանը այդ գինին խմեց ու խորոված կերաւ և այդպիսով տանուտէր Աղասին ազատեց Ղուկասին շղթայակապ նահանգապետի մօտ գնալուց...

III

Հետևեալ օրը վաղ առաւօտեան առողջապահիկ յանձնաժողովը, տանուտէր Աղասի առաջնորդութեամբ, գրագրի ու գզրի ուղեկցութեամբ, սկսեց իր գործունէութիւնը։ Գիւղացիներին խստիւ հրամայուած էր մնալ գիւղում ու դուրս կրել աղբը գիւղի շրջակաները. զանցառուներին սպառնում էր մեծ տուգանք. այդ պատճառով համարեա բոլորն էլ մնացել էին գիւղում, բոլորն էլ, կանանց ու երեխաների հետ միասին մաքրում էին հայաթները, տները, գոմերը, փողոցները ու դուրս էին կրում աղբը, բայց վերջինս այնքան շատ էր, որ ամիսներ էին հարկաւոր նրա գիւղից դուրս

կրելու համար։ Յանձնաժողովը երևում էր այս ու այն հայաթում. մի տեղ նկատելով ջանասիրութիւն, խրախուսում էր աշխատաւորներին, միւս տեղ նկատելով անփութութիւն, սպառնում էր, որ տուգանք կառնի անհոգներից, տուն կը գցի, կը բանտարկի։ Փողոցներում ու հայաթներում աննկարագրելի թոզ էր կանգնած. կանայք, փոքրիկ տղաներն ու աղջիկները մի-մի աւել ձեռներին բռնած սրբում էին շտապ-շտապ, մանաւանդ երբ նկատում էին հեռից մօտեցող «խուլ ցաւի վաքիլներին» ու նրանց առաջնորդին, ահարկու տանուտէր ու վաքիլբաշի Աղասուն»։

Փոքրիկներին այնպէս էր թւում, թէ «խուլ ցաւը» գտնւում է նրանց գրպաններում. բաւական է նրանց բարկացնես քիչ, որ ցաւն իսկոյն հանեն նրանք իրանց գրպաններից ու վարակեն, կոտորեն մարդկանց, այդ պատճառով նրանք անչափ ահարկու, զարհուրելի էին գիւղական մանկտիի համար։ «Դէ հա, աշխատեցէք, լաւ սրբեցէք, ղօչաղ շարժւեցէք,—քաջալերում էր վաքիլբաշին,—բարձր իշխանութիւնից հրաման կայ. Նրանում ասւած ա՝ որ գեղը թամուղ պահեն, էն գեղի վրայ խուլ ցաւ չի գնալ։ Հայ, ապրէք, հա, էդ էնց, էն աղբերը տեղովը դուրս տարէք գեղից։ Ով իշխանութեան հրամանը լաւ կատարի, նրա համար թագաւորից մեդալ պիտի գայ հա, լաւ իմացէք, եթէ տղամարդ ա. իսկ եթէ կնիկարմատ ա, նրա համար էլ թագուհից ոսկի մատանի պտի գայ. երեխանց համար էլ կանփետ պտէն ուղարկիլ, կանփետ։ Դէ, ապրէք, հա. նամուս-ղէյրաթով շարժւեցէք»։ Վաքիլները այս ու այն հայաթը մտնելով, այս ու այն կըտուրը բարձրանալով կրկնում էին մօտաւորապէս նոյնը. «էդ ի՞նչ բանի էք. ի՞նչ բանի էք. ի՞նչու չէք էս աղբերը հաւաքում, կորցնում էստեղից,—գոռում էր

վաքիլբաշին, նկատելով որ և է տեղ անփութութիւն, դանցաւորութիւն. բա դուք վախում չէք ինձանից. բարձր իշխանութեան հրամանը ձեզ յայտնի չի՞. էս աղբերը եթէ մինչև երեք օրը էստեղից չը հաւաքէք ու կորցնէք, ձեզ տանով-տեղով գրընատուրի կուշտը կուղարկեմ, ձեր անունները գրընատուրը սև դաւթարումը կը գրի, իսկ ով սև դաւթարն ընկնի, նրա տեղը Սրիրն ա հա։ հրամանը Պետրիպոլկէն ա է, լաւ իմացէք»։ Երբ պատահում էին քիչ շատ հակաճառողներ, յետադիմութիւն խնդրողներ, վաքիլբաշին բարկանում էր սաստիկ, հայհոյում, նոյն իսկ ծեծում էր հակաճառողին, հրամայում էր գրագրին արձանագրութիւն կազմել՝ դատարանին ներկայացնելու համար, սպառնում էր տուն գցել, բանտարկել. մի-երկու անզուսպ հակաճառողների տուն գցեց առաջին օրը։

Այդպէս վարւում էր նա ըստ սովորականին գիւղական խեղճերի հետ. համփանների, հարուստների հետ խօսելիս այդպիսի բաներ թոյլ չէր տալիս իրան, իսկ հարուստների հայաթներում ու գոմերում անհամեմատ աւելի աղբ կար, քան խեղճերի։ Վերջիններս բացի մի երկու այծից, մի ջորուց կամ աւանակից ոչինչ չունէին, այնինչ համփանների դռներում տասնեակներով էին հաշւում կովերը, եզները, գոմէշները, ջորիներն ու ձիաները. Նրանց հայաթներում աղբի լեռներ կային ուղղակի։ Մի քանի տներում փորձեցին շահել տանուտէրի ու պաշտօնակիցների սրտերը, փորձեցին թրջել «ղօրաւոր հեղուկով» նրանց կոկորդները, բայց աջողութիւն չունեցան. տանուտէր Աղասին կտրուկ կերպով հրաժարւում էր այդպիսի հրաւէրներից ու ստիպում, համոզում էր նոյնն անել յանձնաժողովի միւս անդամներին։ Բոլորն էլ զարմացել էին նրա այդ վարմունքից. այդ գիւղի համար ուղղակի անբնական

երևոյթ էր. գիւղը ինչ գոյութիւն ունի, առաջի անգամն էր պատահում գուցէ, որ տանուտէրը, դատաւորը, իշխանը հրաժարւում էին գինի-արաղից: Համարեա բոլորն էլ իրանց յոյսը «զօրաւոր հեղուկի» վրայ էին դրել. բոլորն էլ հաւատացած էին, որ յանձնաժողովի անդամները ու նրանց նախագահը, «վաքիլբաշին», մի քանի բաժակ կոնծելուց յետոյ կը մոռանան խսպառ թէ բարձր իշխանութեան հրամանը և թէ խօլերան, կը շրջեն գիւղը միմիայն կոնծելու, կուլ տալու համար ու այդպիսով ամեն բան կը մնայ իր նախկին դրութեան մէջ, գիւղացիք էլ կը գնան իրանց բանին-գործին, կը գնան իրանց հնձի-փնջի, կալ ու կուտի յետևից: Աղասին զարմացնում էր նոյն իսկ իր պաշտօնակիցներին: Հիւրասիրութեան մի քանի մերժումներից յետոյ նրանց միջից սկսեցին անբաւականութեան ու բողոքի ձայներ լսել: Երբ մի տեղ Աղասին բարձրաձայն դռռաց մի գիւղացու վրայ, ասելով՝ «չէ, չէ. քո գինի-արաղն ուզում չեմ. գոմդ թամուզ արա, գոմդ ու աղբերդ դուրս տար», վաքիլներից մինը, Գիւլունց Ֆիքին, ասաց կամացուկ ինքն իրան՝ «չոռ, չոռ. ինչի չես ուզում, խի գինի-արաղը փոր կը ծակի՞. մենք ո՞ւմ ենք պարտական, ո՞ւմ օգտի համար ենք էսհէնց չարչարւում. գլխամեռիս հետ չը գիտեմ ի՞նչ ա պատահել, որ էսհէնց թնդացել*) ա»:

—Երևի ուզում ա մեդալ ստանայ,—ասաց վաքիլ Հանէս ամին:

—Այ դա գլուխը քարոնվ ա գալիս,—ասաց վաքիլ Մարութը,—մենք սոված ու ծարաւ մեռնիլ պտենք, հասարակի համար չարչարւելով, թէ ի՞նչ ա, դա մեդալ պտի ստանայ, ես էլ եմ ուզում, ես. մեր հասարակին ես դրանից շատ եմ ծառայել. իմ մեդալն էլ գինի-արաղն

*) Խստացել:

ա. ես իմ մեդալը չեմ թողնիլ, որ դրա պէս հարիւր ուզրաշի էլ ըլի. ես պէտք ա խմեմ:

Խօսակցութիւնը վաքիլների մէջ թէև տեղի ունեցաւ կամացուկ, բայց բաւականին լսելի էր տանուտէրի համար. նա բան չասաց, ձևացաւ, թէ չը լսեց. եթէ խօսէր, անձնատուր կը լինէր նրանց խսկոյն ու այնուհետև ամեն բան տակն ու վրայ կը լինէր, կը մոռացուէր թէ բարձր իշխանութեան հրամանը և թէ խօլերան: Նա աշխատում էր իր որոշման մէջ հաստատ մնալ. նա որոշել էր գործը խստութեամբ տանել, առանց գինի-արաղի, առանց կաշառքի... թէև իր մերձաւորներից ոչ ոքի նա բան չէր ասել երբէք, բայց շատերը գիտէին, որ նա երազում էր մեդալի մասին...

IV

Հայաթից հայաթ, փողոցից փողոց անցնելով՝ առողջապահիկ խումբը կէսօրից մօտիկ հասաւ գիւղի հարուստ առևտրական Գուրգէնի հայաթը, որտեղ իրար կողքի շարած էին աղբի մի քանի կոյտեր: Տանուտէրի ահագին աղմուկ բարձրացրեց, վաքիլները ձայնակցեցին նրան. աղմուկը լսելով, Գուրգէնը դուրս եկաւ խանութից: Նրան տեսնելով, բարկացած պաշտօնեաները մեղմացրին իրանց ձայները ու համոզել սկսեցին, որ մաքրէ իր հայաթն ու գոմերը, օրինակ տայ ուրիշներին, այնպէս չանի, որ ստիպւած լինեն նրա քէֆին դիպչել: Վաքիլբաշին Գուրգէնին էլ յիշեցրեց, որ հրամանը «Պետրիպօլկէն» է: Այդ բառը նա արտասանում էր մի տեսակ խորհրդաւորութեամբ, ուժգին շեշտելով «օ» հնչիւնը. նա նրա աչքում մի ահագին, գերբնական զօրութիւն ունէր: Այդ բառը բարձրացնում էր նրա պրեստիժը ամբոխի աչքում,

խոր տպաւորութիւն էր թողնում վերջինիս վրայ, ուստի տանուտէր Աղասին իր թէ պաշտօնական և թէ ոչ պաշտօնական խօսակցութեան մէջ տեղի-անտեղի գործ էր ածում նրան։

—Լաւ, լաւ, ասաց Գուրգէնը,—կը մաքրեմ հայթաթս, աղբերը դուրս կը տանեմ. էս մի երկու օրը բանս շատ ա. շուտով կը սկսեմ. հիմի եկէք գնանք տուն. արևումը կանգնիլ միք. շատ ա կէծ ու շոգ։

—Ի՞նչ կայ տանը,—հարցրեց տանուտէրը։

—Ֆո ի՞նչ բանն ա, թէ ինչ կայ,—ասաց վաքիլ Ֆիքին,—էդ մարդը կանչում ա, գնանք էլի։

Միւսներն էլ նրա ետևից կրկնեցին՝ «գնանք»։ Աղասին չը կարողացաւ ընդդիմադրել իր իշխաններին. նրանք ներս մտան։ Գուրգէնը պահարանի խորքից հանեց արաղի մի շիշ, գեղեցիկ յայտարարանկարներով ծածկուած։ Շիշը հէնց իր արտաքին անսովոր տեսքով իսկոյն յափշտակեց հիւրերին։ Տանուտէրը, նկատելով բանն ինչումն է, հաւատարիմ մնալով իր որոշման, բացականչեց՝

—Չէ, չէ, չէ. էդ անկարելի բան ա. բարձր իշխանութեան հրամանը թունդ ա, էդ ուզում չեմ։

—Այ դու գլուխդ քարոնվ ես տալիս,—ասաց բարկացած Ծատուրը,—ինչու չես ուզում. ուրիշ ժամանակ բօթիլկէն արաղի հետ հօ կուլ կը տաս։

—Ա՛ Ծատ, դու ուզում ես ինձ քէյարուռ անես, խայտառակես մեր իշխանութեան ու հասարակի առաջին,—ասաց Աղասին։

—Բա դու էլ ուզում ես ինձ սուված ու ծարաւ սպանես,—ասաց Ծատուրը։

—Գուրգէն, արաղն ածա, մտիկ մի տալ,—ասաց Մարութը։

—Ատա արաղ չի, արաղ. մի լաւ մտիկ տուէք,

ձեր աղբաթը խէր ըլի, տեսէք էս ինչ զատ ա,—ասաց Գուրգէնը,—Աղասի ամի, դարձաւ նա տանուտէրին,—մի տես՝ հէնց ա հալած ոսկի ըլի, ոսկի։ Դու գիտում ես, թէ ես քեզ հասարակ արաղ եմ ուզում խմացնել. սա արաղ չի. ուրիշ զատ ա։

—Բա որ արաղ չի, էդ ի՞նչ ա.—հարցրեց խիստ հետաքրքրուած տանուտէրը։

—Կանեակ ա, կանեակ։

—Կանեանդ. դա ի՞նչ զատ ա։

—Փռանգի արաղ ա։

—Փռանգի արանդ. իմ օրումը խմած չեմ. դէ մի ածա, տեսնեմ,—ասաց Աղասին։

—Իդհէնց է, էդհէնց տղամարդ կաց, ուզբաշի Աղասի,—ասաց ուրախացած վաքիլ Մարութը—էսհէնց արաղ գբրնատուրն ա խմում, նաչալնիկն ա խմում, կէնտկէնտ էլ երևի պրիստաւն ա խմում. էդ մեծ պատիւ ա մեզ համար. Գուրգէնն ապրի։

—Համ արաղը կը խմենք, համ մեր բանը կանենք, ուզբաշի Աղասի, միամիտ կաց,—ասաց վաքիլ Գիւլունց Ֆիքին։

Գուրգէնը ածեց կօնեակը. վաքիլբաշին ու վաքիլները մի-մի բաժակ խմեցին, որի վրայ պանիր, հաց ու ձուկը նախաճաշեցին ու նրանց վրայ էլի մի-մի հատ հրաշալի հեղուկից կուլ տուին «խո՛ուայ, էս ա զատ հա», կրկնելով ամեն մի բաժակի վրայ։

—Փռանգի տունը չը քանդի. էս ա զատ, որ նա հնարել ա հա. աշխարհիս իմաստութինը նրան է տուած տեղոնվ էլի,—ասաց Ծատուրը,—ինձ եթէ օրը մի թաս սրանից տան, կեանքս մահու կը տամ մեր հասարակութեան համար։ Հրաշալի տպաւորութեան տակ յանձնաժողովը դուրս եկաւ Գուրգէնի տնից։

—Գուրգէն, քեզ մատաղ—ասաց փափկած տանու-

տէրը հայաթով անցնելիս,—որ ազատ ժամանակ ունենաս, էս աղբերը մի հանգով հեռացրու հայաթէդ, արևիդ մատաղ։ Որ բանն ինձ մնայ, քեզ իսկի չեմ նեղացնիլ. բարձր իշխանութիւնը հրամայել ա. ճար չի կայ, պէտք ա կատարենք. նաչալնիկը գալ պիտի. հրամանը Պետրիպօլկէն ա։

—Լաւ, Աղասի ամի,—ասաց Գուրգէնը,—մինչև միւս կիրակի իմ հայաթում մի չոփ անգամ չի լինիլ. ամեն բան կը հեռացնեմ. գոմերս էլ կը մաքրեմ։

—Ատա Գուրգէնը կանի, դա իրան խօսքին հաստատ ա,—ասաց Մարութը,—Գուրգէնի արևին մատաղ ես. դրա պէս տղամարդ մեր գեղումը չը կայ. ինչ մեր գեղումը, էս սաղ մհալը եթէ քանդես, ոչ մի գեղում էդ հէնց սրտաբաց տղամարդ չես գտնիլ։ Եկէք հիմի, եկէք գնանք տեսնանք՝ Աւագիմն ինչ բանի ա։

—Էսօր գնանք Աւագիմի տունը,—հարցրեց տանուտէրը։

—Հա՝ բա ինչ. տասը գոմ ունի նա. մինչև նրա գոմերը կը պտտենք, օրը կը մթնի,—ասաց վաքիլ Ինքին։

—Էսօր պէտք ա անպատճառ Աւագիմի դաղնանէն *) պրծնենք, որ էգուց կարողանանք գեղի նեղքի թաղը մաս գանք,—ասաց տանուտէր Աղասին։

Յանձնաժողովը գնաց գիւղի միւս հարուստի, Աւագիմի տունը։

V

Հայաթը մտնելուն պէս վաքիլբաշին ու վաքիլները սարսափելի աղմուկ բարձրացրին։ «Էս ինչ

*) Ինքնութիւնը

ա,—ասաց տանուտէր Աղասին,—էսքան էլ աղբը կը լինի մի հայաթում. էս հօ երկու ամիս պէտք ա կրուի, որ վերջանայ, տասն էսքան էլ երևի գոմերումը կայ։ Էս հօ տեղովը խուլ ցաւի բուն ա. նաչալնիկը որ էս աղբերը տեսնի, Աւագիմին Սիբիր կուղարկի։ Աւագիմ,—կանչեց նա բարձրաձայն տան տիրոջը,—էդ ինտեղ ես, ինչ ես թագ կացել. դուրս եկ։ Մահտեսի, գրի,—դարձաւ նա գրագրին,—Աւագիմի վրայ էս սհաթիս մի պրիտակօլ*) գրի...»։ Այդ բոպէին Աւագիմը դուրս եկաւ գոմերից մինից, որտեղ նա աղբ էր կիտում դուրս տանելու համար։

—Աւագիմ,—դարձաւ նրան Աղասին,—բա ես մինչև հիմի գիտացել եմ, թէ էս գեղումը քեզանից խելօք մարդ չի կայ. դու էդ ինչ բանի ես. էս աղբերը ինչու չես էստեղից ռադ անում։ Բարձր իշխանութեան հրամանը երէկ քո կշտին չի կարդացինք, ա աղբաթիխէ՞ր։

—Ես էլ հէնց աղբերի ետևից եմ էլի,—ասաց Աւագիմը,—բա տեսնում չէ՞ք. մինչև մի երկու շաբաթը բոլորը դուրս կը տանեմ գեղից։

—Ի՞նչ երկու շաբաթ. երկու օրումը պէտք ա պրծնես, երկու օրումը,—ասաց վճռաբար տանուտէրը,—նաչալնիկը ամեն սհաթ կարող ա գալ. դու ուզում ես որ քո պատճառով իմ տունը քանդուի։

—Մենակ քոնը չի քանդուիլ. մեր տներն էլ կը քանդուեն, որ տաղ անենք,—ասաց վաքիլ Ծատուրը,—Աւագիմ, էլ շատ խօսալ մի,—դարձաւ նա Աւագիմին,—մշակներ վարձի ու էս աղբերը կորցրու էստեղից։

—Ի՞նչ ա, փողդ քիչ ա,—ասաց Գիւլունց Ինքին,—աղբերը շուտով կորցրու էստեղից, թէ չէ պրիտակօլ կանենք ու էս սհաթիս գբրնատուրին կուղարկենք։

*) Արձանագրութիւն։

—Անունդ սև դաւթարումը կը գրի,—ասաց Մարութը։

—Հող ու մոխիր կը կորչես, երեխէքդ եթիմ կը մնան,—ասաց վաքիլ Հանէս ամին։

—Լաւ, լաւ. ինչ ասում էք կանեմ, կը կատարեմ,—ասաց Աւագիմը,—իրաւունքը ձերն ա. ես վիճաբանութիւն չեմ անում։ Լուսաբացին մտել եմ գոմը ու դեռ պրծել չեմ. հոգիս դուրս ա եկել, էնքան աղբն եմ թուի արել. սոված մեռնում եմ. դեռ հացի պատառ չեմ կերել էսօրի։

—Բա մենք կերել ենք. մենք էլ չենք սոված մեռնում,—ասաց Գիւլունց Քիքին,—դու լաւ ա քեզ համար ես աշխատում, իսկ մենք հասարակի*) համար ենք սոված-ծարաւ չարչարւում։

—Եկէք գնանք մի պատառ հաց ուտենք,—ասաց Աւագիմը։

—Զէ, ըւիլ չի, անկարելի ա,—ասաց վաքիլբաշին,—առաջ աղբերդ ուդ արա ու յետոյ մեզ կանչի։

—Ատա աղբաթիխէրի մարդիկ, ուդ կանեմ,—ասաց Աւագիմը,—եկէք մի պատառ հաց կերէք, միերկու թաս գինի խմեցէք ու յետոյ ինձ վրայ պրիտակօլ էք անում, արէք. իրաւունքը ձերն ա. հասարակի ընտրած մարդիկ էք. ես սկօրիտ**) չեմ անում ձեզ հետ, վիճում չեմ։

—Զէ, ըւիլ չի, ասեցի։

—Ո՞նց չի ըւիլ. սոված մեռնում եմ. ինչ ա հասարակի համար չարչարւիլ պտեմ ու գնամ իմ տանը հաց ուտեմ. չէ, ով ինձ կանչի, նրա տանը պտեմ ուտիլ։ Աւագիմը լաւ ա ասում. տաղ արած առաջ ընկի.

*) Հասարակութեան։

**) Сговоръ.

գնա—ասած Ծատուրը, թեթևակի հրելով տանուտէրին։

—Ահր գբռնատուրը կը լսի. սև դաւթարի մէջ կընկնենք,—փորձեց ընդդիմադրել տանուտէրը։

—Լսիլ չի, գնա. շատ մի խօսալ։ Աւագիմի սիպտակ գինիից եթէ ես էսօր չը խմեմ, գիշերը քունս տանիլ չի,—ասաց Ծատուրը։

—Առաջ ընկի, ուզբաշին իր իշխաններին լաւ կը պահի։ Էն անտէր փռանգի արաղը սիրտս էրում ու խորովում ա. նրա վրայ պէտք ա մի բօլ գինի ածի, որ հովանայ,—ասաց Մարութը։

Վաքիլբաշին այլ ևս չընդդիմադրեց. յանձնաժողովը իր ամբողջ կազմով Աւագիմի ետևից մտաւ նրա տունը։

Սկսւեց կեր ու խումը. մի պատառ հացը ու միերկու թաս գինին դարձան կատարեալ ճաշկերոյթ։ Աւագիմը փորձուած մարդ էր. նա նախօրօք լաւ պատրաստութիւն էր տեսել. գինին առատ էր ու ընտիր։ Ճաշկերոյթը դարձաւ քէֆ, որը տևեց մինչև երեկոյ։ Վաքիլներն ու նրանց պետը խմում էին Աւագիմի գինին, գովում նրան ու օրհնում նրա տուն ու տեղը։ Մոռացւեց իսպառ Աւագիմի հայաթի ու գոմերի աղբը. նրան յայտնեցին, որ իր քէֆին է թողնւում ամեն բան. կարող է մաքրել, երբ հնձից և կալ ու կուտից պրծնի։

—Աւագիմ, շէն կենաս,—ասաց նրան տանուտէր Աղասին տնից դուրս գալիս,—Աստուած օջաղդ ու որդիքդ պահի։ Էս գեղումը եթէ քեզ պէս մի հինգ մարդ ըւէր, ինձ էլ իսկի դարդ չէր ըւիր, իսկի։

—Ատա դա ինքը մենակ բօլ ա, բօլ. ես դրա արևին մատաղ,—ասաց Ծատուրը,—տարին քանի անգամ ենք դրա տանը խմում. իսկի մի անգամի էլ ա Աւագիմի դուռը մեր առաջին փակ տեսած էք։

—Չէ, դրա դուռը միշտ բաց կենայ ու դրա սուփ-ըէն էլ միշտ փռած,—ասաց Մարութը,—ը՛հ, Աւագիմ, —դարձաւ նա վերջինիս,—գեղի աչքի լիսն ես, գեղի. եկ մի պռոշտի անեմ քեզ հետ, ա ռաշիդ տղամարդ։

Աւագիմն ու Մարութը գրկախառնուեցին ու համբուրուեցին տաք-տաք։

Աւագիմը սաստիկ զգացուեց սիրոյ ու համակրութեան այդ բուռն արտայայտութիւնից։

—Ատա տունը իմը չի, ձերն ա, ձերը,—ասաց նա,—խնդրում եմ՝ ամեն օր եկէք, խմեցէք, քէֆ արէք։ Էս օրւայ քէֆը հէչ. սա, ոնց ասեմ, էնհէնց մի թիթև ներգործութիւն էր... Լաւ քէֆը մնում ա. սպասեցէք մի Մակին գայ, տեսէք՝ ոնց ենք քէֆ անում. մեծ ատենաբանութինը էն վախտը պիտի ըլիլ։

Աւագիմը սիրում էր իր խօսակցութեան մէջ գործածել այստեղ-այնտեղ պատահաբար լսած գրականական բառեր։ Ունկնդիրների վրայ այդ տպաւորութիւն էր գործում։ Մակին գիւղի առաջին հարուստն էր ու Աւագիմի մտերիմ բարեկամը։

—Ատա Մակիի արևին էլ մատաղ, քո արևին էլ, —ասաց տանուտէր Աղասին,—էս գեղի պարծանքը, էս գեղի զարդարանքը դուք էք, դուք. առանց ձեզ գեղը քանդւած լաւ ա, քան կացած։

Տանուտէրն էլ համբուրուեց Աւագիմի հետ։

Մթին էր արդէն, երբ «առողջապահիկ» յանձնաժողովի անդամները ու նրանց պետը, օրօրւելով, պատերից բռնելով, ցրուեցին իրանց տները։

VI

Երբ յանձնաժողովը ճաշկերոյթի նստեց Աւագիմի տանը ու յափշտակւեց նրա գինով, գիւղացիների

մեծամասնութիւնը, լաւ իմանալով, որ վաքիլները մթնացնելու են այնտեղ, թողեց աղբակոյտերը ու շտապեց մօտակայ դաշտերը հնձի. գիւղում մնացին ամենաերկչոտները միայն։ Հետևեալ օրը վաղ առաւօտեանից յանձնաժողովը դարձեալ շրջել սկսեց գիւղը։ Առաջի օրւայ խստութիւնները էլ չէին նկատւում։ Տանուտէր Աղասին արդէն քանդել էր իր պասը, խախտել էր իր որոշումը՝ նախ Գուրգէնի տանը, յետոյ Աւագիմի, ուստի ուրիշների առաջարկութիւնները, հիւրասիրութիւնը մերժելը նա անարդարութիւն էր համարում ուղղակի. ամեն տան համարեա մի բան կուլ էր տալիս. մի տեղ գինի, մի ուրիշ տեղ արաղ. պատահում էր, որ միևնոյն տանը համ մէկից էին ճանկ զցում, համ միւսից. նախաճաշում էին պանիր հացով, շուշանով, կաղամբով կամ բոխով. Ասածու տւածից մի բան ճարւում էր նոյն իսկ ամենաաղքատ տանը։ Գինու ու արաղի անկանոն խառնուրդը այն հետևանքն ունեցաւ, որ կէսօրից շատ առաջ յանձնաժողովի բոլոր անդամները ու նրանց նախագահը պատերից բռնելով՝ մի կերպ հասան իրանց տները, ուր լաւ քնելուց յետոյ, իրիկնապահին միայն մի քիչ թեթևութիւն զգացին իրանց գլխներում։

Տուն գնալիս տանուտէրը խստիւ պատուիրեց գզրին, որ նա հսկի գիւղի մաքրման, բայց գզիրը այնպիսի դրութեան մէջ էր, որ նոյն իսկ չը կարողացաւ պատերից բռնելով իր տունը հասնել. տանուտէրին տուն ճանապարհելուց յետոյ նա անշնչացած դիակի պէս ընկաւ մի պատի ստւերում ու խռմփալով մրափեց մինչև իրիկնաժամը։

Նոյն օրը, երբ գինին ու արաղը վերջնականապէս յաղթանակը տարան, բոլոր գիւղացիներն էլ գնացին իրանց գործին՝ որը հունձ գնաց, որը կալ կալ-

սելու. ամառուայ սովորական աշխատանքը, հազիւ մի օր կանգ առնելուց յետոյ, վերսկսւեց իր ամբողջ ծաւալով։ Գիւղի մաքրման, աղբակոյտերի ոչնչացման մասին այլ ևս ոչ ոք չէր մտածում, ու այդպէս շարունակւեց գիւղի կեանքը։ Արձանագրութիւններից ու տուգանքներից անպայման ազատ մնալու համար ամեն տան կանայք պատուէր ստացան, որ առողջապահիկ յանձնաժողովը երևալուն պէս մի-մի աւել առնեն ձեռները ու սրբեն հայաթն ու մօտակայ փողոցը՝ ցոյց տալու համար, որ յանձնաժողովի կարգադրութիւնները ճշտութեամբ կատարւում են։ Բայց այդ բաւական չէր. յանձնաժողովը դրանով ոչ մի դէպքում չէր բաւականանալ։ Այդ քաջ գիտէին գիւղացիները, ուստի վաքիլների ու նրանց պետի սրտերը շահելու համար՝ ամեն տան, նոյն իսկ ամենաաղքատ, որոշ չափով գինու ու արաղի պաշար կար պատրաստած. պատուիրած էր տնեցիներին, որ երբ յանձնաժողովը սաստիկ բարձրաձէնի ու սկսի արձանագրութիւն կազմել, այն ժամանակ ներս հրաւիրել նրան՝ «մի-մի բերան անցաւորաց օղորմի տալու» համար, մի կտոր հաց ուտելու, մի-մի բաժակ գինի կամ արաղ խմելու... «Աղջի,— ասում էր իր կնոջ արտը գնացող գիւղացին,—բան ա, ասելիլ չի, եթէ էսօր ոչ բարով էն գիլերը *), ուղբաշին ու խուլ ցաւի վաքիլները գան ու էս աղբերի մասին խօսան, դու մի էվիլ ձեռդ առ ու սրբի հայաթը. ինչքան խօսան, ուշունց տան, մեր մեռել-կենդանն էլ որ քաշեն, տաղ արա, բան չի ծպտաս. ամա որ տեսնաս պրիտակօլ են շինում, շտրափ են վրճռում, կանչի տուն, մի ճուղը քալամ ա, մի աման շուշան ա, ըռեխները գցի ու մի-մի ստաքան գինի կամ արաղ տու, թող գլխներին զահրիմար անեն,

*) Գայլերը։

կորչեն։ Եթէ տան արաղը հերիք չանի, գնա դուքանից մի բօթլիկա էլ բեր, միայն թէ մեզ վրայ պրիտակօլ չանեն ու բանի էս թունդ վախտը ինձ գործից գցեն տունը կրակ ընկածները...»

Ամեն օր վաքիլբաշին ժողովում էր իր վաքիլներին ու վաղ առաւօտեան սկսում իր արշաւանքը։ Խժում էին նրանք առանց որևէ չափ ու սահմանի ու շատ սակաւ էր պատահում, որ առանց պատերից բըռնելու գնան իրանց տները։ Կէսօրից ոչ ուշ վերջանում էր նրանց «գործունէութիւնը». տաս-քսան հայաթ պտտելուց յետոյ նրանք անկարող էին լինում ոտների վրայ կանգնել... Ցաւոտի է, որ «զօրաւոր հեղուկը» հանաք անել չէ սիրում։ Թէև որոշած էր, որ շաբաթը երեք անգամ միայն ման գան, բայց նրանք ամեն օր ման էին գալիս. ինչ էին կորցնում. լաւ ուտում էին, լաւ խմում, ևս առաւել խմում ու օրը մի-մի բուբլի հասարակութիւնից, ինչպէս ընդունած է այդ գիւղում, վաքիլավարձ ստանում. իրանց արտերի և կալ ու կուտի մասին բնաւ չէին մտածում. նրանց որդիները նրանց տեղ ամեն բան անում էին։

—Էս էլ լաւ բան ա է, էս տներ, հայաթներ թամուզ անիլ տալը. օղորմի սրա ադաթ դնողի հօրը. շիտակ քէֆ ենք անում,—ասաց մի անգամ լաւ կոնծելուց յետոյ Ծատուրը։

—Թամամ բարիկենդան ա, բարիկենդան մեզ համար,—ասաց Մարութը,—ով ղօշաղ ա, թող խմի, բօլ խմի. ամեն անգամ էսհէնց բան ճանկ չի ընկնիլ։

—Խուլ ցաւը որ գայ, շատ մարդկանց տներ կը քանդի. ամա մեր տները հալա դեռ շինում ա, տեսնենք՝ չար աչքից հեռու ենք մնում, թէ չէ,—ասաց Գիւլունց Գիքին։

—Դեռ չը եկած, մենք նրանից շահւում ենք էս

ա. բոլ-բոլ խմում ենք ու քէֆ անում ամեն օր. եա բախտ,—ասաց վաքիլ Հանէս ամին։

—Համ խմենք, համ գործ շինենք. գեղը պահպանենք է, գեղը. խուլ ցաւի ըռեխը ետ տանք, բանձր իշխանութեան հրամանը լաւ կատարենք,—ասաց վաքիլբաշի Աղասին։

Հերթով ամեն հայաթ ու ամեն տուն մտնելով, առողջապահիկ յանձնաժողովը կրկին այցելեց խանութպան Գուրգէնին՝ ստիպելու նրան իբրև թէ մաքրելու իր հայաթը, բայց իսկապէս «փռանգի արաղից» կրկին փորձելու։ Գուրգէնի հայաթում աղբակոյտերը մնում էին իրանց տեղերում. բացի այդ գոմից նոր աղբ էր դուրս թափած ու հայաթում փռած. դարշահոտութիւնը աննկարագրելի էր։ Յանձնաժողովի հարցին՝ թէ ինչու համար է աղբը, Գուրգէնը պատասխանեց՝ չորացնելու, յետոյ աշնանը խաղողի այգին տանելու համար։ Տանուտէր Աղասին յիշեցրեց Գուրգէնին բարձր իշխանութեան հրամանը, ստիպւած եղաւ յիշեցնել և այն, որ նա «Պետրիպօլկէն» է, ակնարկ արեց արձանագրութեան մասին, նոյն իսկ գրագիր մահտեսուն իր մօտ կանչեց... Գուրգէնը, լաւ իմանալով նրա ու նրա շքախմբի փորացաւը, ներս հրաւիրեց բոլորին էլ. խմացրեց կարգին, բայց ոչ «փռանգի արաղից», այլ հասարակ նահապետականից։ Յանձնաժողովը յուսախաբւեց. Գուրգէնին օրհնում ու գովում էին, բայց առանց որևէ ոգևորութեան։ Տանուտէր Աղասին չը կարողացաւ իրան զսպել. դարձաւ Գուրգէնին ու կամացուկ ասաց նրա ականջին՝

—Բա նրանից չը կա՞յ։—Ինչից։—Փռանգի արաղից.—Չէ։—Ո՞նց թէ. իսկի չը կա՞յ։

—Մի ային-օյին կայ. բոլորիդ էլ հերիք չանիլ։—Դէ որ էդհէնց ա, պահի, ինձ ջոկու կը տաս։—Լաւ,

էգուց առաւօտ մենակ եկ։—Կը գամ. ուրիշ ոչ ոքի չը տաս։

Մեծ կասկածով նայեցին վաքիլները նրանց խօսակցութեան, բայց բան չասացին, զսպեցին իրանց։

Հետևեալ օրը վաղ առաւօտեան, շրջելով իր պաշտօնակիցների ուղեկցութեամբ Գուրգէնի տան շրջակայ հայաթները, տանուտէր Աղասին թողեց յանձնաժողովը նրա հարևան հայաթներից մինում, իսկ ինքը շտապով գնաց Գուրգէնի մօտ։ Վերջինս լուացւում էր, երբ տանուտէրը մտաւ տուն։

—Դէ հա, պրծի,—ասաց վաքիլբաշին,—էն զահրիմարը բեր մի՝ տեսնեմ գլխիս ինչ հողն ու ցեխն եմ տալիս։

—Աղասի ամի, վռազիլ մի. նստի հանգիստ, հանդարտ միասին մի լաւ չայ խմենք առաջ, յետոյ կանեակ։

—Ատա չէ, չէ. քո հօրն օղորմի, կանոխ արա, չայն ուզիլ չի. դէ հա. էն գիլերն էն ա հրէ ետնից գալիս են. փռանգի արաղի հոտն առել են. հէնց արա գլխիս հարամ չանեն. պրծի, քեզ մատաղ. էսօր բան շատ ունեմ. նաչալնիկից թազա հրաման կայ։

Գուրգէնը հանեց պահարանի խորքից կօնեակի շիշը։ Վաքիլբաշին երկու բաժակ իրար ետևից կուլ տուեց ու Գուրգէնի գլխին և արևին մատաղ դնալով, շտապով դուրս թռաւ նրա տնից, որպէս զի յանձնաժողովի անդամները նրան յանցանքի, մենակ խմելու, տեղը չը բռնեն։ Թելքը կտրած տեղերը նա այդպէս մենակ էր գնում ու մենակ իր բանը տեսնում...

VII

Համարեա ամեն օր յանձնաժողովը այցելում էր գիւղի առաջին հարուստ ածխագործ Մակիի հայաթն ու

գոմերը, որտեղ աղբի վիթխարի լեռներ ու լեռնաշղթաներ կային։ Մակին տանը չէր լինում. բոլոր ժամանակ հեռաւոր անտառներում իր ածխահորերին հսկում էր. համայնական ժողովի հռչակաւոր նիստին, ուր ընտրւեց հռչակաւոր յանձնաժողովը, նա ներկայ չէր։ Իւրաքանչիւր անգամ յանձնաժողովը ահագին աղմուկ էր բարձրացնում Մակիի հայաթում, սպառնում արձանագրութեամբ, նահանգապետի սև դաւթարով ու իւրաքանչիւր անգամ լաւ խմում։ Մակիի կինը, փափկացնելով այդպէս վաքիլբաշու ու նրա պաշտօնակիցների սրտերը, մի կերպ եօլա էր տանում նրան՝ մինչև իր ամուսնու գալը ու կամացուկ ետևներից գլուխները հողելով, ճանապարհում իր հայաթից։ Վերջապէս շաբաթ երեկոյեան Մակին իր բազմաթիւ ջորիներով ու ծառաներով վերադարձաւ ածխահորերից։ Կիրակի օրը, առաւօտուայ ժամից յետոյ, «առողջապահիկ» յանձնաժողովը իր ամբողջ կազմով ու պաշտօնական լրջութեամբ քօղարկւած, գնաց նրա մօտ։ Մակին հայաթում կանգնած զրուցում էր իր հարևաններից մինի հետ. նա արդէն ամեն բան գիտէր, լսել էր իր կնոջից ու հարևաններից։ Հայաթի խորքում ծառաներից մինը մի ոչխար էր քերթում. Մակին այդ օր մատաղ էր անում։ Երբ յանձնաժողովը մտաւ հայաթը, տանուտէր Աղասին դարձաւ Մակիին ասելով՝—Ա Մակ, բա ես չուայ*) հիմի գիտացել եմ, թէ դու մի նաչալնիկի խելք ունես. քեզանից խելօք մարդ չեմ ճանաչել էս գեղումը. բա հիմի դու էդ ի՞նչ բանի ես, աղբաթիխէր. էդ ո՞րտեղ ես. էսօր երեք-չորս շաբաթ ա, ինչ դու գեղումը երևում չես։ Կիրակի օրը ճամպա պահեցինք, որ գաս, խելք խելքի տանք, խորհուրդ անենք, չեկար. առանց քեզ խորհրդակցութիւն արինք։

*) Մինչև։

Բա դու լսել չէ՞ս, որ աշխարհիս համար Աստծու պատիժ ա եկել, չոռ ու ցաւ ա եկել. Ղզլբաշի հողումն ահը խուլ ցաւն երևացել ա, էսօր-էգուց գալու ա մեզ մօտ։

—Լսել եմ, լսել, ո՞նց չի. երկու շաբաթ առաջ եմ լսել,—ասաց Մակին։

—Բա որ լսել ես, էդ ո՞րտեղ ես։ Դու ոչ թէ մենակ քո տան, այլ ամբողջ գեղի դարդը մեզ պէս պէտք ա միշտ սրտումդ պահես. պէտք ա մեզ պէս էդ բանի համար ցաւես, գեղը մաքրել, թամուզ անել տաս։

—Շատ եմ ուզում ձեզ պէս գեղի համար ցաւել, ամա բանս շատ ա է, շատ, ուղբաշի Աղասի,—ասաց Մակին,—ածխահորերը մի կողմից, արտերս ու կալերս էլ միւս կողմից հոգիս հանում են, հոգիս. շունչ քաշելի անգամ ժամանակ չունեմ։

—Լաւ. ճշմարիտ ես ասում,—ասաց տանուտէրը,—գիտում եմ, որ բաներդ շատ են. գեղի համար ցաւելու ժամանակ չունես. քո հայաթն ու գոմերը գոնէ թամուզ արա, աղբերդ գեղից դուրս տար։

—Ի՞նչի համար։

—Որ խուլ ցաւը չը գայ գեղս։

—Ի՞նչ ա. խուլ ցաւը իմ աղբերի միջից պէտք ա դուրս գա՞յ։

—Դէ էդ էդ էնց են ասում. բարձր իշխանութիւնից հրաման կայ։

—Դրա ասողը գլուխը քարոտը ա գալիս,—ասաց քիչ բարկացած Մակին,—իշխանութիւնը էդ էնց խելաւ բանն ասիլ չի. էդ կաղէթ գրողի հնարած բան ա. հաւատալ մի՞ք։ Գեղի մեծն ես, քեռխւայ ու ուղբաշի ես, քեզ ի՞նչ վայել ա քո իշխաններով էդ էնց սարսաղ բաների ետևից ընկնելը, կաղէթ գրողի խելքով բան բռնելը. քեզ քահանաներ ունես, դպիրներ ու տիրա-

ցուններ ունես. նրանց վերցրու, քո ժողովուրդը, քո ռահաթը եաևիցդ արա ու գեղի գլխաւոր ճանապարհների վրայ թափօրներ ու մաղթանքներ կատարել տուր, մատաղներ մորթել տուր, որ Աստուած իր ցասումը մեզանից ետ դարձնի, խուլ ցաւը մեր գեղը չուղարկի։

—Էդ էլ պտենք անել. էդ ամենամեծ բանն ա,—ասաց Աղասին,—տէր-Գալուստը դրա մասին խօսացել ա արդէն. եկող կիրակի օրից սկսել պտենք մաղթանքները. ուզում ենք առաջ գեղը մաքրենք, ասում են՝ նաչալնիկը գալ պիտի մտիկ տայ։ Բա ինց չի. վճռած ա. օխտը մաղթանք պէտք ա կատարենք ու ամեն մաղթանքի օխտը տաւար մորթենք։

—Էդ խելօք բան ա, էդ խելօք բան ա, դրան հաւան եմ,—ասաց Մակին։

—Ա՛ Մակ, քեզ մատաղ, եկ մեզ խաթրն արա. ինչ որի ա, հայաթդ ու գոմերդ թամուզ արա. քո պատճառով վախում եմ փորձանքի մէջ ընկնենք,—ասաց տանուտէր Աղասին։

—Հիմի կարող չեմ. բանս անչափ շատ ա. աշունքը կամ ձմեռս տեսնենք, բալքի էն վախտը կարողանամ,—ասաց Մակին։

—Ահը հրամանը շատ ա բարձր տեղից է, ա Մակ. Պետրիպօլիէն ա,—ասաց, ուժգին շեշտելով վերջի բառը, տանուտէր Աղասին։

—Բան չի կայ։

—Ո՞նց չի բան կայ, աղբաթիխէր. ուզում ես, որ գբընատուրը մեզ Սբիր ուղարկի։ Էսօր մի շաբաթ ա, ինչ մենք հալալ հաց ու ջուր չունենք,—ասաց վաքիլ Ծատուրը,—սոված-ծարաւ գեղն ընկած հասարակութեան օգտի համար չարչարուում ենք։

—Էն էլ ինց ենք չարչարուում. թամամ շան օրի ու շան հալի ենք գիշեր-ցերեկ,—ասաց Մարութը։

—Հոգիս որ ձեռքիս ըլի, բաց կը թողեմ։—ասաց Գիւլունց Ֆիքին,—էս քանի օրին էնքան էստեղ-էնտեղ խօսացել, էնքան ուշունց ենք տուել անզգամ կանանց, էնքան մեռել-կենդան ենք քաշել, որ մեզանում էլ հոգի ու հաւատ չի մնացել։

—Վա՛յ մեզ, վա՛յ մեր հոգուն. հասարակի օգտի համար մենք նրան մեր ուշունցներով դժոխքի բաժին ենք դարձնում,—ասաց վաքիլ Հանէս ամին։

—Ո՞նց ասեմ. շաբթիս էնքան մեռել-կենդան ենք քաշել, էնքան մեծի ու փոքրի ուշունց տուել, որ պէտք ա էստեղից ոտով Երուսաղէմ գնանք, բալքի կարողանանք մեղքերի տակից դուրս գալ,—ասաց Մարութը,—ինչ շահ ունենք մենք, ում օգտի համար ենք ուշունց տալիս ու մեր հոգին մեղքի տակ գցում։

—Ո՞նց թա ում օգտի համար,—ասաց զարմացած Ծատուրը,—հասարակութեան օգտի համար ենք ուշունց տալի, գեղի, ժողովրդի համար ենք ուշունց տալի, խուլ ցաւի ըռեխը ետ տալու համար ենք ուշունց տալի։

—Քանի-քանի անգամի ենք եկել հէնց էստեղ, քո հայաթն, ա Մակ, որ թամուզ անել տանք. իմացիր, որ խաթրդ շատ մեծ ա մեզ մօտ, քեզ շատ պատիւ ենք արել, որ մինչև հիմի պրիտակօլ չենք արել քեզ վրայ. եթէ քո տեղ մի հասարակ ռահաթ մարդ ըլէր ու նրա հայաթում էնքան աղբեր, նրա վրայ հիմի տասը պրիտակօլ էինք շինել ու տասն անգամ էլ կարկաժը թակել,—ասաց վաքիլբաշի Աղասին։

Ծօսողները յանախակի նայում էին քերթուող ոչխարին։ Մակին խօսակցութեան հէնց սկզբում նկատեց այդ ու իսկոյն հասկացաւ նրանց փորացաւը։

—Լաւ, լաւ, պրիտակօլը յետոյ կը շինէք,—ասաց նա,—եկէք գնանք տուն մի երկու թիքայ մատաղի խորոված ուտենք. այ տղայ, Ղազար,—դարձաւ Մակին ծառաներից մինին,—ոչխարի ջգարը, պլոճիկներն ու թոքերը խորովի. շուտ, կանոխ արա։

—Ա՛ Մակ, քեզ մատաղ, բա էսօր մենք բան շատ ունենք,—ասաց տանուտէրը,—վախում եմ մեզ շատ պահես ու բանից գցես. էսօր սուղը նստիլ պիտի. գործեր շատ կան քննադատելի։

—Վախիլ մի, գցիլ չեմ, ոտի վրայ ձեռաց մի-մի թիքայ խորոված կերէք ու մի-մի թաս գինի խմեցէք ու գնացէք,—ասաց Մակին։

Աղասին ուզեց մի քիչ էլ նազ անել, բայց պաշտօնակիցները բողոքեցին ու ուղղեցին իրանց քայլերը Մակիի ետևից. տանուտէրը հետևեց նրանց օրինակին։

Մի-մի թիքայ խորոված դարձաւ կարկին նախաճաշիկ, նախաճաշիկը ճաշ, իսկ ճաշը քէֆ, որը տևեց ամբողջ օրն ու երեկոն։ Երբ գործը լուրջ կերպարանք ստացաւ, Մակին ուղարկեց իր մտերիմ Աւագիմի ու գիւղի միւս իշխանների ու ազդեցիկների յետևից։ Դատարանի նիստը յետաձգւեց. բոլոր դատաւորները, որոնց թւում էին Ծատուրն ու Մարութը, Մակիի տանն էին։ Գործ ունեցող գիւղացիներից մի քանիսը փորձեցին բողոքել. նրանք եկան Մակիի տունը, որ խնդրեն տանուտէրին՝ չը յետաձգել նիստը. ամբողջ ամիսներով նրանք սպասում էին իրանց գործերի քննադատութեան, բայց արբած գզիրը, որը կանգնած էր տան դռան, սպառնալով մտրակով ու հայհոյելով, խռկեց նրանց ասելով՝ «Շուն շան որդիք կորէք, ռադ ըլէք. էսօր ուզբաշին իր իշխաններով ու մեծամեծներով քէֆ ա անում. զահլայ միք տանի, գնացէք. հրաման չի կայ»։

Երբ հիւրերի կառարները չափից դուրս տաքացան, Մակին ուղարկեց դաւալների ետևից։ Այդպիսի քէֆերը նա երբեմնակի սարքում է. նրանց շնորհով է նա իր ազդեցութիւնը զօրեղացնում գիւղում. նրանց շնորհով է նա իշխում գիւղում, իբրև նրա միահեծան իշխան՝ ենթարկում իրան ոչ միայն հասարակ գիւղական ամբոխին, այլ և գիւղի իշխանաւորներին, որոնց ձեռքին է ամբոխի ղեկը։ Մինչև աքաղաղների կանչելը զուռնա-դաւալը ածում էր Մակիի տանը։ Հիւրերը ուտում էին ու խմում, խմում անխնայ ու անվերջ և գովում, մեծարում էին Մակիին. խօսում էին իրանց գործունէութեան մասին «օգուտ հասարակաց», տաք-տաք վիճաբանում էին ու պարում։ Թամադան Աւագիմն էր. ամեն մի կենաց առաջարկելուց յետոյ նա ստիպում էր սեղանակիցներից մէկին կամ միւսին պարել ի պատիւ այն անձնաւորութեան, որի կենացը խմւում էր։ Երբ քէֆը հասաւ իր գագաթնակէտին, Աւագիմը կանգնեց տեղից, հրամայեց դաւալներին լռել ու մեծ խորհրդաւորութեամբ մի կարճ, բայց ազդու ճառով առաջարկեց բարձր իշխանութեան կենացը. բոլորն էլ յոտնկայս խմեցին։ Տանուտէր Աղասին առանց թամադայի առաջարկութեան հասկացաւ իր անելիքը. հրամայեց դաւալներին ածել «քեօխվի հաւայ», տանուտէրական կոչման վայել մի եղանակ՝ դաւալական բեպերտուարի բազմաթիւ եղանակներից ամենազիլն ու ամենախրոխտը, ու մէջ ընկաւ պարելու. վաքիլբաշին ու տանուտէրը պարեց, շատ երկար պարեց ի պատիւ բարձր իշխանութեան... Պարելիս երբեմնակի դարձնում էր նա երեսը դաւալներին ու բարձրաձայն աղաղակում նրանցից առաջինի հասցէին.

—Ղաւալ Աւագ, լաւ փչի, Ղաւալ Աւագ. ջահիլու-

թինդ միտդ գցի. բարձր իշխանութեան պատուի համար ա էս պարը...

Կէս գիշերը վաղուց էր անցել, երբ հիւրերը ցրուեցին։

Ցրուելիս տանուտէրը, վաքիլներն ու իշխանները գրկախառնուում էին Մակիի հետ, տաք-տաք համբուրուում ու գովում, անչափ գովում նրան։

—Ես քեզ մատաղ, ա Մակ,—ասաց տանուտէրը,—ես չուայ հիմի գիտացել եմ, թէ դու մի նաչալնիկի խելք ունես. չէ, սխալ եմ ըլել, շատ սխալ. ներողութիւն արա, բաշխի. դու թամամ մի գբրնատուրի խելք ունես, մի գբրնատուրի։

—Ատա՛ քո աղբաթը խէր ըլի, էդ ի՞նչ ես ասում, ի՞նչ,—դարձաւ նրան Ծատուրը,—Մակին օխտը գբրնատուրի խելք ունի, օխտը գբրնատուրի։

—Մին էլ Զաւադ-խանին ա դրա չափ խելք ըլել,—ասաց Գիւլունց Ռիքին։

—Մեր գեղումը Մակի պէս ազդեցութին անող մարդ չի կայ,—ասաց Աւագիմը։

—Հ՛հ, ես Մակի արևին մատաղ, ես,—ասաց Մարութը,—դա մեր գեղի համար համ գբրնատուր ա, համ խան։

Տանուտէր Աղասին կրկին ու կրկին անգամ համբուրեց տան շէմքում Մակի հետ ու ասաց խորին ոգևորութեամբ.

—Ա՛ Մակ, էստեղից չուայ Պետրիպօլկ, էստեղից չուայ Պետրիպօլկ ես իմ իշխաններով քեզանից շնորհակալ եմ, ա՛ Մակ։ Քեզ ու քո օջախը Աստուած մեր գեղի համար հաստատ պահի, միշտ հաստատ։

—Ես էլ էստեղից չուայ Երուսաղէմ եմ քեզանից ու քո իշխաններից շնորհակալ, ուղբաշի,—ասաց խիստ զգացուած տանուտէրական արտաքոյ կարգի շնոր-

հակալութիւնից Մակին,—տունը իմը չի, քոնն ա, քոնը. գեղի մեծը, գեղի տէրն ես դու. ամեն օր քո իշխաններով եկ, կեր, խմի Աստծու տուածից, քէֆ արա՛...

Մակիի ծառաներից երկուսը բռնեցին տանուտէրի կռներից ու տարան նրան իր տուն։ Գդիրը փորձեց նրանց օգնել, բայց, հաղիւ երկու քայլ արած, վայր ընկաւ անզգայ. նշանաւոր կենացները նա ամբողջ շիշերով էր խմել։ Վաքիլներն ու միւս հիւրերը պատերից բռնելով անյայտացան գիշերային մթութեան մէջ...

ՈՒՂԵՐՁԸ

I

Գիւղական դպրոցի միակ սենեակը, որը համ դասարան է, համ դահլիճ, դպրոցական հանդիսավայր ու հասարակական ժողովարան, ու համ էլ ուսուցչի բնակարան, ծայրէ ծայր լիքն է մարդկանցով։ Կանայք չը կան, ի հարկէ։ Ժողովը անչափ բազմամարդ է. ներկայ են գիւղի ղեկավարները՝ իշխանները, բոլոր պաշտօնեաները տանուտէրի գլխաւորութեամբ ու քահանաները. ներկայ է գիւղի ողջ ժողովուրդը։ Հազւագիւտ դէպքերում է գումարւում այդպիսի ժողով ու մեծ դժւարութեամբ, մեծ ջանքերով գլուխ գալիս։

Հրաւիրել է ժողովը տանուտէրը, հրաւիրել է վարժապետի ու միակ պիտակից հոգաբարձու Բախշիի խնդրանօք՝ երկար ձգձգումներից, երկար ու բարակ նաղ անելուց ու վարժապետի մօտ մի քանի անգամ իր օգնականով ու չօուշով *) լաւ հիւրասիրելուց, լաւ կոնծելուց յետոյ... Իշխաններից էլ եղել են հիւրասիրողներ. այլ կերպ, միմիայն տանուտէրի բարեհաճութեամբ, ժողովը գլուխ գալ չէր կարող... Գինի-արաղի ու համապատասխան այլ «ային-օյինի» համար ամսաչափ ձգձգումների ընթացքում վարժապետն իր խղճուկ գրպանից հինգ-վեց մանէթ փող ծախսեց, վարժապետական մի ամսւայ ապրուստը վատնեց, փըշացրեց...

*) Գզիրով։

Կէսօրից մօտիկ ժողովավայրը լցւեց մարդկանցով։ Ժողովականները տեղ գրաւեցին աշակերտական նստարանների վրայ. շատերը նստեցին ուղղակի յատակին՝ նստարանների վրայ տեղ չլինելու պատճառով. շատերը կանգնած մնացին, քանի որ յատակի վրայ նստելու տեղ չը մնաց։ Հինգ-վեց հոգի՝ երկու քահանան ու մի երկուսը հասակաւոր ազդեցիկներից՝ տեղաւորուեցին անկիւնում գտնւող վարժապետի մահճակալի վրայ։ Իբրև բռնոթի քաշող մարդիկ վարժապետի անկողինը առատութեամբ տոգորեցին նրանք ոգելից փոշու բուրմունքով։ Տանուտէրն իր շքախմբով վարժապետի հետ միասին տեղ գրաւեց նրա գրասեղանի մօտ։ Ըստ երևոյթին գիւղում էլ փափխաւոր չէր մնացել. բոլորն էլ ժողովավայրումն էին, բայց գործի չէին դիմում. ինչ որ մէկի սպասում էին, որը խոստացել էր գալ, բայց դանդաղում էր։ Տանուտէրն ինքն էր նրա ետևից գնացել ու խոստում առել։ Ժողովից երկու անգամ չօուշին ուղարկեցին ետևից, բայց ապարդիւն. երկրորդ անգամ չօուշը երբ վերադարձաւ, վշտացած դէմքով յայտնեց, որ նա կտրուկ կերպով հրաժարւեց ժողովի գալ ու դեռ մի լաւ էլ ուշունց տւեց թէ ժողով հրաւիրողներին և թէ առհասարակ ժողով-մողով ադաթ դնողներին... Տանուտէրն ստիպւած եղաւ ուղարկել նրա ետևից իր օգնականին, որը նոյնպէս դատարկ վերադարձաւ։ Երիտասարդներից առաջարկողներ եղան առանց նրա դիմել ժողովի պարապմունքներին, բայց իրականութեան հետ լաւ ծանօթ խելացիները յայտնեցին, որ առանց նրա բան չի գլուխ գալ. պէտք է նա լինի անպատճառ. թէ հու չէ կը քանդի առանց իրեն ընդունած որոշումները, եթէ նոյն իսկ միաձայն լինեն ընդունւած. մարդն ուժ ունի. հանաք չի. քէֆն ուզած վախտը մատի մի շարժումով

գեղը տակն ու վրայ է անում... Իրար դէմքի նայեցին ժողովականներն ու լուռ արտայայտեցին, համաձայնեցին, որ այդ այդպէս է, որ առանց նրան բան չի գլուխ գալ՝ ինչքան էլ այդ բանը օգտաւէտ լինի գիւղի համար... Քիչ մտածելուց յետոյ տանուտէրը դառաւ նրան ժողով բերելու միջոցը. պէտք էր կոնատակերը տալ, գնալ առօք-փառօք բերել. ուրիշ ճար չը կար. վերցրեց իր հետ քահանաներից աւագին ու վարժապետին ու գնաց նրա ետևից։

Շուտով դռան մօտ կուտակուած ամբոխը յետ-յետ եղաւ, ճանապարհ բացեց, ու տանուտէրի, տէրտէրի ու վարժապետի ուղեկցութեամբ ժողովավայրը մտաւ ինքը գիւղի տէր-տնօրէնը, Առստամ ապէրը, ամենաազդեցիկը գիւղի ղեկավարներից, գիւղի իշխաններից։ Նրան ասում են նաև Առստամ ուղբաշի, Առստամ քեօխւայ, բայց պատկառելի հասակին աւելի վայել է Առստամ ապէր անունը, որով և նա յայտնի է ոչ միայն իրենց ու շրջակայ գիւղերում, այլ և ամբողջ գաւառում. գաւառի ինտելիգենտները նրան Բիսմարկ Առստամ ապէր են ասում։

Խրոխտ արտաքինի տէր ծերունին հէնց որ երևաց շէմքում, ժողովականները ոտքի կանգնեցին. նստած մնացին միմիայն երիտասարդներից մի քանիսը, որոնց Առստամ ապէրը շատ խեթ նայեց, անչափ խեթ. նրանց մեռել-կենդանը կը քաշէր ձեռաց, եթէ փուչ կենդանիների վրայ դաշոյններ ու ատրճանակներ չլինէին։ Զահիլ-Ջհուլը էն փիս ժամանակը, խմբերի դօվրին, մեծերի ձեռքի տակից դուրս եկաւ ու էնինչ փչացաւ խսպառ. խելքաւոր մարդը պէտք ա նրանց հետ բնաւ գլուխ չդնի... Առստամ ապէրը, իբրև խելքաւոր մարդ, անչափ խելքաւոր, գլուխ չդրեց նրանց հետ ու ուղղեց իր քայլերը դէպի դրասեղանը։ Նրան

հրաւիրեցին նրա մօտ նստել, բայց նա, հետևելով տէրտէրների խորհրդին, գերադասեց վարժապետի փափուկ անկողինը, նստեց յենուելով ձեռնափայտի վերայ երկու տէրտէրի մէջ, որոնք իսկոյն հանեցին բռնոթամանները ու մօտեցրին նրան։ Երկուսին էլ պատուեց Առստամ ապէրը. երկուսի բռնոթամաններից էլ մի-մի պտղունց ոգելից փոշի վերցրեց ու ախորժակով ծծեց, բռնոթոտ մատները մաքրելով վարժապետի անկողնով։ Երբ բոլորն էլ նստեցին, Առստամ ապէրը դիմեց տանուտէրին ու ասաց՝

—Հը՞, ի՞նչ կայ. խէր ըլի, ի՞նչի համար ա էս մարաքէն*) հաւաքել էստեղ։

Ժողով բերելիս տանուտէրն ու վարժապետը համառօտ կերպով բացատրել էին Առստամ ապօրը ժողովի նպատակը, բայց այդուամենայնիւ նա ցանկացաւ հրապարակով իմանալ՝ թէ ի՞նչու համար է հրաւիրուած ժողովը։

—Վարժապետն ա խնդրել, Առստամ ապէր,—ասաց տանուտէրը,—նրա խնդրանօք եմ մարաքէն հաւաքել։ Խորհուրդ ունի մեր պարուն վարժապետը, բան ունի ասելու ժողովրդին. էդ մասնին քաղկէն կաղէթ ա եկել վրէն. էն կաղէթն էս ա էստեղ կարդալ պտի։

—Բա խելքօլանը շէնը տակն ու վրայ կանի, էսքան մարդը հաւաքի, թա ինչ ա՝ վարժապետը կաղէթ պտի կարդա՞լ,—ասաց Առստամ ապէրը,—կարդում ա կարդայ, մեզ հետ ի՞նչ դարդ ունի. մեզ խի՞ ա բանից գործից գցում... Թէև օրը կիրակի ա, ամա էլի հազար դարդ ունենք էսօր. էն ճամբի փողը թողվի պտենք անիլ, պասրեդնիկի կուշտը մարդ պտենք ուղարկիլ, հանդի պլանը քաշիլ տալու համար փող պըտենք հաւաքիլ. հա, լաւ ա միտս ընկաւ, ամենից ա-

*) Մարաքա—բազմութիւն, հանդիսականների ստաւ թիւ։

ռաջ էսօր պէտք ա ստրաժնիկների չադիրփուլին*) հաւաքենք. որ միտն ասեմ. էդ լօխ թող արած, դու էսքան մարդը հաւաքել ես էստեղ, որ թամաշա անենք տեսնենք, թա վարժապետը ոնց ա կազէթ կարդում։

—Զուր չի դրան ջոկու տեսանք,—ասաց վարժապետի ականջին հոգաբարձու Բախշին,—դրան պէտք ա առաջուց առանձին ղոնաղ արած ըլէինք ու բերանը մի լաւ եղած. գլխամեռը գործը փչացնելու ա։ Ամեն ա-բաղն ու գցովի չայը ոչինչ. էն բանի տեղ չի անցել։

—Ահը էդհէ չի է, Առստամ ապէր,—ասաց տանուտէր Շամիրը,—էդ կազէթը, որը վարժապետի վրայ եկել ա, ջոկ ջուռա կազէթ ա. նրանցից չի, էն որ ամեն օր վրէն գալիս ա։ Ասում են էդ կազէթը օխտը տարէնը մի հետ ա դուրս գալիս. քաղկի ամենաերևելի, էն մեծ իմաստուն մարդիկն են շինել էդ կազէթը, մեր մեծերն են շինել էլի, էն որ գիշեր-ցիրեկ մեզ համար ցաւում են։ Ասուած նրանց բարի տայ. հալբաթ նրանում, էն կազէթումը, ժողովրդի, ռահաթի օգտի համար, մեր օգտի համար այսինքը, մի բան կայ, որ վեր են կալել մեր վարժապետի վրայ ուղարկել. մեզ համար ուղարկել։ Էն մարդիկն էնտեղ, քաղկի մեր մեծերն այսինքը, գիշեր-ցերեկ նստել են, գլուխ ցաւացրել, խելք խելքի տուել, մեր օգտի համար թաղա կազէթ շինել մեզ վրայ ուղարկել. մեզ ինչ կըլի, մեր ինչը կը պակասի, որ նստենք լսենք՝ թա ինչ ա գրած էն կազէթումը։ Է՞, էն կազէթը, էն կազէթը որ կայ... Դէ ես ձեզ ոնց հասկացնեմ, թա ինչ կայ նրանում, թա նա ինչ ա ասում։ Վարժապետը կարդացել ա կշտիս ու մանդրամասնը լօխ հալել գըլուխս ածել, ամեն բան ինձ դաւուրը հանել. գործս էնքան շատ ա, գլխացաւանքս էնքան մեծ ա, էնքան

*) Վրանի փող։

շաղուած եմ դուլլուղով *), որ շատը մտէս ընկել ա, վարժապետը պէտք ա դաւուրը հանի, հասկացնի ամեն բան, կազէթի մէջը նրան ա լաւ յայտնի։

—Ատա, վարժապետ,—դարձաւ նա ուսուցչին,—ինչ ես տազ արել, հէր օխնած. խօսա, կազէթը կարդա, մի լաւ ատենաքանութին արա։ Առստամ ապէր, ինչ ես ասում,—դարձաւ նա Բիսմարկին,—վարժապետը խօսա՞յ, կարդայ կազէթը՞. ինչ ես խորհուրդ տալիս։

—Դէ՞ որ մեզ հաւաքիլ ա տուել, պէտք ա համ խօսայ, համ կարդայ. իրաւունք ունի։ Թաղա, ջոկ ջուռա կազէթը, հա, ընդունում եմ, թող կարդայ ու նրա մէջը մեզ պարզի,—ասաց Առստամ ապէրը.—ա խալխը, լաւ լսեցէք,—դարձաւ նա ժողովականներին։

Լաւուած ուշադրութեամբ բոլորն էլ բևեռեցին իրենց հայեացքը վարժապետի վրայ։

II

Վարժապետն սկսեց խօսել. խօսեց շատ երկար. խօսեց Թիֆլիզում կազմակերպւող յօբելեանական տօնախմբութեան մասին, այն է՝ Շիրվանզադէի յօբելեանի. պատմեց յօբելեարի կենսագրութիւնը, խօսեց նրա գրուածքների մասին. բացատրեց՝ թէ իր գրուածքներով նա ինչ է ասում, ինչ ուսուցանում, ինչպիսի մտքեր է քարոզում, ինչպիսի կարգերի է ձգտում։ Առանձնապէս կանգ առաւ նա այն բանի վրայ, որ Շիրվանզադէն քարոզում է կանանց ազատութիւն, կանանց ու տղամարդկանց իրաւունքների հաւասարութիւն, պահանջում է վերացումն այն ստրկական վիճակի, որում գտնւում են կանայք մեզանում, մեր գիւղերում մա-

*) Ծառայութեամբ։

նաւանդ։ Բացատրեց յօբելեանական տօնախմբութեան նշանակութիւնը ու այն, թէ հասարակութիւնը, ժողովուրդը, այս կամ այն ազգութիւնը ինչ օգուտ ունի այդպիսի տօնախմբութիւնից ու ինչու պէտք է մասնակցի նրան։ Կարդաց ու բացատրեց այն թուղթը, այն «թագակազէթը», որն ստացել էր Թիֆլիզից, որ յօբելեանական գրութիւն էր, որով հայ հասարակութեան գիտակից տարրերը հրաւիրւում էին մասնակցելու տօնախմբութեան։ Վերջում վարժապետն առաջարկեց հասարակութեան՝ մասնակցել տօնախմբութեան ու այդպիսով խրախուսել, քաջալերել յօբելեարին. նա առաջարկեց մի շնորհաւորական համախօսական, մի ուղերձ, ուղարկել յօբելեարին դիւղի հասարակութեան անունից՝ բոլոր չափահաս տղամարդկանց ստորագրութեամբ, վաւերացրած տանուտէրական ստորագրութեամբ ու պետական կնքով ու, բացի այդ, հասարակական միջոցներից քսան-հինգ ռուբլի յատկացնել՝ բերել տալ այդ գումարով թէ նրա գրքերը, թէ ուրիշ գրքեր ու այդ գրքերով յօբելեարի անունով գրադարան հիմնել դպրոցում։ Գրադարանի նշանակութիւնն էլ մանրամասնօրէն բացատրեց։ Համախօսական-ուղերձը վարժապետը պատրաստած ունէր արդէն. գրել էր մի քանի անգամ, մեծ խնամքով խմբագրել ու աւելի մեծ խնամքով արտագրել, գեղագրել... Ընդունելութեան դէպքում պէտք է առաջարկէր, որ հէնց նոյն ժողովում ստորագրի-ու վաւերացի։

Սկզբում մեծ ուշադրութեամբ լսում էին նրան, լսում էին հանգիստ, անթարթ աչքերը նրան յառած. բայց երբ սկսեց խօսել կանանց մասին, երբ նրանց ու տղամարդկանց իրաւունքների հաւասարութեան վերաբերուող մանրամասնութիւնների մէջ ընկաւ, ժողովականների մէջ շարժում սկսուեց. իրար դէմ-

քի էին նայում, գլուխները կախում։ Ամենամեծ անհանգստութիւն նկատուում էր վարժապետի մահճակալի վրայ, որտեղ նստած էին Առստամ ապէրը, քահանաները ու ուրիշ ազդեցիկ աղսախկալներ. քահանաները հանեցին բռնոթամանները, բացան ու դժգոհ, վշտացած դէմքերով մօտեցրին նրանց ըստ երևոյթին խիստ ջղայնացած Առստամ ապէրը, մօտեցրին միւս աղսախկալներին. բոլորն էլ անյագօրէն վեր էիր ծծում ոգելից փոշին, վեր էին ծծում անընդհատ, սովորականից մեծ քանակով, պահպանում այդպիսով իրենց պաղարիւնութիւնը ու լսում խելքը կորցրած վարժապետին...

Հոգաբարձու Բախշին նկատեց այդ. իսկոյն հասկացաւ ինչումն է բանը ու, թեքւելով վարժապետի ականջին, ասաց նրան կամացուկ՝

—Վարժապետ, էդ թիւշումը կարճ կտրի. կնանունց մասին շատ խօսալ մի։ Առստամ հայի ու մնացած աղսախկալների ռամուզը *) խարաբ ըլաւ. գործը փչացնում ես. էդ մասնին տաղ արա, բօլ ա...

Արդէն բանը բանից անցել էր. վարժապետն ականջից չկարողացաւ հեռուել Բախշիի խելացի խորհրդին ու, իր դասախօսութեամբ յափշտակւած, իր ծրագրած ասելիքներն ասաց, շարունակեց մինչև վերջը։ Երբ վերջացրեց, մօտ երկու րոպէ մեռելային լռութիւն տիրեց ժողովարանում։

—Ի՞նչ էք տաղ արել, ինչո՞ւ չէք խօսում,—խանգարեց լռութիւնը Առստամ ապէրը, դիմելով ժողովականներին։

—Ի՞նչ ասենք, ի՞նչ խօսանք,—լուեց ժողովականների միջից,—մեր մեծ խելքաւորը դու ես. առաջ դու խօսա։

*) Դէմքի արտայայտութիւնը։

—Վարժապետի ասածները հասկացա՞ք, ա՛յ մարդիկ,—հարցրեց նա ժողովականներին։

—Հասկացան, ինչ չի. լաւ հասկացան, Առստամ ապէր,—ասաց տանուտէր Շամիրը։

—Չէ՛, լաւ չի հասկացան, ասաց Առստամ ապէրը,—վարժապետը շատը դրափառ խօսաց. շատերի համար շատ բան անհասկանալի մնաց, որ լաւ հասկանային, հիմի մի մեծ տրաքոց կըլէր էստեղ... Հիմքէն կը քանդէին էս ուսումարանը, հիմքէն...

—Խի՛, Առստամ ապէր. ի՞նչ պատահեց որ ուսումարանը հիմքէն քանդեն,—ասաց շշկլուած տանուտէրը,—ուզում ես, ես վարժապետի ասածը մի լաւ, մեր ղայդի, մեր գեղի լեզուաւ, դաւուրը հանեմ, հասկացնեմ ժողովրդին։

—Լաւ, դաւուրը հանի ու թամաշա արա՛ տես ի՞նչ ա ասում խալխը,—ասաց Առստամ ապէրը,—ուզբաշի ես. պրիգօրօր*) պիտի ձեռք քաշիլ տաս հիմի. դաւուրը հանի։

—Ա՛ խալխը,—դիմեց տանուտէր Շամիրը ժողովրդին,—մեր վարժապետն ասում ա, որ քաղկումը, Թիֆլիզի ուրան միջումը, մի երևելի կազէթ գրող ու գիր շինող մարդ կայ. Շիրվանզադով են ասում նրան. մի շամախեցի աղքատ տորոն ծախող մարդի տղայ ա ըլել. ինքն ուրան նամուսի զօռաւ առաջ ա գնացել։ Հէրը մի թիւշում լաւ ա ըլել, բայց ետնայ կոտրն ա ընկել ու էլ կարացել չի ուրան տղին Պետրիպօլիկ ուղարկի ու թագաւորի ուրան կշտի էն մեծ ուսումարանումը ուսում տայ նրան. նա էնքան դոչաղ ու նամուսաւոր ա ըլել, որ ուրան-ուրան կարդացել ա, ինքն ուրան վարժապետն ա դառել ու էդհէնց կարդալով՝ աւետարանը, ժմագիրքը, սաղմոսն ու ճաշոցը, էն մեծ

*) Мирскій приговоръ—համախօսական։

հաստ գիրքն է, ժամի ամենամեծ գիրքը, թամուզ ջուր ա արել, տակէն չէայ գլուխն անգիր սովորել. էդ բաւական չի, դրանից սաւահի հէր օխնածը փռանգի, ինգլիզի ու ռուսի լիւզու ա սովորել ու թամամ իմաստուն ու բարեկամի դառել։ Վարժապետն ասում ա, որ նա ուրան բան ու գործը թող արած, ուրան դաբդը դրաղ դրած, էսօր դիւզ երեսուն տարի ա, ինչ գիր ու կազէթ ա շինում ռահաթի, մեր օգտի համար այսինքը. գրաւ ու կազէթաւ քարոզութին ա անում, լաւ հղըցայ, լաւ ճամբայ ա նշանց տալիս մեզ. էստեղ, ուսումարանումը, խոխէքը նրա շինած գրերաւն են կարդում, մարդ դառնում։ Ոնց ասեցի, էսօր երեսուն տարի ա թամամ, ինչ նա գիր ու կազէթ ա շինում. քաղկումը մեր մեծերը, մեր սենօթաբեղերը, խորհուրդ, մասլահաթ են արել, որ էս աղաքներիս մայիս ամսումը, էն երեսուն տարին թամամած օրը, նրան մի լաւ քէֆ նշանց տան, փեշքէշ ու խալաթներ անեն նրան, որ նրա դամաղը չաղ կենայ, սերտն ուրախ ըլի միշտ, որ օրէս ետն էլ մեր օգտի համար գիր ու կազէթ շինի, դհա լաւ գիր ու կազէթ, որ նրանցով մեր դարդերը, մեր ցաւերը արար աշխարհին յայտնի դարձնի, թագաւորին ուրան յայտնի դարձնի, որ բալքի մեզ համար մի ողորմութին ըլի... Մեր վարժապետն ասում ա, որ հայերն էդ օրը աման տեղից՝ թա քաղաքներից, թա գեղերանքից՝ պէտք ա նրան աչքալիսէք անեն, նրան պատիւներ տան. ասում ա, որ մենք էլ մեր շինի կողմանէ մի պրիգօրօր շինենք ու ուղարկենք քաղաք Շիրվանզադովի ուրան անմով, որ միթամ հա, մենք էլ ենք քեզ ընդունում, քո էդ երեսուն տարին շնորհաւոր ենք անում ու խնդրւում, մեծապատիւ, որ մեր օգտի համար էլ եստ գրես, չէայ քո կեանքի վերջը գրես, մեր էս ռահաթի ցաւ ու չորը

լօխ կաղէթ գցես, փռանգի լիւզաւ, ինգլիզի ու ռուսի լիւզաւ գրեր ու կաղէթներ շինես մեր մասնին, բալքի խաբարը գնայ թագաւորին հասնի ու մի ողորմութին լինի մեզ համար, մեր հարկերն ու կօռ ու բէգառը բալքի պակասեն... Կաղէթի ու գրի դադրը դեռ մենք գիտում չենք. լուսաւորութինը նրանցով ա տարածւում, աշխարհիս եօնը կամաց-կամաց նրանցով ա փոխւում, մենք բէյխաբար... Վարժապետն ասում ա, որ մի ժամանակ մեր ռուս թագաւորի հողումը ռահաթը, հէնց ռուսի ռահաթն ինքը, ճորտ ա ըլել, բէգերի ձեռքին եսիր ա ըլել (փառք Աստծու, մենք ու մեր պապերն էստեղ, մեր երկրումը, ճորտութին չենք տեսել). երևելի ուսումնալ մարդիկը վեր են կալել ու ռահաթի դարդերը կաղէթ գցել, գրել շինել նրանց մասին. էնքան գրել են, որ ախիրն ու վերջը խաբարը թագաւորին ա հասել ու ողորմածը ճորտերին թամուղ ազատել ա, նրանց իրաւունքը բէգերի ձեռքից խլել ա ու ասել՝ օրէս եաը դուք էլ ճորտ չէք. գնացէք ձեզ համար ազատ ապրեցէք... Հիմի տեսէք ու հասկացէք, որ կաղէթը, գիրը ռահաթի օգտի համար ա գրւում. էն Շիրվանզադովն ուրեմն մեր օգտի համար ա գրում. ուրան առուտուրը, ուրան բան ու գործը, ուրան քեասիբութինը թող արած, մտէն գցած, գիշեր-ցերեկ դալամը ձեռքին մեզ համար ա չարչարում։ Հիմի ի՞նչ էք ասում. ընդունում է՞ք որ վարժապետի ասած պրիգօրօրը շինենք ու ուղարկենք նրա՞ն։

—Ուզբաշի, բաշխի, ներողութիւն արա,—ասաց ունկնդիրներից մէկը, էդ պրիգօրօրը որ տանք, հո՞ մեր հարկերն աւելանալ չեն, հո՞ նոր կօռ ու բէգառ չի գալ մեզ համար։

—Չէ՛, էդ էնհէնց աչքալիսէքի, ջանսաղութենի

պրիգօրօրը ա ըլելու, այլ ոչ թա նոր հարկի, նոր կօռ բէգառի։

—Դէ որ էդհէնց ա, ես իմ կողմանէ ընդունում եմ,—ասաց հարց տուող ունկնդիրը։

—Մենք էլ ենք ընդունում, լօխս էլ ընդունում ենք,—լսեցին բազմաթիւ ձայներ։

—Դէ Աստուած ջանսաղութին տայ ձեզ,—ասաց տանուտէրը,—էն էլ ընդունում է՞ք,—շարունակեց նա, որ ոնց վարժապետն ասեց, մի քսանհինգ մանէթ փող թովջի անենք մեր օբչեստի վրայ*) ու էդ փողովն էն պարուն Շիրվանզադովի շինած գրերիցը բերիլ տանք մեր ուսումարանի համար, որ էստեղ մեր խիզանը, մեր խոխէքը**) էն գրերը կարդան ու նրանց միջի իմաստութինը սովորեն... Հը՞, ի՞նչ էք տաղ արել, բարաթ հէնց ա էդ դժւար ընդունելիս լինէք. քսան հինգ մանէթն ի՞նչ ա մեր օբչեստի համար, որ խնայում էք. հէնց գիտացէք, թա մեր պարուն պրիստաւը տարեայ մէջ մի անգամ էլել ա ղոնաղ եկել մեզ։ Ի՞նչ էք ասում. եա հա ասեցէք, եա չէ։

—Ընդունում ենք, էդ էլ ենք ընդունում,—վերջապէս ձայն տուին այս ու այն կողմից։

Ըստ երևոյթին մեծամասնութիւնն ընդունում էր այդ. բողոքողներ չկային։

Վարժապետի ուրախութեան չափ ու սահման չկար. նա արդէն երևակայում էր իր գիւղացիների համախօսական ուղերձը ձեռքին յօբելեանական տօնախմբութիւններին մասնակցելիս Թիֆլիզում, գրողների ու հրապարակախօսների շրջանում. նա, աշխարհից մոռացած խեղճ գիւղական վարժապետը, կեանքում

*) Մասնատրենք մեր հասարակութեան վրայ ու հաշքենք ինչպէս հարկ։

**) Երեխաները։

մի անգամ գոնէ հնարաւորութիւն կունենայ այդպիսով նրանց հետ մտերմաբար ժամանակ անցկացնել։

III

Քահանաները, աղսախկալները, ևս առաւել Առըստամ ապէրը, մռայլ էին ու լուռ։

—Հը՞, ի՞նչ էք տաղ արել,—դարձաւ դէպի նրանց տանուտէրը.—ոչ հա էք ասում, ոչ չէ։ Առստամ ապէր, էդ քեզանից չի. իսկի բան չես ասում։

—Ի՞նչ ասեմ դէ. էդ ա ամեն բան դու ասեցիր. ինձ ասելու բան չթողեցիր,—ասաց դժգոհ տոնով Առստամ ապէրը։

—Չէ, քեզ ասելու շատ բան ունես. պէտք ա ասես. լաւ գիտեմ, որ չւայ դու կամք չտաս, էս բանը գլուխ չի գալու. պէտք ա կամք տաս, Առստամ ապէր. պէտք ա հաստատես մեր ընդունածը։ Մեր մեծ խելքաւորն ես, լօխն էլ քեզ են մտիկ տալիս,—ասաց տանուտէրը, հաստատ հաւատացած լինելով, որ Առըստամ ապօրը գրաւել պրծել է։

—Էդ Շիրվանզադովը խումբապետ ա, չէ՞—հարցրեց Առստամ ապէրը։

Տանուտէրը շփոթուեց ու հարցական դէմքով դիմեց վարժապետին։ Տունքանդութիւն կը լինէր, եթէ հաստատուէր, որ նա խմբապետ է. ի՞նչ կասէր, ի՞նչով կարդարացնէր իրան տանուտէրը, եթէ պրիստաւն ու գաւառապետն այդ բանն իմանային, նրա հրաւիրած ժողովի մասին լսէին. խեղճ մարդը հող ու մոխիր կը կորչէր... Շատ փափուկ հարց տուեց գլխամեռ Առստամ ապէրը։ Մինչև վարժապետի պատասխանելը մէջ ընկաւ հոգաբարձու Բախշին ու ասաց՝

—Չէ, նա խումբապետ չի. նա հոգևոր մասնի մարդ ա։

—Ուրեմն տէրտէր ա, վարդապետ ա,—հարցրեց Առստամ ապէրը։

—Չէ, մարմնաւոր մարդ ա, աշխարհական ա,—ասաց Բախշին,—ամա եօնը *) հոգևորականի ա է. մարդը հոգի ա դատում, հոգու համար ա գրում, էնհէնց որ...

—Լաւ, լաւ. էլ դէս ու դէն մի ընկնիլ. երկու տարբեկան խոխի չես խաբում,—ասաց Առստամ ապէրը,—նա որ մարմնաւոր ա, ուրեմն խումբապետ ա, այլ ոչ հոգևոր մասնի մարդ...

—Հա, խումբապետ ա, մին տակովը, մին գլխովը. դրանով ի՞նչ ես ուզում ասես, ասաց դաշոյն ու մաուզեր կապած մի տաքարիւն երիտասարդ, որը դուրս եկաւ բազմութեան միջից։

Դրութիւնը լրջանում էր։ Այդ նկատեցին ու առաջն առան. ժողովականներից երկու հասակաւոր առաջ անցան, գրկեցին տաքարիւն երիտասարդին ու խնդրելով, աղաչելով ու փաղաքշելով նրան, տարան բազմութեան մէջ ու այդպիսով մի կերպ հանգստացրին նրան։

—Ահը ես լաւ գիտում եմ, որ խումբապետ ա, էնդուր եմ հարցնում, թա տեսնամ՝ ի՞նչ էք ասում,—ասաց Առստամ ապէրը.—ձեր էն մեծ խումբապետներից ա, էն որ մի ժամանակ գալիս էին էստեղ քարոզներ տալիս. Աստծու ու թագաւորի դէմումն էին խօսում՝ միթամ լմա ռահաթի աչքը բաց էին անում. մեզ էլ հու, գեղի մեծերիս, սախկալասալամ**) չէին տալիս, բանի տեղ չէին դնում քնաւ. ձեզ, ջահիլ-ջհուլիդ

*) Ուղղութիւնը։

**) Սախկալասալամ—յարգանք միրուքին. մեր հասակը չէին յարգում։

երես տան, թուր ու թանգը, մոգերն*) ու խանչալը ձեր աստուածը շինեցին, ձեզ կապուկոտոր արին, բրախ տան ու մեր մեջ արին...

—Ա՛ երէց,—դարձաւ նա քահանաներից աւագին, մտիդ չի՞ ինչ անաստուածութիւն էին անում, ի՞նչեր էին ասում հէնց Աստծու ուրան դէմումը։

—Մտիս ա, ոնց չի,—ասաց աւագ քահանան,—Մինքեանդի կոտորածից յետոյ մեծ լիազօրը զինուած խըմբով շէնից շէն ման էր գալիս ու ասում, շատ հէնց մեր, քահանաներիս, աջղու՝ ա հայեր, օրէս ետը մեր Հայր Աստուածը մօսին հրացանն ա, որդի Աստուածը մաուզէր ատրճանակը, իսկ Հոգին Սուրբը աբօյմա պատրօնը. ասում էր, որ մինչև հիմի մենք պաշտել ենք մեր տէրտէրների բռնութաքաշ...

—Տաղ արա՛, տաղ արա՛, ա՛ երէց, էլ ասիլ մի՛,—ընդհատեց նրան Աստամ ապէրը,—նրա ասած խօսքերից Աստծու բարկութիւնը մեզ կը բռնի, ոնց ուրան բռնեց. Աստծու դէմումը որ նա էդ էնց բաներ չասէր, Զիլանդաղի կուումն սպանուիլ չէր. Աստծու դատաստանին մատաղ ես. լաւ պատժեց նրան։

—Աստուած ողորմի մեծ լիազօրին,—ասաց հոգաբարձու Բախշին,—նա մեզ համար կուեց ու մեզ համար մեռաւ. խի՞ ես էդ էնց ասում, Աստամ ապէր։

—Մին նա գլուխներս եղոտ արաւ, մին էլ նա ա անելու, որին ուզում էք հիմի պրիգօրոր տաք, ծաղկացնէք, որ դնա մեծ խմբապետութին անի մեզ վրայ, որի շինած կազէթներն ու գրերը ուզում էք շինի փոդաւ բերել տաք՝ ուսումարան գնացող խոխաներին նրանցով կարդացնելու, ու հէնց ձեր էդ ասածն անելու, ձեր էդ խումբապետի գործը գլուխ բերելու համար էդքան խանչալաւոր ու մոգերաւոր էք բերել

*) Մաուզէր ատրճանակ կամ հրացան։

էստեղ... Դուք էք գիտում. ինչ անում էք, արէք. ինձ իսկի նհախ էք կանչել. ամա էդ բանի խաբարը որ հասնի նաչալնիկին ու գբրնատուրին, մեղքը ձեր վիզը...

Ակնարկը պարզ էր ու անչափ ահաբեկիչ...

Ժողովականները շփոթուեցին ու պապանձուեցին։ Երիտասարդների մէջ իրարանցում ընկաւ. մի քանիսը նրանցից ձեռքերը ջղայնօրէն տարան դէպի ատրճանակներն ու դաշոյնները. փորձեցին առաջ անցնել ու Աստամ ապօր մեռել-կենդանը տակն ու վրայ անել հէնց իրա երեսին... Մեծերը, հասակաւորները ժողովականներից, խիստ նկատեցին այդ, գրկեցին նրանց, այս ու այն անկիւնը քաշեցին ու սկսեցին աղաչել, պաղատել նրանց ասելով կամացուկ՝ «Տղէք, ձեզ մատաղ, տաղ արէք. փիս ժամանակներ են. համ ձեզ կը ՇՄասէք, համ գեղի վրայ կրակ կը բերէք. գեղի տունը կը քանդէք, եթէ նրա դէմումը մի բան անէք. խեղճ եկէք մեզ, ձեզ մատաղ, տղէք ջան. հիմի նրա ու նրա պէտների դօվրանն *) ա։

Տանուտէրը գունաթափուեց ու բոլորովին լիզուն կորցրեց. հայեացքը տաւարի պէս բևեռել էր Աստամ ապօր վրայ ու չէր համարձակւում բան ծպտալ։

Ուսուցիչը փորձեց խօսել, բայց տանուտէրն ու հոգաբարձու Բախշին իսկոյն առաջն առան, խնդրելով կրակի վրայ իւղ չածել ու փորձանք, պատուհաս բերել այդպիսով գիւղի գլխին։ «Ես կը խօսամ նրա հետ,—ասաց Բախշին վարժապետին,—քո բանը չի. դու տնդ արա։ Պէտք ա նրա կոնատակերը տալ, գրաւել նրան մի կերպ. ուրիշ ճար չկայ»։

---

*) Ժամանակը—էպօխան։

IV

—Առստամ ապէր,—դարձաւ Բախշին ահարկու Բիսմարկին,—էս մարաքի, էս հասարակի առաջին երդուում եմ քո մեծութենովը, երդուում եմ էսօրուայ պէս ազիզ օրաւը ու իմ խիզանի արևովը, որ էն պարուն Շիրվանզադովը, ոնց ասեցի, հոգևոր մասնի մարդ ա, խումբապետ չի, գիր շինող ու կաղէթ գրող մարդ ա. մարմնաւոր մասնումը նա իսկի չկայ, իսկի. էն մարդը հոգու ա ղուլլուղ անում, հոգու ա ծառայում, մենակ հոգու...

—Լաւ, խումբապետութինը ղրաղ եմ դնում, ասաց Առստամ ապէրը,—մի պարզն ասեցէք տեսնանք՝ թէ նա հոգու ոնց ա ղուլլուղ անում։ Վարժապետը դրափաւ ասեց. մի երկու խելքաւոր մարդից սաւահի մնացածները բան չի հասկացան. ժողովուրդը դիփ տաւարի պէս մնացել ա տաղ արած։

—Դէ մեր ուղբաշին պարզեց վարժապետի ասածներն էլի,—ասաց Բախշին։

—Չէ, նա ղրաղ-բուլաղէն պարզեց, մէջտեղը, գըլխաւոր մասնը, պրտող ու անհասկանալի մնաց,—ասաց Առստամ ապէրը։

—Դէ դու պարզի, Առստամ ապէր,—ասաց տանուտէրը,—ինձ ներողութիւն արա. ղուլլուղը շատ ա ու գլուխս խառնուած. շալուած մարդ եմ. բալքի լաւ չիմ ղաւուրն ըլել, լաւ չեմ հասկացել վարժապետին. հիմի դու քո գիտեցած կերպաւ պարզի վարժապետի ասածները։

—Լաւ, շատ լաւ. դէ լսեցէք պարզեմ,—ասաց Առստամ ապէրը։

Տիրեց խորին լռութիւն։ Բոլորն էլ լարեցին իրենց ուշադրութիւնը։

Առստամ ապէրը բռնոթի քաշեց, փոշտաց, հազաց մի երկու անդամ, մաքրեց կոկորդն ու սկսեց.

—Ձեր էդ գիր շինող ու կաղէթ գրող պարունը հոգու էնհէնց ա ղուլլուղ անում, որ ասում ա կնանունց կապը բրախ տուէք ու ձեզ հաւասարացրէք նրանց. թողէք, ասում ա, ուրանց քէփն ուզած կերպաւ ապրեն, ոնց, հրէն է, քաղաքներում են ապրում։ Իսկի տեսել է՞ք՝ քաղաքներում ոնց են ապրում,—դարձաւ նա ունկնդիրներին։

—Տեսել ենք, ոնց չի. շատ ենք տեսել, Առստամ ապէր,—ասացին այս ու այն կողմից։

—Հա, ասում ա էնա էնհէնց կնանիքը գեղերանքումն էլ պէտք ա տղամարդկանց հետ կոնբփոնուկ արած ման գան, ասեն, խօսան՝ թէ մեծի, թէ կուճուրի հետ. ասում ա, որ դլխաբաց ու երեսբաց պէտք ա շէնամէջ դուրս գան, էսհէնց մարաքի մէջ տղամարդկանց հետ խառը նստոտեն ու խօսան, ասեն, ծիծաղեն, հահռան. ասում ա, որ աղջիկն ինքը պէտք ա ուրան համար փնտացու ջոկի, ուրան մեծերը, հէրն ու մէրը, խառնուելու ու ուրանց ասածն անելու իրաւունք չունեն...

—Պա, պա, պա, պա,—ընդհատեց Առստամ օպօրն ունկնդիրներից մինը,—որ իմ աղջիկն իմ ջոկած փնտացուին հաւան չի կենայ, ուրան դլխու ջոկի, նրան կը մորթեմ հս ու թիքա-թիքա կոտորեմ։

—Դէ օղորմի քո հօրը. լսի հլա,—ասաց Առստամ ապէրն ու շարունակեց.—ասում ա, որ եթէ մի կնիկ ուրան մարդին հաւան չի, նրա հետ իր քէփն անելուց ու նրանից կշտանալուց յետոյ, կարող ա նրան թող անի ու ուրիշ տղամարդի գնայ՝ ում որ ուրան սիրտը կը սիրի... էդ թիւղումը նա պէտք ա ազատ ըլի. նրա քէփին ոչ ոք չը պէտք ա նի ունի։

—Բա խոխէքը՞,—հարցրեց նոյն ունկնդիրը,—բա նրանց ո՞վ պէտք ա պահի։

—Խոխէքը թող գնան ջուրը թափուեն, միայն թա արուռ ու ամօթ կորցրած ու կրակու եկած հայասուզ դանջղը գնայ ուրան քէփին անի՝ ուրան հաւան կացած մի լաքաթա շան տղի հետ,—ասաց զայրոյթով Առստամ ապէրը.—քո ասածն ըգօրայ էնհէնց չի՞, վարժապետ,—դարձաւ նա ուսուցչին։

Վարժապետն ուզեց խօսել, բայց տանուտէրն ու Բախշին իսկոյն առաջն առան։

—Էն ո՞ր դուռումսաղ թող կանի, որ էս շէնումն էդհէնց բան գոյանայ,—ասաց խիստ բարկացած մի ուրիշ ունկնդիր,—էդհէնց հայասուզ դանջղի ջգարումը օխտը գիւլա*) կը մեխեմ ես իմ ձեռքովը. թող մինը դոյանայ էս գեղումը, մինը պհամ գայ, կէնտ մինը ու թամաշա անի։

—Որ հաւասարութիւն ըլի կնանունց ու տղամարդկանց մէջ, որ պրիգօրօր տանք էն կապէթ գրող պարունին՝ թա հա, քո օրէնքն ընդունում ենք, շատերը պհամ կը գան, ոչ թա մենակ մինը. հրէ քաղաքներն էդհէնցներաւ լիքը,—ասաց Առստամ ապէրը։

—Էն ո՞ր հարամզադա պրիգօրօր կը տայ, էն ո՞վ ա ուրան միսը կերել, որ էդհէնց բան անի,—ասաց բարկացած ունկնդիրը,—ով որ էդ պրիգօրօրին ձեռք քաշի, պէտք ա էս շինէն դուրս գայ գնայ քաղաք, պէտք ա կորչի էստեղից, տանով-տեղով կորչի։

—Լաւ ես ասում. հէնց էդհէնց էլ պէտք ա ըլի. օղորմի քո հօրը, Քոչարի,—ասաց Առստամ ապէրն ու շարունակեց.—վարժապետի գրափառ քարոզը լաւ չէք հասկացել. դեռ հլա լսեցէք ինձ։ Վարժապետն ասեց, որ փռանգի ու ինգլիզի հողումը կնանիքն ամեն ջու-

*) Գնդակ։

ռա գործ էլ կատարում են. օրինակի համար, կնիկն առանց մարդին հարցնելի վեր ա ունում կովը ծախում, ձին ծախում, տունը, բաղը, բաղչէն ծախում կամ գրաւ դնում, վեկսիլաւ փող ա պարտքն անում ու ստացած փողերն ուրան քէփին ծախսում. մարդը տաւարի պէս տաղ արած մնում ա էն դոլին կաղնած։

—Առստամ ապէր,—ասաց Քոչարին,—բա ասում են, որ ինգլիզն ու փռանգը շատ են դոչաղ. էդ ո՞նց ա, որ կնանիքն էնհէնց բաներ են անում, իսկ նրանք մնում են տաղ արած։

—Կնկայ ձեռին որ իրաւունքներ դնես, որ նրան տղամարդուն հաւասարեցնես, ոչ թա մենակ ինգլիզին, այլ ազրայէլին*) ուրան կը խեղճացնի ու տաւար շինի,—ասաց Առստամ ապէրն ու շարունակեց.—վարժապետն ասեց, որ ինգլիզի ու փռանգի հողումը կնիկ ուզբաշի կայ, կնիկ սուդիա կայ, կնիկ ատվակատ կայ, չւայ կնիկ պրիստաւ էլ կայ...

—Պա՛յ, պա՛յ, պա՛յ, պա՛յ,—ընդհատեցին անչափ զարմացած ունկնդիրները Առստամ ապօրը,—էդ թամամ խայտառակչութին ա. կնիկ պրիստաւից էն ո՞վ կը վախի, էն ո՞վ նրան հարկ կը տայ...

—Դեռ ասում են, թա աշխարհիս լօխից զօռաւ թագաւորը ինգլիզի թագաւորն ա,—ասաց Քոչարին, կնիկ պրիստաւաւ էն ո՞նց ա թագաւորութին անում նա։

—Տաղ արէք հլա. լսեցէք, լաց ըլիլի ա, ոչ թա ծիծաղելի,—ասաց Առստամ ապէրն ու շարունակեց.—մեր կազէթ գրողները, մեր խումբապետ քարոզիչները ուզում են, որ մեզանում էլ էդհէնց ըլի, ուզում են, որ մենք կնանիք դառնանք, իսկ մեր կնանիքը մեր

*) Հոդէաւ հրեշտակին—հրեշտակապետին։

գլխներին ճղոպոր*) կոտրող տղամարդիկ... Կամայ-կամաց էն ա դրա տուտն սկսում ա մեզանում, հիմը դնում ա...

—Ո՞նց, Առստամ ապէր։

—Ո՞նց պտի. էնհէնց, որ մի քանի անաբուռ հարամզադէք իրանց աղջկերանցը ուսումարան են ուղարկում կարդալու։ Գլխաբաց ու երեսբաց գնում-գալիս են էս քանդուածը. հայասուզութին են սովորում էդ կերպաւ։ Քանի-քանի անգամ եմ պատահածներից թակել, կոպալիս տակը տուել, որ համարձակւեն ոչ ուսումարան գնալ. շան հանքերը չեն խրատուել. քանի գնում են, աւելի ու աւելի են իրես առնում. երբ նրանց տեսնում եմ, քիչ ա մնում, թա գամ էս ուսումարանի տակին կրակ դնեմ ու վառեմ... Աղջիկ-օլանը կարող չէր էս ուսումարանը մտնի, եթէ տեսուչը, էն խումբապետ տեսուչը, չըլէր, էն որ մօղեբաւոր գինւորին ետևից գցած շէնից շէն ման ա գալիս, առօք-փառօք քարոզում ու երբ ինձ պէս մինը նրա ասածների դէմումը բան ա խօսում, ղամշին չաքմիցը**) հանում ա. նշանց տալիս ու ասում՝ խելօք կաց, որ սրանով, էս օրհնւածովը հիմի կը քարոզեմ քեզ...

Է՜, տասն էնհէնց տեսուչ էլ որ ըլի, ես ախիրն իմ ասածն անելու եմ. էս ուսումարանիցը աղջիկօլանի ոտը կտրցնել պտեմ, էդ փչութինը, էդ հայասուզութինը էս շէնիցը վերցնել պտեմ... Ի՞նչ ասել ա կնկայ ու տղամարդի հաւասարութին. աստուածութինը էդ ընդունում ա. Աստուած էդ ադաթ ա դրել, ա երէց, —դարձաւ նա աւագ քահանային։

Հարցն անսպասելի էր։ Տէրտէրը շփոթւեց. բըռ-

*) Ընկոյզ։

**) Մտրակը կօշիկից։

նոթի քաշեց շտապ-շտապ, ճակատը սրբեց թևքով, դարձեալ բռնոթի քաշեց՝ այդպիսով կարգի բերելով վերնատունն ասաց.—Աստուած մարդկութիւնը դրախտումը ստեղծեց ու դրախտում էլ պէտք է նրան պահէր յաւիտեան. բայց մեր քօռ բախտից այդպէս չեղաւ... Աղբաթիխէր Ադամը խելքը կնիկարմատի հետ դրաւ, նրան կատարեալ իսան համարեց, նրան ուրան հաւասար ընդունեց, նրա խօսքին մնալ դրաւ, նրա խորհուրդը լսեց ու կատարեց, արգելած պտղից կերաւ, կնկայ խելքաւ բան բռնեց ու այդպիսով համ ուրան տունը քանդեց, համ մեր... Աստուած երբ Եւային ստեղծեց, նրան Ադամին տալիս, թափշուր անելիս ասաց՝ «Սրա հետ ապրի, Ադամ, ամա քեզ մղայիթ կաց. զգուշ, շատ զգուշ կաց, ա որդի, սա էնքան էլ ըխտըբար*) չունի... Սիրուն, գեղեցիկ ա սա, ամա խելքի կողմից բաբաթ փյադայ ա. սրա խելքը դիտմամբ մի քանի ծալ պակաս եմ ստեղծել, որ քեզ լսի, քեզ հնազանդի սա. որ դու լինես սրանից խելօքն ու սրա տէրը, սրա մեծը, այլ ոչ սա քո, քանի որ ընտանիքի երջանկութիւնը կնոջ տղամարդուն հնազանդելումն է... Հէնց սրան լսեցիր, սրան քեզ հաւասար ընդունեցիր ու խելքդ սրա հետ դրար թէ չէ, կանբախտանաս»... Աստծու սուրբ պատուէրը Ադամը մոռացաւ. նզովեալ Եւային ուրան հաւասար ընդունեց, նրան լսեց ու անբախտացաւ... Երբ Տէրն ինքն ուրեմն մեծութիւնը տուել ա տղամարդին, ինչու պէտք ա տղամարդն էդ մեծութիւնից հրաժարւի ու ուրան ձեռաւ ուրան տունը քանդի,—ասաց վերջում աւագ-քահանան։

—Հրաժարւիլ չի, ոչ ոք էս շինումը Աստծու օրէնքը քանդիլ չի,—ասաց վճռաբար Առստամ ապէրը, միայն խելառ, աննամուս ու պիլիկ մարդիկ են իրենց

*) Կատարեալ խելք ու հաւատարմութիւն։

կապը դնում կնանունց ձեռքին ու իրանք նրանց առաջին մէյմունի պէս պար գալիս... Փռանգն ու ինգլիզը մեզ օրինակ չեն. նրանք ջոկ օրէնքի, ջոկ հաւատի մարդիկ են. նրանք հայ քրիստոնեաներ չեն. մեր բանը նրանց հետ բռնիլ չի... Հիմի ինչ էք ասում, ա խալխը, ա մարդիկ,—դարձաւ նա ժողովականներին,—խելքի տակ ու գլուխ տուէք էստեղ ասածներն ու լսածները. ամեն բան թամամ հասկացէք, թէ չէ։

—Հասկացանք, ինց չի, Առստամ ապէր,—ասացին այս ու այն կողմից, քեզ արքայութին ըլի, կարգին հասկացրիր մեզ, մեր աչքը բացար։

—Դէ որ հասկացաք, ասացէք տեսնամ,—շարունակեց Առստամ ապէրը,—պրիգօրօր էք տալիս մեր վարժապետի, մեր ուղբաշու ու հոգաբարձի հաւան կացած էն կազէթ գրող խումբապետին էն ժանին, որ մեր կնանիքը, մեր հարսներն ու աղջիկներն էլ կապուկոտոր ըլեն, աբուռ ու հայա կորցնեն, փռանգի, ինգլիզի ու ռուսի կնանունց պէս դուրուր գան ու մեզ հետ հաւասարութին անեն. նրա օրէնքն ընդունում էք։

Չէ, չէ, չէ, չէ,—աղաղակեցին բազմաթիւ ձայներ,—մեր միսը կերել չենք հու։

Երիտասարդները, որոնց վրայ վարժապետն ու Բախշին մեծ յոյսեր ունէին դրած, մնացել էին շլարուած ու լուռ. մի քանիսը նրանցից, մեքենաբար էր, ինչ էր, «չէ» աղաղակեցին ընդհանուր ժխորի հետ։

Վարժապետն ու Բախշին փորձեցին խօսել, յօգուտ ուղերձի, ի հարկէ. նրանց լսող չեղաւ. նրանց ձայները խեղդուեցին խառն ու շփոթ աղմուկի մէջ։

Տանուտէր Շամիրը լուռ մնաց մինչև վերջը։ Առստամ ապէրը «խումբապետ» բառի ընդգծումներով ու նրան հետևող բազմակէտերով այնպէս ահաբեկել էր նրան, որ խեղճ Շամիրի լեզուն կաշկանդուել էր խա-

պառ. նա իրան պաշտօնից զրկուած ու ոչ այնքան հեռաւոր վայրերն աքսորուած էր երևակայում արդէն...

Փառաւոր յաղթութիւնը տարած Առստամ ապէրը հպարտ քայլուածքով տերտէրների ու աւագանու ուղեկցութեամբ դուրս գնաց ժողովարանից. նրան հետևեց ներկայ եղող բազմութիւնը։ Վերջինիս անզգոյշ հրմամբ գետին գլորուեց վարժապետի գրասեղանը իր վրայ ստորագրութիւնների համար դրած համախօսական ուղերձով ու թանաքամանով. խախուտ սեղանը ջարդուեց՝ ոտներից երկուսը դուրս պրծան, իսկ երրորդը կոտրուեց։ Վարժապետն այդ չը նկատեց. նա առաջին շարքերի հետ, Բախշիի ու Շամիրի ուղեկցութեամբ, դուրս էր եկել պատշգամբ, որտեղից հայեացքով ուղեկցում, ճանապարհում էր իր հեռացող հիւրերին։ Վերջում Բախշին, Շամիրն ու երիտասարդների խումբը ցաւակցութիւն յայտնեցին վարժապետին ու հեռացան։ Նրանց գնալուց յետոյ վարժապետը մենամենակ մտաւ իր ընակարան-դասարանը, որտեղ յատակի վրայ ընկած տեսաւ ջարդ ու փշուր եղած գրասեղանը ու թանաքով առատօրէն ողողուած ուղերձը։ Առանց կարգի բերելու սենեակը, նա գնաց պառկեց իր ճխլուած, բռնոթոտ անկողնի վրայ ու մտախոհ լուռ հայեացքը յառեց առաստաղին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ — ԵՐԵՎԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ճակատին էն էր գրած 5
Թաթախումը 46
«Ասիստենտը» 91
Ցատում 125
Քեզ ընչեցին 154
Վաքիլբաշին 175
Ուղերձը 212

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԵՍՏԻ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ղ. Աղայեան, Հեքիաթներ I . . . . . — 15 կ.
» » » II . . . . . — 15 կ.
Ց. Թումանեան, Սասունցի Դաւիթ . . . . — 15 կ.
» Անուշ . . . . . — 15 կ.
» Լեգենդներ . . . . . — 15 կ.
Դ. Դեմիրչեան, Ուխտաւորներ, Աշուղի հեքիաթը . . . . . — 7 կ.
Ս. Շիսեանց, Մի մահ, Անառակը, պատմուածքներ . . . . . — 7 կ.
[redacted] երգեր . . . . . — 15 կ.
» [redacted] . . . . . — 15 կ.
Շիրվանզադէ, Պատիւի համար, դրամա չորս արարուածով . . . . . — 60 կ.
Գ. Վանցեան, Պատմական քերականութիւն արևելահայ լեզուի . . . . . — 75 կ.
Բժ. Գ. Մաղաքեան, Բժշկականութիւն և հասարակութիւն . . — 25 կ.
» » » Սնունդ և ստամոքսի հիւանդութիւններ . . — 15 կ.
Օր. Հ. Մելիք-Հայկազեան, Մի պտոյտ Ճապոնում . . . . — 40 կ.
Վ. Վերեսաև, Մի անմեղ մարդու սոսկալի մահը. թարգմ. պ. Պոշեանցի — 6 կ.
Է. Վոյնիչ, Բոռ. թարգմ. Շանթի . . . . . 1 ր. —
Փոն-Պոլէնց, Գիւղացի Բիւտնէր. թարգմ. Ս. Թառայեանի . . . . . 1 ր. 25 կ.

2275

Էրկման-Շատրիան, Մի գիւղացու պատմութիւնը. Թարգմ. Վ. Փափազեանի . . . . 1 ր. 25 կ.

» Ժամագործի յիշողութիւնները. Թարգմ Շ. Խաժակնեանի . . . . . — 8 կ.

Յ. Գաուլկէ, Կապիտալ և կապիտալիզմ. Թարգմ. Ս. Թառայեանի . . — 12 կ.

Պրոֆ. Վ. Զոմբարտ, Ինչու այժմ ամեն մարդ հետաքրքրւում է քաղաքատնտեսական և ընկերավարական խնդիրներով. Թարգմ. Ս. Թառայեանի . . . . . — 10 կ.

Պրոֆ. Թ. Ախէլիս, Իրաւունքի ծագումն ու պատմութիւնը. Թարգմ. Ս. Թառայեանի . . . . — 10 կ.

Ա. Վիրենիուս, Երեխայի քունը. Թարգմ. Ս. Լիսիցեան . . . . . — 15 կ.

Մարգար, Գողը . . . . . — 20 կ.

Յ. Կոստանեան, Ուղտն ու էշը. պատկ. . . — 25 կ.

Դիմել՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество. Бебутовская № 25.

ՀՀ Ազգային գրադարան
NL0369619

58199

Ընկերութեան հրատարակութիւնները

1. Լ. Ուոլլէս. Բէն Հուր. հ. I թարգմ. անգլ. Փ. Վարդանեան . . . . . —75 կ.
2. Նոյն, հ. II . . . . . —75 կ.
3. Շիրվանզադէ. Արտիստը . . . . . —25 կ.
4. Մուրացան. Գէորգ Մարզպետունի, պատմական վէպ . . . . . 1 ր. 20 կ.
5. Ժուկովսկի. Քնած արքայադուստրը. պատկերգ. հէքիաթ. փոխադր. Ա.Թ. Խնկոյեան . . . . . —15 կ.
6. Ստ. Տէր-Ալեքսիբեան. Պատուհածքներ . —50 կ.

ԳԻՆՆ Է 50 Կ.